



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հրատարակչությունը, չհետապնդելով որևէ եկամուտ, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի համացանցային կայքերում ներկայացնում է իր հայագիտական հրատարակությունները: Գիրքը այլ համացանցային կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ հրատարակչության համապատասխան թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Հ. ՈՒ. ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ

ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԻ
ԲՈՒՆԱԳԱՂԹԸ
ԵՎ ՍՓՅՈՒՌԻՔԱՀԱՅԵՐԻ
ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆԸ
ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

(1915—1940 թթ.)

Գրում բացահայտված է առաջին համաշխարհային պատերազմի տարիներին բուրժուական կառավարության կողմից կազմակերպված հայերի ցեղասպանության ֆաղափանություններ, ցույց է տրված արևմտահայերի տարագրությունն ու սփյուռքի կազմավորումը, շարադրված է հայրենադարձության իրականացման առաջին փուլի պատմությունը: Այդ առնչությամբ լենարկված է արևմտյան տերությունների կողմից հայկական հարցի նենգափոխումը, հայ գաղթականության նակատագրի նկատմամբ Ազգերի լիգայի երկդիմի ֆաղափանությունը, ինչպես նաև հայրենադարձության շուրջը սփյուռքում տեղի ունեցած պայքարը, 204-ի, հայրենակցական միությունների ու բարեգործական մի շարք հաստատությունների գործունեությունը:

U 10604—15
704(02)—75 29—74

Երևանի համալսարանի
© հրատարակչություն, 1975 թ.

МЕЛИКСЕТАН ОВИК УХТАНЕСОВИЧ

ДЕПОРТАЦИЯ ЗАПАДНЫХ АРМЯНИ И
РЕПАТРИАЦИЯ ЗАРУБЕЖНЫХ АРМЯНИ
В СОВЕТСКУЮ АРМЕНИЮ

1915—1940 гг.

(На армянском языке)

Издательство Ереванского университета

Ереван—1975

ԱՌԱՋԱԲԱՆ

Հայաստանը, գտնվելով Եվրոպայի և Ասիայի սահմանագծում, հնուց ի վեր դարձել է հոտմեական ու պարսկական, բյուզանդական ու արաբական, սելջուկյան ու մոնղոլական և թուրք-օսմանյան հորդանների ավերիչ արշավանքների ահեղ ռազմադաշտ: Թեպետ հայ ժողովրդի բազմադարյան անցյալը լի է օտար նվաճողների դեմ մղած պայքարի անմոռաց դրվագներով, սակայն, երկար ժամանակ զրկված լինելով ինքնուրույն պետականությունից, Հայոց աշխարհը հաճախ անխնահրի ու սրի է մատնվել, ոչնչացվել է բնակչությունը, թալանվել է նրա ունեցվածքը և ամայացվել երկիրը: Այդ պատճառով էլ մինչև ներկա դարի առաջին քսանամյակը տևած վերջին մի քանի հարյուրամյակների ռազմա-քաղաքական դաժան մրցակցության հետևանքով աստիճանաբար հայազրկվում էր Հայաստանը և նրա տերիտորիայում հաստատվում էր թուրք-մահմեդական ցեղերի գերակշռությունը:

Այդպիսի պայմաններում հայ ժողովրդի որոշ մասը հաճախ հարկադրված է եղել հեռանալ հարազատ երկրից, դիմել պանդխտության, գաղթել դեպի օտար հորիզոններ: Ժամանակի ընթացքում աստիճանաբար այդպես հիմք դրվեցին հայկական գաղթօջախներին աշխարհի տարբեր անկյուններում:

Երկրի ավերումներն ու ժողովրդի արտագաղթը պարբերական բնույթ ստացան հատկապես 16-րդ դարի սկզբներից, երբ Հայաստանը կռվախնձոր դարձավ իր երկու գիշատիչ հարևանների՝ սեֆյան Պարսկաստանի և օսմանյան թուրքիայի

միջև: Մոտ մեկուկես դար ենթարկվելով նրանց կործանարար ասպատակումներին, 1639 թվականին Հայաստանը բաժանվեց երկու մասի: Նրա մեծագույն՝ արևմտյան մասն անցավ Թուրքիային, իսկ արևելյանը՝ Պարսկաստանին:

Հետագայում, 1828 թ. Թուրքմենչայի պայմանագրով, Արևելյան Հայաստանն անցավ Ռուսաստանի տիրապետության տակ: Հայ ժողովրդի այդ հատվածն իր բախտն ընդմիշտ կապեց ուս ժողովրդի հետ և Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության շնորհիվ ձեռք բերեց ազգային վերածննդի լայն հնարավորություններ:

Դժբախտաբար, հայ ժողովրդի մեծ մասը մնաց Արևելքի արյունոտ բռնակալության՝ օսմանյան Թուրքիայի անտանելի լծի տակ և երկար ժամանակ շարունակում էր ենթարկվել դաժան հալածանքների: Թուրքական շովինիստները, հետևողականորեն հետապնդելով համաթուրքական-համամահմեդական քաղաքական որոշակի ծրագիր, տասնամյակների ընթացքում սիստեմատիկ կոտորածներով, կրոնափոխությամբ ու բռնագաղթեցումներով աստիճանաբար նվազեցնում էին հայության թիվը՝ նրա իսկ պատմական հայրենիքում:

Իսկ երբ սկսվեց առաջին համաշխարհային պատերազմը թուրքական կառավարությունն ու «Միություն և առաջադիմություն» («Իթթիհատ վե թերագզը») կուսակցությունը նախօրոք մշակած պլանով ոչնչացրին մեկուկես միլիոնից ավելի հայերի, իսկ մնացածներին արտաքսեցին դեպի արաբական անապատները, ուղղակի հայազրկելով Արևմտյան Հայաստանը:

Այսպիսով, օսմանյան Թուրքիայի ճիրաններում բազմիցս ենթարկվելով գազանային հողատումների, առաջին համաշխարհային պատերազմի հորձանքներում խեղդվեց ու կիզիչ անապատների ավազուտներում իր մահը գտավ արևմտահայության մեծամասնությունը:

Նրանք, ովքեր զրկված իրենց հայրենի օջախներից անցան մարդկային պատմության մեջ գրեթե իր նախընթացը չունեցող գողգոթայով ու ապրեցին մահվան բոլոր սարսափները, բայց մնացին կենդանի, արաբական անապատներից ցրվեցին

դեպի աշխարհի տարբեր երկրներ, ստվարացնելով հայկական նախկին գաղթօջախները:

Արևմտահայության տարագիր բեկորները, որոնք հայրենագուրկ դեգերում էին օտար ու անհյուրընկալ հորիզոններում, սպասում էին, որ պատերազմը վերջանալուց հետո, մեծ տերությունները, որոնք ազատության ու անկախության վերաբերյալ բազում խոստումներ էին շռայլել նրանց, հաշվեկանոնները ծառայություններն ու տառապանքները և հնարավորություն կստեղծեն վերադառնալու հայրենիք: Բայց պատերազմից հետո էլ հայ գաղթականության վիճակը դարձյալ մնում էր անորոշության մեջ: Ամենուրեք նրանք գտնվում էին թշվառության մեջ, իսկ մի շարք երկրներից ուղղակի գանգվածաբար դուրս էին մղվում և ոչ մի տեղ ասպնջականություն չէր տրվում նրանց: Այդ պայմաններում բոլոր «բարեկամներից» խարված սփյուռֆահայերի միակ հույսն ու սպասվեցը դարձավ 1920 թ. նոյեմբերին Հայաստանում հաղթանակած սովետական իշխանությունը: Հայրենաբաղձ սփյուռքահայ աշխատավորական զանգվածները դասակարգային հստակ տրամաբանությամբ վճռականորեն դիմուղղվեցին դեպի իրենց իսկական հանգրվանը, անվերապահորեն կանգնեցին Սովետական Հայաստանի պաշտպանության դիրքերում և ցանկություն հայտնեցին ներգաղթելու իրենց նոր, ազատագրված հայրենիքը:

Սփյուռքահայերի մեջ Սովետական Հայաստան ներգաղթելու ձգտումն առավել հրամայական դարձավ Լոզանի կոնֆերանսից հետո, կոնֆերանս, ուր արևմտյան տերություններն ու քեմալականները վերջնականապես գերեզմանեցին հայկական հարցը, ձևականորեն այն կտակելով Ազգերի լիգայի տնօրինությանը:

Դրան հակառակ, սովետական կառավարությունը, որպես աշխատավոր զանգվածների շահերի իսկական պաշտպան, իր գոյության առաջին իսկ օրերից լրջորեն զբաղվեց ինչպես երկրում կուտակված արևմտահայ գաղթականության հարցի լուծման, այնպես էլ սփյուռքահայ աշխատավորների առավել

գծվարին կացութեան մեջ գտնվող մասի հայրենադարձութեան իրականացման գործով:

Հայ ժողովուրդը, որը դարեր շարունակ տեսել ու զգացել է միայն կոտորածների ու բռնագաղթների սարսափներն ու դառնութիւնները, սովետական կարգերի շնորհիվ հնարավորութիւն ստացավ հավաքվելու իր նոր, սոցիալիստական հայրենիքում: Դրանում ակնառու կերպով դրսևորվեցին սոցիալիստական սիստեմի առավելութիւնները, նախկինում ամեն կողմից հալածված ու բզկտված հայ ժողովրդի նկատմամբ կոմունիստական կուսակցութեան լենինյան ազգային քաղաքականութեան կենսագործման լավագույն վկայութիւնը:

Աշխարհով մեկ սփռված տարագիր հայության հայրենադարձութիւնը սովետական իշխանութեան շնորհիվ մեր ժողովրդի ձեռք բերած մեծագույն նվաճումներից մեկն է, պատմական բազմաշառնակալից մի իրադարձութիւն մեր բազմադարյան պատմութեան մեջ: Հայրենադարձութիւնը հայ ժողովրդի կոնսոլիդացիայի ու ճեղքազատ զարգացման կարևոր գործոններից մեկն է:

Սակայն մինչև վերջերս անբավարար էին ուսումնասիրվել ու գիտականորեն լուսաբանվել արևմտահայերի զանգվածային կոտորածներն ու բռնագաղթը: Տակավին խոսքն է մնում սփյուռքահայերի հայրենադարձութեան պատմութիւնը: Դեռ ավելին, այդ իրադարձութիւնները հաճախ միտումնավոր կերպով խեղաթյուրվում են թուրքական, եվրոպական ու ամերիկյան, ինչպես նաև բուրժուա-ազգայնական պատմագրութեան կողմից:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներից սկսած հայկական ջարդերի ու բռնագաղթի վերաբերյալ թե՛ հայերի և թե՛ օտարների կողմից, հատկապես արտասահմանում, բավականին ստվար գրականութիւն է ստեղծվել, որի գնահատումն, անշուշտ, ուշադրութեան արժանի, սակայն ներկայումս մեր նպատակներից ու հնարավորութիւններից դուրս գործ է: Բայց անհրաժեշտ է նշել, որ դրա մի զգալի մասը անձնական հիշողութիւններ ու երկրորդական նյութեր են, որոնց մեջ անվերապահ հայտարարութիւններ ու ինքնախարազանման

ուշացած փաստարկումներ՝ որքան ուզեք, իսկ արժեքավոր գործեր, բազմակողմանի ու փաստալից ուսումնասիրութիւններ՝ շատ սակաւ: Թուրքիայում կազմակերպված հայկական կոտորածներն ու տարագրութիւնները մինչև վերջերս անհրաժեշտ ուշադրութեան չէին արժանացել և բավարար վերլուծութեան ենթարկվել նաև սովետահայ պատմագիտութեան կողմից: Այդ բացը լրացնելու լուրջ քայլեր էին պատմական գիտութիւնների դոկտորներ Զ. Ս. Կիրակոսյանի¹, Մ. Վ. Արզումանյանի² արժեքավոր հետազոտութիւնները և «Հայերի գեղոցիդը Օսմանյան կայսրութեան մեջ» փաստաթղթերի և նյութերի հարուստ ժողովածուն³: Այդ հարցերին հանգամանորեն անդրադարձել են նաև պրոֆեսորներ Ար. Մնացականյանը⁴, Վ. Պարսամյանը⁵, Ե. Սարգսյանը⁶ և Ա. Հարութիւնյանը⁷:

Սակայն, ինչպես նշվեց, գրեթե չի ուսումնասիրվել սփյուռքահայերի հայրենադարձութիւնը: Այն միայն մասամբ շոշափվել է այլ հարցերին նվիրված աշխատութիւններում, երբեք չդառնալով հատուկ հետազոտութեան առարկա: Մինչդեռ դրա պատմագիտական և քաղաքական նշանակութիւնն անժխտելի է:

Հանրահայտ է, որ միայն Հայաստանում հաղթանակած սովետական իշխանութիւնը փրկութեան իրական ուղի բացեց օտարութեան մեջ դեգերող սփյուռքահայ աշխատավորների համար: Մինչդեռ երկրից ընդմիշտ վտարված դաշնակցական

¹ Զ. Կիրակոսյան, Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայութիւնը, Երևան, 1965:

² Մ. Արզումանյան, Հայաստան—1914—1917, Երևան, 1969:

³ Геноцид армян в Османской империи, под редакцией проф. М. Г. Нерсисяна, Ереван, 1966.

⁴ Ար. Մնացականյան, Հայ ժողովրդի ողբերգութիւնը ռուս և համաշխարհային հասարակական մտքի գնահատմամբ, Երևան, 1965:

⁵ Վ. Պարսամյան, Հայ ժողովրդի պատմութիւն (1801—1917 թթ.), Ե. 3-րդ, Երևան, 1967:

⁶ Ե. Սարգսյան, Թուրքիան և նրա նվաճողական քաղաքականութիւնը Անդրկովկասում, (1914—1918), Երևան, 1964:

⁷ Ա. Арутюнян, Кавказский фронт 1914—1917 гг., Ереван, 1971.

գրչակաները, կամայականորեն կեղծելով փաստերը և ջանալով իրենցից հեռացնել պատասխանատվությունը, փորձում են մեղադրել սովետական կառավարությանը գաղութահայերի նկատմամբ անհոգատարություն մեջ, պնդելով, թե իբր նա չի ուզել և չի ուզում ներգաղթ կազմակերպել, թե փակել է երկրի դռները նրանց առաջ և այլն: Հայրենադարձության հենց միայն առաջին քսանամյակի պատմության վերհանումը, շտապելով արդեն 1946—1948 թվականների մեծ հայրենադարձության և մինչև այսօր շարունակվող տունդարձի մասին, ակնառու կերպով մերկացնում է հայկական հարցի սովետական շարաշահողներին՝ արևմտյան տերություններին, որոնք քիչ մեղք չունեն արևմտահայության ճակատագրի այնքան ողբերգական ընթացքի մեջ: Դա միաժամանակ բացահայտում է հայրենադարձության հարցում սովետական իշխանության դեմ դաշնակցության կատարած լարախաղացությունների էությունն ու նպատակը և սովետական կառավարության ու կոմունիստական կուսակցության հոգատար վերաբերմունքը հայ տարագիրների նկատմամբ:

Սփյուռքահայ աշխատավորների 1921—40 թթ. հայրենադարձությունը որոշ չափով լուսաբանվել է շՍԽՀ Կենտգործկոմի և ժողովրդային կողմից հրատարակված «Խորհրդային Հայաստան—1920—1925» ժողովածուի մեջ⁸, Հովհ. Հակոբյանի գրքում⁹ և Ս. Խուդգարյանի հոդվածում¹⁰:

Այդ տարիների հայրենադարձության վերաբերյալ առանձին հոդվածներ ու հաղորդումներ են լույս տեսել նաև սովետահայ և սփյուռքահայ պարբերական մամուլի էջերում:

1921—1940 թթ. ներգաղթին և դրա հետ կապված այլ հարցերին մասնակիորեն անդրադարձել են նաև Ա. Մ. Հակոբ-

յանը¹¹, Հ. Մ. Էլշիրեկյանը¹², Ս. Վ. Խարմանդարյանը¹³, Վ. Ն. Ներկարարյանը¹⁴, Վ. Գ. Մելիքեթյանը և Հ. Ս. Կարապետյանը¹⁵, Ս. Պ. Աղայանը և Ե. Մ. Խալեյանը¹⁶: Այն ընդհանուր ձևով տրվել է նաև շՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի կողմից հրատարակված «Հայ ժողովրդի պատմություն» բազմահատոր աշխատության 7-րդ հատորում¹⁷ և «Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության ուրվագծեր» աշխատության մեջ¹⁸: Սակայն վերոհիշյալ աշխատություններից ու հեղինակներից ոչ մեկը նպատակ չի ունեցել ամբողջական ձևով ներկայացնելու հայրենադարձության պատմությունը: Ներկա ուսումնասիրությունը մի փորձ է լուսաբանելու առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Թուրքիայում տեղի ունեցած հայկական կոտորածներից փրկված և բռնագաղթի միջոցով արաբական անապատները քշված ու այնտեղից աշխարհով մեկ սփռված տարագիր հայության որոշ մասի հայրենադարձությունը 1921—1940 թթ. իրականացնելու ուղղությամբ Հայաստանի կոմունիստական կուսակցության և սովետական կառավարության գործունեության պատմությունը: Այդ առնչությամբ մենք աշխատել ենք բացահայտել նաև օտարերկրյա բարեգործական մի շարք

¹¹ Ա. Մ. Հակոբյան, Սովետական Հայաստանը ժողովրդական տնտեսության վերականգնման ժամանակաշրջանում (1921—1925 թթ.), Երևան, 1955, էջ 315—317:

¹² Տե՛ս շՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1949, № 2, էջ 17—26, Հ. Մ. Էլշիրեկյան, Վասպուրականի հայերը Միջագետքում և նրանց վերադարձը Սովետական Հայաստան:

¹³ С. В. Хармандарян, Армянская ССР в первый год новой экономической политики, Ереван, 1955, стр. 144—151.

¹⁴ Վ. Ն. Ներկարարյան, Հայաստանի կոմունիստական պարտիան երկրի ժողովրդական տնտեսության վերականգնման ժամանակաշրջանում (1921—1925 թթ.), Երևան, 1956, էջ 279—284:

¹⁵ «Ուրվագծեր Սովետական Հայաստանի պատմության», պրակ. 2-րդ, Երևան, 1958:

¹⁶ Նույնը, պրակ 3-րդ, 1960:

¹⁷ «Հայ ժողովրդի պատմություն», հ. 7, Երևան, 1967:

¹⁸ «Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության ուրվագծեր», Երևան, 1967:

⁸ «Խորհրդային Հայաստան—1920—1925», ժողովածու, Երևան, 1926:

⁹ Հովհ. Հակոբյան, Խորհրդային Հայաստան (սպավորություններ և սառնամանակներ), Փարիզ, 1929:

¹⁰ Տե՛ս «Նոր ուղի», ամսագիր, Երևան, 1929, № 6, էջ 122—131:

Ս. Խուդգարյան, ներգաղթը և գաղթականության բնակեցումը Հայաստանում:

հաստատությունների, Հայաստանի օգնության կոմիտեի, հայրենակցական, վերաշինաց և այլ անուններով սփյուռքում գործող միութունների ու կազմակերպությունների գործունեությունը: Մերկացված է Ազգերի լիգայի երկդիմի խաղերի էությունը, ցույց են տրված մեծ հումանիստ Ֆրիտյոֆ Նանսենի ջանքերը հայ գաղթականության հարցի լուծման ուղղությամբ և հարակից այլ հարցեր:

Աշխատության մեջ օգտագործված են վերը նշված հարցերի վերաբերյալ կուսակցական ու պետական որոշումները, սովետահայ ու սփյուռքահայ պարբերական մամուլը և թեմային փոքրիշատե առնչվող գրականությունը: Մեզ համար հիմնական աղբյուր են հանդիսացել առավելապես արխիվային նյութերն ու փաստաթղթերը, որոնց ճնշող մեծամասնությունը առաջին անգամ բարձրացվում և գիտական շրջանառության մեջ է դրվում մեր կողմից: Օգտագործված են նաև զգալի քանակությամբ հրապարակված, բայց մինչև այժմ քիչ ուշադրության արժանացած սկզբնաղբյուրներ ու նյութեր:

Պետք է նշել, որ տվյալ թեմայի լուսաբանումը կապված է մի շարք դժվարությունների հետ: Ամենից առաջ անբավարար են սփյուռքահայության սոցիալ-տնտեսական վիճակը բնութագրող նյութերը, 20-ական թվականներին պարբերաբար չեն ստացվել գաղութահայ բազմաթիվ թերթեր, ամսագրեր և այլն, ուր կարելի կլիներ այդ մասին գտնել անհրաժեշտ տեղեկություններ ու տվյալներ: Խիստ անբավարար են պահպանված և մշակված նաև արխիվային նյութերը, հաճախ, միևնույն հարցի շուրջը եղած տարբեր փաստաթղթերում, միանգամայն տարբեր ու հակասական տվյալներ կան: Չեն պահպանվել ու մեզ չեն հասել բազմաթիվ փաստաթղթեր, որոշումներ և այլ նյութեր երկրում գտնվող արևմտահայ գաղթականության հարցի լուծման և սփյուռքահայերի հայրենադարձության կազմակերպման վերաբերյալ: Դա հետևանք է այդ աշխատանքների հապճեպ կատարման, սովետական պետական ապարատի նոր կազմակերպվածության, համապատասխան կադրերի ու անհրաժեշտ միջոցների բացակայության և այլ գործոնների:

Հարկ է եղել կատարել բազմակողմանի պրպտումներ, որպեսզի գտնե որքան հնարավոր է ընդհանուր գծերով վերականգնվի գերագույն ջանքեր կլանած անձնուրաց աշխատանքի այն պատկերը, որն ակնառու կերպով ցուցադրում է հայ ժողովրդի բախտի նկատմամբ կոմունիստական կուսակցության և սովետական կառավարության ուշադրությունն ու հոգատարությունը:

Սույն աշխատությունը, լինելով սփյուռքահայերի հայրենադարձության առաջին քառամյակի պատմության ուսումնասիրության առաջին ծավալուն փորձը, բնավ հավանություն չունի տալու այդ կնճռոտ պրոբլեմի հետ կապված բոլոր հարցերի սպառիչ ու անթերի լուսաբանումը:

Սփյուռքահայ աշխատավորների ներգաղթը Սովետական Հայաստան, որն սկիզբ առավ սովետական իշխանության առաջին իսկ տարիներին, շարունակվում է մինչև օրս: Ազգահավաքման հայրենասիրական, իրադարձություններով հարուստ այդ աննախընթաց շարժման ամբողջական պատմությունը գեոևս կարոտ է լուրջ ուշադրության:

ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԲՈՆԱԳԱՂԹԸ ԵՎ ՀԱՅ ՏԱՐԱԳԻՐՆԵՐԻ ԹՇՎԱՌ ՎԻՃԱԿԸ 1915—1920 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Թուրքական տիրապետության տակ ապրող հայության պարբերաբար կրկնվող բնաջնջումն ու իր բնօրրանից արտաքսումը արդեն 19-րդ դարի վերջին քառորդից սկսած ուղղակի հարցականի տակ էին դրել նրա ֆիզիկական գոյությունը: Ուստի պատահական չէր, որ Արևմտյան Հայաստանի և արևմտահայության ճակատագրի հարցը տասնամյակներ շարունակ դարձել էր հայ իրականության ամենացավոտ հարցը: Այն երկար ժամանակ իր վրա էր գամել հայության բոլոր խավերի մտքերն ու ուշադրությունը:

Հայկական հարցը, այսինքն թուրքական բռնակալությունից Արևմտյան Հայաստանի ու արևմտահայության ազատագրման հարցը, որը միջազգային դիվանագիտության ոլորտն էր մտել դեռևս անցյալ դարի 70-ական թվականներին, փաստորեն շահագործվում էր արևմտանվրոպական տերությունների ու ցարական Ռուսաստանի կողմից: Իրականում այդ տերություններին բնավ ձեռնտու չէր հայկական հարցի լուծումը, որովհետև չլուծված վիճակում այն մի հարմար առիթ էր թուրքիայի վրա ճնշում գործադրելու և Մերձավոր Արևելքում իրենց ազդեցությունն ամրապնդելու համար: Եվրոպական տերություններն այս կամ այն առիթով առաջ քաշելով հայկական հարցը, փորձում էին օգուտներ քաղել թուրքիայից, մինչդեռ տասնամյակներ շարունակ հայ ժողովուրդը հեծում էր օսմանյան բռնակալության ճիրաններում և ֆիզիկապես ոչնչացվում: Թուրքիան անդամահատումից փրկելու և նորանոր նվաճումներ ձեռք բերելու ամենահարմար միջոցը

արդուհամիդյան ռեժիմին փոխարինելու եկած երիտթուրքական կառավարությունը համարում էր այլազգիների դեմ անխընա պայքարը: Բնական էր, որ շովինիստական այդ ծրագրի իրականացմանը լրջորեն դիմադրելու էին Օսմանյան կայսրության կողմից նվաճված ժողովուրդները, այդ թվում նաև հայերը, որոնք սոցիալական ու տնտեսական դաժան շահագործումից բացի, ենթարկվում էին նաև ազգային վայրենի ճնշումների ու հալածանքների:

Երիտթուրքերը, որոնք վաղուց արդեն որոշել էին բնաջնջել հայերին, հատկապես առաջին համաշխարհային պատերազմը հարմար պահ համարեցին իրենց հայաջինջ ծրագիրը ի կատար ածելու համար: Պատերազմին մասնակցելու թուրքական կառավարության ռազմական պլանի բաղկացուցիչ մասն էր կազմելու իրենց պատմական հայրենիքից հայերի զանգվածային տեղահանումն ու ոչնչացումը, որը պետք է հիմնականում իրականացվեր հարյուր հազարավոր անմեղ ու անզեն մարդկանց տաքագրության ժամանակ:

Այն, ինչ տեղի ունեցավ թուրքիայում հայերի նկատմամբ պատերազմի ժամանակ, իր շահերով ու վայրագություններով միանգամայն բացառիկ ու աննախադեպ երևույթ էր համաշխարհային պատմության մեջ: Անուղղելի ողբերգություն ապրեց հայությունը թուրքիայում պատերազմի հենց սկզբբուն: Օգտվելով պատերազմական խառնակ վիճակից, երիտթուրքական իշխանությունները վճռեցին ավարտել այն շահագործությունները, որոնք սկսվել էին դեռևս «արյունալի սուլթան» Աբդուլ Համիդի օրոք:

Հայ ժողովրդի երկարատև ու դաժան մարտիրոսագրությունը թուրքական բռնակալության ճիրաններում լեցուն է հոգևարքի ու մահվան օրհասական բազում ճիգերով: Բայց այն, ինչ կատարվեց համաշխարհային պատերազմի թոճ ու բոճի օրերին, երբ ոչնչացավ մեկ ու կես միլիոն հայություն և կորուստյան մատնվեցին դարերի ընթացքում ստեղծված տնտեսական ու մշակութային բազմաթիվ գանձեր, իր նախընթացը չունեք նույնիսկ սուլթանների երկրի, տաղանդավոր բանաս-

տեղծ Պարույր Սևակի խոսքերով ասած՝ «արյունով հունցված սև պատմութեան» մթին էջերում:

Պատերազմի ժամանակ հայ ժողովրդի նկատմամբ ունե- նալիք վերաբերմունքի հարցը մանրամասն բննարկման էր ենթարկվել թուրքական կառավարական շրջաններում, «Միու- թյուն և առաջադիմութիւն» կուսակցութեան ժողովներում և մտել թուրքական ռազմական շտաբի պլանների մեջ:

Հայերի կոտորածները հիմնականում պետք է իրականաց- վեին հայ ժողովրդին իր պատմական դարավոր հայրենիքից զանգվածորեն դեպի արաբական անապատներն աքսորելու ժամանակ: Այդ բարբարոսական ծրագիրը լայնորեն պրոպա- գանդվում էր ոչ միայն թուրքական շովինիստների, այլև գեր- մանական իմպերիալիստների ու նրանց զաղափարախոսների կողմից: Անհեթեթի փաստ է, որ համաշխարհային պատե- րազմի տարիներին հայ ժողովրդի ապրած սոսկալի ողբեր- գության մեջ, այդ ահալոր ցեղասպանութեան (գենոցիդ) կազմակերպման գործում, ոչ-երկրորդական դեր են խաղացել գերմանական իմպերիալիստները և վերհեյմլանդ կառավարու- թյունը: Անատոլիայի հայաբնակ նահանգները գերմանական գաղութի վերածելու «հայասեր» կոչված Պաուլ Ռոհրբախի ծրագիրը իրականացնելու նպատակով գերմանացիները թուր- քերին խորհուրդ էին տալիս հայերին զանգվածաբար տա- րագրել Միջագետքի խորքերը: Դրանով գերմանացիները Բաղդադի երկաթուղու շուրջն եղած անմարդաբնակ անա- պատները կբնակեցնեին հայերի նման ընդունակ ու աշխա- տասեր հողագործներով: Գերմանիան ցանկանում էր Հա- յաստանը և Միջագետքը դարձնել «գերմանական Հնդկաս- տան», ինչպես այդ մասին ռախստագի ամբիոնից հայտա- րարել էր դեպուտատ Դելբրուկը¹:

Երիտթուրքական շովինիստները, ուրախութեամբ յուրաց- նելով գերմանական այդ խորհուրդը, որոշել էին դաժան տա- րագրութեան միջոցով հայերին ոչ թե սոսկ աքսորել Միջա-

գետք, այլ այդ պատրվակի տակ ֆիզիկապես ոչնչացնել նը- րանց և հայկական նահանգներում բնակեցնել թուրքիայի խորքերից բերված մահմեդականների, որպեսզի փրենց հա- մար ընդմիշտ ապահով թիկունք ստեղծվի Կովկասից սպառ- նացող վտանգից²:

Դեռ պատերազմից առաջ ռուսական և եվրոպական մա- մուլի որոշ օրգաններ ահազանգում էին հայութեան նկատ- մամբ թուրքիայում նախապատրաստվող կոտորածների ու տարագրութեանների դիվային ծրագրի գոյութեան մասին: Սակայն թուրքական թերթերը տեղորոն փորձում էին հեր- քել հայաջինջ ծրագրի առկայութեանը վկայող օտարերկրյա մամուլի հաղորդագրութեանները³:

Ինչպես ցույց տվեցին հետագա դեպքերը, օտարերկրյա մամուլը միանգամայն ճիշտ ու տեղին էր մատնացույց արել թուրքիայում հայերի բնաջնջման ծրագրի գոյութեանը և թուրքական թերթերը զուր էին պատեպատ ընկած կեղծավո- րաբար շողոթորթում հայութեան նկատմամբ իրենց կառա- վարութեան լավ վերաբերմունքի մասին: Այն միշտ էլ եղել էր թշնամական, բայց էլ ավելի էր վատացել համաշխարհա- յին պատերազմի նախօրյակին:

Եվ ահա պատերազմի մեջ մտնելու առաջին իսկ օրերից թուրքական կառավարութեանն անցավ հայ ժողովրդի բնա- ջրնջման իր նողկալի ծրագրի իրականացմանը: 1914 թ. դեկ- տեմբերից սկսած թուրքական իշխանութիւնները թուրք-ռու- սական և թուրք-պարսկական սահմանների վրա բռնութեամբ ամայացրին հարյուրավոր հայկական բնակավայրեր: Գա- վառներն ուղարկվեց հայերի կոտորածների և տարագրու- թեան վերաբերյալ երիտթուրքական ջարդարարների մշակած բարբարոսական ծրագիրը, որն ամփոփված էր շուրջ տասը կետերում և մանրամասնորեն նախատեսում էր, թե որ վա-

¹ Տե՛ս Հանդի Պաուլի (Հանրի Քարթի), Սարսափի երկրին մեջ, Կ. Պո- լիս, 1919, էջ 10:

² Տե՛ս Ան, Թուրքահայ հեղափոխութեան գաղափարաբանութեանը, հ. Բ, Փարիզ, 1935, էջ 82:

³ Տե՛ս «Հուշարձան ապրիլ տասնըմեկի», հավաքեց և խմբագրեց Թե- օզիկ, Կ. Պոլիս, 1919, էջ 96:

րերում և ինչ եղանակներով պետք է իրականացվեն հայկական եղեռնը⁴:

Հայ ժողովրդի բնաջնջումն ու տարագրությունը կազմակերպելու ուղղությունը թուրքական կառավարության ու «Իթթիհատ վե Թերագգը» կուսակցության գործունեության լուսաբանման տեսակետից խիստ կարևոր է ներքին գործերի մինիստր Թալեաթի, ռազմական մինիստր էնվերի և Իթթիհատի Կենտկոմի քարտուղար ղոկտոր Նազրմի ստորագրություններով հաստատված ու 1915 թ. ապրիլի 15-ին որպես կառավարական խստագույն դիրեկտիվ բոլոր կուսակալներին, գավառապետներին և այլ պաշտոնյաներին ուղարկված գաղտնի հրամանը: Այդ փաստաթղթում հրամայված էր՝ օգտավետ կատերազմական վիճակի ընձեռած հնարավորություններից, վերջնական հաշվեհարդարի ենթարկել հայությունը՝ «բնաջնջելով այդ անհարազատ տարրը, քշելով գանոնք դեպի Արաբիո անապատները, համաձայն տրված մեր գաղտնի հրահանգին»⁵:

Այդ գաղտնի հրամանում այնուհետև ասված էր. «Արդ, կառավարությունն ու Իթթիհատի Մեծ կոմիտեն, կոչ կրենք ձեզ և ձեր հայրենասիրության և կհրամայենք, որ ձեր բոլոր տրամադրելի ուժերով աջակցիք Իթթիհատի տեղական մարմիններուն, որոնք 24 ապրիլի արևածագին սկսյալ, գաղտնի ծրագրի մը համաձայն, գործադրության պիտի դնեն այս հրամանը:

Որևէ պաշտոնատար ու անհատ, որ կհակառակի այս սրբազան ու հայրենասիրական գործին ու չի տրամադրվիր իրեն հանձնված պարտականության, և ոյրևէ ձևով այս կամ այն հայը պաշտպանելու կամ պահելու փորձը կրնն, հայրենիքին ու կրոնքին թշնամի կնկատվի և ըստ այնմ ալ կպատժվի»⁶: Այստեղ ամեն ինչ պարզ ու որոշակի է ասված: Ուտի, բնավ

⁴ Տե՛ս Ան, Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը, հ. Բ, էջ 153—154:

⁵ «Դրվագներ հայկական եղեռնին և վերածնունդ», Փարիզ, 1947, էջ 179—181:

⁶ Նույն տեղում, էջ 179—182:

կասկած չկա այն մասին, որ երիտասարդ թուրքերի կուսակցության ու կառավարության ղեկավարությունը հայության բնաջնջման գործը դարձրել էր իր պետական քաղաքականության կարևոր խնդիրներից մեկը:

Թուրքիայի պատերազմի մեջ մտնելուց առաջ արդեն Իթթիհատի Կենտկոմը մշակել ու նախապատրաստել էր հայկական ջարդերի ու բռնագաղթի մանրամասն ծրագիրը, որն իրականացնող հիմնական ուժը լինելու էր այդ նպատակով ստեղծված «հատուկ կազմակերպությունը»: Ինչպես այդ առթիվ նշում է ուսումնասիրողներից մեկը, «հայկական կանխամտածված ջարդերը գլուխ հանելու համար Իթթիհատի Կեդր. Քոմիթեի անդամներեն Յուսուֆ Ռիզա պեյի պաշտոն հանձնված էր կազմելու «մասնավոր (հատուկ—Ն. Մ.) կազմակերպությունը» (Թեշքիլատթը խուսուսի) բանտերեն դուրս հանված ոճրագործներ և մահապարտներ, որոնք այս նպատակով մարզվեցան ալ, և զինված ղրկվեցան հայկական նահանգները»⁷:

Այդ «մասնավոր կազմակերպությունը»,— գրում է երիտթուրքերի ղեկավար գործիչներից Մեվլան-գադե Ռիֆատթը, որը հաճախ էր ներկա գտնվել «Իթթիհատ վե Թերագգը» կուսակցության այն ժողովներին ու խորհրդակցություններին, ուր որոշումներ էին ընդունվել հայերի բնաջնջման ծրագիրը գործադրության մեջ դնելու մեթոդների շուրջը,— ուրիշ բան մը չէր, եթե ոչ անպատասխանատու և կես պաշտոնական թալանչիներու խմբակ մը»: Իրականում այդ խմբակը ճանաչվում էր որպես պետական ու դատական հետապնդումներից զերծ, իր գործունեության մեջ անկախ և միայն երեք հոգուց բաղկացած գործադիր կոմիտեի հրամանին ու «Իթթիհատ վե Թերագգը» կուսակցության ոճրագործ, մարդասպան և թալանչի անդամներից բաղկացած մի կազմակերպություն⁸:

⁷ Մ. Սերոբյան, Հայկական հարցը և անոր փուլերը, Պիլոս, 1937, էջ 142—143:

⁸ Տե՛ս Մեվլան-գադե Ռիֆատթ, Օսմանյան հեղափոխության մութ ծալքերը, Պիլոս, 1938, էջ 184—185:

Մեկվան-զաղեի վկայութեամբ դոկտ. Բեհաեղդին Շաքիրը, դոկտոր Նազըմը և կրթական նախարար Շյուբրին էին ներկայացնում այն գործադիր եռյակ կոմիտեն, որը հաւաքագրում էր հատուկ կազմակերպութեան անդամներին ու մշակում հայերի բնաջնջման եղանակները: Մտտ 10—12 հազար հանցագործներ ու զանազան ուրիշ մոլոթ տարրեր էին ընդգրկված այդ կազմակերպութեան մեջ: Այն բաժանվում էր առանձին փոքր խմբերի, որոնցից յուրաքանչյուրը բաղկացած էր 10—50 հոգուց:

Մեկվան-զաղեն իր գրքում բերում է «Իթթիհատ վե Թեբաբգը» կոմիտեի՝ հայերի կոտորածները ծրագրող նիստերից մեկում տեղի ունեցած ելույթների համառոտագրութիւնը, որը պարզորոշ ցուցադրում է թուրք ջարդարանների ճիշակալին դեմքը: Այդ նիստում Բեհաեղդին Շաքիրն ասում է. «Խիստ կարևոր է ծանր պարտականութիւն մը ստանձնեցինք (խոսքը հայերի բնաջնջման մասին է—Ղ. Մ.), եթե այս պարտականութիւնը պետք եղածին պես չի վերջացնենք և առաջիններուն նման կիսակատար ձգենք (ակնարկվում են հայերի նախորդ կոտորածները—Ղ. Մ.), երբեք կասկած չունենք, որ հայերի վրիժառութենէն չպիտի կրնանք փրկվիլ: պատերազմի մեջ ենք, Եվրոպայի և մեծ պետութիւններու միջամտութեան վախը չկա, աշխարհի մամուլն ալ չկրնար բողոք բարձրացնել: Եթե ըլլա իսկ՝ որեւէ արդիւնք չունենար, հառաջիկային խնդիրը կատարված իրողութիւն մը կդառնա, ձայները կդադրին և ոչ ոք բողոքի ձայն բարձրացնելու համարձակութիւն կունենա. այս բացառիկ կացութեան նրբութիւններէն առավելագույն շահով պետք է օգտվինք. այս առիթը ամեն ժամանակ չի ներկայանար, հիմա ամեն բանն առաջ մեր տրամադրութեան տակ անկախ զինչալ ուժի մը պետք ունինք. այս ստիպողական պետքը ինչպե՞ս և ո՞ւրտեղ են պետք է ձարենք, հայերը մեկ անհատն իսկ չմնալու պայմանով բնաջնջելու համար որո՞նց պաշտոն պիտի տանք, ահապատիկ բուն կարևոր կետը հոս է, խնդրույն կարևոր մասը այս է»⁹: Եվ ահա այդ նպատակով էլ որոշվում է ստեղ-

⁹ Նույն տեղում, էջ 186—187.

ծել ոճրագործներից բաղկացած հատուկ կազմակերպութիւն՝ նրան հանձնելով ոչնչացման դատապարտված արևմտահայութեան բախտի տնօրինումը: Բեհաեղդին Շաքիրը շեշտում է այն միտքը, որ «մարդասպանութեան, տուն քանդելու և պատիվներ բռնաբարելու վարժ և զինվորագրութենէն զերծ մարդիկ... գտնելու և գործի մղելու է, որ մեր հաջողութիւնը հարյուրին հարյուր ապահով ըլլա»¹⁰:

Այնուհետև Բեհաեղդին Շաքիրը մանրամասնորեն թվարկում է այն ձևերը, որոնց միջոցով պիտի ոչնչացվեն հայերը: Նա ասում է. «որ քաղաքի և գյուղաքաղաքի մեջ որ հայ կա և անոնցմէ որ մեկուն առաջին անգամ բնաջնջվիլը հարկ է, այդ քաղաքները ներքին (գործերի—Ղ. Մ.) նախարարին հետ կորոշենք և յուրաքանչյուր շրջանակին պետք եղածին շափ այս ուժերէն կղրկենք. ասոնք մեր նշանակելիք ճամբաներուն հարմար վայրերուն վրա հասնելիք հայ կարավաններուն կսպասեն, ներքին գործոց նախարար Թալեաթն ալ այդ քաղաքներուն վարչական պաշտոնյաներուն կհրահանգե, որ հոն գտնվող բոլոր հայերը, պատերազմական շրջանակէն դուրս գտնվելու հարկը պատճառաբանելով, խումբ-խումբ և յուրաքանչյուր երկու օրը անգամ մը, ոստիկան զինվորներու հսկողութեան տակ այսինչ ճամբան այսինչ տեղ ղրկվին, ոստիկանական պաշտոնյաներ այս հրամանին վրա բոլոր հայերը հավաքելով հսկողութեան տակ խումբ-խումբ որոշված ճամբաներէն ղրկել կակսին, ճամբան ասոնց գալուն սպասող հատուկ կազմակերպութեան շեթներուն կեցած վայրը հասնելուն խումբերը մեր շեթներուն կհանձնեն ու կվերադառնան, շեթներն ալ այս հայերը մինչև վերջին անհատը անմիջապէս կսպանեն և որպէսզի հանրային առողջութիւնը չվնասվի, դիակները նախապէս պատրաստված փոսերու մեջ կձգեն ու կթաղեն, և այս կերպով հաջորդաբար բնաջնջման գործողութիւնը կլրացնեն. այս հայերուն քով գտնվող գուլք, դրամ և գոհարեղեններն ալ իբրև ավար շեթներուն կբաժանվի, մենք ասոնցմէ բան մը առնելու չենք.

¹⁰ Նույն տեղում:

և եթե կիներ ու աղջիկներ ալ ըկելու ըլլան ասոր ալ պետք է լռենք»¹¹: Ահա թե թուրքական ջարդարարները ինչպիսի ստոր ու գազանային միջոցներ էին մշակում մի ամբողջ անմեղ ու խաղաղ ժողովրդի ոչնչացման համար:

Նախօրոք մշակված ծրագրի համաձայն հայերի ջարդերն ու տեղահանությունը իրականացնելու համար հայկական նահանգներում ստեղծվում են նաև հատուկ գաղտնի կոմիտեներ, որոնց մեջ մտնում են նահանգապետները, ոստիկանապետները և տվյալ նահանգի զինվորական միավորման հրամանատարները: Այդ գաղտնի կոմիտեների տրամադրությունները և դրվում ոստիկանական ու կանոնավոր զորքեր, «հատուկ կազմակերպության» ուժերը, թուրքական ու քրդական հրոսակախմբերը, անսահմանափակ քանակությամբ զենք և այլ միջոցներ:

Հայերի կոտորածների իրականացումն ամբողջությամբ վերցրած ղեկավարում էր թուրքիայի «առաջական կաբինետը», որի կազմի մեջ մտնում էին Մեծ վեզիր Սայիդ Հալիմ փաշան, ներքին գործերի մինիստր Թալեաթ փաշան, ռազմական մինիստր էնվեր փաշան, ծովային մինիստր Զեմալ փաշան, ֆինանսների մինիստր Զավիդ բեյը և արդարադատության մինիստր Խալիլ բեյը: Այդ կաբինետի կողմից էր, որ Կ. Պոլսից հրաման ուղարկվեց Փոքր Ասիայի տեղական բոլոր իշխանություններին՝ ձեռք առնելու «պատշաճ միջոցներ», որպեսզի իբր նախօրոք կանխվի ու ճնշվի հայերի «հնարավոր ապստամբությունը»: Այդ հրամանում ասված էր, որ հայերը «սպառնում են» կայսրության միասնությանն ու անվտանգությանը, հետևապես, պետական պաշտպանության նպատակներով, անհրաժեշտ է ամենաանհողող խստություններով ու ամենաանխնայ միջոցներով անվնաս դարձնել թրշնամուն:

Տեղական իշխանության ներկայացուցիչներին ուսմանք պատասխանում են, որ նրանք հայերի մոտ կասկածելի ոչինչ չեն նկատում և կառավարությունը հիշեցնում են, որ հայերն

առավել ևս անվտանգ են, քանի որ նրանք զինաթափված են, իսկ համեմատաբար առողջ, ուժեղ ու զենք կրելու ընդունակ տարրերը վերցված են բանակ: Որոշ թուրք պաշտոնյաների մոտ, ինչպես երևում է, դեռևս լրիվ չէին անհետացել խիղճն ու կարեկցանքը: Սակայն բողոքողներն անմիջապես հեռացվեցին իշխանությունից: Թուրք պաշտոնյաների մեծամասնությունը ուրախությամբ արձագանքեց ըստ հնարավորության հայերին միևնույն վերջին մարդը ոչնչացնելու մասին Կ. Պոլսից ստացված գաղտնի հրամանին և ձեռնամուխ եղավ դրա կենսագործմանը:

Թուրքական ջարդարարները նպատակահարմար էին գտել առաջին հերթին ոչնչացնել հայության արտական բնակչությանը և մտավորականությանը, որպեսզի հետո հեշտությամբ հաշվեհարդար տեսնեին նաև անպաշտպան մնացած խաղաղ բնակչության՝ կանանց ու անմեղ երեխաների հետ: Ինչպես այդ առթիվ դիպուկ կերպով նկատել է Կ. Պոլսում ամերիկացի անվտանգագետ Մորգենթաունը՝ «ցեղ մը բնաջնջելու այս ծրագիրը հաջողացնելու համար երկու նախաբայեր պետք էին առնվիլ. անհրաժեշտ էր բոլոր հայ զինվորները անզոր դարձնել և ամեն քաղաքներու հայերուն ձեռքեն զենքերը առնել: Հայաստանը խեղդաման ընելե առաջ, Հայաստանը անպաշտպան դարձնել»¹²:

Եվ թուրք ռճրագործները հենց այդպես էլ վարվեցին: Սկզբում, որպես «ղավաճանների», զինաթափեցին հայ զինվորներին, չնայած նրանք բարեխղճորեն կատարում էին իրենց պարտականությունները: Հայ զինվորները միայն այն ժամանակ սկսեցին կասկածատնությամբ և թշնամաբար վերաբերվել թուրքական հրամանատարությանը, երբ տեսան ու համոզվեցին, որ իրենց ազգակիցներին զանգվածաբար հանում են ռազմաճակատից և գաղտնի կոտորում: Հայ զինվորներին ջշում էին ամենատաժանակիր աշխատանքների, ուր թուրք սպանների մտրակների հարվածների տակ նրանք որ-

¹² Տե՛ս Ամերիկյան դեսպան մր. Մորգենթաունի հիշատակները և հայկական եղեռնի գաղտնիքները, Կ. Պոլիս, 1919, էջ 250: Ընդգծումը մերն է:

¹¹ Նույն տեղում, էջ 194—195:

պես աքսորականներ խրամատներ էին փորում, ճանապարհներ և ամրություններ կառուցում, տասնյակ կիլոմետր տարածությամբ ձյուն-ձմռանը բոկոտն բեռներ կրում ռազմա-ճակատի համար և այլն: Նրանց բաժանում էին 300—500 հոգուց բաղկացած խմբերի և, իբր նախապատրաստված ապստամբությունները կանխելու նպատակով, աշխատեցնում իրարից մի քանի կիլոմետր հեռավորության վրա: Թուրքական կանոնավոր բանակի ամբողջ գնդեր, որոնք նշանակված էին «հայկական հեղափոխությունը» ճնշելու համար, անսպասելի կերպով հարձակվում էին խաղաղ աշխատող անզեն հայ զինվորների խմբերի վրա և թույլ շտալով նրանց ուշքի գալու, զանգվածաբար գնդակահարում կամ հենց իրենց փորել տալով հսկայական փոսեր՝ ողջ-ողջ թաղում նրանց¹³:

Թուրքական բանակում ծառայող հայ զինվորների ու բժիշկների նկատմամբ թուրք մարդասպանների կատարած ոճրագործությունների մեջ իր նողկալիությամբ յուրահատուկ տեղ է գրավում բծավոր տիֆի միկրոբների սրսկումներով և թունավորման միջոցով հարյուրավոր մարդկանց ոչնչացումը: Պատերազմի տարիներին հայ զինվորներին, բժիշկներին և տարագիրներին ոչնչացնելու այդ նենգ մեթոդի գործադրումով թուրք ջարդարարները նախորդել են հիտլերյան ֆաշիստներին: Սպանել քողարկված, արագ, ստույգ և վճռական եղանակով՝ այս էր ջարդարարների ստոր նպատակը¹⁴:

Հայ զինվորներին գազանաբար կոտորելուց հետո, որպեսզի հեշտությամբ իրականացնեին նաև խաղաղ բնակչության տարագրության ու բնաջնջման ավելի ընդարձակ ծրագիրը, թուրքական ջարդարարները որոշեցին լիովին ոչնչացնել անողոք զորահավաքից հետո գյուղերում և քաղաքներում մնացած արական հայ բնակչությանը: Միտումնավոր զորահավաքից հետո առանց այն էլ տեղերում մնացել էր տղամարդկանց այն մասը, որից փոքր-ինչ դիմադրություն, առա-

վել ևս հակահարված չէր կարելի սպասել: Բնակչության այդ մասի ոչնչացումն իրականացվեց զինաթափման անվան տակ: 1915 թ. փետրվարյան մի ցուրտ գիշեր բոլոր հայաբնակ վայրերում թուրքական սպաներն ու զինվորները ներխուժեցին հայկական թաղամասերն ու տները և պահանջեցին հանձնել ունեցած զենքերը: Զենք չունեցողներին, ենթարկելով անասելի տանջանքների, ստիպում էին զնել, ճարել և հանձնել որպես սեփականը: Այդ ձևով հավաքված զինակույտերը լուսանկարվում էին և ուղարկվում Կ. Պոլիս, ուր ցուցադրվում էին որպես «նախապատրաստված հայկական հեղափոխության» «անժխտելի իրեղեն» ապացույց: Դժվար է նկարագրել այն տանջանքները, որոնց ենթարկվեցին հազարավոր անմեղ մարդիկ: Թուրք դահիճները «նախապատրաստված հայկական ապստամբության» մասին խոստովանություններ կորզելու համար պայտում էին ձերբակալված հայերի ոտքերը, դուրս քաշում եղունգները, շիկացրած երկաթով խարանում նրանց մարմինները, խաշում և գործադրում ճիվաղային այլ մեթոդներ¹⁵:

Զինաթափումից հետո քաղաքներում և գյուղերում երևացին թուրքական մունետիկները, որոնք թմբկահարի ուղեկցությամբ ազդարարում էին կառավարական պարտադիր հրամանը՝ հայոց արական ամբողջ բնակչությանը, մահվան սպառնալիքի տակ, որոշակի վայրերում անհապաղ հավաքվելու մասին: Հայերը ճշտապահորեն ենթարկվում էին հրամանին և հավաքվում նշված տեղերում, որոնք մեծ մասամբ լինում էին քաղաքներից ու գյուղերից դուրս: Ոստիկանությունը խստորեն հետևում էր, որպեսզի ոչ ոք չկարողանա խուսափել դրանից: Հավաքվողներին հենց նույն պահին ձերբակալում էին և բոլորին պարաններով իրար կապելով քշում դեպի անմարդաբնակ ու ամայի խուլ տեղեր (անտառ, քարայր, ձորակներ ու կիրճեր) և սկսում նրանց անխնա ջար-

¹³ Տե՛ս Հայկական ՍՍՀ ԿԳՊԱ, ֆ. 43, ց. 1, գ. 76, ք. 40:

¹⁴ Տե՛ս «Հայ բժշկության տված զոհերը», Կ. Պոլիս, 1919, նաև՝ Հայկ. ՍՍՀ ԿԳՊԱ, ֆ. 68/200, գ. 284, ք. 80—82:

¹⁵ Այդ մասին մանրամասն տե՛ս Հայկ. ՍՍՀ ԿԳՊԱ, ֆ. 57, ց. 1, գ. 622, թթ. 13—14, 16 և այլն, ինչպես նաև պատերազմի տարիների հայկական մամուլը:

դը՝ մինչև վերջին մարդը: Այդպես էր արվում սովորաբար փոքր քաղաքներում ու գյուղերում: Ավելի խոշոր քաղաքներում ու կենտրոններում ոչ միշտ էր հնարավոր այդպես հեշտ ու հասարակ կատարել Կ. Պոլսից ստացված հրամանները և ոչխարի հոտի նման մորթոտել հազարավոր անմեղ մարդկանց: Ներքին նահանգներում տղամարդկանց հավաքում էին և պահակների հսկողության տակ ուղարկում իբր ուրիշ քաղաքներ, այնինչ այդ պատրվակով քողարկված սպանում էին նրանց, և մի քանի ժամից կամ օրից հետո պահակները վերադառնում էին իրենց գործն ավարտած:

Նվ այսպես, գաղտագողի ոչնչացնելով հայկական արական բնակչությանն ու կեղծելով իրողությունը, շարժերի կազմակերպիչ Թալեաթ փաշային ամեն կողմից հեռագրեր էին ուղարկում «հայկական ապստամբությունները» ճնշելու մասին: Ի պատասխան դրանց, տեղական իշխանությունները շնորհավորական ջերմ հեռագրեր էին ստանում իրենց հաջող գործողությունների առթիվ: Այդ կեղծ հեռագրական գրագրությունները, որպես Օսմանյան կայսրության սպառնացող անխուսափելի վտանգի կանխման անժխտելի ապացույցներ, ցույց էին տրվում Կ. Պոլսում գտնվող օտարերկրյա այն թղթակիցներին ու դիվանագետներին, որոնց լուրեր էին հասել հայերին կոտորելու անընդհատ կրկնվող դեպքերի մասին:

Պետք է նշել, որ սկզբնական շրջանում, բացառությամբ վանի նահանգի գյուղերից, ուր արդեն հենց սկզբում զենքերը հանձնած տղամարդկանց սպանելու հետ միաժամանակ կոտորել էին նաև կանանց ու երեխաներին, ուրիշ տեղերում բնակչության զանգվածային կոտորածներ տեղի չէին ունեցել:

Բայց այդ օրերին արդեն թուրքական կառավարությունն իրագործել էր իր նողկալի հայաջինջ ծրագրի կարևոր կետերից մեկը. 1915 թ. ապրիլի 24-ին (նոր տոմարով), գրեթե մի գիշերվա մեջ, Կ. Պոլսում մեկեն ձերբակալվեց արևմտահայ մտավորականության ընտրանին՝ մոտ 235 մարդ, նետվեց մութ զնդաններն ու քշվեց դեպի մահ: Ապրիլի 24—

26-ին, ընդամենը երեք օրվա ընթացքում, Կ. Պոլսում և գավառներում ձերբակալված մտավորականների թիվը, ներառյալ նաև եկեղեցականները, անցնում էր 760 հոգուց¹⁶: Ձերբակալվածներին Կ. Պոլսից տեղափոխեցին Անկարայի բանտը, այնտեղից էլ մի մասին աքսորեցին Այաշ, մյուսին՝ Չանդը և գրեթե բոլորին սպանեցին հենց աքսորի ճանապարհին: Ձերբակալվածների թվում էին հայ մշակույթի անզուգական մշակներ՝ Կոմիտասը, Սիամանթոն, Վարուժանը, Զոհրապը, Երուխանը, Ռուբեն Սևակը, Ռուբեն Զարդարյանը և հայ մտավորականության բազմաթիվ ուրիշ ակառավոր ներկայացուցիչներ, որոնցից հազիվ միայն 15 մարդ փրկվեց:

1915 թ. ապրիլի 20-ին նահանգապետ Զևեթ փաշան հայերի ընդհանուր կոտորածներն սկսելու ազդանշան տվեց վան քաղաքում: Տեղական ինքնապաշտպանության կազմակերպման, ռուսական զորքերի ու հայ կամավորների մասնակի առաջխաղացման և վանի գրավման շնորհիվ թուրքական յաթաղանի մահաբեր հարվածներից փրկվեցին հազարավոր հայեր: Բայց շուտով ռուսական զորքերը դադարեցրին առաջխաղացումը, որոշ տեղերում դիմեցին նահանջի և թուրքերի կողմից սկսվեց հայերի բնաջնջման նախօրոք մշակված ծրագրի լիակատար ու հետևողական իրագործումը:

1915 թվականի մայիսի 20-ին (նոր տոմարով հունիսի 2-ին) թուրքական կառավարությունը հրաման արձակեց այսպես կոչված դեպորտացիաների՝ այսինքն հայերին արաբական անապատները աքսորելու մասին: Այդ հրամանը իրականում նշանակում էր հայկական բնակչության քողարկված մահավճիռ: Պաշտոնապես այն նախատեսում էր մերձառազմաճակատային գոտու բնակիչների էվակուացիան՝ նկատի ունենալով իբր նրանց համակրանքը ռուսների նկատմամբ, դավաճանությունը թուրքական հայրենիքին և զին-

¹⁶ Տե՛ս «Հուշարձան ապրիլ տասնըմեկի» և «Դատավարություն Թալեաթ փաշայի», սղագրական զեկուցում, Վիեննա, 1921, էջ 95—96:

ված համագործակցութիւնը թշնամու հետ: Սակայն, ինչպես նշում է Իոհաննես Լեփսիուսը գաղտնի տեղեկագրերի ու ականատեսների վկայութիւնների հիման վրա գրած իր «Հայաստանի ջարդերը» գրքում, ուր մանրամասնորեն նկարագրված է իրենց հայրենիքից հայերի արտաքսման ու կոտորածների պատկերը, թուրքական կառավարութիւնը երբեք փաստերով չէր հաստատել հայ ժողովրդի դավաճանութիւնը, ապստամբելու նրա տրամադրութիւնը կամ թշնամու հետ համագործակցութիւնը: Ընդհակառակը, փաստերը վկայում էին «օսմանյան հայրենիքի» նկատմամբ հայերի պարտաճանաչութիւնն ու հավատարմութիւնը¹⁷: Չնայած այդպիսին էր իրականութիւնը, թուրքական իշխանութիւնները դեռևս մարտի վերջերից սկսել էին Կիլիկիայի՝ ուղմաճակատից հարյուրավոր կիլոմետրերով հեռու գտնվող այդ երկրամասի, հայ ազգաբնակչության տարագրութիւնը¹⁸:

Իրենց հայաջինջ ծրագիրն իրականացնելու համար թուրքական շովինիստներին միայն հարմար պատրվակ էր պետք և ահա թիվում էր շինծու պատճառաբանութիւնն այն մասին, թե՛ «հայերը համակրում են ռուսներին»: Երիտթուրքական մարդասպաններն ամենուրեք աղաղակում էին, թե հարկավոր է մաքրել ուղմաբեմն այդ վնասակար տարրերից և առաջ էին քաշում տեղահանութիւն ծրագիրը, որը գործնականում նշանակում էր հայերի անմարդկային ջարդեր ու կոտորածներ: Բնութագրելով հայերի տեղահանութիւն թուրքական ծրագրի էութիւնը, Լեփսիուսը նշում է, որ «տարագրութիւն ձեռնարկը շուտով և ամենեն հաճախ, վերածվեցավ կանոնավոր բնաջնջումի մը»¹⁹:

Թուրքական ներքին գործերի մինիստրութիւն 1915 թ. նոյեմբերի մի ժածկագիր հեռագրում ուղղակի նշված էր. «Օսմանոս անձնավորութիւնց (գաղտնի փաստաթղթերում այդպես էին անվանում հայերին—Չ. Մ.) առաքման (աքսորի—Չ. Մ.)

¹⁷ Տե՛ս Տոքթ. Եոհ. Լեփսիուսի գաղտնի տեղեկագիրը, «Հայաստանի ջարդերը», Կ. Պոլիս, 1919, էջ 9:

¹⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 170:

¹⁹ Նույն տեղում, էջ 142:

նպատակը հայրենիքին ապագա բարօրութիւն ապահովութիւնն է, որովհետև ատոնք՝ ուր որ ալ բնակեցվեն՝ դարձյալ ետ չպիտի կենան իրենց անիծապարտ գաղափարներն: Պետք է աշխատիլ, որ կարելի եղածին չափ նվազի անոնց թիվը»²⁰:

Եվ համատարած ջարդերից, անթուութիւնից ու հիվանդութիւններից ամեն օր հարյուրավոր հայեր էին զոհվում, որը և նրանց ընդհանուր տարագրութիւն գաղտնի ծրագրի միակ նպատակն էր: Այդ ծրագրում սկսով սպիտակի վրա գրված էր. «Դարերի ի վեր պետութիւն ամուր հիմը քանդելու բաղձացող և կառավարութիւն համար կարևոր փորձանքի մը երևույթը առած հայ տարրին ջնջումը թեև նախապես մտադրված էր, բայց ժամանակին ստիպումները այս սրբազան մտադրութիւնը իրականացնելու կարելիութիւն չէին ընծայեր: Հիմա, բոլոր արգելքները վերացած և հայրենիքը այս վնասակար տարրեն փրկելու ժամանակը հասած նկատելով, կարևորութիւն կհանձնարարվի, որ անոնց արգահատելի վիճակին հանդեպ գութի զգացումներու շհանձնվեք, և անոնց ընդհանուրին գոյութիւն վերջ տալով, Թուրքիո մեջ հայ անունին շմուշուն ոգի ի բոին աշխատիք: Ուշադրութիւն ընեք, որ այս նպատակը իրականացնելու կոչվելիք պաշտոնյաները հայրենասեր և վստահելի մարդիկ ըլլան»²¹:

Իոհաննես Լեփսիուսի վկայութիւնը՝ «հայերու տարագրութիւնը տեղի ունեցավ երեք տարբեր մարզերու մեջ և երեք հաջորդական ժամանակամիջոցներու» ընթացքում: Այդ երեք տարբեր մարզեր ասելով Լեփսիուսը նկատի ունի Արևմտահայաստանը կամ Արևելյան Անատոլիան (Տրապիզոն, Կարին, Սեբաստիա, Խարբերդ, Տիգրանակերտ, Վան, Բաղեշ վիլայեթներով), Արևմտյան Անատոլիան (Նիկոմեդիա, Պրուսա, Գասթեմունի, Գալաթիա, Կոնիա և այլն) և վերջապես Կիլիկիան ու Սիլիսիան (Ադանա, Մարաշ, Հայեպ, Անտիոք, Սուևտիա, Քե-

²⁰ Ա. Անտոնյան, Մեծ ոճիրը, Բոստոն, 1921, էջ 23:

²¹ Նույն տեղում, էջ 26:

սասպ, Իսկենդերուն, Քիլիս, Այնթապ, Ուրֆա)²²: Ահա հատկապես այս վայրերի հայութիւնն էր, որ ենթարկվեց թուրքական բարբարոսութիւններին՝ վայրենի ջարդերին ու անմարդկային տարագրութիւններին:

1915 թվականի մարտից մինչև հոկտեմբերն ընկած ժամանակամիջոցում, թուրքական կառավարութիւնը հետևողականորեն կենսագործեց հայ ժողովրդի բնագաղթեցման իր ոճրագործ մտադրութիւնը: Ամբողջ երկրով մեկ տարածվեցին հայկական բնակչության արտաքսելու մասին կառավարական գիւրեհտիվները, որոնք պարունակում էին մանրամասն հրահանգներ գործադրվելիք բռնութիւնների վերաբերյալ:

Այժմ, երբ ոչնչացված էին տղամարդիկ, անպաշտպան հայ վանանց ու երեխաներին էր հրամայվում ճանապարհ ընկնել դեպի արաբական անապատները: Մուսեփիկները հարայհրոցով բռնոր հայերին հայտարարում էին կառավարական հրամանի բովանդակութիւնը, որ այսինչ օրը, այսինչ ժամին պատրաստ լինեն մեկնելու անհայտ ուղղութիւն: Ոչ մեկին բացառութիւն չէր տրվում. ո՛չ հիվանդներին, ո՛չ ծերերին, ո՛չ էլ հղի կանանց: Միայն նրանք, ովքեր կրնդունեին մահամեղականութիւն և կհրաժարվեին հայութիւնից, կարող էին խուսափել ընդհանուր ճակատագրից: Բայց, ի պատիվ մեծ հազարավոր անթաղ նահատակների, պետք է ասել, որ իրականում հազվագյուտ մարդիկ գնացին այդ ճանապարհով: Ճանապարհին պատրաստվելու համար տարագրվողներին տրվում էր շատ կարճ ժամանակ: Աքսորավայրը երբեք նախօրոք չէր հայտնվում: Տարագրվողներին թույլատրվում էր վերցնել մինիմում սնունդ և հագուստեղեն: Տարագրվողներին առաջ էին քշում ոտքով, սովորաբար հեծյալ պահակախմբերի ուղեկցութիւնով: Երբեմն, բացառիկ դեպքերում, այն քաղաքացիներին, որոնք կարողանում էին կաշառել պահակախմբի պետին, թույլատրվում էր վարձել սայլեր, բայց այդ դեպքում ամենուրեք կրկնվում էր միևնույն բանը. սայլի տերը հայուհուց վերցնելով չլաված մեծ գումար, որոշ տարա-

ժութիւն անցնելուց հետո թողնում էր բեռը ճանապարհին և իր սայլով ետ դառնում քաղաք: Թուրքական փշխանութիւնները և ուղեկցող պահակները լիովին խրախուսում էին այդ արարքները: Տարագիրներին վիճակվեց ոտքով անցնել երեքից մինչև վեց շաբաթ տևողութիւնով ճանապարհ, կիզիչ արևի տակ, այրող անապատներով ու ձյունապատ լեռներով: Երբ նրանք անցնում էին քրիստոնյա գյուղերով, ուր դեռևս հայ բնակիչները չէին ենթարկվել տարագրման, աքսորյալներին չէր թույլատրվում ձեռք բերել սնունդ կամ որևէ այլ օգնութիւն ստանալ:

Հիվանդները, ծերերը և երեխաները ուժասպառ ընկնում էին այդ տառապալից ճանապարհների եզրին, որպեսզի աչքև աչքաճրճրանան, քայց ուղեկցող ժառոգամները մտրակահարելով նորից առաջ էին քշում նրանց: Անգամ երկուցի տանջանքների մեջ գտնվողներին զազանաբար առաջ էին քշում հարվածելով, մինչև որ վրա էր հասնում ծննդաբերութիւն պահը և նրանց այդ վիճակում անօգնական թողնում էին մեռնելու ճանապարհին²³:

Շատ թե քիչ գրավիչ աղջիկները վերցվում էին հարեմները կամ ուղեկցող պահակների կողմից ենթարկվում ամեն տեսակ անարգանքի, մինչև որ մահը նրանց կազատեր այդ տանջանքներից: Այդ պատճառով էլ ով կարող էր՝ գրկում էր իրեն կյանքից: Խելակորույս մայրերն իրենց երեխաներին նետում էին գետը, որպեսզի վերջ տալին նրանց տառապանքներին: Հարյուր հազարավոր աքսորյալներ այդ տաժանակիր ճանապարհին մեռան քաղցից, ծարավից, ցրտից, արևահարութիւնից ու լիակատար հյուսկանութիւնից: Հենց այդ էլ տարագրութիւն վերջնական նպատակն էր: Դա լավ էին հասկացել նաև քարավաններին ուղեկցող պահակները, որոնք իրենց հերթին բոլոր միջոցներով նպաստում էին հայերի ոչնչացմանը: Կառավարութիւնն անշուշտ գիտեր, թե ինչ է նշանակում այդպիսի ճանապարհորդութիւնը, և տարագրվողնե-

²² Տե՛ս Լեփսիուս, Հայաստանի ջարդերը, էջ 9:

²³ Տե՛ս «Ամերիկահայ հանրագիտակ տարեգիրք», Բոստոն, 1925, էջ 46—47:

րին առաջնորդող նրա կամակատարները անում էին ամեն քան, որպեսզի ավելի բազմապատկեն նրանց ֆիզիկական ու բարոյական տանջանքները: Անտանելի պայմանների պատճառով այդ դժբախտ ուղեորների շարքերը ճանապարհի սկզբում հարվում էին ամեն օր, ճանապարհի վերջում՝ ամեն ժամ: Նրանց ամենաջերմ ցանկությունն էր մեռնել որքան կարելի է շուտ, որովհետև ի՞նչ հույս կամ ուժ վարող էր մնալ նույնիսկ ամենադիմացկունների մոտ, երբ չէր երևում այդ սոսկալի տաժանակրություն վերջը: Եթե որևէ մեկը փորձում էր շեղվել այդ դժոխային ուղուց, անխղճորեն ֆոդակահար էր լինում տեղն ու տեղը: Հեծյալ քրդերն ու թուրքերը բաց էին թողնվում հետապնդելու նրանց՝ ում հաջողվում էր փախչել ուղեկցող պահակախմբերի հսկողությունից: Բայց այդ դեռ բոլորը չէր:

Ամենատաժանելի պահը վրա էր հասնում այն ժամանակ, երբ տարագրվող հայերի քարավանները բարձրանում էին լեռները, ուր ուղեկցող պահակների աչքի առաջ ավազակներն ուղղակի սպանում էին ծերերին ու երեխաներին, իսկ երիտասարդ կանանց ենթարկում ամեն տեսակ անարգանքի: Միայն ավազակի բուսեական քմահաճույքն էր որոշում՝ տանել հայ կնոջը լեռները, թե հենց այդտեղ, առանց հետաձգելու սպանել նրան: Գնալով բոլոր խմբերը քանակապես նվազում էին և այդ ժամանակ ուղեկցող պահակախմբերն սկսում էին ցուցաբերել անհամբերության նշաններ: Նրանց համար արդեն ցանկալի էր շուտափուլթ ազատվել դժվարին ճանապարհից, «հոգսաշատ» հանձնարարությունից ու թալանելու ոչինչ չունեցող հայ կանանց ու երեխաների խմբերից: Այդ դեպքում պահակներն իրենք էին սկսում անմիջականորեն սպանել դեռևս կենդանի մնացածներին: Ակղբում ոչնչացնում էին ետ մնացողներին, փակ ապա՝ ընդհանրապես բոլորին:

Գետանցումները, հատկապես Եփրատի անցումը, հայերի տարագրության ժամանակ հարմար տեղ է համարվել զանգվածային սպանություններ կատարելու համար: Հենց միայն Երզնկայի և նրա շրջակայքի հայերից ավելի քան 30.000 մարդ

խեղդամահ են արվել Եփրատում²⁴: Վերապրող տարագիրները պատմում են, որ երբ փրենց քարավանները հասնում էին գետեզրերին, ապա տեսնում էին հոսանքն ի վար լողացող դիակներ: Վկայում են, որ կանանց ու երեխաների դիակները անջատ-անջատ էին լինում, իսկ տղամարդկանցը՝ իրար կապկրպված էին լինում և լաստերի նման գետը նետված՝ գրեթե բոլորն էլ գրիատված վիճակում²⁵: Կանանց և երեխաներին մտրակահարելով ու սվինահարելով լցնում էին գետը, և, երբ նրանք փորձում էին փրկվել՝ կրակում էին նրանց վրա²⁶:

Շատ քշերին էր հաջողվում ինչ-որ հրաշքով փրկվել անխուսափելի մահից և հասնել մինչև «նշանակված տեղը»: Սակայն հայ գաղթականների համար տարագրության որոշակի ու մշտական վայրեր չէին նախատեսված: Թուրքական կառավարության բոլոր հրահանգները միշտ հանձնարարում էին՝ «կարավաններու ընկերացնելով ղրկեցեք անապատները», — այս անորոշ դարձվածքի իմաստն էր՝ թե ոչնչացրեք, որովհետև «նույնիսկ անապատներու մեջ հայ գաղթականները որոշ տեղ մը շունեին: Միշտ պետք էր ելլել, քաղել, երթալ, ո՛ւր, մարդ չէր գիտեր: Կրալքեր, որ տեղ մը շմանային երկար ատեն և քաղելով հատնեին»²⁷, — հետագայում պատմում է թուրքագրի Նայիմ բեյը: Նա այդ ժամանակ եղել է Հալեպի գաղթականների տեսչության գրիավոր քարտուղարը և նրա ձեռքով են անցել հայերի տարագրությանը վերաբերող շատ փաստաթղթեր, բայց իրեն «չարդարացնելու» պատճառով հեռացվել է պաշտոնից: Իրենց պատմական բնօրրանից ու հայրենի օջախներից բռնությամբ արտաքսված հայ տարագիրները հանգիստ չգտան նաև հեռավոր արաբական անապատներում:

²⁴ Տե՛ս „Армянский вестник“ շաբաթական հանդես, Մոսկվա, 1916, № 28, էջ 16:

²⁵ Տե՛ս Ավետիս Թեֆյան, Դրվագներ Ապրիլյան մեծ Լեղոնեն, Բեյրութ, 1957, էջ 101—102:

²⁶ ՀՄՄՀ 499 Ա, ֆ. 43, ց. 1, գ. 89, թ. 26 և հետո: Տարագրության ընթացքում կատարված շատ շարագրությունների մասին տե՛ս պատերազմի տարիների մամուլը և այլ նյութեր:

²⁷ Արամ Անտոնյան, Մեծ ոճիրը, էջ 88:

Տարագրութեան տառապալի ճանապարհն անցած և անմար-
դաբնակ անապատներում կուտակված հայ բնակիչները 1916
թվականին և նրանից հետո ենթարկվեցին թուրքական իշխա-
նությունների նոր, զարհուրելի եղեռնագործութուններին:

Կիլիկիայի, Կ. Պոլսի և մի քանի այլ վայրերի հայ բնա-
կիչները տարագրութեան ժամանակ համեմատաբար քիչ զո-
հեր էին տվել և կողոպտվել, քան հայկական նահանգներից ու
Սև ծովի ափերից անապատ քշված հայ աքսորյալները: Ըստ
Երևույթին, թուրքական իշխանութունները նախօրոք որոշել
էին նրանց արյունը թափել տարագրութեան վայրերում և այդ
նպատակով արաբական անապատներում կազմակերպվեցին
երեք մեծ ու սոսկալի ջարդեր: Առաջին ջարդի ժամանակ, ուր
տեղի ունեցավ Ռաս-ուլ-Այնում, զոհվեցին մոտ 70.000 հա-
յեր: Երկրորդ ջարդն իրականացվեց Ինթիլիի մեջ, ուր սրի
քաշվեցին մեծ մասամբ Բաղդադի երկաթուղագծի վրա աշ-
խատող ավելի քան 50.000 հայ տարագիրներ: Երրորդը, որը
եղավ անաստաբնակ հայութեան ամենագարհուրելի սպանու-
ղը, կատարվեց Տեր-Չորում, ուր կառավարիչ Ջեքի բեյի հրա-
մանով սպանվեցին ավելի քան 200 հազար մարդ²⁸: Այդ թվերը
միայն ջարդերի ժամանակ զոհված հայերի քանակն են ցույց
տալիս: Եթե դրան ավելացնենք նաև հիվանդութունների և
սովի հետևանքով տեղի ունեցած կորուստները, ապա անա-
պատների մեջ զոհվածների քանակը շատ ավելին կլինի:
Տասնյակ հազարավոր հայ տարագիրներ նահատակվել են
Հալեպում և Եփրատի երկայնքով ձգված գաղթականական
ուրիշ ճամբարներում²⁹, Ա. Անտոնյանի վկայությամբ, Մես-
քենում իրեն գտնված ժամանակ, մեկ օրվա ընթացքում մա-
հացողների միջին թիվը հասնում էր 300—500 մարդու, իսկ
Պապում միայն մեկ օրում վախճանվել են 1111 մարդ³⁰, Եթե
անգամ թուրքական իշխանութունների ջարդարարութունն էլ
չլիներ, միևնույն է, այդպիսի սրայմաններում հայ տարագիր-

²⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 18:

²⁹ Նույն տեղում, էջ 18—19:

³⁰ Նույն տեղում:

ներն անխուսափելի կորստյան էին դատապարտված: Ահա թե
ինչ դաժանագույն միջոցներով էին թուրքական շովինիստները
արաբական անապատներում ոչնչացնում հայ վանանց ու երե-
խաներին, որպեսզի «արմատախիլ» անեին մտացածին «հայ-
կական հեղափոխութունը» Փոքր Ասիայում:

* * *

Հայերի արտաքսումը իրենց սեփական օջախներից ամե-
նուրեք կատարվում էր գրեթե միևնույն պլանով և բռնի կեր-
պով արագորեն հայութունից դատարկվում էին բոլոր գյու-
ղերն ու քաղաքները՝ ենթարկվելով անխնա թալանի: Հայ-
կական բնակչության ոչնչացումը հիմնականում իրականաց-
վեց արտաքսման ընթացքում, ուստի հայերի տարագրութու-
նը հանդիսանում է նրանց բնաջնջման հաջորդական երեք
էտապներից մեկը: Հանգրվան առ հանգրվան՝ երկրում կազ-
մակերպված ջարդերի, տարագրութեան քարավանների ուղե-
գնացութեան ընթացքում և անապատների ամայի տափաս-
տաններում իրականացվեց արևմտահայութեան մեծամասնու-
թյան ոչնչացումը: Ավելի քան մեկուկես միլիոն հայերի այդ-
պես դուրս քշեցին հայրենիքից և աքսորեցին Սիրիայի ու
Միջագետքի համակենտրոնացման ճամբարները: Ինչպես ցույց
են տալիս անհերքելի փաստերը, այդ աքսորի նպատակը
ոչ միայն հայերին տնտեսապես քայքայելն ու սնանկացնելն
էր, այլև նրանց ֆիզիկական ոչնչացումը: Հենց այն հանգա-
մանքը, որ հայերը տարագրվում էին առանց մի որևէ ար-
տադրամիջոցի, որպեսզի գոնե նոր հաստատվելիք վայրերում
կարողանային վար ու ցանքով, արհեստներով և ուրիշ աշ-
խատանքներով զբաղվել ու իրենց գոյութունը պահպանելու
միջոցներ հայթայթել, ցույց է տալիս, որ դեպորտացիայի իս-
կական նպատակը նրանց անխնա ոչնչացումն էր: Տարագիր-
ներին ճանապարհին չէին մատակարարում պարենամթերք և
այլ անհրաժեշտ միջոցներ. տղամարդիկ առանձնացվում էին
կանանցից ու երեխաներից և աքսորվում ուրիշ վայրեր. ավե-
լի ճիշտ՝ զանգվածաբար կոտորվում: Հիվանդութունները,
ամենօրյա ծեծն ու խոշտանգումները և ուղղակի սպանու-

թյունները արագորեն հնձում էին տարագիրների շարքերը: Լավատեղյակ ականատեսների և այդ գողգողից վերապրողների հավաստի վկայություններ, հայկական նահանգներից տեղահանված բնակիչները մինչև իրենց աքսորավայրերը հասնելը գրեթե լիովին ոչնչանում էին ճանապարհին և մի քանի հարյուր ու նույնիսկ հազար հոգուց բաղկացած ամեն մի քարավանից հազվով կենդանի էին մնում մի քանի տասնյակ հյուծված ու կմախքացած մարդկային կերպարանք հիշեցնող ուրվականներ:

Այսպիսով, տարագրվողներից շատ քերին էր հաջողվում ինչ-որ հրաշքով հասնել մինչև «նշանակված տեղը», ուր ստացականով հանձնվում էին իշխանություններին՝ նրանց նկատմամբ վճռված դատաստանը մինչև վերջ կատարելու համար: Նրանք, ովքեր վերջիվերջ հասնում էին համակենտրոնացման ճամբարները, այնտեղ էին մեռնում սովից, հիվանդություններից և այլ աղետներից:

Տարագրությունը բնավ չսահմանափակվեց մերձազմաճակատային գոտով, այլ տարածվեց Թուրքիայի հայաբնակ բոլոր բնակավայրերի և նույնիսկ Կ. Պոլսի վրա: Ընդհանուրի միահամուռ կարծիքով (որին բնավ չհակաճառեցին թուրքական իշխանությունները, քանի դեռ նրանց թվում էր, թե իրենց ռազմական գործերը լավ են գնում և հաղթողներին չեն դատում), այդ բոլոր ջանքերի արդյունքը եղավ համաշխարհային պատմության մեջ նորագույն ժամանակներում աննախընթաց պլանայափ ոչնչացումը հայ ժողովրդի 1/4-ի:

Բնաջնջելով հայկական բնակչության արական մասը, թուրքական կառավարության հաջորդ քայլը եղավ հայ կանանց ու երեխաների ոչնչացումը: Կարծես թե գառամյալ ծերերը, կանայք ու երեխաները նույնպես վտանգ էին ներկայացնում Օսմանյան կայսրության անվտանգության համար: Միանգամայն պարզ էր, որ թուրքական շովինիստների նպատակը ամբողջ հայության բնաջնջումն էր:

Եվ այսպես, ընդամենը մի քանի ամսվա ընթացքում թուրք ջարդարարներն անպատիժ կերպով հայազրկեցին Հայաստանը: Արդեն իրենց շարագործություններն ավարտելուց

հետո, Թալեաթ փաշան ամերիկյան դեսպան Հենրի Մորգենթաուին բացեիբաց խոստովանել էր, որ հայերի վերաբերմամբ իրենց քաղաքականությունը նախօրոք որոշված էր և ոչինչ չէր վարող այն փոխել: Ուստի բնավ պատահական չէր, որ այդ ծրագրի կենսագործումից հետո նա ըկտիպար պարծենում էր, թե «հայկական խնդիրը լուծելու տեսակետով երեք ամսվա մեջ ես ավելի գործ կատարեցի, քան Ապտյուլ Համիտ երեսուն տարվա մեջ»³¹: Արդեն 1916 թվականին, առանց խորհրդի փոքր-ինչ խայթ գգալու, այդ արյունարբու հրեշտակակեց հայտարարել, թե «հայկական հարցն այլևս գոյություն չունեն»³²: Այսպիսով, նա ժամանակը հասունացած էր համարել պարծենալու այն բանից հետո, ինչ 1915—1916 թվականներին իրենց ծրագրի համաձայն տեղի էր ունեցել Հայաստանում:

Հայ ժողովրդի բնաջնջման ծրագրերն ու դրանց իրագործման մեթոդները բխել են երիտթուրքերի կառավարության համախառմական ձգտումներից, բայց երբեք չեն եղել հայ ժողովրդի անուղղամիտ արարքների արդյունքը, ինչպես փորձել են քացատրել թուրք ջարդարարներն իրենց «ճրագործությունները»:

Նյու-Յորքում Թուրքիայի հյուպատոս Ջելալ Մյունիֆ բեյը, անդրադառնալով հայկական կոտորածների վերաբերյալ ամերիկյան կոմիտեի հրատարակած հաշվետվությանը, դեռ 1916 թ. հայտարարել էր, թե «որքան էլ ցավալի են այդ դեպքերը, այնուամենայնիվ, մենք վարող ենք ասել, որ դրանց մեղավորները հանդիսանում են իրենք հայերը»³³: Այնուհետև Ջելալ Մյունիֆ բեյը նշել էր, որ իբր հայերը մտադրվել էին ապստամբել ու տապալել թուրքական կառավարությունը և ոչնչացվել են միայն օրինական իշխանություններին դիմադրելիս, երբ նրանց բռնել են դեռ ձեռքերը արյունից շորացած վիճակում: Ահա մշտական դարձած այն «բացատրություն»

³¹ «Մորկընթաուի հիշատակները», էջ 284:

³² E. B. Tarle, Сочинения, том V, Москва, 1958, стр. 308.

³³ Герберт Адамс Гиббонс, Последние избиения армян, Петроград, 1916, стр. 20.

նր», որ անպատկառորեն կրկնում էին թուրքական պաշտոնական շրջանները հայերի կոտորածների մեղադրանքը հերքելու նպատակով: Այդպես էին արդարանում թուրք ջարդարարները 1895—96 թվականներին, 1909 թվին և վերջապես 1915—1916 թվականներին: Բայց ոչ ոք երբեք չէր բերում և չէր կարող բերել այդ «բացատրությունների» ճշմարտացիությունը հաստատող փոքր-ինչ հիմնավոր փաստեր: Միանգամայն ակներև է, որ նման բացատրությունները քննադատության չեն դիմանում և ոչ մի կերպ չի կարելի դրանց շատ թե քիչ հավատ բնծայել:

Երկար տարիներ թուրքիայում որպես թղթակից աշխատած Հերբերտ Գիրբունսը նշում է, որ բացառությամբ Վանի, թուրքերը ոչ մի տեղ նվազագույն հիմք չունեին կասկածելու, թե հայերի փորձերը՝ զենքը ձեռքներին պաշտպանելու իրենց կանանց ու երեխաներին, համաձայնեցված են թշնամու, այսինքն՝ ուսական բանակի գործողությունների հետ: Բայց հայտնի է, որ Վանը միայն մեկն էր Փոքր Ասիայի ավելի քան երեք տասնյակ այն կետերից, ուր տեղի են ունեցել հայերի կոտորածներն ու արտաքսումը³⁴: Վանի հայության մեկամայաօրհասական ինքնապաշտպանությունը թուրքերը որակեցին որպես «հայկական ապստամբության» սկիզբ, որպեսզի օգտագործեին այդ պատրվակը հայերի զանգվածային ջարդերի ու բռնագաղթը իրագործելու համար:

Հայկական կոտորածներն ու տարագրությունները հիմնականում տեղեցին մինչև 1915 թ. դեկտեմբերը, դրանից հետո սկսվեց կենդանի մնացածների բռնի խլամացումը (այն նույնպես ուղեկցվում էր կատաղի ջարդերով), որը շարունակվեց մինչև թուրքիայի պարտությունն ու հաղթողների ողորմածությանը անձնատուր լինելը, այսինքն՝ մինչև 1918 թվականի աշունը:

Թուրքական կառավարությունը ամեն կերպ քաջալերում ու խրախուսում էր հայերի նկատմամբ կատարվող ոճրագործությունները, դրանք հայտարարելով «հայրենասիրական սուրբ

պարտականություն», պարզենք էր տալիս նրանց, ովքեր ավելի շատ հայեր էին սպանում: Հայտարարվում էին հայերին ջարդող շատ «հերոսների» անունները: Ոճրագործների պարագլուխը՝ ներքին գործերի մինիստր Թալեաթ փաշան, 1915 թ. հոկտեմբերի 3-ին Հալեպ ուղարկված ծածկագիր հեռագրում նախազգուշացնում էր շհետապնդել հայերի նկատմամբ կատարվող ոչ մի հանցագործություն³⁵:

Մի այլ հրահանգով Թալեաթը հայտնում էր, որ հայերի դեմ գործված արարքների մասին կառավարական հիմնարկներին և պաշտոնյաներին ուղղված նրանց բողոքները կարելի է ընդունել, բայց դրանց քննությամբ իզուր ժամավաճառ չլինել: «Բողոքողներուն կհաղորդեք, որ կորսնցուցած իրավունքներն իրենց տարագրության վայրերուն մեջ հետապնդեն»: Իսկ «տարագրության վայրեր» ասվածը իրականում անապատների սպանդանոցներն էին հենց այդ բողոքողների համար, իսկ բողոքով զբաղվողներն էլ՝ դահիճները հայ տարագիրների:

1915 թ. սեպտեմբերի 16-ին Հալեպ ուղարկված ստորե բերվող Թալեաթի հեռագիրը շատ ակնհայտ ու բնորոշ է հայկական կոտորածների կազմակերպված և նախորոշված բընուլթն ապացուցելու համար: Այդ հեռագրում ասված էր, որ «կառավարությունը, Ճեմիյեթին (Իթթիհատի Քոմիթեին) հրամանով, որոշած էր ամբողջովին փշացնել թուրքիո մեջ բնակող ընդհանուր հայությունը: Այս հրամանին ու որոշման հակառակողները պետության պաշտոնական կազմին մաս չեն կրնար մնալ: Կին, տղա, անկար նկատի շառնելով, փշացման միջոցները, որքան ալ եղբրական ըլլան, խղճի զգացումներու ականջ չկախելով՝ անոնց գոյության վերջ տալու է»³⁶:

Եվ թուրք դահիճները, առանց խղճի ու զգացմունքի, շտեմնված ու չքված եղեռնական միջոցներով տեղահանեցին ու ոչնչացրին արևմտահայության մեծամասնությունը: Թուրքական ջարդարարները, նկատի ունենալով այն հանգաման-

³⁴ Տե՛ս նույն տղեում, էջ 11.

³⁵ Տե՛ս Ա. Անտոնյան, Մեծ ոճիրը, էջ 201.

³⁶ Նույն տղեում, էջ 209—210.

քը, որ նախորդ կտորածների ժամանակ իսլամացած հայերը փոթորիկն անցնելուց հետո նորից վերադարձել էին իրենց ազգի գիրկը, այս անգամ արդեն նույնիսկ իսլամացողներին չէին խնայում, այլ ոչնչացնում էին բոլորին: Մեզ արդեն ծանոթ նայիմ բեյի իսկ խոստովանությանը «հայոց եղբրական տարագրության և սպանության խնդիրը, որ թուրք անունը մարդկության հավիտենական անեծքին արժանի կդարձնե... համաշխարհային պատմության մինչև այսօր արձանագրված զարհուրելի դեպքերեն ոչ մեկուն կնմանի: Թուրքիո ընդարձակ հողամասին որ անկյունն ալ որոնվի, որ ամենամութ խորշն ալ խուզարկվի, ամենաանգութ կերպով խողխողված հազարավոր հայու դիակներ պիտի գտնվին»³⁷:

Թուրքական կառավարությունը, արդարացնելու համար իր ոճիրները, հայկական ջարդերն ու տեղահանությունը հայտարարել էր պետական անհրաժեշտություն: Թուրքական կառավարությունը պատճառաբանում էր, թե հայերը պատրաստվել էին ընդհանուր ապստամբություն բարձրացնելու՝ նպատակ ունենալով սահմանազուխներին կտրել թուրքական բանակի հաղորդակցության ճանապարհները՝ դուրացնելու համար իրենց դաշնակից զորքերի, մասնավորապես ռուսական բանակի մուտքը Թուրքիա:

Սակայն փաստերն ապացուցում են հակառակը, որ հայերը բնավ այդպիսի մտադրություն չունեին և դեռ պատերազմը չսկսված, թուրքերն էին փորձում հայերի և կովկասյան մյուս ժողովուրդների միջոցով ապստամբություն բարձրացնել Անդրկովկասում՝ ընդդեմ Ռուսաստանի: Եվ երբ անհաջողությամբ վերջացավ պանթուրքիզմի դիրքերից բխող այդ պլանի կենսագործումը, երիտթուրքերը որոշեցին վերջ տալ Թուրքիայում ապրող հայերի, հույների և քրիստոնյա մյուս ազգերի գոյությանը: Ոչ ոքի համար գաղտնիք չէր, որ հայ ժողովրդի բնաջնջումը պատահական դեպքերի արդյունք չէր, այլ նախօրոք մտածված և պետական իշխանության կողմից վայրագորեն գործադրված մի ոճիր:

³⁷ Նույն տեղում, էջ 19—20:

Վերլուծելով հայության նկատմամբ Թուրքիայում տեղի ունեցած ամբողջ անցողարձը, Իոհաննես Լեփսիուսը գրում է. «Այն իրողությունները զորս պարզեցինք, աներկբայելիորեն ի հայտ կուգա, թե տարագրությունները հրամայված և գործադրված էին Կ. Պոլսո կեդրոնական կառավարության կողմից» և «չի կրնար ամեն հակակշիռն խուսափող դիպվածական պատճառներու արդյունք ըլլալ», չի կարող առանց նախապես ծրագրվելու այդքան հսկայածավալ մի երկրում այդպես համատարած կերպով գործադրվել»³⁸:

Անտանտի կողմից Դարդանիլը պաշարելու հենց սկզբից Կ. Պոլսում արդեն բոլորը կանխագգում էին, որ թուրքական շովինիստները հասունացած են համարում ժամանակը վերջապես գործադրելու հայության վաղուց ի վեր հաստատված և թուրքական կառավարության դիվանում գաղտնի պահվող մահավճիռը:

Հայկական ջարդերի կազմակերպիչ և ոգեշնչող Թալեաթ փաշայի գաղտնի հրամաններից մեկում ասված է. «Թեև հայկական տարրի բնաջնջումը նախօրոք որոշված էր, հանգամանքները թույլ չէին տալիս իրականացնել այդ սրբազան գործը: Այժմ բոլոր խոշընդոտները վերացված են... ստիպողաբար խորհուրդ է տրվում չենթարկվել կարեկցության զգացմունքին, բոլորին ոչնչացնելով աշխատեցեք վերացնել Թուրքիայում «Հայաստան» անունն անգամ: Հետևեցեք, որպեսզի նրանք, ում վերապահվելու է այս խնդրի իրականացումը, լինեն հայրենասեր և վստահելի անձինք»³⁹:

Թուրքիայում հայ ժողովրդի բնաջնջումը գուժող լուրերը խոր գայրույթով ընդունեցին բոլոր երկրների առաջադեմ մարդիկ: Նրանց լավագույն ներկայացուցիչներն իրենց արդար բողոքի ձայնը բարձրացրին հարյուր հազարավոր անմեղ մարդկանց նկատմամբ գազանային դատաստանի հեղինակների դեմ և բազմամարդ միտինգներում, ժողովներում ու մամուլում անարգանքի սյունին գամեցին ջարդարար հան-

³⁸ Տե՛ս Լեփսիուս, Հայաստանի ջարդերը, էջ 165:

³⁹ «Արևելագիտական ժողովածու», Երևան, 1960, էջ 396:

ցագործներին: Հայութեան ոչնչացման դեմ իրենց ցատումնալից խոսքն ասացին Մարսել Կաշենն ու Անատոլ Ֆրանսը, Վալերի Բրյուսովն ու Յան Ռայնխար, Կարլ Լիբկնիխտը և շատ ուրիշներ:

Հայկական եղեռնը ոգեշնչող Գերմանիայում էլ եղան մարդիկ, որոնք վճռականապես բողոքեցին թուրք-գերմանական ջարդարարների դեմ: Պրոֆեսոր Իոհաննես Լեփսիուսը հրատարակեց հայկական կոտորածների իսկությունը պարզաբանող և այն իրականացնողներին մերկացնող մի շարք փաստաթղթերի ժողովածուներ⁴⁰:

Գերմանական կառավարության դեմ առաջ քաշված ամենահիմնական մեղադրանքն այն էր, որ նա չկամեցավ հօգուտ հայության գործել այն պահին, երբ միայն ինքը կարող էր ազդել թուրքական իշխանությունների վրա և կանխել հայերի բնաջնջումը: Ընդհակառակը, գերմանական իմպերիալիստները համագործակցության մեջ էին գտնվում թուրք ջարդարարների հետ: Եվ երբ փորձում ենք փնտրել հայերի կոտորածներն առաջ բերող իսկական պատճառները, ապա հայտնաբերվում են փաստեր, որոնք ակնառու կերպով խոսում են գերմանական կառավարության մեղսակցության մասին: Թուրքիայի հետ միասին միայն Գերմանիան և գերմանական մոնոպոլիստներն էին շահում հայերի կոտորածներից ու տեղահանությունից, որովհետև վերջիններս լրջորեն խոչընդոտում էին Փոքր Ասիայում գերմանական գերիշխանության հաստատմանը:

Պատերազմում գերմանա-թուրքական բլոկի պարտությունից հետո գերմանական հանցավորներն աշխատում էին իրենց ոճրագործությունների արդարացում գտնել և փորձում էին ցույց տալ, թե ընդհակառակը, իրենք միշտ էլ համակրանքով են վերաբերվել հայոց դատին: Այդ տեսակետից խիստ բնորոշ էր Սողոմոն Թեհլերյանի դատավարությունը: Հայկական

կոտորածների ժամանակ իր հարազատներին կորցրած Ս. Թեհլերյանը 1921 թ. մարտի 15-ին սպանեց Թուրքիայի շախախումից հետո Կ. Պոլսից Բեռլին փախած Թալեաթ փաշային: Գերմանական դատարանն արդարացրեց Թեհլերյանին: Ավելին, գերմանական մամուլում լույս տեսան հողվածներ, որոնք պահանջում էին բացահայտել հայ ժողովրդի ոչնչացման գործում Կ. Պոլսում եղած գերմանական դիվանագետների և ռազմական գործիչների, մասնավորապես դեսպան Վանգենհայմի, բարոյական մեղսակցության աստիճանը և պատասխանատվության կանչել հանցավորներին⁴¹:

Արևմտահայերի կոտորածների մասին առաջին լուրերն ստանալով, Ամենայն Հայոց Կաթողիկոսը հեռագրեր է ուղարկում Անտանտի կառավարություններին ու չեզոք պետություններին, որպեսզի նրանք կանխեն թուրքերի շարագործությունները: Հայ գրողների Կովկասյան ընկերության նախագահ Հովհաննես Թումանյանը նույնպես բազմաթիվ հեռագրեր ուղարկեց Եվրոպայի և Ամերիկայի գիտական, գրական, ուսումնական հաստատություններին և ընկերություններին՝ խնդրելով նրանց ազդու բողոքն ու անհապաղ միջամտությունը հայ ժողովրդի բնաջնջումը թուրքիայում դադարեցնելու համար: Ոչինչ սակայն չօգնեց: Անտանտի տերությունները, ինչպես նաև 1915—1916 թթ. դեռևս չեզոք համարվող Ամերիկայի Միացյալ Նահանգները միանգամայն անզոր դուրս եկան որևէ ձևով թուրքական կառավարության վրա ազդելու համար կամ չցանկացան վճռականորեն միջամտել այդ իրադարձություններին:

Ահա թե ինչու երիտասարդ թուրքերի կառավարությունը, վայելելով վիլհելմյան Գերմանիայի աջակցությունը, օգտը վելով Անտանտի երկրների թողալությունից, անարգել առաջ տարավ իր արյունոտ գործը մինչև վախճան: Պատերազմի վերջում անուղղելի շարագործություններն ըստ էության արդեն ավարտված էին:

— Թուրք ջարդարարները լիովին վստահ էին, որ իրենց քա-

⁴⁰ Տե՛ս նաև „Bericht über Lage des armenischen Volkes in der Türkei“, Potsdam, 1916, և „Deutschland und Armenien 1914—1918. Sammlung diplomatischer Aktenstücke“, Hrsg. von der Dr. J. Lepsius. Potsdam, 1919.

⁴¹ Տե՛ս «Դատավարություն Թալեաթ փաշայի», էջ 89—90:

դաքականության հետևանքով պիտի ոչնչացվի ամբողջ արևմտահայկաթյունը և նրանց մեղքը չէ, եթե համենայն դեպս այդ ահավոր եղեռնից պատահականորեն փրկվեցին ու աշխարհում ողջ մնացին մի քանի հարյուր հազար արևմտահայեր:

Չնայած լուրջ դժվարություններին, անհրաժեշտ է գոնե մոտավորապես պարզել, թե համաշխարհային պատերազմի տարիներին, մասնավորապես 1915—1916 թվականներին, թուրքական ջարդարարների ձեռքով, որքան հայեր զոհ գնացին զանգվածային կոտորածների ժամանակ, տեղահանության ճանապարհին և արաբական անապատների ավազուտներում, որպեսզի ավելի պարզ ու որոշակի դառնա երիտթուրքական կլիկի ռճրագործությունների ամբողջ պատկերը:

Այդ հարցի լուծումը դժվարանում է ոչ միայն այն պատճառով, որ անհնար է վերականգնել զոհերի ճշգրիտ թիվն ընդհանրապես, այլև այն բանի հետևանքով, որ նախքան պատերազմն անգամ ստույգ տվյալներ չկան արևմտահայերի քանակի մասին: Հայության թիվը թուրքիայում որոշելիս, բնավ չի կարելի վստահել թուրքական աղբյուրներին, որովհետև այնտեղ երբեք ճշգրիտ մարդահամար չի կատարվել: Կառավարությունը միշտ էլ դիտավորյալ կերպով խեղաթյուրել ու նվազեցրել է քրիստոնյաներին վերաբերող վիճակագրական տվյալները, որպեսզի ցույց տա, թե իբր նրանք չունեն փոքրամասնություն են կազմել օսմանյան թուրքերի և ընդհանրապես մահմեդականների համեմատությամբ: Այնինչ մինչև 19-րդ դարի կեսերը հայերը Արևմտահայաստանում կազմում էին բնակչության բացարձակ մեծամասնությունը: Բայց այդ ժամանակներից արդեն սկսվում է հայ ժողովրդի սիստեմատիկ բնաջնջման քաղաքականությունը, որը հասցրեց ողբերգական հետևանքների: Աբդուլ Համիդի և երիտթուրքերի տիրապետության տարիներին թուրքական կառավարությունը զանգվածաբար կոտորելով ու դուրս մղելով հայերին, նրանց տեղերում բնակեցնում էր թուրք մուհաջիրներին (գաղթականներին), քրդերին, շիրքեզներին և այլոց: Մյուս կողմից՝ կյանքի ապահովության երաշխիքի բացակա-

յության, աղքատության և սիստեմատիկ բռնությունների ու հետապնդումների հետևանքով, հայերը հարկադրված էին լինում գաղթել Ռուսաստան, Բալկանյան երկրներ, Ամերիկա և այլուր: Հարյուրավոր հայկական գյուղեր, որոնց նկարագրությունները կան մեր պատմա-ազգագրական ու աշխարհագրական գրականության մեջ, անհայտացել են 19-րդ դարի վերջին հիսնամյակի ընթացքում:

Սակայն, չնայած հայության թիվը նվազեցնելու ուղղությամբ թուրքական շովինիստների հետևողական ձգտմանը, այնուամենայնիվ, մինչև առաջին համաշխարհային պատերազմի եղեռնական իրադարձությունները, արևմտահայության հիմնական զանգվածն ապրում էր իր հայրենիքում:

Վահան Տերյանը, անդրադառնալով այդ հարցին, հանգել է այն հետևությունը, որ, եթե մինչև 17-րդ դարը հայերն իրենց հարազատ երկրում՝ Հայաստանում (խոսքն Արևմտահայաստանի մասին է) կազմում էին ամբողջ ազգաբնակչության 98 տոկոսը, ունենալով 2 տոկոս մահմեդական բնակչություն, ապա արդեն 1914 թ. նրանք կազմում էին Հայաստանի ամբողջ ազգաբնակչության միայն 42 տոկոսը, իսկ մնացած 58 տոկոսը թուրքեր էին, հույներ, քրդեր, եփդիներ, ղզբաշներ և այլն, ընդ որում ամբողջ մահմեդական բնակչությունը կազմում էր Հայաստանի ազգաբնակչության 38 տոկոսը: Բայց և այնպես, պատերազմն սկսվելուց առաջ հայերը կազմում էին Հայաստանի բնակչության ամենամեծ թիվն ունեցող ազգային խումբը⁴²:

Ըստ Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի վիճակագրության, Օսմանյան կայսրության սահմաններում 1912 թվականին ապրում էին 2,1 միլիոն հայեր, որից 1,018 հազար՝ Արևմտահայաստանում, 145 հազար՝ հայկական վեց նահանգներին սահմանակից գավառներում, 407 հազար՝ Կիլիկիայում և 530 հազար՝ պետության մյուս մասերում: Արևմտահայաստանում հայերը կազմում էին ամբողջ բնակչության 38,9 տոկոսը, մինչդեռ այդ վայրերում թուրքերի թիվը հաս-

⁴² Տե՛ս Վ. Տերյան, Երկր, Կ. 4-րդ, Երևան, 1956, էջ 586.

նում էր 663 հազարի կամ 25,4 տոկոսի, քրտերը կազմում էին 16,3 տոկոս, մնացած ժողովուրդները՝ 19,4 տոկոս: Բոլոր քրիստոնյաները միասին վերցրած կազմում էին ազգաբնակչության ընդհանուր քանակի 45,2 տոկոսը⁴³:

Հայկական պատվիրակների կողմից Փարիզի խաղաղության կոնֆերանսին ներկայացված վիճակագրական տվյալների համաձայն հայության թիվը Թուրքիայում 1914 թ. եղել է՝ հայկական նահանգներում՝ 1,403 հազար, Կիլիկիայում՝ 440 հազար և Կ. Պոլսում ու կայսրության եվրոպական մասում՝ 183 հազար, ընդամենը՝ 2,026 հազար մարդ⁴⁴: Արևմուտահայ անվանի բանասեր Թեոդիկը և Թուրքիայում հայերի թիվը պատերազմից առաջ հաշվում էր 2,026,700 մարդ⁴⁵, Այսպիսով, կարելի է վստահորեն պնդել, որ նախապատերազմյան Թուրքիայում ապրում էր ավելի քան երկու միլիոն հայություն:

Մոտավորապես վերականգնելով նախքան պատերազմը Թուրքական տիրապետության տակ ապրող հայերի ընդհանուր թիվը, անհրաժեշտ է պարզել նաև նրանց կրած կորուստները: Ուրեմն դառնանք այն հարցին, թե որքան հայեր զոհվեցին ու բռնազաղթի ենթարկվեցին համաշխարհային պատերազմի ժամանակ:

Հայ ժողովրդի կրած վնասները պատերազմում հսկայական են ու անվերադարձ: Ուրիշ ժողովուրդների կորուստները սակավ դեպքերում են գերազանցում նրանց թվի 10 տոկոսը, մինչդեռ հայության զոհերը կազմում են նրա ընդհանուր քանակի ավելի քան $\frac{1}{4}$ -ը, իսկ արևմտահայության՝ $\frac{2}{3}$ -ը:

Եվրոպական, մասնավորապես անգլիական ու ֆրանսիական պաշտոնական աղբյուրների համաձայն, համաշխարհա-

⁴³ Տե՛ս «Сборник дипломатических документов. Реформы в Армении», Петроград, 1915, էջ 289:

⁴⁴ Տե՛ս «Армянский вопрос перед мирной конференцией», Екатеринбург, 1919, էջ 21 և 23:

⁴⁵ Տե՛ս Թեոդիկ, Ամենուր տարեցույցը, Կ. Պոլիս, 1922, էջ 263:

յին պատերազմի ժամանակ Թուրքական շարդաբարների ձեռքով զոհվել են 800,000 հայեր, մի այդքան էլ բռնազաղթի միջոցով, ինչպես նաև ինքնակամ կերպով հեռացել են երկրից, քայքայ նրանց հազիվ $\frac{1}{3}$ -ը անվնաս տեղ է հասել ու ողջ մնացել:

Ըստ պրոֆեսոր Լեփսիուսի՝ 1915—1916 թթ. Թուրքիայից տեղահանվեց առնվազն 1,400,000 հայություն, որի հազիվ 10 տոկոսը արքայազնի հասավ, իսկ մնացած 90 տոկոսը շարդվեց ու ոչնչացավ տարագրության ճանապարհին⁴⁶:

Պողոս Նուբար փառալուսի գլխավորած Ազգային պատվիրակության հավաքած տվյալներով արևմտահայերի ընդհանուր կորուստը հասնում է մեկ ու կես միլիոն մարդու: Ոմանք հաշվում են մեկ միլիոն երկու հարյուր հազար, ուրիշները՝ միլիոնից մի քիչ պակաս:

Այդ հարցը պարզելու դժվարությունը կայանում է նրանում, որ մի կողմից ստույգ տվյալներ չկան պատերազմից հետո Թուրքիայում ապրող հայության քանակի մասին, իսկ մյուս կողմից՝ թերի են տեղեկությունները գաղութահայության վերաբերյալ: Բացի Ամերիկայից, մյուս գաղութների վերաբերյալ գրեթե չկան անհրաժեշտ վիճակագրական տրվյալներ ու աղբյուրներ, որոնք գեթ մոտավոր չափով բավարարեն գիտական նվազագույն պահանջներին և համապատասխանեն իրականությանը: Հայտնի չէ նույնպես թիվն այն հայերի, որոնք հարկադրաբար մահմեդականացած կամ առանց կրոնափոխության ապրել են Թուրքերի, քրդերի և արաբների մեջ: Պատերազմից հետո Թուրքիայում մնացած հայերի վերաբերյալ սկզբնական շրջանում հանրային գործածովության մեջ էր 100,000 թիվը, քայքայ ակնհայտ է դրա խիստ նվազեցված լինելը: Պետք է ենթադրել, որ նրանց քանակը անհամեմատ ավելի մեծ էր, քան փնդունվել է սովորաբար:

Վերահիշյալ կենտոտ հարցերին փորձել է պատասխանել Թեոդիկը: Նա հավաքել ու հրատարակել է տեղահանություն-

⁴⁶ Տե՛ս Ափսիուս, Հայաստանի շարդերը, էջ 312:

նից առաջ և հետո, 1921 թ. ապրիլի 1-ի դրությամբ, Օսմանյան կայսրության մեջ ապրող հայ բնակչության բաղադրական վիճակագրությունը, որի համաձայն պատերազմից առաջ Թուրքիայի հայ բնակչության թիվը կազմում էր 2,026,700 մարդ, իսկ ջարդերից և տեղահանությունից հետո վերապրողներինը՝ 592,200⁴⁷: Անհրաժեշտ է նշել, որ Թուրքիայում մնացած հայերի քանակի հետպատերազմյան ժամանակաշրջանի վերաբերյալ եղած տվյալները պետք է ընդունել խիստ վերապահությամբ: Նրանցից շատերը զինադադարից հետո հատկապես Կիլիկիա վերադարձածներն են, որոնք հետագայում կրկին ենթարկվեցին անմարդկային ջարդերի՝ այս անգամ արդեն քեմալականների կողմից: Բաղադրությունը նախապատերազմյան և հետպատերազմյան ժամանակների հայկական բնակչության քանակը ցույց տվող թվերը, պարզվում է, որ 1915—1916 թթ. կազմակերպված հայկական ջարդերի հետևանքով Թուրքիայում զոհվել են մոտ մեկուկես միլիոն հայեր⁴⁸, իսկ մնացածները՝ մեծ մասամբ կանայք ու երեխաներ, ցրվել են աշխարհով մեկ՝ ստեղծելով հայկական ընդարձակածավալ սփյուռքը:

* * *

Արևմտահայության այդ հալածական բեկորները ձգտելով փրկվել անխուսափելի ոչնչացումից, փորձում էին ամենափոքր իսկ հնարավորության դեպքում հեռանալ արաբական անապատներից, մեկնել Եվրոպա, Բալկաններ, Ամերիկա և այլուր, հուսալով գտնել օթևան ու փրկություն: Սակայն ամենուրեք նրանք հանդիպում էին անասելի դժվարությունների և, ցրվելով զանազան երկրներում, անտուն ու անհույս դեգերում էին, կրելով նորանոր զրկանքներ:

Երբ այսպես օրեցօր հարվում էին հայության վերջին բեկորներն արաբական անապատներում և այլ երկրներում, ողբալի վիճակ էին ապրում նաև Անդրկովկաս ապաստանած

հայ փախստականները: Ճիշտ է, այստեղ չկար Թուրքական արյունոտ յաթաղանի անխնա բնաջնջումը, բայց այստեղ էլ իրենց սև գործն էին կատարում սովին ու համաճարակ հիվանդությունները: Այդ տարիների հայկական մամուլի էջերը լի են գաղթականների աղեկտուր պատմությունների նկարագրություններով, որոնց վերհիշումն անգամ այսօր սարսուռ է ազդում:

Անդրկովկասի աշխատավորներն ու առաջավոր հայ մտավորականները ջանում էին հնար եղածին շափ թեթևացնել իրենց արևմտահայ եղբայրների տառապանքը, սակայն նրանք շատ թե քիչ շոշափելի օգնություն չէին կարող կազմակերպել, որովհետև իրենք ևս գտնվում էին ծայրահեղ կարիքի մեջ: Այդ տարիներին ստեղծվել էին բազմաթիվ բարեգործական ընկերություններ, որոնց կատարած դերը, սակայն, խիստ աննշան էր տասնյակ հազարավոր գաղթականների ծով կարիքների դարմանման և նրանց տառապանքից դրության միջինի մալ թեթևացման գործում: Գաղթականությանն օգնելու ուղղությամբ զբաղվում էին Պատերազմից վնասվածներին օգնող հայկական կենտրոնական կոմիտեն, Կովկասի հայոց բարեգործական ընկերության խորհուրդը, Մոսկվայի հայկական կոմիտեն, Հայրենակցական միությունների միությունը, Հայ նպաստամատուց ընկերությունը, «Մեղու» ընկերությունը, Հայ տիկնաց կոմիտեն, Հայ ուսուցչական կոմիտեն, Թիֆլիսի պարսկահայերի հանձնաժողովը, Երևանի, էջմիածնի, Զուղայի, Արեքսանդրապոլի, Կարսի և այլ վայրերի եղբայրական օգնության կոմիտեները, Պետրոգրադի ազատ տնտեսական ընկերությունը, Թիֆլիսի և Բաքվի քաղաքային հանձնաժողովները, Բաքվի մարդասիրական և կուլտուրական ընկերություններին աղբյուր կազմակերպված փախստականներին օգնող մարմինները, Մոսկվայի, Պետրոգրադի, Նոր Նախիջևանի համանման մարմինները և այլն:

1917 թ. մայիսին Երևանում հրավիրվում է արևմտահայ փախստականների առաջին համագումարը, որն ընտրում է Արևմտահայ խորհուրդ և բյուրո, որոնք համախմբում են գաղթականների օգնության գործով զբաղվող Կովկասյան հա-

⁴⁷ Տե՛ս Քեղզիկ, Ամենուն տարեցույցը, 1922, էջ 261—263:

⁴⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 264:

յոց բարեգործական ընկերության, Հայոց գյուղատնտեսական ընկերության, Եղբայրական օգնության կամիտեի, Կենտրոնական նպաստամատուցի և այլ կազմակերպությունների գործունեությունը: Երբեմն-երբեմն որոշ օգնություն էլ ցույց էր տրվում պետական միջոցների հաշվին⁴⁹:

Սակայն որքան էլ բազմաթիվ ու բազմազան լինեին բարեգործական այդ հաստատությունները և առատաձեռն բարերարները, միանգամայն անհնարին էր առանց պետական սխտեմատիկ օգնության հոգալ թշվառ վիճակը հարյուր հազարավոր գաղթականների, որոնք օրական մի քանի հարյուր զոհ էին տալիս: 1915 թ. օգոստոսի 30-ին ցարական կառավարությունն ընդունել էր օրենք՝ փախստականների վիճակը բարելավելու մասին, որը, իհարկե, առավելապես ձևական բնույթ ունեւր: Հենց միայն էջմիածնում կուսակցված գաղթականներից 1915 թ. օգոստոսի վերջին տասնօրյակում մեռել էին 2613 հոգի⁵⁰: Այսքանը վախճանվել էին միայն էջմիածնում, իսկ ո՞վ էր հաշվել մեռածների քանակն Իգդիրում, Երեւանում, Ալեքսանդրապոլում, Վրաստանում, Հյուսիսային Կովկասում և այն բազմաթիվ բնակավայրերում, ուր ցրված էին փախստականները...:

Եվ այսպես, օրեցօր դեպի անխուսափելի գերեզման էր գնում թուրքական յաթաղանից հազիվ ազատված արեւմտահայ գաղթականությունը, սակայն ոչ մի ուժ ուժ չէր երևում նրան փրկելու համար: Անտանտի տերությունները, որոնք սիրում էին հաճախ կեղծավորաբար իրենց «փոքրիկ դաշնակիցն» անվանել հայ ժողովրդին և որոնց քաղաքականությունը զոհն էր դարձել վերջինս, անտարբերությամբ և նույնիսկ թշնամանքով էին վերաբերվում նրա արդարացի պահանջներին: Հայկական շահերի ավանդական «պաշտպան» ցարական կառավարությունը, երբ արդեն գրեթե իրագործել էր Արեւմտահայաստանը նվաճելու իր վաղեմի պլանները և

կեղծ խոստումներով անհամար ու անվերադարձ զոհողությունների մղել հայ ժողովրդին, արդեն 1916 թվականին այլևս չէր խոսում «հայկական ինքնավարության» մասին: Շոտով վերացվեցին նաև հայկական կամավորական խմբերը: Ռուսական կառավարական և զինվորական շրջաններում պլաններ էին մշակվում թուրքիայից գրավված մարզերում, մասնավորապես Ալաշկերտի հովտում, Բայազետում, Դիադինում և Եփրատի երկայնքով համատարած կերպով Կոստանից ու Դոնից բերված կազակներով բնակեցնելու մասին: Այդ պատճառով էլ հայերին նույնիսկ թույլ չէին տալիս վերադառնալ և հաստատվել իրենց օջախներում: 1916 թ. հունիսի 6-ին ռուսական կառավարության արտաքին գործերի մինիստր Սազոնովի և Կովկասի փոխարքա Նիկոլայ Նիկոլաևիչի մշակած սկզբունքներով կազմվել էր թուրքիայից գրավված վայրերի կառավարման նախագիծը և հաստատվել գեներալ Պեշկովի նահանգապետությունն՝ իր հակահայկական տրամադրություններով ու գործելակերպով աչքի ընկնող պաշտոններով: 1917 թ. փետրվարյան բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունից հետո ստեղծված ժամանակավոր կառավարությունը, իրեն լիովին շնորհակցնելու նպատակով, հարկադրված էր որոշ շահով հաշվի առնել հայկական շրջանների բացահայտ թագահությունը և իրականացնել կիսատպոստ մի շարք միջոցառումներ, որոնք կարծես թե փոքր ինչ հնարավորություն էին ստեղծում հայերի համար՝ վերադառնալու իրենց նախկին տեղերը: Կարճ ժամանակամիջոցում վերակենդանացման նշաններ դրսևորվեցին Տարոն-Տուրքաբերանում, Վասպուրականում և այլուր: Վերադարձողներին բարեգործական հաստատությունների կողմից տրվեցին որոշ շահով վարկեր, սերմացու, մի քանի տեղերում բացվեցին որբանոցներ, անդադկայաններ, հիվանդանոցներ և այլն: Մի խոսքով, ավերակների ու մոխիրների տակից սկսեցին հարուստներն առնել արեւմտահայության վերապրող բեկորները: Սակայն պարզ էր, որ հիմնականում ցարիզմի գործելակերպը շարունակող ժամանակավոր կառավարությունը, ինչպես շատ ուրիշ խնդիրներում, այնպես էլ

⁴⁹ Տե՛ս «Армянский вестник», 1916, № 14, էջ 10:

⁵⁰ Ա-Կո, Մեծ դեպքերը Վասպուրականում 1914—1915 թթ., Երեւան, 1917, էջ 485:

հայ գաղթականության հարցում վարում էր երկդմի, իմպերիալիստական քաղաքականություն և շէր ցանկանում նրա արմատական ու դրական լուծումը:

Այդպիսի պայմաններում հայ ժողովրդի համար փրկության և ազգային վերածննդի իրական ուղի էր նշում 1917 թվականի հոկտեմբերին Ռուսաստանում հաղթանակած սոցիալիստական հեղափոխությունը, որը նոր դարադուխ քաղաքացի մարդկային հասարակության պատմության մեջ: Հոկտեմբերյան հեղափոխությունը խառնեց իմպերիալիստական տերությունների ու խմբավորումների բոլոր հաշիվները համաշխարհային պատերազմի եռուն օրերին և արմատապես փոխեց միջազգային դրությունը նաև Մերձավոր Արևելքում:

Ճնշված, իրավազուրկ ու շահագործվող ժողովուրդների ու ազգությունների համար հակայական նշանակություն ունեցան Սովետական Ռուսաստանի ներքին ու արտաքին քաղաքականության մի շարք կարևորագույն ակտերը, այդ թվում՝ խաղաղության մասին դեկրետը, «Ռուսաստանի և Արևելքի բոլոր աշխատավոր մահմեդականներին» ուղղված դիմումը, «Ռուսաստանի ժողովուրդների իրավունքների ղեկավարացիան», ռուսական զորքերի դուրս բերումը Իրանից և այլ երկրներից և, վերջապես, «Թուրքահայաստանի մասին» դեկրետը:

Աշխարհում առաջին սովետական կառավարությունը հանդես եկավ արտաքին քաղաքականության միանգամայն նոր սկզբունքներով: Կտրականապես հրաժարվելով ցարական և ժամանակավոր կառավարությունների վարած զավթողական նվաճողական քաղաքականությունից, դուրս գալով նրանց դաշնակիցների ենթակայությունից, Սովետական Ռուսաստանը բոլոր ժողովուրդներին ու կառավարություններին դիմեց առդարացի հաշտության կնքման ու խաղաղության հաստատման կոչով: Նա բարեկամական ձեռք մեկնեց նաև Մերձավոր Արևելքի ժողովուրդներին: Արդեն խաղաղության մասին Սովետների համառուսական 2-րդ համագումարի ընդունած գեկրետում Սովետական Ռուսաստանն ի լուր աշխարհի հայտարարեց, որ անհապաղ և անպայման շեղյալ են համարվում նախկինում կնքված բոլոր գաղտնի պայմանագրերն ու

համաձայնագրերը: Այդ հայտարարությունը վերացվում էին նաև Թուրքիային և Հայաստանին վերաբերող պայմանագրերը:

1917 թ. նոյեմբերի 7-ին, Սովետների համառուսաստանյան 2-րդ համագումարը, երկնում ազգերի ինքնորոշման լեհինյան ծրագրից, բանվորներին, զինվորներին և գյուղացիներին ուղղված դիմումի մեջ հայտարարեց, որ սովետական իշխանությունը կապահովի Ռուսաստանում քնակվող բոլոր ազգերի ազատ ինքնորոշման իրավունքը՝ բոլոր ժողովուրդների իրավահավասարության և սովետներության սկզբունքների հիման վրա: Սովետական կառավարությունը այդպիսի վերաբերմունք ունեցավ նաև արևմտահայ աշխատավորության հանդեպ և հենց սկզբից հայտարարեց, որ Արևմտյան Հայաստանի նկատմամբ ցարական և ժամանակավոր կառավարությունների անբարեխոսական քաղաքականությանը ինքը հակադրում է նրա ազատագրման և անկախության քաղաքականությունը: Այդ ոգով էլ ձեռնարկվեց Արևմտյան Հայաստանի մասին դեկրետի մշակման և ընդունման գործը:

Նախքան ժողովուրդների կողմից «Թուրքահայաստանի մասին» դեկրետի ընդունումը, Վահան Տերյանն ու Սարգիս Սրապիտոնյանը (Լուկաշին) լինում են Վ. Ի. Լենինի մոտ և նրա հետ զրույց ունենում Արևմտյան Հայաստանի և արևմտահայության հետագա ճակատագրի շուրջը: Հարցը գործնական քննարկման դնելու նպատակով Վ. Ի. Լենինն առաջարկում է խորհրդակցել Ազգությունների գործերի ժողովուրդների հետ և նախապատրաստել Թուրքահայաստանի վերաբերյալ մանրամասն գեկուցագիր ու դեկրետի նախագիծ: Դեպքերի բերումով այդ գործի կատարումը ընկավ Վ. Տերյանի վրա:

Վահան Տերյանի կազմած գեկուցագրում մանրամասնորեն բնութագրվում է գերմանա-թուրքական ջարդարարների և Անտանտի տերությունների իմպերիալիստական քաղաքականության հետևանքով Արևմտյան Հայաստանի և արևմտահայության համար տեղիված ծանր վիճակը և նշվում են այն ուղիներն ու միջոցները, որոնք հնարավորություն կտային զանազան երկրներ գաղթած հայերին վերադառնալու իրենց

հարազատ օջախները: Վ. Տերյանը նշում է, որ միայն պետությունների բացառիկ և անկեղծ բարյացակամ վերաբերմունքն ու նյութական առատաձեռն օգնությունը կարող կլինեն գեթ մասամբ բուժել այն խորը վերքերը, որ ստացել է հայ ժողովուրդը պատերազմի և թուրքական շովինիզմի սանձարձակ քաղաքականության հետևանքով: Բայց քանի դեռ Եվրոպայում իշխում է իմպերիալիզմը, հայերը չեն կարող նրանից հուսալ նման վերաբերմունք: «Սոցիալիստ» Կերենսկու գլխավորած կառավարությունը, որը թեպետ խոսքով բնորոշում էր «ազգերի ինքնորոշման իրավունքը», իրականում չէր կարող և ոչինչ շարեց հայերին, ինչպես և մյուս բոլոր փոքր ազգություններին, ազատություն և անկախություն տալու համար: Այդ կառավարությունն իր գոյության 8 ամսվա ընթացքում հարկ չհամարեց որոշակիորեն ասելու իր մտադրությունը ինքնավար Հայաստան ստեղծելու և հայերին հարազատ օջախները վերադարձնելու մասին: Նա ոչ մի վճռական քայլ չարեց վերականգնելու ավերված Հայաստանի այն մասը, որը «պատերազմի իրավունքով» գրավել էր ռուսական զորքը: Ընդհակառակը, ժամանակավոր կառավարությունը շարունակում էր ցարական սատրապների հակահայկական ագիտացիան և ամեն կերպ խոչընդոտում հայ հասարակական կազմակերպությունների ձեռնարկումները՝ գաղթականներին հայրենիք վերադարձնելու և Արևմտահայաստանում տեղավորելու ուղղությամբ:

Վ. Տերյանն ընդգծում է, որ լոկ պրոլետարական-գյուղացիական հեղափոխությունը և բանվորների ու շրջավարդույն գյուղացիների կառավարության ստեղծումը կարող է ազատություն բերել աշխարհով մեկ սփռված արևմտահայերին և բուժել նրանց խոր վերքերը: Ահա թե ինչու «մենք միշտ այդ բանը նշում էինք հայ գյուղացի և բանվոր մասսաներին: Մենք միշտ խորտակում էինք մանրրուքուական և բուրժուական կուսակցությունների կողմից նրանց ներշնչվող պատրանքները ոչ միայն Եվրոպայի իմպերիալիստական դիվանագիտության վերաբերյալ, այլև կադետների հետ կոալիցիայի մեջ մտած և Կերենսկու կողմից գլխավորված հեղա-

փոխական դեմոկրատական կառավարության վերաբերյալ: Եվ ահա, հասել է, վերջապես, ժամանակը, երբ մենք կարող ենք հայ մասսաներին ասել՝ «աջակցեցեք բանվորների և գյուղացիների կառավարությանը, և հաստատ հավատացեք, որ նա ձեզ չի խաբի, նա ձեզ կտա ազատություն, որը ապարդյուն ջանում էիք ստանալ մինչև այժմ, հանուն որի այնքան արյուն ու արցունք եք թափել»⁵¹:

Վ. Տերյանը նշում է, որ Սովետական Ռուսաստանի ժողովրդավետի դեկրետը մեծ դեր կխաղա հայ իրականության մեջ, մանավանդ, եթե նրանում նշվի, «որ ժողովրդական կոմիսարների կառավարությունը ըստ ամենայնի կօժանդակի այն երաշխիքների ստեղծմանը, որոնք թուրքահայաստանի հայ ազգաբնակչությանը ինքնորոշման իրական հնարավորություն կտային: Այդպիսի երաշխիք պետք է հանդիսանա ինչպես բռնի կերպով Միջագետքի և Թուրքիայի այլ վայրերն արտաքսված, այնպես էլ Ռուսաստանում գտնվող գաղթականների և Ամերիկա ու այլ երկրներ գաղթած բոլոր հայերի համար հայրենիք վերադարձնելու հնարավորություն ստեղծելը: Լոկ այս երաշխիքներն ապահովելու դեպքում կարելի է խոսել Հայաստանի իսկական ինքնորոշման մասին: Այսպես հայ ժողովրդի ինքնորոշման մասին ամեն մի խոսակցություն Ահնջի որպես դատարկ զրույց»⁵²:

Այս նկատառումների հիման վրա էլ մշակվում և բնորոշվում է «Թուրքահայաստանի մասին» դեկրետը 1918 թ. հունվարի 11-ին և մամուլում հրատարակվում հունվարի 13-ին (հին տոմարով՝ 1917 թ. դեկտեմբերի 29-ին և 31-ին): Սովետների համառուսաստանյան երրորդ համագումարի կողմից վերջնականապես հաստատված «Թուրքահայաստանի մասին» դեկրետում ասված էր. «Ժողովրդական կոմիսարների սովետը հարտարարում է հայ ժողովրդին, որ Ռուսաստանի քանավորական և գյուղացիական կառավարությունը պաշտպանում է Ռուսաստանի կողմից օկուպացված «Թուրքահայաստանի»

51 Վ. Տերյան, Երկիր, հ. 4-րդ, էջ 591—592:

52 Տե՛ս նույն տեղում, էջ 592—593:

յաստանի» հայերի ազատ ինքնորոշման իրավունքը՝ ընդհուպ մինչև լիակատար անկախութիւնը»⁵³:

Ժողովրդական կոմիսարների սովետը փոխում էր, որ այդ իրավունքի իրագործումը հնարավոր է նախնական մի շարք երաշխիքների պայմանով, որոնք բացարձակապես անհրաժեշտ են հայ ժողովրդի ազատ հանրաքվեի համար: Այդպիսի երաշխիքներ էին հանդիսանում բոլոր զորքերի դուրս քերումը Թուրքահայաստանի սահմաններից և անմիջապես հայկական ժողովրդական միլիցիայի կազմակերպումը բնակչութեան անձի և գույքի ապահովման նպատակներով, պատերազմի ժամանակ թուրքական իշխանութիւնների կողմից բռնութեամբ Թուրքիայի խորքերը գաղթեցված, ինչպես նաև զանազան երկրներում ցրված բոլոր փախտուկական հայերի անարգել վերադարձը երկիր և Թուրքահայաստանի ժամանակավոր վարչութեան ստեղծումը հայ ժողովրդի դեպատաստների սովետի ձևով⁵⁴:

Բազմաշարշար ու արյունաքամ արեւատահայ աշխատավորները, ինչպես և ամբողջ հայ ժողովուրդը խորին գոհունակութեամբ ընկալեցին տվյալ պայմաններում իրենց շահերին ու բաղձանքներին համապատասխանող «Թուրքահայաստանի մասին» սովետական կառավարութեան դեկրետը, որը ռեալ նախադրյալներ էր ստեղծում թուրքական թունակաղութեան դարավոր լծից արեւատահայերի ազատագրման համար:

Սակայն գերմանա-թուրքական ու անգլո-ամերիկյան իմպերիալիստների զավթողական քաղաքականութեան և ռուսական ու անդրկովկասյան հակահեղափոխականների ծավալած հակասովետական գործունեութեան հետևանքով հնարավոր չեղավ իրականացնել հայ ժողովրդի համար պատմական բացառիկ կարևոր նշանակութիւն ունեցող այդ դեկրետը, որը հուշակել էր նրա ազատ ինքնորոշման անկապտելի իրավունքը՝ ընդհուպ մինչև լիակատար անկախութեան հաստատումը: Ինչպես հայտնի է Հոկտեմբերյան հեղափոխութեան հաղ-

թանակի լուրը սվիններով դիմավորեցին Անդրկովկասի հակահեղափոխական ուժերը, որոնք փաստորեն կոալիցիա կազմեցին Սովետական Ռուսաստանի դեմ: Ներքին ու արտաքին թշնամիները բլոկ կազմած՝ հեղափոխութիւնը արյան մեղխեղդելու պլաններ էին մշակում: Խիստ ծանր էր Սովետական Ռուսաստանի դրութիւնը և նա չէր կարող տվյալ պայմաններում անհրաժեշտ օգնութիւն ցույց տալ հայ ժողովրդին՝ Արեւտահայաստանի մասին դեկրետն իրականացնելու գործում:

Չնայած 1917 թ. դեկտեմբերի 5-ին Երզնկայում կնքված զինադադարին և Բրեստ-Լիտովսկում տեղի ունեցող հաշտութեան բանակցութիւններին, թուրքական բանակը, օգտվելով ռուսական զորքերի տուն վերադառնալուց և Անդրկովկասում իշխանութեան գլուխ անցած վրացական, ադրբեջանական և հայկական բուրժուա-ազգայնական հակահեղափոխական կուսակցութիւնների անճարակութիւնից, հարձակում սկսեց ամբողջ Արեւտահայաստանը և Անդրկովկասը զավթելու համար: Թուրքական կոտորածների սարսափներից խույս տալով, ռուսական զորքերի ետևից դեպի Անդրկովկաս, Ռուսաստան, ապա նաև Պարսկաստան, Միջագետք և այլ վայրեր փախան Արեւտահայաստանում աստիճանաբար հավաքված բնավեր հայ աշխատավորները: Չինադադարի խախտումը և իր ազրեսիվ գործողութիւնները թուրքական հրամանատարութիւնը պատճառաբանում էր «մահմեդական բնակչութեան շահերի պաշտպանութեան անհրաժեշտութեամբ»: Սակայն թուրքական զորքերը շուտով գրավեցին ոչ միայն Արեւտահայաստանը՝ Երզնկայից մինչև էրզրում, այլև, բտնահարելով 1918 թ. մարտի 3-ին ստորագրված Բրեստ-Լիտովսկի հաշտութեան պայմանագիրը, շարժվեցին դեպի Անդրկովկասի խորքերը:

Երիտթուրքական կառավարութիւնը նպատակ ուներ վերջնականապես իրականացնել իր համաթուրքական-համամահմեդական զավթողական ծրագիրը և տերիտորիալ նոր նվաճումներով կայունացնել իր խարխլված դիրքերը: Անդրկովկասի հակահեղափոխական իշխանութիւններն իրենց գոր-

⁵³ «Декреты Октябрьской революции», Москва, 1933, стр. 393.

⁵⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 393—394:

ծունեութեամբ, մասնավորապես՝ 1918 թ. ապրիլի 22-ին թուրքերի պահանջով Անդրկովկասը Սովետական Ռուսաստանից «անկախ» հռչակելով, փաստորեն հեշտացրին թուրքական ինտերվենտների պլանների իրականացումը: Շուտով Անդրկովկասում ստեղծվեցին բուրժուական-ազգայնական երեք կառավարութիւններ, որոնք նորից ենթարկվելով թուրքերի կամքին, 1918 թ. հունիսի սկզբներին Բաթումում ստորագրեցին հաշտութեան պայմանագրեր: Բաթումում կնքված կողոպտիչ պայմանագրերով թուրքական զորքերի առջև բացվում էր ճանապարհը դեպի Բաքվի նավթն ու Կովկասի մյուս հարստութիւնները:

Բաթումում 1918 թ. հունիսի 4-ին դաշնակների և թուրքերի միջև ստորագրված հաշտութեան պայմանագրով Թուրքիան Արևելյան Հայաստանից զավթում էր Կարսի և Սուրմալուի շրջանները, Ալեքսանդրապոլի, էջմիածնի ու Երևանի գավառների մեծ մասը և Հայաստան անունը մնում էր Արագածի ու Սևանի միջև կծկված մի փոքրիկ լեռնոտ տերիտորիայի վրա, ամբողջովին թուրքական քմահաճույքներին ենթակա դաշնակցական իշխանութեամբ⁵⁵:

Այսպիսով, օգտվելով Սովետական Ռուսաստանի համար ստեղծված դժվարութիւններից և կովկասյան հակահեղափոխական ուժերի անձարակութիւնից, թուրքական շովինիստները ներխուժեցին Անդրկովկաս և իրենց շարժարարական գործունեութիւնը ծավալեցին նաև արևելահայութեան նկատմամբ, շնայած վերջինիս հերոսական ու դյուցազնական դիմադրութեանը Սարդարապատում և Ղարաբաղիստում:

Թուրքական արշավանքի հետևանքով ավերվեցին ու թալանվեցին բազմաթիվ գյուղեր, մորթվեցին ու սրախողիտող եղան տասնյակ հազարավոր անպաշտպան ծերեր, կանայք ու երեխաներ, դեպի Թուրքիայի խորքերը տաժանակրութեան ու մահվան քշվեցին հազարավոր հայ տղամարդիկ:

Հայ ժողովուրդն իր պատմութեան 1918 թվականը թևակո-

խեց էլ ավելի ծանր գալարումներով և արյունաքամ: Այժմ, թուրքական նոր արշավանքի հետևանքով, արևմտահայերից հոսող արյան ու արցունքի գետերին միախառնվեցին նույն յաթաղանի մահաբեր հարվածներից սկիզբ առնող արևելահայութեան արյան վտակները:

Թուրքական վայրագութիւնների հետևանքով Անդրկովկասի հայ բնակչութեան մի մեծ զանգված, մոտ 500 հազար մարդ, հեռացավ դեպի Ռուսաստան և Միջին Ասիա: Փախուստի ուղին էին բռնել Բաթումի շրջանից 20 հազար, Կարսից՝ 120 հազար, Ախալցխայից՝ 30 հազար, Ախալքալակից՝ 80 հազար, Ալեքսանդրապոլի գավառից՝ 60 հազար, էջմիածնի և Սուրմալուի գավառներից՝ 80 հազար, Երևանի, Շարուրի և Նախիջևանի գավառներից՝ 100 հազար հայեր⁵⁶:

Այդպիսի պայմաններում ամեն կողմից թշնամիներով շրջապատված հայ ժողովուրդին փրկութեան խարիսխ բերել չէր կարող ավանտյուրիստական պլաններով ասպարեզ մտնող և անիրականանալի երազանքներով տարված դաշնակցական կառավարութիւնը, որի օրոք ոչ միայն արևմտահայ գաղթականութիւնը, այլև ամբողջ հայ ժողովուրդը արագորեն գնում էր դեպի մահ:

Այդ ժամանակ Հայաստանում կային ավելի քան 400 հազար արևմտահայ գաղթականներ ու որբեր, որոնք աներևակայելի սովի ու թշվառութեան մեջ էին գտնվում: Արագորեն տարածվում էին համաճարակ հիվանդութիւնները՝ խոլերան, բժավոր տիֆը: Ոչ միայն հիվանդները, այլև մեռածների դիակները թափված էին հրապարակներում, փողոցներում ու դաշտերում: Հետագայում դաշնակցական կառավարութեան վարչապետ դարձած Ս. Վրացյանի իսկ խոստովանութեամբ, դաշնակների տիրապետութեան առաջին վեց ամիսների ընթացքում, հենց միայն սովից ու հիվանդութիւններից մեռել

⁵⁵ Տե՛ս Հայկ. ՍՍՀ Կողմ, ֆ. 68/200, գ. 11, Բաթումի բանակցութիւնների և դաշնագրութիւնը:

⁵⁶ Տե՛ս Ս. Տ. Ալիխանյան, Հայկական գործերի կոմիսարիատի գործունեութիւնը (1917—1921), Երևան, 1958, էջ 86:

էին մոտ 180,000 մարդ⁵⁷, իսկ 1919 թ. առաջին հինգ ամիս-
ների ընթացքում միայն Երևան քաղաքում պաշտոնական
վիճակագրությունը արձանագրել էր 3972 մահվան դեպք⁵⁸։
Սովի և հիվանդությունների հետևանքով շատ գավառներում
զոհ էր գնացել բնակչության մեծամասնությունը։

Հայ ժողովրդի լավագույն բարեկամ Գ. Կ. Որջոնիկիձեն
1918 թ. հոկտեմբերին Վ. Ի. Լենինին հղած մի հեռագրում,
ներկայացնելով Հայաստանում տիրող դրությունը, գրել է.
«Հայաստանի դրությունը ողբերգական է. Երևանի նահանգի
երկու գավառների ոչ-մեծ հողակտորի վրա կուտակվել են
600 հազար գաղթականներ⁵⁹, որոնք զանգվածաբար կոտոր-
վում են սովից ու խոլերայից»⁶⁰։

Դաշնակների օրոք աշխատավորների և գաղթականության
ծանր վիճակի մասին լրագրային թղթակցությունների մեջ
նշվում էր, թե օր չէր լինում, որ ամեն մի գյուղում սովա-
մահության դեպքեր չպատահեն, գյուղ չկա, որի պատերի
տակ տասնյակներով, հարյուրներով անտեր, կմախքացած և
սովահարության դռանը կանգնած կիսամեռ որբեր չթափա-
ռեն, իսկ այդ բոլորի մասին գրեթե մտածող չկար։

Տերիտորիալ հարցերում դաշնակցության անիրականանա-
լի երազանքներն ու անհեռատես քաղաքականությունը, իրենց
ողբալի հետևանքներով, ցայտուն կերպով դրսևորվել են նաև
գաղթականության հարցում։ Սպասելով Անտանտի կողմից
Հայաստանի սահմանների իբր թե որոշմանը, ծայրահեղ պա-

⁵⁷ Տե՛ս Ս. Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, Փարիզ, 1928, էջ
169։

⁵⁸ Նույն տեղում, էջ 214։

⁵⁹ Երկրում գտնվող գաղթականների քանակի վերաբերյալ պահպանված աղ-
բյուրների թվական տվյալների միջև եղած տարբերությունները բացատրվում
են մի կողմից ճշգրիտ վիճակագրության բացակայությամբ, իսկ մյուս կող-
մից՝ գոյություն ունեցող անբարենպաստ պայմաններից դրդված գաղթա-
կանների մի տեղում երկար լմնալու, այլ անընդհատ թափառական վիճա-
կում գտնվելու և դեպի ավելի հարմար վայրեր ցրվելու հետևանքով։

⁶⁰ Г. К. Орджоникидзе, Статьи и речи, т. 1. Москва, 1956,
стр. 45.

րագայում գեթ մոտակա երեք-չորս վիլայեթները Արևելյան
Հայաստանին կցելով, որտեղ ենթադրվում էր վերաբնակեց-
նել զանազան հայկական գաղութներից բոլոր ներգաղթել
ցանկացողներին, դաշնակցական կառավարությունը լավա-
գույն դեպքում սահմանափակվում էր երբեմն-երբեմն մի կտոր
հացի կամ մի ֆունտ ալյուրի և մաշված հագուստեղենի
նպաստի բաշխման միջոցով արևմտահայ գաղթականության
իրեն որպես հուսալի հենարան ծառայեցնել։

Ուժերի ուժալ հարաբերակցությունը երբեք հաշվի չառնելու
դաշնակների անհեռատես քաղաքականության հետևանքով
1915 թվականից ի վեր տառապող գաղթականության վիճակը
ոչնչով չբարելավվեց։ Ընդհակառակը, արևմտահայ գաղթա-
կանությունը հետագայում ավելացան նաև քեմալականների
կողմից գրավված տերիտորիաների հայ, բուրգ, եզդի, ասորի
ու ռուս-մոլդկան բնակիչների զանգվածները։

Այսպիսով, հարյուր-հազարավոր անարտադրող ու ան-
օթևան գաղթականությունը ծանր բեռի նման ընկած էր փոք-
րիկ ու աղքատ Հայաստանի տեղական բնակչության ուսերին։
Տարիներ շարունակ կտրված լինելով հողից ու տնտեսու-
թյունից և օտարանալով օգտակար աշխատանքից, գաղթա-
կանությունը վեր էր ածվում թշվառ մուրացկանների մի հոծ
զանգվածի, որը նպաստավոր միջավայր էր հանդիսանում
նաև ամեն տեսակ հանցագործ տարրերի ու խմբերի առաջաց-
ման համար։

Գաղթականության վիճակի թեթևացման գործում դաշ-
նակցական կառավարության անհոգի վերաբերմունքն ու լիա-
կատար անճարակությունը բնորոշ կերպով դրսևորվեց Մի-
ջագետքում կուտակված հայ տարագիրների նկատմամբ նրա
բռնած դիրքով։ Միջագետքի հայ գաղթականները, որոնք
գտնվում էին միանգամայն դժնդակ պայմաններում, դրժ-
վարին կացությունից դուրս գալու ելք էին որոնում։ Եվ երբ
նրանք իրենց թշվառ դրության մասին Ամենայն Հայոց կա-
թողիկոսի միջոցով տեղեկացրին դաշնակցական կառավա-

րությանը, վերջինս նրանց օգնելու փոխարեն դիմեց ուղղակի խաբեության⁶¹։

Իսկ իրականում ի՞նչ էր անում դաշնակների կառավարութունը երկրում կուտակված գաղթականության կամ զանազան երկրներում դեգերող սփյուռքահայերի դրությունը փոքր ի շատե բարվոքելու ուղղությամբ։ Գաղթականության հարցը լուծելու օգտին՝ ըստ էության ոչինչ։ Եվ ինչ կարող էր անել մի այնպիսի կառավարութուն, որի նախարարներն անգամ աչք էին տնկել հայկական գաղութներից և ամերիկյան «բարերարներից» երբեմն ողորմածաբար ստացվող նեխած ալյուրի պարկերին ու մաշված հագուստեղենի փոշոտ հակերին։ Դաշնակները ձգտում էին որքան հնարավոր է օգուտներ քաղել անգամ այդ դժբախտ տարագիրներից՝ երկրի ներսում նրանց լայնորեն օգտագործելով որպես թնդանոթի միս, իսկ հայկական գաղթավայրերից զանազան պատրվակներով շորթելով մեծ գումարներ։

1920 թ. օգոստոսի 27-ին դաշնակների նախարարական խորհուրդը քննարկում է արտաքին գործերի նախարարի գեկուցումը գաղութներում տարվելիք աշխատանքների մասին և որոշում կայացնում նույն նախարարության կազմում հիմնել գաղութային բաժին՝ գաղութների «նյութական ու բարոյական ուժերը Հայաստանի (իմա՝ դաշնակների—Ղ. Մ.) օգտին օգտագործելու նպատակով»⁶²։

Դաշնակների կառավարության արտաքին գործերի նախարարության գաղութային բաժնի կազմակերպման վերաբերյալ հրահանգներ պարունակող փաստաթղթերը ակնառու կերպով ցույց են տալիս, թե ամենից առաջ ինչ ոեալ նպատակներ էին հետապնդում նրանց հեղինակները։ Գաղութային բաժինը «կը կազմակերպե Ղ. (այաստանի) Ղ. (անբապետության) օժանդակիչ միություններ Ղ. Ղ. արտասահմանյան դիվանագիտական ներկայացուցիչների հսկողության տակ, Հա-

յաստանի վերաշինության և ներգաղթի գործին աջակցելու համար (նպատակ՝ թղթի վրա գրված լինելու և միամիտներին խաբելու համար—Ղ. Մ.) և կը հաստատե ու կը գանձե հայրենիքի տուրք հայ գաղութներու անդամներեն»⁶³ (մի բան, որն առանց գրվելու էլ զանձվում էր և մուտք լինում դաշնակ լիդերների գրպանները հատկապես արտասահմանում եղած ժամանակ հաճույքներից զուրկ չմնալու համար—Ղ. Մ.)։ Եվ իրոք, դաշնակները տարբեր առիթներով (բանակի, ճակատը պաշտպանելու, մի փամփուշտի գին, հայրենիքի, ոսկու, անկախության փոխառության և այլ ֆոնդերի անվան տակ) անպատկառորեն հսկայական գումարներ էին կորզում հայկական գաղթավայրերից և դրանք ծառայեցնում իրենց կուսակցական ու անձնական շահերին, առանց մի բոլոր անգամ հիշելու դժբախտ գաղթականությանը⁶⁴։

Եթե հայ գաղթականության նկատմամբ այդպես էր վարվում «ազգային» կառավարութունը, ապա միանգամայն համկանալի էր վրացական մենշևիկների և ադրբեջանական մուսավաթականների վերաբերմունքը։ Վրաստանի մենշևիկյան կառավարութունը փակել էր երկրի սահմանները և թույլ չէր տալիս թուրքերի հետապնդումներից հալածված հայ գաղթականներին մուտք գործել Վրաստան։ Ախալքալախի գավառի ավելի քան 80,000 հայ գաղթականների, որոնք գտնվում էին Բակուրիանիի ու Սալկայի անտառներում, վրացական նացիոնալիստները արգելում էին վերադառնալ նրանց հարազատ օջախները և կարճ ժամանակամիջոցում ավելի քան 20,000 մարդ զոհվեց սովի, տարածված հիվանդությունների ու ցրտի հետևանքով⁶⁵։ Հայ գաղթականների և ընդհանրապես հայ ժողովրդի նկատմամբ պակաս դաժանությամբ և ատելությամբ չէին վարվում ադրբեջանական մուսավաթականները, որոնք ուղղակի գինված բնաջնջման քաղաքականութուն էին կիրառում։

⁶¹ Հայկ. ՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 68/200, գ. 204, թ. 107—108 և «Երևան», երկօրյա թերթ, Փարիզ, 28 ապրիլի, 1929 թ., № 498։

⁶² Հայկ. ՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 68/200, գ. 448, թ. 182։

⁶³ Նույն տեղում, գ. 403, թ. 6։

⁶⁴ Տե՛ս «Նորհրդային Հայաստան» օրաթերթ, Երևան, 24 մարտի, 1923 թ., № 57։

⁶⁵ Տե՛ս Հայկ. ՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 68/200, գ. 573, թ. 37։

Այդ տարիներին հայ գաղթականությունը միակ ունի օգնություն ցույց տվող երկիրը Սովետական Ռուսաստանն էր, որ ապաստան էին գտել տասնյակ հազարավոր փախստականներ ու որբեր: Անկասկած է, որ թուրքական արշավանքների սարսափներից, գաշնակցական կառավարության անհոգատարությունից և մենշևիկների ու մուսավաթականների բացահայտ թշնամական քաղաքականությունից բացի, հայ ժողովրդին դեպի հյուսիս մղող զորավոր պատճառներից մեկն էլ Սովետական Ռուսաստանի անշահախնդիր ու հոգատար վերաբերմունքն էր դեպի դժբախտ հայ տարագիրները: Սովետական Ռուսաստանը, շնայած իր քաղաքական ու տնտեսական դժվարին դրությունը, աշխատում էր որքան հնարավոր է թեթևացնել նրանց վիճակը և ստեղծել տանելի պայմաններ: Հենց միայն Հյուսիսային Կովկասում, ոչ լրիվ տվյալներով, 1920 թ. աշնանը կուտակված էին ավելի քան 130 հազար հայ գաղթականներ, որոնց նյութական ու բարոյական զգալի աջակցություն էր ցույց տալիս ՌՍՖՍՀ Կենտրէվալի Կովկասյան հատուկ լիազորությունը⁶⁶:

ՌՍՖՍՀ Ազգությունների ժողկոմատի հայկական գործերի կոմիսարիատը Ռուսաստանի և Ուկրաինայի բազմաթիվ քաղաքներում, որոնք ողողված էին հայ գաղթականներով ու որբերով, բացել էր տասնյակ որբանոցներ, դպրոցներ, հիվանդանոցներ, արտելներ, սննդակայաններ և այլն:

Միայն 1918—1919 թվականների տասն ամսվա ընթացքում ՌՍՖՍՀ ժողկոմսովետի կողմից հայկական գործերի կոմիսարիատի միջոցով հայ գաղթականությանը կենտրոնացված կարգով տրվել է ավելի քան 10 միլիոն ռուբլի նպաստ, 200 հազար արշին կտորեղեն, 30 հազար կտոր պատրաստի հագուստ, մեծ քանակությամբ կոշիկեղեն և այլ ապրանքներ: Հայ գաղթականների համար մայրենի լեզվով հրատարակվում էին թերթեր, բրոշյուրներ ու գրքեր, որոնք արոպագանդում էին կոմունիստական կուսակցության ու սովետական

⁶⁶ Տե՛ս Հայկ. ՍՍՀ Հոկտեմբերյան հեղափոխության կենտրոնական պետական արխիվ (այսուհետև՝ ՀՀԿՊԱ), ֆ. 40/113, ց. 3, գ. 21, թ. 49—54.

կառավարության քաղաքականությունը և հայ գաղթականությանը համախմբում սովետական իշխանության շուրջը: Եվ պատահական չէր, որ երախտապարտ հայ գաղթականները բազմաթիվ նամակներում ու հեռագրերում իրենց շնորհակալական անկեղծ ու սրտաբուխ խոսքն էին հղում ռուս ժողովրդին, կոմունիստական կուսակցությանը, սովետական կառավարությանը և անձամբ Վ. Ի. Լենինին՝ հանդես բերած շերմ հոգատարության ու հսկայական օգնության համար⁶⁷:

Իսկ գաղթականության անունը շահագործող դաշնակների կառավարությունը ոչ միայն արմատական միջոցառումներ չձեռնարկեց համաշխարհային պատերազմի և ազգամիջյան կոիվների հետևանքով լիովին քայքայված երկիրը վերականգնելու և արևմտահայ գաղթականության հարցի լուծման ուղղությամբ (ասենք, նա իրականում չէր էլ կարող այդ անել), այլև եվրոպական իմպերիալիստների օգնության հույսի վրա կառուցած իր ավանտյուրիստական քաղաքականությամբ ուղղակի ապակողմնորոշում էր ժողովրդական զանգվածներին:

Երկրում կուտակված գաղթականության և աշխարհով մեկ սփռված հարյուր հազարավոր տարագիրների վիճակի բարելավման ուղղությամբ դաշնակցական կառավարության անճարակությունը և արևմտյան տերությունների նենգ գործունեությունը լիովին պատկերացնելու համար անհրաժեշտ է գոնե համառոտակիրորեն ծանոթանալ նաև այն ժամանակվա միջազգային իրադրությունը:

Դաշնակներն իրենց ամբողջ ուշադրությունն ու գործունեությունը կենտրոնացրել էին արտաքին քաղաքականության բնագավառում, որպեսզի Անտանտի աջակցությամբ կարողանային իրականացնել «միացյալ և անկախ Հայաստան» ստեղծելու իրենց ծրագիրը: Բայց այդ չէր խանգարում նրանց, որպեսզի իրենց հատուկ քաղաքական էկլիկտիցիզմին հե-

⁶⁷ Տե՛ս «Հայ փախստականներին» բրոշյուրը (հրատարակություն Հայկական կենտրոնական կոմիսարիատի), Մոսկվա, 1919: Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս Ս. Տ. Ալիխանյան, Հայկական գործերի կոմիսարիատի գործունեությունը (1917—1921), էջ 85—127:

տեկելով՝ պատվիրակություններ ուղարկեին նաև թուրքական սուլթանի, հայության բնաջնջման ծրագրի հեղինակներ Թալեաթի ու էնվերի և վիհեյմյան Գերմանիայի կառավարության մոտ՝ նրանցից նույնպես «բարիքներ» հայցելու հայերի համար⁶⁸:

Գեռևս 1912 թ. նոյեմբերի 10-ին Գևորգ Ծ. Սուրենյան կաթողիկոսը հատուկ կոնդակով Եվրոպայում իր լիազոր ներկայացուցիչն էր նշանակել եգիպտահայ հարուստ Պողոս Նուբար փաշային, որն իր գործունեության կենտրոն էր ընտրել պերճաշուք Փարիզը և հայկական հարցը լուծելու ուղղությամբ անընդհատ ապարդյուն դիմումներ էր հղում մեծ տերություններին:

Հենց որ վերջացավ պատերազմը, և տերությունները ձեռնամուխ եղան հաշտության բանակցություններին, Անտանտի «փոքրիկ դաշնակից» դաշնակցական կառավարությունն էլ անհրաժեշտ գտավ իր բազմամարդ պատվիրակությունն ունենալ Փարիզի խաղաղության կոնֆերանսում: 1919 թ. փետրվարի 3-ին Փարիզ հասավ «Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը» Ավետիս Ահարոնյանի գլխավորությամբ, որը դիրեկտիվ ուներ միանալու Պուլոս Նուբար փաշայի ղեկավարած «Ազգային պատվիրակության» հետ: Սակայն նրանց միջև եղած սուր վեճերի հետևանքով հնարավոր չեղավ ստեղծել միացյալ պատվիրակություն⁶⁹:

Այնուամենայնիվ, 1919 թ. փետրվարի 12-ին այդ երկու պատվիրակությունների նախագահների ստորագրությամբ հայկական պահանջները ներկայացվեցին հաշտության կոնֆերանսին⁷⁰: Այդ հուշագրում առաջադրված էին եվրոպական մեծ տերությունների, ԱՄՆ-ի կամ Ազգերի լիգայի երաշխավորության տակ ստեղծվելիք ապագա հայկական «անկախ» պետության տերիտորիալ պահանջներն ու սահմանները, ինչպես նաև նրա խնամարկուի (Հայաստանի մանդատն ստացող պետության) հարցը և հարակից այլ խնդիրներ:

⁶⁸ Տե՛ս Հայկ. ՍՍՀ Կողմ, ֆ. 68/200, գ. 23, թ. 3—31.

⁶⁹ Տե՛ս նույն տեղում, գ. 32, թ. 432.

⁷⁰ Տե՛ս «Армянский вопрос перед мирной конференцией».

Երկու պատվիրակություններն էլ ճիգ ու ջանք էին գործադրում, որպեսզի Հայաստանի մանդատը ստանձնեին Ամերիկայի Միացյալ Նահանգները⁷¹: Խաղաղության կոնֆերանսի ամերիկյան ներկայացուցիչները, և հատկապես պրեզիդենտ Վուդրո Վիլսոնը, ամեն կերպ դրսևորում էին Հայաստանի մանդատն ստանալու իրենց ախորժակը: 1919 թ. մարտի 20-ին կոնֆերանսը Վիլսոնի առաջարկությամբ որոշեց Մերձավոր Արևելք ուղարկել ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Անգլիայի և Իտալիայի ներկայացուցիչներից բաղկացած մի հանձնաժողով՝ Օսմանյան կայսրությունից անջատվելիք երկրամասերի վիճակը և ժողովուրդների կարիքները քննելու համար: Այդ որոշման համաձայն իրականում ուսումնասիրություններ կատարեցին միայն ամերիկյան ներկայացուցիչներ Քինգն ու Քրեյնը և եկան այն եզրակացության, որ նախկին Օսմանյան կայսրությունից պետք է կազմել երեք նոր պետություն՝ Հայաստան, Թուրքիա և Կ. Պոլիս, որոնք բոլորը միասին պետք է հանձնվեն մի պետության հոգատարությանը: Այսպիսով նրանք անց էին կացնում այն միտքը, որ Հայաստանի մանդատի ստանձնումը պետք է պայմանավորել նաև Թուրքիայի և Կ. Պոլսի մանդատների ձեռքբերումով: 1919 թ. ամռանը Վիլսոնը մի նոր ու բազմամարդ հանձնաժողով ուղարկեց Մերձավոր Արևելք և Հայաստան՝ մանդատի ենթակա երկրները ավելի բազմակողմանիորեն ուսումնասիրելու համար: Դա զանազան էքսպերտներից բաղկացած՝ գններալ Ջեմս Հարրորդի գլխավորած հանձնաժողովն էր, որի մեջ ընդգրկված էին ավելի քան 40 մարդ: Այդ առաքելությունն իր ուսումնասիրություններն սկսեց Կ. Պոլսից, անցավ Կիլիկիա, Հյուսիսային Սիրիա, ապա Տիգրանակերտ—Խարբերդ—Սվազ—Երզնկա—Կարին—Կարս գծով 1919 թ. սեպտեմբերին ժամանեց Երևան: Հարրորդի հանձնաժողովն ամենուրեք հավաքեց պատմական, քաղաքական, տնտեսական, առևտրական, ֆինանսական և այլ տեղեկություններ և դրանց հիման վրա գրած մանրամասն զեկուցագիրը ներկայացրեց ամերիկյան կառա-

⁷¹ Տե՛ս «Армянский вопрос перед мирной конференцией», էջ 10—11:

վարութեանը: Այդ զեկուցագրում նշվում էր, որ ԱՄՆ-ը պետք է ընդունի ոչ միայն Հայաստանի, այլև Կ. Պոլսի, Թրակիայի, Թուրքիայի և Անդրկովկասի միասնական մանդատը: Դա նշանակում էր, որ միայն Հայաստանի մանդատի ստանձնումը շահավետ և ձեռնառու չէր ԱՄՆ-ի համար: Այս առումով էլ զուր անցան Անդրկովկասի հայ բուրժուազիայի՝ Թիֆլիսի առևտրականներից ու Բաքվի նավթարդյունաբերողներից սկսած մինչև քաղբենի փաստաբանները, հեռագրերով ու բանաձևերով իրենց համակրանքն ու ծառայելու պատրաստակամությունը հայտնող ցանկությունները՝ Հայաստանի մանդատը ԱՄՆ-ի կողմից վերցվելու դեպքում: Ամերիկյան մոնոպոլիստներին առաջին հերթին անհանգստացնում ու հետաքրքրում էր այն հարցը, թե իրենք ի՞նչ շահույթներ էին ստանալու այն երկրից, որի վրա սկզբում հարկ կլինեին ծախսել իրենց դուլարները: Իսկ այդ հարցին հուսադրիչ ու դրական պատասխան չէր տալիս Հարբորդի զեկուցագիրը, որտեղ Հայաստանի մանդատն ընդունելու օգտին բերված էր 14, իսկ ընդդեմ՝ 13 փաստարկ⁷²: Եվ պատահական չէր, որ 1920 թ. հունիսի 1-ին ամերիկյան սենատը մերժեց (23 կողմ, 52 դեմ) Սան-Ռեմոյի կոնֆերանսի հրավերի համաձայն Հայաստանի խնամատարությունը վերցնելու մասին Վիլսոնի առաջարկությունը: Լիովին քայքայված ու ավերված փոքրիկ Հայաստանը, առանց ամբողջ Մերձավոր Արևելքի, ձեռնառու չէր ամերիկյան սենատորներին: Հենց սենատին հղած Վիլսոնի ուղերձում նշված էր, որ խնամարկյալ Հայաստանի մաս չէին կազմելու նույնիսկ Կիլիկիան, Սեբաստիան, Խարբերդը, Տիգրանակերտը: Ամերիկայի կողմից Հայաստանի մանդատն ստանձնելու վերաբերյալ սենատի բացասական որոշումը հուսախաբարեց «ազգային» դիվանագետներին և նրանք, ընկած դրոնեղուռ, նոր խնամարկու էին փնտրում Անգլիայում, Ֆրանսիայում, Իտալիայում, Նորվեգիայում, Բելգիայում և Ազգերի լիգայում:

Սակայն Հայաստանի մանդատի հարցը մեծ շափով կախ-

ված էր ընդհանրապես Թուրքիայի հետ կնքվելիք հաշտության պայմանագրից: Իսկ դա մի այնպիսի բարդ ու խճճված հարց էր, որի վերաբերյալ նույնիսկ նախնական որոշում կայացնելը հարկ եղավ հետաձգել մինչև 1920 թվականի գարունը: Մինչդեռ գնալով էլ ավելի էր ծանրանում հայրենիք վերադառնալու հույսով անհյուրընկալ օտարության մեջ դեզերող տարագիր հայության վիճակը:

Ինչպես հայտնի է, 1918 թ. աշնանն արդեն գերմանական ամբողջ խմբավորման, այդ թվում նաև Թուրքիայի ռազմական դրությունն անհուսալի էր դարձել: 1918 թ. սեպտեմբերին անգլո-ֆրանսիական զորքերը Եվրոպայում և Ասիայում վրձնական հարվածներ հասցրին Թուրքիային, որոնց հետևանքով անխուսափելի դարձավ Թուրքական բանակի համընդհանուր քայքայումը: Ամբողջ զորային միավորումներ մեկը մյուսի հետևից լքում էին ռազմաճակատը և քաշվում երկրի խորքերը: Շուտով լիովին նրանց տրամադրությունն անցան կայսրության առանձին լայնածավալ շրջաններ և նրանք այլևս չէին ենթարկվում կենտրոնական սուլթանական կառավարությանը: Երկրի արտաքին ու ներքին սպառնալից դրությունը արտակարգ կերպով անհանգստացնում էր սուլթանին ու իթթիհատական վերնախավերին և նրանք ամեն կերպ ձգտում էին զինադադար կնքել Անտանտի հետ: Բանակցությունների ընթացքը թեթևացնելու նպատակով անհրաժեշտ համարվեց կատարել կաբինետի փոփոխություն: Թալեաթն ու էնվերը հեռացան իշխանությունից և Մեծ վեզիր դարձավ «անկուսակցական», բայց, համեմայն դեպս, իթթիհատին մոտ կանգնած, Ահմեդ Իզզեթ փաշան: Նա հրապարակորեն հայտարարեց, թե «պատերազմը Անգլիայի դեմ հանցագործություն է եղել» և Անտանտի զորքերի հրամանատարությանը՝ խնդրեց զինադադարի բանակցություններ սկսել:

1918 թ. հոկտեմբերի 30-ին, էգեյան ծովի Մուդրոս նավահանգստում խարխիս գցած անգլիական «Ազամեմնոն» հածանավի վրա, զինադադարի համաձայնագիր ստորագրվեց Անտանտի տերությունների և Թուրքիայի սուլթանական կա-

⁷² Տե՛ս Հայկ. ՍՍՀ Կողմ, ֆ. 68/200, գ. 852, թ. 6:

աւարութեան միջև, որով վերջինս լիովին հանձնվում էր հաղթողների ողորմածութեանը⁷³:

Գերմանական պաշտոնյաները, որոնք այնքան տենդորեն թուրքիային ներքաշել էին համաշխարհային պատերազմի հորձանուտը, զինադադարից հետո արագորեն էվակուացվեցին: Թաւեաթը, էնվերը և երիտթուրքական մյուս ոճրագործները փախան երկրից՝ ընդունելով «Միութուն և առաջադիմութուն» կուսակցութեան քաղաքականութեան լիակատար կրախը:

Պատերազմի ավարտումից հետո, հաշտութեան պայմանագրերի նախապատրաստման ժամանակ, հաղթողներն ամենից շատ զբաղվեցին թուրքիայի հետ հաշտութեան տրակտատի մշակման հարցով, որովհետև այդտեղ բախվում ու խաշաձեվում էին իմպերիալիստական տերութիւնների կարևոր շահերն ու ձգտումները: Դեռևս 20-ական թվականներին ՍՍՀՄ արագործողկոմատի կողմից հրատարակված նախկին գաղտնի պայմանագրերի ու փաստաթղթերի ժողովածուները⁷⁴ պարզ պատկերացում են տալիս գիշատիչ ձգտումների այն գաղտնի պայքարի մասին, որը տեղի էր ունենում թուրքիայի բաժանման շուրջը մեծ տերութիւնների միջև ամբողջ պատերազմի ընթացքում՝ ընդհուպ մինչև սոցիալիստական հեղափոխութեան հաղթանակը Ռուսաստանում:

Ինչպես հայտնի է, Անտանտի երկրների միջև պատերազմի ժամանակ համաձայնութիւն էր գոյացել թուրքիայի տերիտորիալ անդամահատման շուրջը: Անտանտի դիվանագետների կարծիքով պատերազմը օրակարգի մեջ էր դրել Ասիական թուրքիան բաժանելու և թուրքերին Բալկանյան թերակղզուց արտաքսելու հարցը: Դաշնակից տերութիւնները հրապարակայնորեն հայտարարում էին, որ պատերազմի խնդիրներից ու իրենց նպատակներից մեկն էլ Հայաստանի ազա-

տագրումն է թուրքական լծից, մինչդեռ դիվանագիտական առանձնասնկաներում գաղտնի կերպով բանակցում էին Հայաստանի բաժանման մասին: Եվ Հայաստանի վերաբերյալ ի վերջո հաստատված որոշումները մազաչափ անգամ հաշվի չէին առնում հայ ժողովրդի շահերն ու բաղձանքները:

Օսմանյան կայսրութեան անդամահատման շուրջը Անտանտի տերութիւնների գաղտնի բանակցութիւնները, որոնք սկսվել էին դեռ պատերազմի սկզբից, վերջնականապես ավարտվեցին 1916 թ. սեպտեմբերին և իրենց ձևակերպումը գտան Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի միջև կայացած այսպես կոչված «Սալթս-Պիկոյի համաձայնութեամբ»: Այդ համաձայնագրին 1917 թ. ապրիլին միացավ նաև Իտալիան, և, նույնիսկ առանց Ռուսաստանի գիտութեան, Անգլիայի ու Ֆրանսիայի կողմից նրա համար Արևմտյան Անատոլիայում առանձնացվեց ազդեցութեան հատուկ սֆերա: Ըստ Սալթս-Պիկոյի համաձայնագրի պատերազմից հետո թուրքիան բաժան-բաժան էր արվելու. Արևմտյան Հայաստանը հիմնականում անցնելու էր Ռուսաստանին, Կիլիկիան՝ Ֆրանսիային: Ռուսաստանի տիրապետութեանը պետք է ենթարկվեին էրզրումի, Տրապիզոնի, Վանի և Բիթլիսի նահանգները, ինչպես նաև Քրդստանի մի մասը: Այնուհետև սահմանվում էին Անգլիայի և Ֆրանսիայի ազդեցութեան գոտիները⁷⁵:

Բայց Հոկտեմբերյան հեղափոխութեան շնորհիվ Ռուսաստանի պատերազմից դուրս գալը խառնեց նրա նախկին դաշնակիցների հաշիվները Մերձավոր Արևելքում, շնայած նրանք ամեն կերպ ձգտում էին դարձյալ իրականացնել իրենց պլանները:

Անգլիան և Ֆրանսիան, հակառակ իրենց ցանկութեան, պատերազմի ժամանակ հարկադրված էին համաձայնվել Ռուսաստանի կողմից Կ. Պոլսի ու նեղուցների, ինչպես նաև Արևմտահայաստանի և Անատոլիայի առանձին մասերի օկուպացմանը: Պատերազմից Ռուսաստանի դուրս գալը այդ

⁷³ Տե՛ս Ժ. Վ. Տարլե, նշված աշխատութիւնը, էջ 435:

⁷⁴ Տե՛ս «Раздел азиатской Турции по секретным документам 6. Министерства иностранных дел», Москва, 1924, а так же: «Константинополь и проливы», том 1 и 2. Москва, 1925—1926:

⁷⁵ Տե՛ս Ա. Փ. Миллер, Очерки новейшей истории Турции, М.—Л., 1948, էջ 48—60:

իմաստով խիստ թեթևացրեց նրանց դրուժյունը, բայց թուրքական հարցի լուծումը բնավ չդյուրացավ դրանով: Թուրքական տերիտորիաների նկատմամբ լուրջ հավակնություններ ունեին նաև Իտալիան և Հունաստանը, որոնք, հակառակ Ֆրանսիական կառավարության շկամությանը, ստանում էին Անգլիայի աջակցությունը: Թուրքական հարցում եվրոպական տերությունների հակամարտություններն ավելի սրվեցին 1919—20 թվականներին, որոնք և կանխորոշեցին իրադարձությունների զարգացման հետագա ընթացքը:

Պատերազմի ժամանակ Թուրքիայում ինքնուրույն զարգացման ուղի էր բռնել Անատոլիայի ազգային բուրժուազիան, որի պայքարին ուղղություն տվող ուժը ազգայնական ձգտումներով սողորված թուրքական մտավորականությունն էր, առանձնապես նրա ռազմական վերնախավը՝ Մուստաֆա Քեմալի ղեկավարությամբ:

1919 թ. հուլիս-օգոստոսին էրզրումում գումարվեց արևելյան վիլայեթների իրավունքների պաշտպանության ընկերությունների կոնգրես՝ Քեմալի նախագահությամբ, որտեղ քննարկվեց Արևելյան Անատոլիայի անդամահատումը կանխելու և հունական ու հայկական պետությունների ստեղծմանը ուղղված էին Արևմտահայաստանը Թուրքիայից անջատելու գաղափարի դեմ և անտեսում էին ազգային փոքրամասնությունների իրավունքները: Ակնհայտ էր հատկապես այդ որոշումների և ընդհանրապես քեմալականների հակահայկական տենդենցը:

1919 թ. սեպտեմբերին Սվազում կայացավ արդեն ոչ միայն արևելյան վիլայեթների, այլև ամբողջ Թուրքիայի իրավունքների պաշտպանության ընկերությունների կոնգրեսը: Էրզրումում խոսքը գնում էր առավելապես հայկական և հունական պետությունների ստեղծման փորձերին հակահարված տալու մասին, իսկ Սվազում քննարկվեց ընդհանրապես Անտանտի դեմ համաթուրքական պայքարի կազմակերպման

պրոբլեմը: Այդ պատճառով էլ Սվազի կոնգրեսը չբավականացավ էրզրումյան որոշումների լոկ հաստատմամբ, այլ ընդունեց ազգային պահանջների ավելի ընդարձակ ծրագիր: Բայց կոնգրեսի որոշումների մեջ ոչ մի խոսք չկար երիտթուրքական կառավարության ռեազորությունների մասին, հայ, հույն և քրիստոնյա մյուս ժողովուրդների կոտորածների ու այդ եղեռնական իրադարձությունից փրկվածների հետագա ճակատագրի մասին:

Թուրքիայի իրավունքների պաշտպանության ընկերությունների գավառական ցաք ու ցրիվ կոմիտեների և էրզրումում ստեղծված Արևելյան Անատոլիայի իրավունքների պաշտպանության ընկերության փոխարեն Սվազի կոնգրեսը հիմնեց Անատոլիայի և Ռումելիայի իրավունքների պաշտպանության համաթուրքական միացյալ ընկերություն: Սվազի կոնգրեսն ընտրեց ներկայացուցչական նոր կոմիտե, դարձյալ Քեմալի նախագահությամբ: Այդ կոմիտեն իր իշխանությունը փաստորեն տարածում էր ամբողջ Անատոլիայի վրա և սուլթանից պահանջում էր Դամադ Ֆերիդ փաշայի կաբինետի փոխարեն կազմել ազգի վստահությունը վայելող նոր կառավարություն: 1919 թ. հոկտեմբերին սուլթան վահիդէդդինը Մեծ վեզիր նշանակեց Ալի Ռզա փաշային և ընդառաջեց պառլամենտի նիստ հրավիրելու մասին քեմալականների պահանջին:

1920 թ. հունվարին Կ. Պոլսում բացվեց պառլամենտի նիստը, որ մեծամասնություն էին կազմում քեմալականները: Հունվարի 28-ին պառլամենտն ընդունեց այսպես կոչված «Ազգային ռեֆորմ», որն ըստ էության էրզրումի և Սվազի կոնգրեսների հռչակած սկզբունքների պառլամենտական ձևակերպումն էր: Սակայն շուտով անգլիացիները օկուպացրին Կ. Պոլիսը, ցրեցին պառլամենտը և ձերբակալեցին շատ դեպուտատներին: Քեմալը հայտարարվեց հանցագործ, իսկ Անատոլիայում սկսված շարժումը՝ խռովություն: Դրանով վերջացավ ձևական «խաղաղությունը» քեմալականների և սուլթանական կառավարության միջև: 1920 թ. ապրիլին քեմալականներն Անկարայում հրավիրեցին նոր պառլամենտ, որն ստա-

⁷⁶ Տե՛ս Ա. Յ. Միլլեր, նշված աշխատությունը, էջ 88,

ցավ Թուրքիայի Ազգային մեծ ժողով անունը և Մուստաֆա Քեմալի ղեկավարութեամբ կազմվեց կառավարութիւն: Ազգային մեծ ժողովը իրեն հայտարարեց Թուրքիայի միակ օրինական իշխանութիւնը⁷⁷: Երկրում փաստորեն ստեղծվեց երկիշխանութիւն՝ սուլթանական կառավարութիւնը՝ Կ. Պոլսում, և քեմալական կառավարութիւնը՝ Անկարայում:

Ահա այսպիսին էր իրադրութիւնը Թուրքիայում, երբ 1920 թ. ապրիլի վերջերին Սան-Ռեմոյում Անտաճտի տերութիւնները ձեռնամուխ եղան Թուրքիայի հետ կնքվելիք հաշտութեան պայմանագրի ձևակերպմանը: 1920 թ. մայիսին պայմանագրի նախագիծը հանձնվեց սուլթանական կառավարութեանը և հրապարակվեց մամուլում: Միաժամանակ սուլթանին առաջարկվեց վերականգնել կարգը Անատոլիայում, ուր քեմալականները պատրաստվում էին զինված հակահարված տալ Թուրքիան անդամահատելու Անտաճտի պլանների իրագործմանը: Բայց ո՛չ սուլթանական կառավարութեան ջանքերը, ո՛չ էլ հունական զորքերի հարձակումը չկարողացան ընկճել քեմալականների դիմադրութիւնը:

Անտաճտի ղեկավարներն սկզբում կարծում էին, թե քեմալականների դիմադրութիւնը երկար չի տևի և նպատակահարմար էին համարում այլևս չհետաձգել Թուրքիայի հետ հաշտութեան պայմանագրի ստորագրումը: Բարձր Դուռը հարկադրված էր հնազանդվել դաշնակիցների այդ որոշմանը:

1920 թվականի օգոստոսի 10-ին Սևրում ստորագրվեց Թուրքիայի հետ հաշտութեան պայմանագիր, որը հանդիսանում էր վերսալյան սիստեմի բաղկացուցիչ մասը: Պայմանագիրն ստորագրեց նաև Հայաստանի դաշնակցական կառավարութեան ներկայացուցիչ Ավ. Ահարոնյանը:

Սևրի պայմանագիրն իրենից ներկայացնում էր հսկայածավալ մի փաստաթուղթ՝ բաղկացած 13 մասից և 433 հոդվածից: Նրա առաջին մասը, 1919—20 թվականներին կրնքված մյուս պայմանագրերի նման, զբաղեցնում էր Ազգերի լիգայի ստատուտը: Երկրորդ մասը վերաբերում էր Թուրքիա-

յի սահմաններին: Ըստ դրա Անգլիան, Ֆրանսիան, Իտալիան և Հունաստանը օկուպացնում էին Օսմանյան կայսրութեան տերիտորիայի նշանակալից մասը: Պայմանագրի 3-րդ մասի 6-րդ բաժնի 88—93 հոդվածները վերաբերում էին Հայաստանին⁷⁸:

Թուրքիայի և Հայաստանի միջև սահմանը գծելու հարցը (մտտավորապես Վանի, Բիթլիսի, էրզրումի և Տրապիզոնի վիլայեթների տերիտորիաները Արևելյան Հայաստանին կցելու պայմանով) հանձնվում էր ԱՄՆ-ի պրեզիդենտ Վուդրո Վիլսոնի միջնորդ որոշմանը:

Սևրի պայմանագրի բնորոշ կողմերից մեկն այն էր, որ ամենակարևոր ու հիմնական հարցերում բացակայում էր պարզութիւնն ու պայմանավորվածութիւնը: Ճշգրտորեն չէին որոշված սահմանային հարցերը, հստակորեն չէր մեկնաբանված ազգային փոքրամասնութիւնների իրավունքների պաշտպանութիւնը և այլն: Մի խոսքով, ակնհայտ առիթներ ու նախադրյալներ էին թողնված ապագա միջամտութիւնների համար: Մի կողմից ավարի բաժանման շուրջը իմպերիալիստական տերութիւնների միջև եղած տարաձայնութիւնների, իսկ մյուս կողմից Թուրքիայում բարձրացած քեմալական շարժման հետևանքով Սևրի պայմանագիրը ամենակարևատե կյանքն ունեցավ վերսալյան սիստեմի հաշտութեան պայմանագրերի մեջ:

Մերձավոր Արևելքում անգլիական աճող գերիշխանութիւնը անբավականութիւն ատաջ բերեց Սևրի պայմանագրի նրկատմամբ նրա դաշնակիցների շարքերում:

Օգտվելով Անտաճտի ներսում եղած հակասութիւններից և Թուրքիայի նկատմամբ միասնական վերաբերմունքի բացակայութիւնից, քեմալականներն աստիճանաբար ամրապնդեցին իրենց դիրքերը երկրում: Նրանք միաժամանակ դիմեցին նոր նվաճումների, Հայաստանի Հանրապետութիւնից զավթելով Կարսի մարզը և այլ տերիտորիաներ: Մինչդեռ դաշնակցական կառավարութիւնը անհիմն հույսեր էր կա-

⁷⁷ Տե՛ս Ա. Յ. Միլլեր, նշված աշխատութիւնը, էջ 94:

⁷⁸ Տե՛ս Հայկ. ՍՍՀ ԿԳՊԱ, ֆ. 68/200, գ. 852, Բ. 16:

պում արևմտյան տերութունների օգնության հետ և թերագնահատում էր քեմալականների ուժերը: Քեմալական կառավարությունը Հայաստանի վրա հարձակվելու որոշակի պլաններ ուներ: Այդ նպատակով ստեղծել էր հատուկ բանակ՝ ռեակցիոն գեներալ, մոլի հայաստաց Բյազիմ Կարաբեքիր փաշայի գլխավորությամբ: Դաշնակցական անհեռատես գործիչները այնքան անտեղյակ էին իրենց քթի տակ կատարվող քաղաքական անցուղարձին և ուժերի կենտրոնացմանը, որ չհասկացան բարեկամ ձեռքող իմպերիալիստական տերութունների քաղաքականության մեջ տեղի ունեցող փոփոխությունները՝ հօգուտ քեմալականների, որոնք առիթներ էին փնտրում հայ ժողովրդի նկատմամբ ծրագրած ռճրագործություններն իրականացնելու համար:

Ինչպես հայտնի է, դեռևս 1920 թվականի գարնանից սկսած մինչև դաշնակցների ու քեմալականների միջև ծագած պատերազմի ողբերգական օրերը, երբ Հայաստանը մնաց անօգնական վիճակում, հանուն հայ ժողովրդի փրկության Սովետական Ռուսաստանը բազմիցս առաջարկել էր դաշնակցական կառավարությանն իր միջնորդությունը՝ Թուրքիայի հետ վիճելի հարցերը կարգավորելու համար: Սովետական Ռուսաստանը առաջարկել էր նաև պայմանագիր կնքել ու հրաժարվել եվրոպական իմպերիալիստների հետ ունեցած անօգուտ խաղերից, բայց արձագանք չէր գտել: Դեռ ավելին. դաշնակցները 1920 թ. մայիսին Լ. Շանթի գլխավորությամբ Մոսկվա ուղարկած իրենց պատվիրակությանը հրահանգ էին տվել որքան կարելի է ձգձգել բանակցությունները և դրանց անհաջողության մեղքը բարդել սովետական կառավարության վրա, հույս ունենալով, թե անգլիացիները կաշակցեն իրենց Թուրքերի հետ հաշիվ տեսնելու: Ահա թե ինչու նրանք այդպես վարվեցին նաև 1920 թ. ամռանը համաձայնագիր կնքելու առաքելությամբ Թիֆլիս ժամանած ՌՍՖՍՀ կառավարության պատվիրակ Բ. Վ. Լեգրանի հետ: Իսկ երբ հոկտեմբերի 28-ին նրա հետ վերջապես կայացավ համաձայնություն, արդեն ուշ էր և անհնարին էր կանխել արագորեն զարգացող իրադարձությունների հետագա ընթացքը:

1920 թվականի սեպտեմբերի 23-ին քեմալական զորքերը հարձակման անցան, գրավեցին Սարիղամիշը և արագորեն առաջ շարժվեցին դեպի Կարս: Այդ պատերազմը անուղղելի, ողբերգական հետևանքներ ունեցավ հայ ժողովրդի հետագա ճակատագրի համար: Երբ Թուրքական բանակը հասել էր Կարսի մոտ գտնվող Բեզլի-Ահմեդ կայարանը, դաշնակցական կառավարության Թիֆլիսի դիվանագիտական ներկայացուցիչ Տ. Բեկզադյանը օգնություն ստանալու խնդրանքով դիմեց Անդրկովկասում անգլիական ներկայացուցիչ գնդապետ Ստոքսին: Վերջինս իր կառավարության անունից հայտարարեց, որ իրենք ոչինչ չեն կարող անել այդ ուղղությամբ, անգամ դեսանտ արհեստով Տրապիզոնում⁷⁹:

Հոկտեմբերի 30-ին Թուրքերը գրավեցին Կարսը, իսկ նոյեմբերի 7-ին՝ Ալեքսանդրապոլը⁸⁰: Նույն օրը Թուրքերի հետ ստորագրվեց զինադադար, բայց Բյազիմ Կարաբեքիրի նոր պահանջները չկատարելու պատճառով նոյեմբերի 11-ին վերսկսվեցին ռազմական գործողությունները⁸¹: Նոյեմբերի 22-ին դաշնակցական կառավարության խնդրանքով կնքվեց նոր զինադադար: Թուրքերի հետ հաշտության պայմանագիր կնքելու նպատակով նոյեմբերի 23-ին Ալեքսանդրապոլ մեկնեց դաշնակցական պատվիրակությունը, որը ստիպված էր ապավինելու հաղթողի ողորմածությանը: Դեկտեմբերի 2-ին ստորագրվեց Ալեքսանդրապոլի Թուրք-դաշնակցական խայտառակ հաշտության պայմանագիրը, որով հռչակված Հայաստանի Հանրապետությունը փաստորեն ընկնում էր Թուրքիայի «հովանավորության» տակ⁸²:

Եթե դաշնակցներն Ալեքսանդրապոլի ապօրինի պայմանագրի կնքման միջոցով հետապնդում էին հակահեղափոխական նկատառումներ և ուզում էին երկարաձգել իրենց իշխանության գոյությունը երկրում, ապա Բյազիմ Կարաբեքիր փաշան ձգտում էր իրականացնել քեմալականների շո-

⁷⁹ Տե՛ս Հայկ. ՍՍՀ ՀՀԿՊԱ, ֆ. 4/114, գ. 3, ք. 97—98:

⁸⁰ Տե՛ս Հայկ. ՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 68/200, գ. 413, ք. 20:

⁸¹ Տե՛ս նույն տեղում, ք. 52:

⁸² Նույն տեղում, գ. 155, ք. 66—67:

վինիստական ու թալանչիական նպատակները: Քեմալականները ցանկանում էին վերջնականապես ու հիմնովին ոչնչացնել Հայաստանն ու հայ ժողովրդին: Ալեքսանդրապոլի պայմանագրի լրիվ կենսագործումը հայ ժողովրդին կբերեր նոր շատ տառապանքներ, սակայն, բարեբախտաբար, այդ ստորկացուցիչ պայմանագիրն ստորագրող դաշնակցական կառավարությունն արդեն իրական ոչ մի իշխանություն չունեի Հայաստանում:

1920 թ. նոյեմբերի 29-ին կոմունիստական կուսակցության ղեկավարությունը պատամբած հայ աշխատավորները, երկրի հյուսիս-արևելքում բարձրացնելով մեծ Հոկտեմբերի ազատարար դրոշը, Հայաստանը հայտարարել էին Սովետական Սոցիալիստական Հանրապետություն: Այդ պահից արդեն թուրքերի գիշատիչ ախորժակին հակահարված տալու ուժ էր դառնում ուս ժողովրդի հետ դաշնակցած հայ աշխատավորությունը: Եվ միայն սովետական իշխանությունն էր, որ փրկության ուղի բացեց հայ ժողովրդի, այդ թվում ինչպես երկրում գտնվող արևմտահայ փախստականության, այնպես էլ գաղթաշխարհում ղեզերող տարագիր հայության համար:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՍՈՎԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՁԵՌՆԱՐԿՈՒՄՆԵՐԸ
ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ԵՎ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹՅՈՒՆԸ

Սովետական իշխանությունն Արևելյան Հայաստանում հաղթանակեց մի այնպիսի ժամանակ, երբ երկիրը գտնվում էր ուղղակի կործանման շեմին: Առաջին համաշխարհային իմպերիալիստական պատերազմը և դաշնակների ավանտյուրիստական քաղաքականությունը լիակատար քայքայման էին հասցրել Հայաստանը: Նախապատերազմյան մակարդակի համեմատությունը խիստ անկում էր ապրել գյուղատնտեսությունը, զգալի կերպով կրճատվել էին ցանքատարածությունները, անասունների գլխաքանակը, գրեթե փակվել էին եղած հատ ու կենտ արդյունաբերական ձեռնարկությունները: Մի խոսքով, ամբողջ տնտեսության մեջ տիրապետում էին կատարյալ քաոսն ու քայքայվածությունը:

Սովետական Հայաստանին անցյալից որպես ժառանգություն էին մնացել սովի մատնված բնակչությանը ավերակ գյուղեր ու քայքայված քաղաքներ: Հայաստանում գրեթե չկար մի անկյուն, որը ենթարկված չլիներ համատարած ավերածությունների, բնակչությունն ապրած չլիներ զանգվածային արտագաղթի կամ ներգաղթի դժվարությունները: Նախկին Երևանի նահանգի փոքրիկ տերիտորիան ողողված էր Արևմուտյան Հայաստանի և ընդհանրապես Թուրքիայի զանազան մասերից եկած գաղթականներով: 1920 թ. աշնանը քեմալականների գաղթած Կարսի, Կաղզվանի և Սուրմալուի շրջանների բնակչության թուրքական ասկյարների յաթաղանից մի կերպ ազատված մասը նույնպես գտնվում էր հանրապետությունում: Երկրում կուտակված արևմտահայ գաղթականների քա-

նակն անցնում էր 200 հազարից. սրան ավելանում էր նաև տասնյակ հազարավոր որբ ու անապաստան երեխաների զանգվածը:

Մի քանի հարյուր հազար հայ գաղթականներ էլ գտնվում էին Ռուսաստանում, Ուկրաինայում, Միջին Ասիայում և այլուր, որոնք Հայաստանում սովետական կարգերի հաստատումից հետո ձգտում էին վերադառնալ հայրենիք:

Մանր էր Հայաստանի վիճակը, որն իրենից ներկայացնում էր բանաստեղծի խոսքերով ասած «զարկված ու զրկված որբի հայրենիք, ողբի հայրենիք»: Եվ բնավ պատահական չէր, որ ամենուրեք մոլեգնում էին սովն ու համաճարակ հիվանդությունները, որոնք օրական հարյուրավոր մարդկային զոհեր էին կլանում:

Կոմունիստական կուսակցության և սովետական պետության ականավոր գործիչ Գ. Կ. Օրշոնիկիձեն 1920 թ. դեկտեմբերի 1-ին, Քաբվի սովետի հանդիսավոր նիստում ունեցած ելույթում, ողջունելով Հայաստանում սովետական կարգերի հաղթանակը և նշելով գոյություն ունեցող դժվարությունները, ասում է. «...էլ ավելի դժվար է, միլիոն անգամ ավելի դժվար է այդ իշխանությունը կառուցել այնտեղ՝ տանջված, ծվատված Հայաստանում, որը քիչ է մնացել վերածվի գաղթականների հանրապետության»¹:

Երկրում կուտակված այդ գաղթականության առկայությունը Հայաստանի վիճակը դարձնում էր բացառիկ սովետական մյուս հանրապետությունների շարքում:

Կոմունիստական կուսակցությունը և սովետական կառավարությունը քաջ գիտակցում էին, որ այդ պայմաններում գաղթականության հարցը ամենադժվարին լուծելի հարցերից մեկն է, որ առանց երկրում կուտակված հարյուր հազարավոր գաղթականության տեղավորման, բնակարաններով, հողով, գյուղատնտեսական գործիքներով և այլ միջոցներով ապահովելու, մի խոսքով, առանց նրան սեփական տնտեսու-

թյան հետ կապելու, չէին կարող իրականացվել նաև սովետական իշխանության առջև ծառայած քաղաքական ու տրևտեսական կարևորություն ունեցող շատ այլ խնդիրներ՝ այդ թվում հայրենիք ներգաղթելու վերաբերյալ սփյուռքահայ աշխատավորների ցանկություններն ու պահանջները:

Ինչպես ֆաղափական ու տնտեսական լուրջ դժվարությունների հաղթահարման, այնպես էլ գաղթականության հարցի լուծման գործում, անշուշտ, հսկայական նշանակություն ունեցավ Սովետական Ռուսաստանի և եղբայրական մյուս հանրապետությունների բազմակողմանի օգնությունը Հայաստանին:

Չնայած իր տնտեսական ու քաղաքական դժվարին կացությանը, հայ աշխատավորությանը եղբայրական օգնության հզոր ձեռք մեկնեց ռուս ժողովուրդը, որը ոչ միայն շարունակում էր ապաստան տալ Ռուսաստանում ցրված հայ գաղթականներին, այլև ամեն կերպ օգնում էր Սովետական Հայաստանին: Վրաստանում և Ադրբեջանում գտնվող հայ գաղթականներին, հնարավորության սահմաններում, ապաստան էին տվել և բազմապիսի օգնություն կազմակերպել սովետական իշխանության տեղական օրգանները²:

Դեռևս 1920 թ. դեկտեմբերին Սովետական Ռուսաստանը Հայաստանին տրամադրել էր 600 հազար ռուբլի ռսկու կուրսով, իսկ 1921 թ. մայիսին՝ 3 միլիարդ ռուբլի լրացուցիչ վարկ: Այնուհետև, մինչև 1922 թ. սկիզբը, Հայաստան է ուղարկվել, ամենևին ոչ լրիվ տվյալներով, 1 միլիոն 545 հազար ռուբլի դրամ, 426 հազար փութ հացահատիկ և ալյուր, 70 հազար փութ ձկնեղեն, 11 հազար փութ աղ, 7000 փութ շաքար, 150 փութ կակաո, 12 վազոն դեղորայք, մեկ միլիոն 177 հազար փութ վառելիք, 1,5 միլիոն արշին մանուֆակտուրա, 100 հազար ռուբլու գալանտերեայի ապրանքներ, 18 հազար կոմպլեկտ զինվորական համազգեստ, 36 հազար զույգ սպիտակեղեն, 1500 գլուխ անասուններ (մեծ մասամբ ձիեր), 10 օդանավ, նույնքան ավտոմեքենաներ, մեծ քանակությամբ

¹ Գ. Կ. Օրշոնիկիձեն, Ընտիր հոդվածներ և ճառեր, Երևան, 1950, էջ 34: Ընդգծումը մերն է:

² ՏՃՍ Հայկ. ՍՍՀ 2249Ա, ք. 40/113, ց. 3, գ. 21, թ. 49:

գյուղատնտեսական գործիքներ, տպարանական սարքավորում, հեռագրական ու հեռախոսային ապարատներ և այլն: Սովետական Ուկրաինայից 1922 թ. հունվարին Հայաստանն ստացել է 12 վագոն գարի, 19 վագոն հաճար, 14 վագոն արհնճ (հնդկացորեն), 7 վագոն վարսակ և այլ մթերքներ, իսկ Ադրբեջանից՝ մեծ քանակությամբ վառելիք³:

Սովետական Ռուսաստանի ու եղբայրական մյուս հանրապետությունների համակողմանի օգնությունը վճռական դեր խաղաց հայ ժողովրդի համար ճակատագրական այդ օրերին, հնարավորություն ընձեռեց նրան արագորեն դուրս գալու տնտեսական դժվարին վիճակից և վստահորեն ընթանալու երկրի վերականգնման ու սոցիալիզմի կառուցման ուղիով:

Ակնհայտ է նաև, որ առանց եղբայրական այդպիսի անշահախնդիր օգնության ու հոգատարության, Հայաստանի կոմունիստական կուսակցությունը և կառավարությունը մենակ ի վիճակի չէին լինի կարճ ժամանակամիջոցում վճռելու իրենց առջև ծառայած քաղաքական ու տնտեսական բարդ խնդիրները, այդ թվում աստիճանաբար ու արմատապես լուծելու երկրում գտնվող բազմահազարանոց գաղթականական զանգվածին տեղավորելու, հողով, գյուղատնտեսական գործիքներով, անասուններով, սերմացուով բավարարելու և այլ հարցերը: Չպետք է մոռանալ, որ այն ժամանակ Հայաստանի բնակչության գրեթե մեկ երրորդը կազմում էին երկրում անտուն ու անհող, թափառական ու մուրացկանային վիճակով իրենց գոյությունը քարշ տվող արևմտահայ գաղթականները:

Դեռևս 1920 թ. դեկտեմբերի 8-ին, Հայաստանի Հեղկոմի Երևան ժամանելուց չորս օր հետո, արևմտահայ փախստականների գործադիր մարմնի անդամները, երևանաբնակ արևմտահայերի դեկտեմբերի 2-ին տեղի ունեցած խորհրդակցության որոշման համաձայն, մի հայտարարությամբ դիմում են Հեղկոմի նախագահ Ս. Կասյանին՝ համատեղ ջանքերով տառապյալ գաղթականների վիճակը բարելավելու նպատա-

կով միջոցառումներ մշակելու համար⁴: Այդ առթիվ արևմտահայ փախստականների գործադիր մարմնի կողմից Հեղկոմին հղված հայտարարության մեջ ասված էր. «Արևմտահայ փախստական ժողովուրդը, իր վեց տարվա աստանդական դառն փորձերից հետո, այսօր նորից գտնվում է իր նախկին տնտեսական և ընկերային ծանր վիճակի մեջ և այժմ նրա՝ շատերից հալածված մարմինների մի քանի անդամներն իրար մոտ գալով, պարտք են զգում ներկայացնել Ձեզ այդ վիճակը, նրա հիմքը կազմող պատճառները և դարմանի հնարավորությունները: Զրկված հայրենի հողից, նրանք մնացին մինչև վերջն էլ հողազուրկ և թափառաշրջիկ: Իրենց ուրույն կյանքով ու կենցաղով չկարողացան մի տեղ գտնել, կամ միանալ տեղական ժողովրդի հետ: Եվ այդ պատճառներով նրանց աշխատանքի, պարենավորման, տնտեսական և ընկերային պայմանները մնացին անբնականոն ու դարձոին այդպես նաև շրջապատի պայմանները»⁵:

Հայտարարության հեղինակները այնուհետև նշում էին, որ արևմտահայ գաղթականությունը խանդավառությամբ ընդունեց «Ռուսաստանի Մեծ Հեղափոխականի՝ ընկեր լենինի՝ արևմտահայ ժողովրդի դատի վերաբերմամբ արած հայտարարությունը»⁶ և վստահեցնում էին, որ սովետական իշխանության կողմն են գաղթականության լիակատար համակրանքն ու աջակցությունը:

Հաջորդ օրը, դեկտեմբերի 9-ին, Ս. Կասյանն ընդունում է արևմտահայ փախստականների գործադիր մարմնի անդամներին և զրույց ունենում նրանց հետ: Նա հայտնում է, որ սովետական իշխանությունը, որպես աշխատավոր ժողովրդի շահերի իսկական պաշտպան, ամեն ինչ կանի գաղթականության հարցի շուտափույթ լուծման համար:

Սակայն անհրաժեշտ է նշել, որ իր գոյության առաջին

⁴ Տե՛ս Հայկ. ՍՍՀ 2249Ա, ֆ. 40/113, ց. 4, գ. 18, թ. 19:

⁵ Նույն տեղում, ց. 11, գ. 18, թ. 16:

⁶ Ակնարկվում է «Ռուսահայաստանի մասին» Սովետական Ռուսաստանի կառավարության դեկրետը:

³ Տե՛ս Восстановление народного хозяйства Армянской ССР, (Сборник материалов и документов), Ереван, 1958, էջ 91—100:

ամիսներին նորաստեղծ սովետական իշխանությունն ի վիճակի չէր լինելին բավարար աշխատանք տանելու գաղթականություն շրջանում, որովհետև չկային հարկ եղած միջոցները, պակասում էին համապատասխան կադրերը, չկար աշխատանքի կազմակերպման անհրաժեշտ փորձ և այլն: Այդ բացն այնքան զգալի էր, որ Ալազյազի շրջանի գյուղերում վերաբնակվող մշեցիներն ու սասունցիները 1921 թ. սկզբներին մի խնդրագրով դիմել էին ՀՍԽՀ Հեղկոմին, նշելով, որ իրենց գյուղերում վատ է կազմակերպված աշխատանքը և պահանջել էին, որպեսզի իրենց մոտ նույնպես կազմակերպվեն հեղկոմներ, ուղարկվեն պրոպագանդիստներ, գրականություն և այլն⁷:

Սակայն 1921 թ. փետրվարին դաշնակների կազմակերպած ավանտյուրիստական խռովությունը, որը քաղաքացիական կռիվ մեջ քաշեց առանց այն էլ քայքայված երկիրը, զգալի վնաս հասցրեց նաև արևմտահայ գաղթականության հարցի շուտափույթ լուծմանը, որովհետև այն ընդհատեց ավերված երկրի վերաշինության ու երկրում կուտակված գաղթականության տեղավորման, հողով, բնակարաններով և այլ անհրաժեշտ միջոցներով ապահովելու ուղղությամբ սովետական իշխանության ձեռնարկումների իրականացումը:

Դաշնակների ավանտյուրան նորանոր աղետներ պատճառեց բազմաշարժար հայ ժողովրդին: Բացի այդ, նրա լիկվիդացման օրերին, զոհ գնալով դաշնակների տարածած սուտ լուրերին, պրովոկացիաներին ու սպառնալիքներին, ավելի քան մեկ տասնյակ հազար աշխատավորներ, թողած տուն ու տեղ, անցան Պարսկաստան: Սովետական կառավարությունն ստիպված էր մի կողմ թողնել իր շինարար աշխատանքները և ձեռնամուխ լինել դաշնակցական-խմբապետական «Հայքենիքի փրկության կոմիտեի» տիրահաղթական դիկտատուրայի լիկվիդացմանը, իսկ դրանից հետո՝ Երևանից և այլ վայրե-

րից Պարսկաստան անցած փախստականների վերադարձի կազմակերպմանը:

Դաշնակների ագիտացիային ու սպառնալիքներին զոհ գնացած փախստականների մոլորված մասսան սկզբում մտադիր էր մնալ Զանգեզուրում, բայց այնտեղ ընկնելով անողոք սովի ու թշվառությունների հորձանուտը խուճապահար շարժվում է դեպի Պարսկաստան: Յոթ-ութ հազար հոգի Ղարադաղի վրայով մեկնում են Թավրիզ, մի մասն էլ՝ կիսամերկ ու անթիթ, մնում է սահմանի մոտ, Արաքսի ափին: Զանգեզան ավազակախմբեր կողոպտում են նրանց մինչև վերջին շապիկը, շատերը խեղդվում են գետն անցնելիս կամ սովամահ լինում⁸: Թավրիզ մեկնածները, կարճ ժամանակում վերջնականապես համոզվելով իրենց խաբվածություն մեջ, շուտով ետ են գալիս Զուլֆա և այնտեղից խնդրում Սովետական Հայաստանի կառավարությանը՝ հնարավորություն տալ իրենց վերադառնալու հայրենի օջախները և զբաղվելու խաղաղ աշխատանքներով⁹: 1921 թ. ապրիլի 8-ին Հայհեղկոմը քննարկում է փախստականության հարցը և որոշում հանձնարարել Հնդկոմի նախագահությանը մշակելու ներման մասին դեկրետի նախագիծ¹⁰: Հեղկոմի ապրիլի 10-ի նիստում հաստատվում է ներման դեկրետը և հրապարակվում մամուլում: Այդ դեկրետով շինարար աշխատանքի էին հրավիրվում բոլոր նրանք, ովքեր կուրորեն նետվել էին սովետական իշխանության դեմ մղվող պայքարի մեջ:

Դեկրետում ասված էր. «Ի նկատի ունենալով վերոհիշյալ հանգամանքները, սրանով հայտարարվում է բոլոր գյուղացիներին, տաճկահայ գաղթականներին, աշխատավոր ինտելիգենցիային, որոնք այս կամ այն ձևով մասնակցել և մասնակցում են հակահեղափոխական շարժման—լինի դաշնակցական պետական, թե հասարակական հիմնարկություններում, անկախ նրանց համոզմունքից կամ գործունեության

⁷ Տե՛ս Ա. Մ. Հակոբյան, Սովետական Հայաստանը ժողովրդական տրեստություն վերականգնման ժամանակաշրջանում (1921—1925 թթ.), Երևան, 1955, էջ 70:

⁸ Տե՛ս Հայկ. ՍՍՀ ՀՀԿՊԱ, ֆ. 4/114, գ. 5, թ. 3:

⁹ Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 28 մայիսի, 1921 թ., № 94:

¹⁰ Տե՛ս Հայկ. ՍՍՀ ՀՀԿՊԱ, ֆ. 40/113, ց. 3, գ. 45, թ. 2:

գրգռումներից—կառավարությունը լիակատար մոռացութեան է տալիս Հայաստանի բանվորների և գյուղացիների հանդեպ նրանց կատարած հանցանքը հակահեղափոխական շարժման մեջ մասնակցելու համար: Նրանք բոլորը՝ գյուղացիները, գաղթականները և աշխատավոր ինտելիգենցիան կանչվում են աշխատանքի»¹¹:

1921 թ. ապրիլի 24-ին հրապարակվում է Հեղկոմի նոր դեկրետը, որով մեծահոգաբար ներում էր շնորհվում ավանտյուրային մասնակցած բոլոր խավերին¹²: Սովետական իշխանութեան հրապարակած այդ դեկրետները լայն արձագանք գտան ավանտյուրային մասնակցած ինչպես երկրում գտնվող գաղթականության, այնպես էլ արտասահման ապաստանած, թուրքված ու խաբված փախստականության շրջանում:

Ներման դեկրետների ազդեցության տակ անհապաղ երկիր վերադառնալու որոշումներ են կայացնում թավրիզում կուտակված փախստականներն ու զինվորները¹³:

1921 թ. մայիսի 27-ին Ժողկոմխորհի նախագահությունը քննարկում է ներքին գործերի ժողովրդական կոմիտեար Պոլոս Մակինցյանի զեկուցումը «Գաղթականների խնդրի մասին» և կոնկրետ միջոցառումներ մշակում ամեն կերպ նրանց օգնելու համար¹⁴: Մայիսի 31-ին Ժողկոմխորհի նախագահության նիստում լսվում է «Թավրիզի գաղթականների խնդիրը» և որոշվում է նրանց փոխադրությունն արագացնելու և կազմակերպված իրականացնելու նպատակով Զուլֆա և Պարսկաստան գործուղել կառավարական հատուկ հանձնաժողով՝ Գրիգոր Վարդանյանի գլխավորությամբ: Միաժամանակ հետազոտվում է երկաթուղային վարչությանը՝ փախստականներին Զուլֆայից Հայաստան տեղափոխելու համար վագոններ տրամադրելու մասին¹⁵: Մինչև 1921 թ. հունիսի կեսերը կա-

րողացան իրենց հարազատ օջախները վերադառնալ շուրջ 3250 մարդ¹⁶:

Փախստականների վերադարձը ժամանակավորապես խանգարվեց Զանգեզուրում ծվարած դաշնակցության մնացորդների ձեռնարկած վերջին ավանտյուրայի հետևանքով: Զանգեզուրի ազատագրումից հետո, օգոստոսի կեսերին, նորից վերսկսվեց փախստականների վերադարձը և կարճ ժամանակամիջոցում Հայաստան ճանապարհվեցին ավելի քան 2500 մարդ¹⁷:

Երկրից վտարված ու Պարսկաստանում բուն դրած դաշնականները ամեն կերպ փորձում էին խանգարել փախստականության Հայաստան վերադառնալուն: Սկզբում նրանք Երևանից հափշտակած փողերով իբր թե «օգնություն» էին ցույց տալիս փախստականությանը, իսկ երբ համոզվեցին, որ ոչ ոք իրենց չի լսում և բոլորը ցանկանում են միմիայն հայրենիք վերադառնալ, դիմեցին ուղղակի պրովոկացիաների ու սպառնալիքների: 1921 թ. օգոստոսի 21-ին Պարսկաստանից մի գաղթական մերկացնելով դաշնականների հակասովետական գործունեությունը, ՀՍԽՀ Ժողկոմխորհին գրում էր, որ դաշնականները ամեն կերպ խոչընդոտում են գաղթականության երկիր վերադառնալուն և կեղծ լուրեր տարածում, թե «Հայաստանում սով է, բանտերը լցված են, բոլշևիկներն սպանում են վերադարձողներին» և այլն, «ավելի լավ է այստեղ մեռնել, քան թե գնալ Հայաստան»: Նույն նամակի հեղինակը նշում է, որ չնայած այդ բոլոր զրպարտություններին, ամբողջ գաղթականությունը, ցանկանում է գալ հայրենիք¹⁸:

Սովետական կառավարության ձեռք առած միջոցառումների շնորհիվ, կոմունիստական կուսակցության և սովետական պետության ականավոր գործիչ, ՀՍԽՀ Ժողկոմխորհի առաջին նախագահ Ալ. Ֆ. Մյասնիկյանի և արտգործժողկոմ Ասք. Մոսվյանի ամենօրյա ուշադրության շնորհիվ, փախուս-

¹¹ «Կոմունիստ», օրաթերթ, Երևան, 12 ապրիլ, 1921 թ., № 63:

¹² Տե՛ս նույն տեղում, 24 ապրիլ, 1921 թ., № 72:

¹³ Տե՛ս նույն տեղում, 23 օգոստոսի, 1921 թ., № 154:

¹⁴ Տե՛ս Հայկ. ՍՍՀ ՀՀԿՊԱ, ֆ. 114, գ. 96, թ. 26:

¹⁵ Տե՛ս նույն տեղում, թթ. 26 և 173—181:

¹⁶ Տե՛ս նույն տեղում:

¹⁷ Տե՛ս նույն տեղում և ՍՄԿԿ Կենտկոմին առընթեր մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 1, ց. 1, գ. 178, թ. 4:

¹⁸ Տե՛ս Հայկ. ՍՍՀ ՀՀԿՊԱ, ֆ. 4/114; գ. 99, թ. 12—14:

տականութեան վերադարձը իրականացվում էր կուզմակերպված ձևով: Չնայած տնտեսական ու քաղաքական բազմաթիվ դժվարութիւններին, մինչև 1922 թ. գարունը հաջողվեց իրենց օջախները վերադարձնել Երևանից, Ջանգեղուրից և Նախիջեվանից Պարսկաստան անցած համարյա բոլոր փախստականներին:

Փախստականութեանը հայրենիք վերադարձնելու գործում մեծ օգնութիւն էր ցույց տալիս Սովետական Ռուսաստանը: Պարսկաստանում ՌՍՖՍՀ լիազոր-ներկայացուցչութեան և հյուպատոսութիւնների կողմից, իսկ 1921 թ. նոյեմբերից ՀՍԽՆ լիազոր-ներկայացուցչութեան կողմից, փախստականներին տրվում էին ճանապարհի համար դրամական նպաստ ու պարեն և պարսկա-սովետական սահմանն անցնելու անցաթղթեր: Վերադարձողներին անհրաժեշտ բժշկական օգնութիւն կազմակերպելու նպատակով Երևանից Զուլֆա էին ուղարկվել բժիշկներ և դեղորայք¹⁹:

Միաժամանակ Հայաստան էին վերադառնում դաշնակնիքի վարած ազգային քաղաքականութեան հետևանքով երկրից հեռացած տասնյակ հազարավոր ադրբեջանցի, ռուս և այլազգի աշխատավորներ, որոնց նույնպես նյութական ու բարոյական լայն աջակցութիւն էր ցույց տալիս սովետական կառավարութիւնը²⁰:

Դեռևս 1920 թ. դեկտեմբերի 15-ին Հայհեղկոմը վերացրել էր երկրից հեռացած մահմեդական բնակչութեան ունեցվածքը բռնագրավելու վերաբերյալ դաշնակցական կառավարութեան որոշումը: Հրապարակվել էր մահմեդական գաղթականութեանն ուղղված հատուկ դեկլարացիա, որտեղ հայտարարվում էր, որ նրանք բոլորն էլ կարող են ազատորեն վերադառնալ նախկին բնակավայրերը և տեր կանգնել իրենց ունեցվածքին²¹: Այս և նման այլ միջոցառումների շնորհիվ, Հայաստանից հարկադրաբար հեռացած մոտ հարյուր հազա-

րի հասնող մահմեդական բնակչութիւնը վստահորեն վերադարձավ իր նախկին բնակավայրերը և լծվեց շինարար աշխատանքի՝ կարճ ժամանակամիջոցում վերականգնելով ավերված օջախները:

Երկրում կուտակված գաղթականութեան, ինչպես նաև ներգաղթողների հետ տարվող աշխատանքները կենտրոնացնելու և ընդլայնելու նպատակով, դեռևս 1921 թ. հուլիսի կեսերին ՀՍԽՆ Ժողկոմխորհի դեկրետով վերացվել էր ներք-գործողկոմատի կենտրոնական վերաբնակեցման բաժինը և ստեղծվել էր Ժողկոմխորհին առընթեր գաղթականութեան գործերի գլխավոր վարչութիւն (գաղթվար): Գաղթվարին տրվում են Ժողովրդական կոմիսարիատներին հավասար իրավունքներ²²: Գաղթականական գործերի գլխավոր վարչութեան նախագահ է նշանակվում սոցապժողկոմ նարիման Տեր-Ղազարյանը, նախագահի տեղակալ՝ Հովհ. Գուրգբրյանը, անդամներ՝ Ծահգելդյանը, Թունունցը և Քալանթարը²³: Գաղթականական գործերի գլխավոր վարչութիւնը մեծ դեր խաղաց ներգաղթի կազմակերպման ու գաղթականութեան տնտեսական դրութեան բարելավման ուղղութեամբ: 1921 թ. վերջերին, երբ արդեն սովետական կառավարութեան ձեռք առած կրտուկ միջոցառումների շնորհիվ որոշ չափով նորմալ հունի մեջ էր դրվել գաղթականական հարցի լուծումը, գաղթվարը՝ որպես իր խնդիրները կատարած մի արտակարգ օրգան, լուծարքի ենթարկվեց: Նրա ֆունկցիաների մի մասը հանձնվեց ներքգործողկոմատում կազմակերպված գաղթականական բաժնին, մի մասն էլ՝ սոցապժողկոմատին²⁴:

* * *

Գաշնակների փետրվարյան խռովութիւնը ջախջախելուց և Պարսկաստան մեկնած փախստականութեան վերադարձն իրականացնելուց հետո, Սովետական Հայաստանի կառավարութիւնը արվելի հիմնավոր աշխատանք ծավալեց երկ-

¹⁹ Նույն տեղում, ֆ. 114, գ. 96, ք. 48:

²⁰ Նույն տեղում, ֆ. 4/114, գ. 5, ք. 20:

²¹ Տե՛ս նույն տեղում, ֆ. 114, գ. 17, ք. 9:

²² Տե՛ս նույն տեղում, ֆ. 40/113, ց. 3, գ. 50, ք. 26 և 34:

²³ Տե՛ս նույն տեղում, ֆ. 4/114, գ. 17, ք. 84:

²⁴ Տե՛ս նույն տեղում, ֆ. 40/113, ց. 3, գ. 25, ք. 37:

րում գտնվող արևմտահայության շրջանում: Ամենից առաջ կարևոր նշանակություն ունեն նրան սովետական իշխանության շուրջը համախմբելու խնդիրը: Հայաստանում և Վրաստանում կոստակված արևմտահայերի մեջ կազմակերպական աշխատանք տանելու նպատակով, ՀՍԽՀ ժողովուրդի նախագահության որոշմամբ հատկացվեց 30 միլիոն ռուբլի²⁵: Այս հրավիրվեցին արևմտահայ գաղթականների բազմամարդ ժողովներ, որոնք մեծ նշանակություն ունեցան դեպի սովետական իշխանությունը նրանց վերաբերմունքի մեջ բեկում առաջացնելու իմաստով:

Այսպես, 1921 թ. մայիսի 21—23-ը Թալինում տեղի ունեցավ էջմիածնի գավառի արևմտահայերի համագումարը, որտեղ լավեցին Հայհեղկոմի անդամ Գրաստամատ Տեր-Սիմոնյանի, էջմիածնի Հեղկոմի նախագահ Արամ Շահգեղյանի, էջմիածնի գավառի գաղթականական գործերի կոմիսար Գրիգոր Վարդանյանի և ուրիշների զեկուցումները գաղթականներին հուզող խնդիրների և նրանց օգտին սովետական իշխանության ձեռնարկումների մասին: Համագումարը լիովին հավանություն տվեց սովետական կառավարության վարած քաղաքականությանը և կոչ արեց արևմտահայ բոլոր գաղթականներին՝ կապվել հողի հետ և լծվել երկրում ծավալված վերաշինական աշխատանքներին, որովհետև «միայն ՀՍԽ Հանրապետության հարատև գոյության ու ամբողջական միջոցով Հայաստանի աշխատավորությունը կարող է իր իզներն ու փափազները իրագործված տեսնել»²⁶: Համագումարի մասնակիցները Հայհեղկոմին և համայն աշխարհի աշխատավորների առաջնորդ Վ. Ի. Լենինին ուղարկեցին ողջույնի ջերմ հեռագիր, ուր իրենց պատրաստակամությունն էին հայտնում ամեն կերպ զորավր լինել սովետական իշխանությանը²⁷:

Նման բազմամարդ ժողովներ անցկացրեցին նաև Ղամարուի (այժմ Արտաշատ), Դուրդուղուլիի (այժմ Հովտաբերյան), Ալեքսանդրապոլի (այժմ Լենինական) և այլ գավառների ու գավառականների արևմտահայ աշխատավորները²⁸:

Սովետական իշխանության պաշտպանությունը հանդես եկան նաև Թիֆլիսում կուտակված արևմտահայ գաղթականները: Նրանց առաջին ժողովը, որը տեղի էր ունեցել 1921 թ. մարտի 27-ին, վերագահատեղով արևմտահայության ոչ հեռու անցյալի դիրքորոշումը, կոչով դիմել էր արևմտահայ բոլոր աշխատավորներին, նշելով, որ իրենք միաձայն եկել են այն հաստատ համոզման, թե «բավ է, որքան արևմտահայ աշխատավորական մասսաներս տասնյակ տարիներ գործիք ու խաղալիք եղանք դաշնակցություն կոչված ավանտյուրիստական կուսակցության միջոցով՝ եվրոպական գիշատիչ իմպերիալիստների ձեռքին. հերիք է, ինչքան արյուն ու ավյուն զոհաբերեցինք այդ լպիրշ, ստորաքարշ, փաբեբա դիպլոմատների գրպանները էլ ավելի պարարտացնելու համար:

Այո, մենք երեկ կույր էինք մտքով և մեր կուրությունը անխղճորեն շահագործեցին իմպերիալիզմի տխրահուշակ լակեյները՝ մեծ ու պատիկ Անտանտը և նրանց դուներին մըշտապես քարշ եկող ազգազավ դաշնակցությունը»²⁹:

Այնուհետև, մերկացնելով արևմտյան տեղությունների խաբուսությունները և դաշնակցության ավանտյուրիստական գործունեությունը հայ ժողովրդի բախտի նկատմամբ, կոչի հեղինակները գրում էին. «Այսպես ուրեմն, մեզ համար այլևս պարզ է ամեն ինչ. մենք միանգամ ընդմիջտ մեր թիկունքն ենք դարձնում Հայաստանի աշխատավորության միակ թղնամիներին՝ իմպերիալիստական աշխարհին, դաշ-

²⁵ Տե՛ս նույն տեղում, թ. 38:

²⁶ Տե՛ս նույն տեղում, թ. 4/114, գ. 3, թ. 2 և թ. 40/113, ց. 3, գ. 22, թ. 104—113:

²⁷ Տե՛ս նույն տեղում, թ. 40/113, ց. 3, գ. 31, թ. 58:

²⁸ Տե՛ս նույն տեղում, թ. 4/114, գ. 5, թ. 25—26 և 43, նաև ՄԼԻ հայկական ֆիլիալի արխիվ, թ. 1, ց. 1, գ. 178, թ. 3 և 12:

²⁹ «Կոմունիստ», 23 ապրիլի, 1921 թ., № 71:

նակցական և մնացած բոլոր ազգայնական շովին ու ոճրագործ կուսակցություններին: Թող հավետ կորչեն նրանք³⁰:

Ապա, նշելով, որ ճնշված ու տառապած հայ աշխատավորության փրկությանը կտրված է սովետական իշխանության ամբաստանության, կոչի հեղինակները արևմտահայ գաղթականությանը հրավիրում էին համախմբվել սովետական կառավարության շուրջը և լծվել երկրի վերաշինության վեհ գործին:

1921 թ. օգոստոսի 21-ին կայացավ Թիֆլիսարևակ արևմտահայ աշխատավորների կոնֆերանսը, որը քննարկեց նրանց օրինետացիայի, Սովետական Հայաստանի վերաշինության, արտասահմանյան հայ գաղութների հետ կապեր հաստատելու և ընդհանրապես գաղթականությանը հուզող մի շարք ալլ հարցեր: Կոնֆերանսն ընտրեց 15 հոգուց բաղկացած Թիֆլիսի արևմտահայ բյուրո: Վերջինս, դիմելով արտասահմանի հայ աշխատավորներին և նկարագրելով Հայաստանի տնտեսական դժվարին վացությունն ու սովետական կառավարության ջանքերը արևմտահայ գաղթականների տեղավորման ու ամեն վերայ նրանց օգնելու ուղղությամբ, կոչ արեց նպաստել երկրի վերաշինության գործին, չհավատալ նրա շուրջը տարածվող զրպարտություններին, ալլ գալ երկիր, տեսնել և համոզվել³¹:

Իսկ տեսնելու շատ բան կար և համոզվելու բազմաթիվ առիթներ: Դեռևս 1921 թ. ապրիլի սկզբներից Թիֆլիսում հրատարակվում էր արևմտահայ աշխատավորների օրգան «Կարմիր օրեր» թերթը, որը նրանց համար մատչելի ձևով լուսաբանում էր կոմունիստական կուսակցության ու սովետական իշխանության քաղաքականությունը, նրանց վերաբերմունքը դեպի արևմտահայության բեկորները և ընդհանրապես բացատրական լայն աշխատանք էր տանում գաղթականության շրջանում³²:

Հնդառաջելով արևմտահայ գաղթականների ժողովներում արտահայտված ցանկություններին՝ ՀԿԿ Կենտկոմի և սովետական կառավարության ազակցությամբ 1921 թ. հուլիսի սկզբներին ստեղծվում է ՀՍԽՀ տերիտորիայում ապրող արևմտահայերի ընդհանուր համագումար հրավիրող հանձնախումբ՝ Գրիգոր Վարդանյանի նախագահությամբ³³: Սահմանված կարգի համաձայն 18 տարեկանից բարձր հասակ ունեցող արևմտահայ բոլոր քաղաքացիները պետք է մասնակցեին համագումարի պատգամավորների ընտրություններին, որոնք լինելու էին ուղղակի և բաց քվեարկությամբ: 1921 թ. օգոստոսի կեսերից Հայաստանի բոլոր շրջաններում սկսվում են պատգամավորների ընտրությունները³⁴: Նախատեսված էր համագումարի աշխատանքներն սկսել սեպտեմբերի 10-ին էջմիածնում, սակայն մի շարք պատճառներով այն հետաձգվեց և հետագայում տեղի ունեցավ Երևանում:

Արևմտահայ գաղթականների համագումարի նախապատրաստման օրերին հրատարակվում են մի շարք կոչեր, որոնք աշխատավորներին բացատրում էին նրանց անելիքներն ընտրությունների ժամանակ: Հրատարակվում է նաև «Կարմիր օրեր» թերթի բացառիկ համար, նվիրված համագումարին, ուր հոդվածներով հանդես են գալիս Ասք. Մոսվյանը, Պ. Մակինցյանը, Հ. Ազատյանը և ուրիշներ³⁵: Այդ համագումարը, որին մասնակցում էին մոտ 400 պատգամավորներ, քննարկեց գաղթականությանը հուզող մի շարք կարևոր հարցեր և ստեղծեց Հայաստանի Արևմտահայ աշխատավորների կենտրոնական վարչություն, որի նախագահ ընտրվեց Գրիգոր Վարդանյանը³⁶:

Այս բոլոր միջոցառումները հսկայական դեր խաղացին գաղթականությանը սովետական իշխանության շուրջը հա-

³³ Տե՛ս ՄԼԻ հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 1, ց. 1, գ. 111 թ. 5 և գ. 26, թ. 69:

³⁴ Նույն տեղում, գ. 76, թ. 1—34:

³⁵ Տե՛ս նույն տեղում, թ. 94—97:

³⁶ Տե՛ս Հայկ. ՍՍՀ ՀՀԿՊԱ, ֆ. 4/114, գ. 5, թ. 25—26:

³⁰ Նույն տեղում:

³¹ Տե՛ս Հայկ. ՍՍՀ ՀՀԿՊԱ, ֆ. 4/114, գ. 5, թ. 37—39:

³² Տե՛ս նույն տեղում, թ. 43:

մախմբելու և նրան շինարար աշխատանքի ներգրավելու տեսակետից: Այսպիսով, սովետական կառավարությունը կարճ ժամանակամիջոցում գործով ապացուցեց, որ նա ամատապես շահագրգռված է և իսկապես անկեղծորեն մտածում է գաղթականության վիճակի բարելավման մասին:

1921 թ. գարնանից սկսած, ՀՍԽՀ ժողովրդական կոմիսարիատը հող է հատկացնում Հայաստանում գտնվող արևմտահայ գաղթականներին, տեղացիներին հավասար շափով: Դրա հետ միասին, ձրի կամ արտոնյալ պայմաններով, գաղթականներին տրամադրվում էին գյուղատնտեսական գործիքներ, անասուններ, սերմացու, բնակարաններ, շինարարական ու գույքավորման վարկեր և այլն³⁷:

Գաղթականության կարիքները հոգալու և նրանց համար պարենի ու սերմացուի վայուն ֆոնդ հիմնելու նպատակով, 1921 թ. օգոստոսի 24-ին ժողովրդական կոմիսարիատը որոշում է կայացնում պարենավորման ժողովրդատի ընթացիկ աղբյուրներից պարբերաբար հատկացնել հացահատիկ: Միաժամանակ որոշվում է գաղթականական տնտեսություններին սերմացուով ապահովելու համար ստեղծել հատուկ ֆոնդ, դրան տրամադրելով բերքն այն բոլոր հողատերերի, որոնք անմիջականորեն իրենք չէին մշակում հողը, այլ զանազան պայմաններով՝ վարձակալությամբ և այլն, մշակել էին տալիս սակավահող գյուղացիներին³⁸: ժողովրդական մի այլ դեկրետով (22 հոկտեմբերի 1921 թ.) հաստատվում է 15 միլիարդ ուրվու միտնովազ և արտակարգ գաղթականական տուրք՝ հանրապետության սահմաններում գտնվող հարյուր հազարավոր գաղթականներին նյութական ծանր կացությունից դուրս բերելու համար: Գաղթականական տուրքը գանձվում էր ազգաբնակչության միայն ունեւոր խավերից. այն տնտեսություններն ու անձնավորությունները, որոնց եկա-

³⁷ Տե՛ս նույն տեղում, ֆ. 112, ց. 1, գ. 26, թ. 60 և ֆ. 4/114, գ. 5, թթ. 20, 25—26.

³⁸ Տե՛ս նույն տեղում, ֆ. 4/114, գ. 5, թ. 59:

մըտի միակ աղբյուրն իրենց սեփական աշխատանքն ու աշխատավարձն էր՝ ազատվում էին այդ տուրքը վճարելուց: 1922 թ. ամռանը, երբ արդեն որոշ շափով բարելավվել էր գաղթականության նյութական վիճակը, ժողովրդական կոմիսարիատը դադարեցվում է գաղթականության տուրքի գանձումը և լիկվիդացվում են այդ կապակցությամբ գոյացած ապարքները³⁹:

* * *

Գաղթականության հարցի արմատական լուծմանը զուգընթաց սովետական կառավարությունը լուրջ ջանքեր էր գործադրում նաև նրա առօրյա հոգսերի թեթևացման ուղղությամբ, ընդարձակելով սննդակայանները, որբանոցները, հիվանդանոցները և դպրոցների ցանցը: Առանց այդպիսի ամենօրյա օգնության ու հոգատարության գրեթե անհնար էր գաղթականությանը կարճ ժամանակամիջոցում դուրս բերել սովահար վիճակից և նրան փոխադրել տնտեսության վերականգնման ու զարգացման ուղին: Այդ գործում կարևոր ներդրում են կատարում նաև Հայաստանի օգնության կոմիտեն, Ամերկոմը, Անգլկոմը և բարեգործական այլ կազմակերպություններ:

Ինչպես տեսանք, Հայաստանում սովետական իշխանության հաստատման պահին երկրի տնտեսական դրությունն այնքան քայքայված ու խարխուլված էր, որ ամեն տեսակի նյութական ու բարոյական օգնության ստացումը կենսական անհրաժեշտություն էր: Այդպիսի պայմաններում ճիշտ էր լինի միանգամից հրաժարվել թեկուզ օտարերկրյա բարեգործական կազմակերպությունների օգնությունից:

ՀՍԽՀ սոցալոգիկոմատի հաշվումներով 1921 թ. դեկտեմբերին Հայաստանում կային կարիքավոր ավելի քան 300 հազար արևմտահայ գաղթականներ, 50 հազար քաղաքային չքավորներ, 200 հազար գյուղական չքավորներ, 50 հազար որբ երեխաներ (բացի ամերիկյան որբանոցներում գտնվող-

³⁹ Տե՛ս նույն տեղում, թ. 60:

ներին ու որբերին: Այդ կոմիտեան իր հիմնադրման օրվանից (1915 թ. սեպտեմբեր) մինչև 1927 թ. դեկտեմբերը Մերձավոր Արևելքում ցուցաբերած օգնության գծով ծախսել էր 150 միլիոն դոլար և պատասպարել ու ինքնուրույն աշխատանքի հասցրել շուրջ 132 հազար որբերի. որոնց մի զգալի մասը եղել են հայեր⁴⁴:

Ամերկոմը Հայաստանում հիմնականում զբաղված էր որբերի խնամատարությամբ և իր որբանոցներում պահում էր մոտ 20 հազար երեխաներ, իսկ Թուրքիայում, Հունաստանում և այլ երկրներում եղածների հետ միասին՝ ավելի քան 45 հազար երեխաներ⁴⁵:

Հայաստանում սովետական կարգերի հաղթանակից հետո Ամերկոմի օտարերկրյա անձնակազմի մեջ նկատվում է երկու տենդենց: Ոմանք ցանկանում էին հեռանալ Հայաստանից և իրենց գործունեությունը ամբողջովին ծավալել Թուրքիայում, Իրանում և Հունաստանում, իսկ ոմանք էլ գտնում էին, որ կարելի է և պետք է համագործակցել սովետական իշխանության հետ ու շարունակել աշխատանքը Անդրկովկասում: Հիմնականում դեպի սովետական իշխանությունը լոյսը տրամադրված ամերիկյան աշխատակիցների հենց այդ մասն էլ մնաց Անդրկովկասում և նպաստեց որբերի ու գաղթականների վիճակի թեթևացման գործին:

Դեռևս 1920 թվականի դեկտեմբերի 14-ին Հայհեղկոմը հատուկ նամակով դիմել էր Ամերկոմին և առաջարկել շարունակել իր բարեգործությունը, խոստանալով ամենալայն աջակցություն ցույց տալ նրան⁴⁶:

Շուտով կնքվում է համաձայնագիր, որով որոշվում են Ամերկոմի գործունեության բնույթը, օտարերկրյա անձնակազմի իրավունքներն ու պարտականությունները և սահմանվում են մի շարք արտոնություններ բեռների փոխադրության, շենքերից օգտվելու և այլ խնդիրների վերաբերյալ:

⁴⁴ Տե՛ս «Հունահայ տարեգիրք», Աթենք, 1930, էջ 360:

⁴⁵ Տե՛ս Հայկ. ՍՍՀ ՀՀԿՊԱ, ֆ. 4/114, գ. 22, թ. 7—9:

⁴⁶ Տե՛ս նույն տեղում, գ. 45, թ. 25:

Դա արդեն դաշնակների ժամանակվա ամենազոր Ամերկոմը չէր, որը կարող էր հրամայել ցանկացած նախարարին և նույնիսկ վարչապետին, իր հայեցողությամբ բանտարկել «Հայաստանի Հանրապետության» քաղաքացիներին, ծեծի ու դաժան պատիժների ենթարկել որբերին և այլն⁴⁷: Սովետական կառավարությունը հենց սկզբից իր հսկողության տակ վերցրեց Ամերկոմի գործունեությունը և այն սահմանափակեց բացառապես բարեգործական շրջանակներում:

1922 թ. հունվարին Հայաստանի սովետների անդրանիկ համագումարում տված զեկուցման մեջ ՀՍԽՀ Ժողկոմխորհի նախագահ Ալ. Մյասնիկյանը, խոսելով երկրի տնտեսական ծանր վիճակի մասին և անդրադառնալով սոցիալական ապահովության խնդրին, նշում է, որ Հայաստանի նման մի երկրում այն ունի արտակարգ վարկերություն, որովհետև առկա է հսկայական թվով գաղթականների ու որբերի զանգված, որը դեռևս կապված չէ հողին ու արդյունաբերությանը և կարիք ունի լուրջ օգնության: Որբերի փնտամատարության նպատակով, «մենք, — ասում է Մյասնիկյանը, — հյուրընկալել ենք ամերիկացիներին, որոնք գործույթ մարդիկ են, նրանք իսկապես ուր մեծ գործ են անում աշխտեղ, չեն զբաղվում քաղաքական հարցերով և արժանի են մեր քաջալիրությանը»⁴⁸:

Համագումարում ընդունված հատուկ բանաձևով Ամերկոմի կողմից գաղթականությանը և որբերին ցույց տրված օգնության համար անկեղծ երախտագիտություն հայտնվեց ամերիկյան ժողովրդին⁴⁹:

Արտասահմանյան բարեգործական կազմակերպությունների գործունեությունը սովետական իշխանության լուրջ հսկողության տակ առնվեց հատկապես Անդրֆեդերացիայի

⁴⁷ Տե՛ս Հայկ. ՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 68/200, գ. 311, թ. 74 և գ. 423, թ. 277—278:

⁴⁸ Ալ. Մարտունի, Խորհրդային Հայաստանի ուղին, Քիֆիս, 1924, էջ 13:

⁴⁹ Տե՛ս «ՀՍԽՀ բանվորների, գյուղացիների և կարմիր բանակայինների խորհուրդների Ա. համագումարը», Երևան, 1922, էջ 126:

միութենական խորհրդի 1922 թ. սեպտեմբերի 16-ի դեկ-
րետով, որը որոշակի ձևակերպում ստացան այդ կազմա-
կերպությունների և տեղական օրգանների փոխհարաբերու-
թյունները և այլ կարևոր խնդիրներ⁵⁰: Անդրդավկասյան կա-
ռավարության Ամերկումին կից ներկայացուցիչ Նարիման
'Տեր-Ղազարյանի ղեկավարությամբ ստեղծվեց Անդրդավ-
կասի տերիտորիայում գործող օտարերկրյա կազմակերպու-
թյուններին առնթվեք Անդրժողովուրդի ներկայացուցչու-
թյուն: Ներկայացուցչությունն ուներ իր կենտրոնական գրա-
սենյակը Թիֆլիսում և չիազորներ՝ Ալեքսանդրապոլում, Նրե-
վանում, Զաղաթղիում, Բաթումում և Բաքվում: Ներկայա-
ցուցչությունն իրագործում էր Անդրժողովուրդի և միութե-
նական հանրապետությունների կառավարությունների ղեկ-
րետները, դիրեկտիվները, համաձայնագրերը, առանձին
ժողովմատների և արհմիությունների պահանջներն ու խորհր-
դանքները արտասահմանյան կազմակերպությունների նը-
կատմամբ: Տեղերում այդ գործը կատարում էին ներկայա-
ցուցչության լիազորները, որոնք միաժամանակ ենթարկվում
էին սովյալ հանրապետության ժողովուրդին: 1923 թվա-
կանի փետրվարի 10-ին Անդրֆեդերացիայի ժողովուրդին
և Ամերկումի միջև կնքվում է նոր համաձայնագիր, որը վերջ-
նականապես կարգավորում է Ամերկումի գործունեությունը⁵¹:
Ամենակարևորն այն էր, որ այդ համաձայնագրով որբանոց-
ների երեխաների վրթության և դաստիարակության գործը
ընդունեցին ենթարկվում էր սովետական օրգանների հսկողու-
թյանը: Դեռ մինչ այդ էլ՝ 1922 թ. սեպտեմբերին, ՉՍԽՀ լուս-
ժողովմատի և Ամերկումի դպրոցների պլանավոր տնօրենի
միջև կայացած համաձայնություն⁵² արգելվել էր աստվա-
ծաբանության դասավանդումը և որոշվել էր ամերիկյան
դպրոցներում ուսուցումը տանել սովետական պետական
դպրոցների ծրագրերով: Ամերկումի դպրոցները: տեսուչնե-

⁵⁰ Տե՛ս Հայկ. ՍՍՀ 2249 Ա, ֆ. 112, ց. 1, գ. 129, թ. 19:

⁵¹ Տե՛ս նույն տեղում, ֆ. 114, գ. 281, թ. 14 և 16—17:

⁵² Տե՛ս նույն տեղում, ֆ. 113, ց. 3, գ. 34, թ. 21:

րին և ուսուցիչներին հաստատելու էր լուսժողովմատը:
Ամերկումի որբանոցներում խնամվող երեխաների կրթության
նկատմամբ քարձրագույն հսկողությունը անմիջականորեն
իրականացնելու էին լուսժողովմատը կամ նրա ներկայա-
ցուցիչները:

1923 թ. փետրվարի 10-ի համաձայնագրով Ամերկումի
ժառանգողների վրա տարածվում են նաև սովետական աշ-
խատանքային օրենսդրության հիմունքները: Եթե մինչև
1922 թ. սեպտեմբերը Ամերկումի 4500 ժառանգողներից ոչ
մեկը արհմիության անդամ չէր, ապա դրանից հետո նրանք
ևս ընդգրկվում են արհմիությունների մեջ և Ամերկումի որ-
բանոցներում ստեղծվում են տեղկոմներ, որոնք իրենց հեր-
թին վերահսկում էին երեխաների հետ տարվող աշխատանք-
ները:

Մինչև Անդրժողովուրդի ներկայացուցչության ստեղ-
ծումը և համաձայնագրի կնքումը Ամերկումը որոշ չափով
կարծեք թե փնջնավար էր և իր հարաբերությունները մյուս
կազմակերպությունների ու հիմնարկների հետ վարում էր
խնքնուրույնաբար: Նրա արտասահմանյան փոստի ու ծան-
րոցների ստացումն ու առաքումը կատարվում էին առանց
հսկողության և այլն: Ներկայացուցչությունը կարգավորեց
նաև այդ խնդիրները, և բոլոր հարցերն ընթացք ու լուծում
էին ստանում միայն իր միջոցով: Առանց ներկայացուց-
չության հետ համաձայնության Ամերկումի ղեկավարությու-
նը չէր կարող այլևս ընդունել կամ հեռացնել աշխատակից-
ներ, մի տեղից տեղափոխել ուրիշ վայր և այլն: Ներկայա-
ցուցչությունն իր հայեցողությամբ կարող էր ետ վանել
անցանկալի, իրենց վարքագծով ու ընդունակություններով
ներկայացվող պահանջներին չբավարարող աշխատակիցնե-
րին: Սովյալներին ու կարիքավորներին ցույց տրվող օգնու-
թյունը ևս իրականացվելու էր ներկայացուցչության միջո-
ցով: Այսպիսով, 1923 թ. փետրվարի 10-ի համաձայնագրով
Ամերկումի գործունեությունը լիովին վերցվեց հսկողության
ստակ և այն ուղղվեց զուտ քարեգործական նպատակների:
Հետագա տարիներին, երկրի տնտեսական դրության բարե-

լավմանը զոստընթաց, ատտիճանաբար կրճատվեց և 1931 թ. ամռանը ամբողջովին դադարեցվեց Ամերկոմի գործունեությանը ՍՍՀՄ-ում⁵³:

Այսպես, օրինակ, եթե 1921 թ. մայիսին Հայաստանում Ամերկոմի տրամադրության տակ եղած որբանոցներում կային շուրջ 20,000 որբեր⁵⁴, իսկ 1923 թվականին դեռևս գոյություն ունեցող սովի հետևանքով, որոշ շափով այդ թիվն աճել էր և հասել 22,615-ի⁵⁵, ապա հետագայում զգալիորեն նվազեց այն: 1922 թ. սեպտեմբերին Անդրկովկասում աշխատող 105 ամերիկյան քաղաքացիներից 1923 թ. հունիսին մնացել էին ընդամենը 55 հոգի⁵⁶: Սովետական իշխանության ամենօրյա ջանքերի շնորհիվ 1923 թվականի վերջերից արդեն հնարավոր դարձավ նորմալ հունի մեջ դնել բնակչությանը պարենամթերք մատակարարելու գործը և վերացնել երկրի դժվարին դրությունը, ուստի 1924 թվականից սկսած նշանակալից շափով կրճատվեց նաև Ամերկոմի գործունեությունը: Եթե 1923 թ. սկզբում Անդրկովկասում Ամերկոմի խնամքի տակ կային միմյուց 30,000 որբեր, ապա 1926 թվականի հունվարին նրանց կողմից խնամվող երեխաների թիվը հասել էր 15,000-ի, որից Հայաստանում գտնվող որբանոցներում՝ 9000 երեխաներ և 2000 երեխաներ էլ ստանում էին միայն սնունդ⁵⁷: 1926 թվի մայիսի 1-ի տվյալներով Հայաստանում Ամերկոմը խնամում էր ընդամենը 7440 որբ երեխաների⁵⁸: Սովետական կառավարության ջանքերով 1923—1926 թթ. ընթացքում հաջողվեց որբանոցներից դուրս բերել և ինքնուրույն աշխատանքի տեղավորել ավելի քան 15,000 մեծահասակ որբերի⁵⁹: Մտանալով անհրաժեշտ նյութական միջոցներ, նրանք տեղավորվում էին

53 Տե՛ս նույն տեղում, գ. 13, թ. 5—6:

54 Տե՛ս նույն տեղում, ֆ. 4/114, գ. 169, թ. 13—15:

55 Տե՛ս «Նորհրդային Հայաստան», 2 փետրվարի, 1924 թ., № 27:

56 Տե՛ս Հայկ. ՍՍՀ 224ՊԱ, ֆ. 112, ց. 3, գ. 130, թ. 23—30:

57 Տե՛ս նույն տեղում, ֆ. 113, ց. 3, գ. 106, թ. 52—56:

58 Տե՛ս նույն տեղում, ֆ. 40/113, ց. 3, գ. 234, թ. 88—100:

59 Տե՛ս նույն տեղում, ֆ. 113, ց. 3, գ. 106, թ. 52—56:

գյուղերում, գործարաններում, ֆաբրիկաներում և արտելներում: Որբանոցներից դուրս եկող մեծահասակ որբերի համար ստեղծվում են նաև մի քանի աշխատանքային մանկական գաղտնիքներ, ուր նրանք զբաղվում էին հողագործությամբ կամ արհեստագործությամբ:

Բացի Ամերկոմից, Հայաստանում որբանոցներ ուներ և որոշ բարեգործական աշխատանք էր կատարում նաև Անգլիական օգնության կոմիտեն: Այդ կոմիտեն, որը կոչվում էր նաև Լոնդոնի քաղաքապետի ֆոնդ, հիմնադրվել էր 1915 թվականի վերջերին՝ Թուրքիայում տեղի ունեցած հայկական կոտորածներից փրկվածներին օգնելու նպատակով: 1916 թվականից սկսած Անգլիական կոմիտեի քաժանմունքները գործում էին Եգիպտոսում, Բասրայում, Ադանայում, Վանում և Իզդիրում: Հետագայում, Թուրքերի և քրդերի պատճառած հալածանքների հետևանքով, անգլիական որբանոցը Իզդիրից փոխադրվում է Երևան, իսկ Կիլիկիայից ֆրանսիական գործերի հեռանալուց հետո այնտեղի անգլիական որբանոցներն էլ տեղափոխվում են Կ. Պոլիս և Կիպրոս: 1920 թվականի նոյեմբերի սկզբներին, երբ քեմալական գործերը գրավեցին Ալեքսանդրապոլը, և Երևանի ու Թիֆլիսի միջև ընդհատվեց երկաթուղային երթևեկությունը, շատ օտարերկրացիների հետ Երևանից Թիֆլիս փախավ նաև Անգլիական օգնության կոմիտեի Հայաստանի ներկայացուցիչ Հարգորդը (Հ. Վ. Հարկորտ), իր տնօրինած որբանոցն ու հիվանդանոցը թողնելով Ամերկոմի Երևանի լիազոր քժիշկ Ըշերի (Աշեր) հոգացողությանը: 1921 թ. ամռանը Հարգորդը կրկին վերադարձավ Երևան, արդեն ոչ միայն որպես Լոնդոնի քաղաքապետի ֆոնդի, այլև հայանպաստ մի քանի ուրիշ բարեգործական հաստատությունների ներկայացուցիչ: 1921 թ. օգոստոսի 19-ին ՀՍԽՀ արտաքին գործերի ժողովում Ասք. Մուսվյանը սկզբունքային համաձայնություն է հայտնում Անգլկոմի գործունեությանը Սովետական Հայաստանում վերսկսելու վերաբերյալ⁶⁰: Ի տարբերություն

60 Տե՛ս նույն տեղում, ֆ. 4/114, գ. 104, թ. 1:

Ամերկոմի, որը բաժանմունքներ ուներ նաև Անդրկովկասի մյուս հանրապետություններում, Անգրիական կոմիտեի գործունեությունը սահմանափակվում էր միայն Հայաստանով: Երևանում նա ուներ երկու որբանոց, ուր երեխաները գիշերում ու անվում էին, իսկ կրթություն ստանում էին ամերիկյան որբանոցներում եղած դպրոցներում: Կոմիտեն պահում էր նաև երկու ապաստարան, որտեղ երեխաները սրնվում էին և դպրոց հաճախում, ուր դասավանդումը լիովին կատարվում էր սովետական դպրոցական ծրագրերով:

Անգրկոմի կողմից խնամվող որբերի թիվը 1923 թ. ընդհանուր առմամբ հասնում էր 1000 երեխայի⁶¹: Բացի այդ, Անգրիական օգնության կոմիտեն Երևանում և մի քանի ուրիշ վայրերում (Աշտարակ, Ղամարլու, Բաշ-Գառնի) ուներ սննդակայաններ, որտեղ մոտ 5800 երեխաների և գաղթականների ամեն օր տրվում էր ճաշ և 1/2 ֆունտ հաց: Անգլիական կոմիտեն օգնություն էր ցույց տալիս նաև 1921—1922 թվականներին Միջագետքից Հայաստան ներգաղթած տնտեսություններին: Կոմիտեն ուներ նաև կարի, կոշիկի և գործվածքեղենի արտելներ, ուր աշխատում էին մեծահասակ որբերը և գաղթականները⁶²: 1922 թվականի ընթացքում այդ կոմիտեն արտասահմանից Հայաստան է ներմուծել շուրջ 65 վագոն զանազան ապրանքներ, այդ թվում՝ 35 վագոն ալյուր⁶³: Անգրիական կոմիտեի գործունեության ամենահոուն շրջանը եղել է 1922 թվականը, որից հետո այն աստիճանաբար նվազել է, իսկ 1926 թվականի կեսերին վերջնականապես դադարեցվել է⁶⁴:

Թե՛ Ամերկոմը և թե՛ Անգրկոմը, բացի որբերի խնամատարության փրկենց հիմնական գործից, կատարել են նաև բարեգործական առաջիատանքներ, որոնց համար օգտվել են մի շարք արտոնություններից: Օրինակ, Ամերկոմի օգտա-

գործմանն էր հանձնված 7298 դեսյատին հողամաս, որտեղ կատարված ցանքան ազատ էր քնատուրքից: Բարեգործական հաստատությունների և նրանց աշխատակիցների զբաղեցրած շենքերի դիմաց վարձ չէր գանձվում, ձրի էր նաև լույսից, ջրից օգտվելը: Նրանց բեռները պետական փոխադրամիջոցներով տեղափոխվում էին անվճար և այլն: Եվ պատահական չէր, որ Մերձավոր Արևելքի Ամերիկյան նպաստամատույց կոմիտեի ընդհանուր քարտուղար Վիբրին, 32 հոգուց բաղկացած հանձնախմբով 1921 թ. օգոստոսին տեսչական այցի գալով Երևան և ժանոթանալով Ամերկոմի գործունեությանը, հատուկ նամակով շնորհակալություն հայտնեց Սովետական Հայաստանի կառավարությանը՝ Ամերկոմի նկատմամբ ցուցաբերած աշակերտության և համագործակցության համար⁶⁵:

1922 թ. հուլիսի 29-ին ՀՍԽՀ Կենտրոնական և Ժողովրդական շնորհակալություն հայտնեցին Ամերկոմի ընդհանուր քարտուղար Վիբրինին՝ որբերին և մյուս կարիքավորներին ցույց տված օգնության համար: Շնորհակալական այդ նամակում ասված էր. «Մարդասիրական այդ օգնությունը անցյալ տարիներում սովի և հիվանդությունների ճիրաններից փրկել և կյանքի է կոշիլ տասնյակ հազարավոր որբերի և կարոտյալների, որոնք անմեղ զոհերն են համաշխարհային պատերազմի: Ձեր կոմիտեի օգնությունն առանձնապես զգալի էր այս տարվա ընթացքում, երբ երաշտի պատճառով Հայաստանի գյուղացիության մի խոշոր մասը մատնված էր սովի սարսափներին: Մերձավոր Արևելքի կոմիտեի ժամանակին հասցրած առատ օգնությունը պարենային մթերքներով փրկեց մեր գյուղացիության սովյալ մասը անխուսափելի սովից»⁶⁶:

Սովետների համահայաստանյան երկրորդ համագումարը նույնպես շնորհակալություն հայտնեց Ամերկոմին՝ որբերի և գաղթականների ծանր վիճակի թեթևացման գործում սովետական կառավարությանը ցույց տված օգնության համար⁶⁷:

⁶⁵ Տե՛ս նույն տեղում:

⁶⁶ Տե՛ս նույն տեղում, ֆ. 113, ց. 3, գ. 18, թ. 29:

⁶⁷ «Նորք», հանդես, Երևան, 1922, № 1, էջ 129:

⁶¹ Տե՛ս նույն տեղում, ֆ. 112, ց. 1, գ. 169, թ. 5—6:

⁶² Տե՛ս նույն տեղում, գ. 130, թ. 23—30:

⁶³ Տե՛ս նույն տեղում, թ. 4—8:

⁶⁴ Տե՛ս նույն տեղում, ֆ. 40/113, ց. 3, գ. 48, թ. 55—60:

Օտարերկրյա բարեգործական կազմակերպությունների գործունեությունն ունեցել է նաև իր բացասական կողմերը, թիրուխությունները, երբեմն՝ նույնիսկ թշնամական ու վնասարարական դրսևորումները: Օրինակ, մինչև 1922 թ. որբանոցներին կից ամերիկյան դպրոցներում խիստ ցածր մակարդակի վրա էին գտնվում երեխաների ուսուցումն ու դաստիարակությունը: Երեխաներին չէին տրվում տեխնիկական և գյուղատնտեսական գիտելիքներ, նրանց դպրոցներից դուրս էին գալիս կիսագրագետներ, որբանոցներում և դպրոցներում նկատվում էին ծեծի և այլ հակամանկավարժական մեթոդների գործադրման դեպքեր⁶⁸:

Մինչև 1922 թ. սեպտեմբերի համաձայնագրով Ամերիկոմի իրավունքների սահմանափակումներն ու նրա գործունեությունը հսկողության տակ վերցնելը, դպրոցներում և որբանոցներում տիրում էր բուրժուական բարեգործությանը հատուկ ուժեղում: Երեխաներին անընդհատ ներշնչվում էր այն միտքը, թե նրանց կերակրում ու հագցնում են ամերիկյան բարերարները, որոնք, որպես բարեպաշտ քրիստոնյաներ, օգնության ձեռք են մեկնում դժբախտ հայ որբերին, ուստի երեխաները և նրանց ղեկավարները պարտավոր են դեպի իրենց բարերարները տածել քրիստոնեական սիրտ և երախտագիտություն անկեղծ զգացմունքներ⁶⁹: Որբանոցներում գոյություն ունեին սկաուտական կազմակերպություններ, որոնք ֆիզիկական դաստիարակության ձևերով ու եղանակներով և քաղաքական ըմբռնումներով տրամագծորեն տարբերվելով պատկոմական կազմակերպություններից, վերջիններիս նկատմամբ գտնվում էին անհաշտ, նույնիսկ թշնամական հարաբերությունների մեջ: Առանձին դեպքերում Ամերիկոմի որոշ աշխատողներ փորձում էին ծավալել հակասովետական գործունեություն, որն արտահայտվում էր մասնավորապես երեխաներին սովետական գաղափարներից ու ազդեցությունից հեռու պահելու ձևով: Ամերիկոմում ծառայող որոշ դաշնակցական տարրեր

⁶⁸ Տե՛ս շՍՄՀ ՀՀԿՊԱ, ֆ. 40/113, ց. 3, գ. 234, ք. 115—116:

⁶⁹ Տե՛ս նույն տեղում, ֆ. 113, ց. 3, գ. 34, ք. 118—120:

որբանոցներում պահել էին զենք, հակասովետական գրականություն և այլն⁷⁰: Երևանում և Էջմիածնի գավառում երկար ժամանակ գործում էր ամերիկյան միսիոներական «Բորտ» ընկերությունը, որը «քրիստոնեական գաղափարների» տարածման քողի տակ թաքնված փաստորեն մթազնում էր աշխատավորների դասակարգային գիտակցությունը: Այդ ընկերությունը ակտիվ գործունեություն էր ծավալել հատկապես Արագածի շրջանում բնակվող գաղթականների մեջ, որոնց երբեմն-երբեմն աննշան նյութական օգնություն ցույց տալու դիմաց փորձում էր զցել իր ազդեցության ոլորտը: Տեղեկանալով այդ մասին, ՀՍԽՂ Ժողովուրդի 1923 թ. հունվարին կարգադրում է փակել «Բորտ»-ի դպրոցը, իսկ փետրվարի սկզբներին լիովին լիկվիդացվում է նրա գործունեությունը Հայաստանում⁷¹:

Միանգամայն պարզ էր, որ սովետական կառավարությունը չէր կարող անտարբեր վերաբերվել այն բանին, թե նյութական օգնությունից բացի ինչո՞վ են զբաղվում և ի՞նչ նպատակներ են հետապնդում օտարերկրյա բարեգործական հաստատությունները: Սովետական կառավարությանը լրջորեն մտահոգում էր այն հարցը, թե ի՞նչ ոգով և ինչպե՞ս են դաստիարակվում նրանց խնամքին հանձնված հազարավոր որբ երեխաները:

Ահա թե ինչու հենց սկզբից մշտական հսկողության տակ էր առնվել բարեգործական կազմակերպությունների ամբողջ գործունեությունը և այդքան կարևոր նշանակություն էր տրվում որբերի դաստիարակության ու կրթության կազմակերպման խնդրին: Ինչպես տեսանք, սովետական կառավարության ակտիվ միջամտությամբ որբանոցներին առընթեր դպրոցներում վերացվեցին աստվածաբանության և սովետական դրպրոցի ոգուն խորթ այլ առարկաների դասավանդումը, ապացրվեցին բոյ-սկաուտական կազմակերպությունները, երեխաների շրջանում ուժեղացվեց պատկոմական կազմակերպու-

⁷⁰ Տե՛ս նույն տեղում, ֆ. 40/113, ց. 3, գ. 239, ք. 145:

⁷¹ Տե՛ս նույն տեղում, ֆ. 113, ց. 3, գ. 34, ք. 197:

Քյունների ազդեցությունը, շատերն ընդունվեցին նրանց շարքերը, խստորեն արգելվեցին ծեծը և պատժի մյուս հակամանկավարժական մեթոդները, բարելավվեց ուսուցիչների և մնացած աշխատակիցների որակական կազմը և այլն:

Սովետական կառավարության ձեռնարկած հետևողական միջոցառումների շնորհիվ Ամերկոմը և մյուս հաստատությունները դարձան զուտ բարեգործական, լոյալ հիմնարկներ, այլապես չէր թույլատրվի նրանց գործունեության շարունակումը մեր երկրում: Չպետք է անտեսել նաև այն հանգամանքը, որ Ամերկոմի և մյուս բարեգործական հաստատությունների նյութական միջոցները հիմնականում գոյանում էին դեպի ճնշված ու հալածված ժողովուրդները բարեկամաբար տրամադրված դեմոկրատական խավերի հատկացումներից:

Հետևապես, օտարերկրյա բարեգործական կազմակերպությունների գործունեության հիմնական գնահատականը տալիս անհրաժեշտ է նկատի ունենալ առաջին հերթին նրանց ցուցաբերած այն օգնությունը, որը նպաստեց հազարավոր որբերի և սովի ճիրաններում տառապող գաղթականության կյանքը փրկելու գործին:

Այս տեսանկյունից մոտենալով հարցին, պետք է ընդհանուր առմամբ դրական գնահատական տալ Հայաստանում օտարերկրյա բարեգործական հաստատությունների ունեցած գործունեությանը, միաժամանակ շնորհակալով, որ նրանում դրսևորվել են նաև բուրժուական բարեգործությանը հատուկ թիրուխյուններ ու բացասական գծեր, որոնց դեմ սովետական կառավարության ծավալած մշտական ու հետևողական վերահսկողության շնորհիվ հաջողվել է հիմնականում ցանկալի հունով տանել նրանց աշխատանքը:

Գաղթականությանը և որբերին դժվարին կացությունից դուրս բերելու, որոշ շափով նաև երկրի տնտեսությունը վերականգնելու ուղղությամբ ուշագրավ աշխատանք է կատարել նաև Հայաստանի օգնության կոմիտեն: 204-ը շատ կարևոր դեր խաղաց հատկապես հայրենիքի և սփյուռքի միջև կապերի ստեղծման ու ամրապնդման, ինչպես նաև հայրեն-

նադարձության իրականացման գործում, ուստի այն կշարադրենք առանձին գլխում:

* * *

Երկրի տնտեսական դժվարին վիճակը որոշ շափով թեթևացնելուց հետո սովետական կառավարությունն ավելի կազմակերպված ընթացք տվեց Հայաստանում գտնվող արևմրտահայ գաղթականների դրության բարելավման գործին:

1922 թ. դեկտեմբերի 16-ին Ժողովուրդների նախագահությունը լսեց ներքգործող կոմատի գեկուցումը գաղթականության դրության մասին և որոշեց հարցն ավելի լայն, արմատական ու հեռանկարային միջոցներով լուծելու նպատակով ներկայացնել Կենտգործկոմի քննարկմանը⁷²:

Դեռևս 1922 թ. գարնանից սկսած, իսկ Կենտգործկոմի դիրեկտիվների համաձայն հատկապես 1923 թ. ձմռան ընթացքում, հողժողովատը ձեռնարկեց հողաշինարարական ծավալուն աշխատանքներ, որոնց ընթացքում հող էր հատկացվում ոչ միայն սակավահող գյուղացիական տնտեսություններին, այլև՝ գաղթականներին: Այդ նպատակով միաժամանակ կատարվում է երկրում կուտակված գաղթականության հաշվառում: Դրա շնորհիվ հաջողվում է մասամբ պարզել հողագուրկ գաղթականների քանակն ու կարիքները և հնարավորության սահմաններում նրանց բավարարություն տալ՝ սակավահող շրջաններից տեղափոխելով համեմատաբար հողառատ վայրեր:

ՆԳժԿ-ի գաղթականական բաժնի տվյալներով, առ 1-ը փետրվարի 1923 թ., բացի Երևան, Ալեքսանդրապոլ քաղաքներից և Ջանգեզուրի, Դարալագյազի ու Մեղրու գավառներից, Հայաստանում կային 128.634 գյուղական գաղթականներ, որոնցից մինչև 1923 թ. փետրվարը հողով բավարարվել էին 49.000 մարդ, իսկ 79.634 մարդ դեռևս մնում էին հողագուրկ վիճակում⁷³: Հողժողովատի տվյալների համաձայն, մինչև

⁷² Տե՛ս Հայկ. ՍՍՀ 2249 Ա, ֆ. 4/114, գ. 5, ք. 59:

⁷³ Տե՛ս նույն տեղում, ֆ. 40/113, ց. 3, գ. 421, ք. 55—56 և ֆ. 123, ց. 1, գ. 1576, ք. 13—15:

1923 թ. վերջերը հողաբաժիններ էին ստացել 64.000 գաղթականներ⁷⁴: Անհրաժեշտ է միաժամանակ նշել, որ այլ ազգությունների գաղթականության վերադարձի ու տեղավորման, նրանց քանակի ու հողով բավարարություն ստանալու, ինչպես նաև Զանգեզուրի, Դարալագյազի և Մեղրու գավառների գաղթականների վերաբերյալ տվյալները չեն մտցված այդ թվերի մեջ⁷⁵:

Այսպիսով, դրանք միայն մոտավոր գաղափար կարող են տալ ինչպես գաղթականների ընդհանուր քանակի, այնպես էլ նրանց հողով բավարարվածության մասին, քանի որ այդ տարիներին չի հաջողվել ավելի ստույգ հաշվառում կատարել:

Այնուամենայնիվ, Հայաստանի նման սակավահող մի երկրում խիստ դժվար էր գաղթականների հարյուր հազարավոր զանգվածին բավարարել հողով, գյուղատնտեսական գործիքներով, սերմացուով, անասուններով, բնակարաններով և այլ միջոցներով: Սակայն ճիգերի մեծ լարումով սովետական կառավարությունը կատարեց այդ աշխատանքները, իր սուղ բյուջեից զգալի գումարներ հատկացնելով գաղթականության կարիքներին: Այսպես, օրինակ, 1922 թ. Ղարաբաղի շրջանից Բասարգեշար են փոխադրվել 2757 շունչ գաղթականներ, նոր վայրերում ստացել հողամաս, բնակարաններ և արտոնյալ պայմաններով երկարատև վարկեր՝ լծկան անասուններ և գյուղատնտեսական գործիքներ ձեռք բերելու համար⁷⁶: Ներքին այդ տեղափոխությունները ավելի մեծ մասշտաբներով շարունակվել են հետագա տարիներին:

Բայց պետք է նշել, որ բնակչության հիմնական զանգվածը, որը տասնամյակներ շարունակ վարել էր իր տնտեսությունը բնակչության ծանոթ պայմաններում, Սովետական Հայաստանում համեմատաբար փոքրամասնություն էր կազմում: Մինչդեռ բնակչության մի զգալի մասը, անժա-

նոթ լինելով նոր միջավայրին, ունենալով նույնիսկ հող և արտադրության այլ միջոցներ, դեռևս երկար ժամանակ չէր կարողանում բավարար բերք ստանալ: Վանի, Բիթլիսի, էրզրումի և հատկապես բարձրագիր շրջաններից գաղթած գյուղացիները, որոնք միանգամից ընկել էին Արարատյան հարթավայրը, բավարար փորձ ու հմտություն չունեին բամբակի, բրնձի, խաղողի և այլ կուլտուրաների մշակման գործում: Այսպիսով, տասնյակ հազարավոր հողագործներ, որոնք տարիներ շարունակ իրենց տնտեսությունները վարել էին բնակչության այլ պայմաններում, այժմ կարիք ունեին համեմատաբար երկար ժամանակամիջոցի, որպեսզի տեղական աշխատանքի միջոցով ձեռք բերեին անհրաժեշտ փորձ և հմտություններ: Եթե այս բոլորին ավելացնենք նաև գյուղատնտեսական գործիքների, մթերատու ու բանող անասունների, անբնակավայրերի պակասությունը, այգիների ու ոռոգման ջրանցքների քայքայվածությունը և այլ խոչընդոտներ, ապա պատկերը միանգամայն պարզ կլինի: Չնայած առկա այս լուրջ գծավարություններին, սովետական կառավարությունը անում էր ամեն բան գաղթականությանը հողի հետ կապելու և տնտեսապես ոտքի կանգնեցնելու համար:

Երկրում գտնվող արևմտահայ գաղթականության խնդրի արմատական լուծման ուղղությամբ այն՝ ինչ կատարեց նորաստեղծ սովետական իշխանությունը, ունեցավ պետական, տնտեսական ու քաղաքական կարևոր նշանակություն: Դա միաժամանակ ակնառու կերպով ցույց տվեց, որ միայն սովետական կառավարությունն է իրոք շահագրգռված անկեղծորեն լուծելու տարիներ շարունակ թափառական ու մուրացկանային կյանք վարող արևմտահայ գաղթականության հարցը:

Ահա թե ինչու սփյուռքահայ աշխատավորները ևս իրենց հայացքներն ուղղեցին դեպի Սովետական Հայաստան, այստեղ տեսնելով իրենց փրկությունը:

⁷⁴ Տե՛ս «Նորհրդային Հայաստան—1920—1925», ժողովածու, Երևան, 1926, էջ 69:

⁷⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 109 և Հայկ. ՍՍՀ ՀՀԿՊԱ, ֆ. 30/116, ց. 1, գ. 2352, թ. 23—24:

⁷⁶ Տե՛ս «Նորհրդային Հայաստան—1920—1925», ժողովածու, էջ 69:

**ՍՓՅՈՒՌՔԱԶՅ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄԸ
ԴԵՊԻ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ**

Սովետական Հայաստանի կառավարությունը, որպես հայ աշխատավորության շահերի իսկական պաշտպան, անտարբեր չէր կարող մնալ դժնդակ պայմաններում գտնվող և օգնություն հայցող պանդուխտ հայերի դառն ճակատագրի հանդեպ: Սովետական կառավարությունը երբեք էլ աչքաթող չէր անում գաղութահայությանը, որովհետև նա շատ լավ գիտակցում էր, որ Հայաստանի սահմաններից դուրս ապրում էր ավելի մեծ թվով հայություն, քան ներսում և որի ճնշող մեծամասնությունը կազմում էին աշխատավորական տարրերը: Ուստի նա շարունակ անդրադառնում էր այն հարցին. թե ի՞նչ անցուդարձեր են կատարվում գաղութահայության մեջ, դեպի ո՞ւր են բեկվում նրանց հայացքները:

Մինչև 1915 թ. եղեռնական իրադարձությունները, գաղութահայության թիվը (առանց ռուսական կայսրության տերիտորիայում բնակվողների) կազմում էր մոտ 175 հազար մարդ, որից 25 հազարը՝ Բուպարիայում, 10 հազարը՝ Ռումինիայում, 20 հազարը՝ Եգիպտոսում և Հարեջստանում, մնացածները՝ Եվրոպայի, Ասիայի և Ամերիկայի այլևայլ երկրներում: Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ և դրանից հետո, զանգվածային կոտորածներից փրկված ու բռնազաղթի միջոցով Թուրքիայից արտաքսված հայության բեկորները անհամեմատ ստվարացրին հայկական գաղութները աշխարհի բազմաթիվ անկյուններում, ստեղծելով ընդարձակածավալ հայկական սփյուռքը:

Քսանական թվականների սկզբի տվյալներով բնակչության

քանակով ամենամեծը Սիրիայի և Լիբանանի հայկական գաղթօջախներն էին: Այնտեղ ապաստան էր գտել շուրջ 150 հազար հայություն, որից մոտ 90 հազարը՝ Հալեպում և նրա մոտակա շրջաններում. 18 հազարը՝ Բեյրութում, 8 հազարը՝ Դամասկոսում, իսկ մնացածները ցրված էին այլ քաղաքներում ու ավաններում: Մի կողմից հայության այդ հոծ զանգվածի առկայությունը, իսկ մյուս կողմից՝ տեղի համեմատաբար բարենպաստ պայմանները, Սիրիայի և Լիբանանի հայկական գաղութը դարձրին սփյուռքի ամենակարևոր օջախներից մեկը, իսկ Հալեպն ու Բեյրութը դարձան Մերձավոր Արևելքի հայության ամենանշանակալից կենտրոնները՝ իրենց հայկական վարժարանների լայն ցանցով, մտավորական ուժերով, պարբերական մամուլով, կուսակցական, մշակութային ու մարզական ակումբներով և այլ ձեռնարկներով:

Իր մեծությամբ և ազգային-հասարակական ակտիվ գործունեությամբ Սիրիայից ու Լիբանանից հետո աչքի էր ընկնում ԱՄՆ-ի հայկական գաղութը, որի կազմավորումը սկիզբ է առնում անցյալ դարի 70-ական թվականներից: Ամերիկահայ երեք գաղթօջախներում (ԱՄՆ, Կանադա և Լատինական Ամերիկա) միասին հաշվվում էին 128 հազար հայեր: Դրանից մոտ 125 հազարը ապրում էին Ամերիկայի Միացյալ Նահանգներում ու Կանադայում, իսկ ավելի քան երեք հազարը՝ Լատինական Ամերիկայի մի շարք երկրներում՝ Արգենտինայում, Բրազիլիայում, Ուրուգվայում, Կուբայում, Մեքսիկայում և այլուր²:

Կանադայի և Լատինական Ամերիկայի հայկական համայնքները աշխուժացան հատկապես 1922 թվականից հետո, որպես հետևանք Միացյալ Նահանգների կողմից հայերի զանգվածային ներհոսման դեմ ընդունված օրենքի: Մերձավոր Արևելքից ու Եվրոպայից դեպի նոր աշխարհ ուղղված տարագիր հայերի քարավանները, իրենց առջև փակված գտնելով հյուսիս-ամերիկյան դարպասները, շրջվում էին դեպի

¹ Տե՛ս «Հայաստանի կոչնակ», 23 հունիսի, 1923, № 25, էջ 794:

² Տե՛ս հուլիս տեղում, 20 հունվարի, 1923, № 3, էջ 85—86:

Կանադայի և Լատինական Ամերիկայի ամերիկացիները: Գնալի Լատինական Ամերիկա հայերի հոսանքն ուժեղացավ հատկապես Ֆրանսիայի կողմից Կիլիկիան լքելուց և այն քեմալականների տնօրինությունը հանձնելուց հետո: Կիլիկիայում քեմալականների կազմակերպած նոր ջարդերից փրկված մարաշցի, հաճնցի ու զեյթունցի տարագիրները, որոնք ժամանակավոր ապաստան էին գտել Սիրիայի ու Լիբանանի գաղթականական կայաններում, զանգվածորեն ձգվում էին դեպի Ամերիկա: Նրանք էլ հենց, հաստատվելով Լատինական Ամերիկայի երկրներում, դարձան այդ շրջանի հայկական գաղթօջախների կորիզը: Գնալով հայության թիվը այդտեղ արագորեն աճում էր նաև ի հաշիվ Բալկանների, Սիրիայի, Լիբանանի, Իրանի և Թուրքիայի հայության: Այդ մասին է խոսում այն փաստը, որ արդեն 1925 թ. Լատինական Ամերիկայում հաստատվել էին ավելի քան 15 հազար հայեր, իսկ Բուենոս-Այրեսը դարձել էր գաղութահայ կարևոր կենտրոններից մեկը: Ինչ խոսք, որ Մերձավոր Արևելքի ու Եվրոպայի մի քանի երկրներում հայության համար ստեղծված անբարենպաստ պայմանների հետևանքով հեռավոր ամերիկյան մայրցամաք մեկնող գաղթականները երբեք էլ չգտան ավելի նպաստավոր պայմաններ: Ինչպես մյուս երկրներում, այնպես էլ Լատինական Ամերիկայում որոշ շահով ունևոր ու ինքնաբավ վիճակի հասած փոքրաթիվ հայ ընտանիքների կողքին հսկայական զանգված էին կազմում ծայրահեղ թշվառության մեջ արվարձանային խղճուկ հյուղակներում իրենց գոյությունը հազիվ քարշ տվող հայ տարագիրները: Չնայած հայության քանակի անընդհատ ավելացմանը, այնուամենայնիվ Լատինական Ամերիկայի երկրներում մեծ շահերի էր հասնում ապազգայնացումը:

Քսանական թվականներին, ըստ իրենց մեծության, հայության հոծ համախմբման տեսակետից, երրորդ տեղը գրավում էին Բալկանյան երկրների՝ բուլղարահայ, ռումինահայ և հունահայ գաղութները: Բուլղարիայում ապրում էին 46 հազար հայեր, Ռումինիայում, Տրանսիլվանիայում և Բեսարաբիայում՝ 43 հազար: Հունաստանում և Կիպրոսում հաշվվում

էին 79 հազար հայեր³: Առաջին համաշխարհային պատերազմին հաջորդած զինադադարից և հատկապես Իզմիրի կոտորածից հետո, Հունաստանը, ուր վաղուց ի վեր կար հայկական գաղութ, դարձավ լայն բացված դարպասներով հյուրընկալ ապաստանը ահավոր սպանդից ճողոպրած ու փախստական դարձած բյուրավոր հայերի: Սակայն այդ տարիներին խիստ հարափոփոխ ու անկայուն քանակ էր կազմում հայերի թիվը Հունաստանում: Տասնյակ հազարավոր խուճապահար տարագիրներ, հասնելով Պիրեիա, այնտեղից տարածվում էին դեպի Աթենք, Սալոնիկ ու նրանց շրջակայքի գաղթականական կայանները: Թուրքիայում կազմակերպված հայկական որբանոցների տասնյակ հազարավոր որբերը նույնպես, քեմալական առաջխաղացման հետևանքով, էվակուացվեցին և տեղավորվեցին Կորֆուում, Քեֆալոնիայում, Կորնթոսում և այլ վայրերում: Բայց օրվա հացի կարոտ, ցնցոտիների մեջ ծայր թշվառության մատնված, տեղի ունեցած սարսափների արհավիրքը ապրող ու վաղվա անստույգ վիճակի մղձավանջից տանջվող անտուն պանդուխտները խիստ անկայուն վիճակի մեջ էին Հունաստանում, ուստի այնտեղ երկար չէին մնում: Մինչ մի կողմից գաղթականների նորանոր խմբեր էին ապաստանում Հունաստան, նույն ժամանակ նախկիններից հազարավորները այնտեղից մեկնում էին դեպի Ամերիկա, Ֆրանսիա, Եգիպտոս և այլ երկրներ, հուսալով գտնել ավելի բարվոք պայմաններ: Այսպիսով, Հունաստան ապաստանած հայ գաղթականների քանակը խիստ փոփոխական էր այդ տարիներին:

1922 թվականի վերջերին կատարված հաշվարկումների համաձայն արտասահմանյան մյուս երկրներում գաղութահայությունը տեղաբաշխվում էր հետևյալ կերպ. Եգիպտոսում, Սուդանում և Հաբեշտանում՝ 28 հազար, Պարսկաստանում՝ 50 հազար, Հնդկաստանում, Ճավայում և Ավստրալիայում՝ 12 հազար, Եվրոպական երկրներում (Ֆրանսիա, Անգլիա, Իտա-

³ Տե՛ս «Հայաստանի կոչնակ», 20 հունվարի, 1923, № 3, էջ 85—86:

լիա, Հունգարիա, Գերմանիա, Ավստրիա, Զեխոսլովակիա, Հարավսլավիա, Բելգիա և այլն)՝ 38 հազար⁴։

Գնալով անընդհատ ստվարանում էր եվրոպական երկրների հայութունը։ Օրինակ, 1925 թ. հայերի թիվը Ֆրանսիայում հասել էր մոտ 45 հազարի։ Ֆրանսահայ համայնքը ընդհանրապես եղավ սփյուռքի ամենանշանափոր և ազդեցիկ գաղթօջախներից մեկը։ Ֆրանսիական մտածողներն ու գրողները վաղուց ի վեր մեծ ազդեցություն ունեին արևմտահայ հասարակական մտքի ու գրականության վրա։ Արևմտահայ ազգային զարթոնքի և գրական վերածննդի գաղափարները, ձգտումներն ու նպատակները զգալի շահով ներշնչվել էին ֆրանսիական հեղափոխության սկզբունքներից ու ֆրանսիական հարուստ գրականության հորդ ակունքներից։ 19-րդ դարի վերջին տասնամյակներից մինչև 1915 թ. եղեռնական իրադարձությունները հայ հասարակական գործիչները, մտավորականներն ու ուսանողները Ֆրանսիայում ստեղծել էին թուրքական բռնակալությունից հայ ժողովրդի ու Հայաստանի ազատագրման դատին շատագույն համակրանքի ուժեղ հոսանք։ Եվ, երբ առաջին համաշխարհային պատերազմից հետո, մանավանդ քեմալականների հաղթանակի հետևանքով, հազարավոր հայ տարագիրներ ապաստանեցին Ֆրանսիա, այնտեղ արդեն գտան խիստ բարյացակամ, հայասիրական մթնոլորտ։ Այնուհետև, Հունաստանի հայկական որբանոցները փակվելուց հետո, հազարավոր հայ գաղթականներ, առավելապես մեծահասակ ոտքեր ու Կ. Պոլսից փախած մտավորականներ, նույնպես անցան Ֆրանսիա և հաստատվեցին Փարիզում, Մարսելում, Լիոնում ու նրանց մերձակա ավաններում։

Ֆրանսահայ գաղութը, Մերձավոր Արևելքից և Միացյալ Նահանգներից հետո, ամենահոծ հայկական համախմբումը եղավ արտասահմանում։ Այդտեղ էին կենտրոնացել նաև Պոլսից, Իզմիրից և Թուրքիայի այլ քաղաքներից փախած արևմտահայ մտավորականները։ Նրանց ներկայությունը մի առան-

ձին աշխուժություն մտցրեց ֆրանսահայ գաղութի ազգային-հասարակական ու մշակութային կյանքում։

Բացի վերը թվարկած երկրներից, զգալի քանակությամբ՝ մոտ 15 հազար հայեր էլ ապրում էին Պաղեստինում և Միջագետքում։ Եթե այս բոլորին ավելացնենք նաև Թուրքիայում մնացած հայության թիվը, որը հասնում էր 281 հազարի⁵ (150 հազարը Կ. Պոլսում, իսկ 131 հազարը՝ փոքրասիական գավառներում), ապա կարելի է ասել, որ 1920—1922 թվականների տվյալներով գաղութահայության ընդհանուր թիվը կազմում էր շուրջ 870 հազար մարդ (առանց նախկին ռուսական կայսրության տերիտորիայում ապրող հայության)։

Այս թվերը միայն մոտավոր գաղափար կարող են տալ գաղութահայության քանակի վերաբերյալ, քանի որ եղած աղբյուրները միանգամայն տարբեր տվյալներ են ներկայացնում։ Դրա կարևոր պատճառներից մեկն այն է, որ այդ տարիներին չի եղել ճշգրիտ վիճակագրություն։ Անբարենպաստ պայմանների հետևանքով հայությունը շատ երկրներում՝ նրկար չէր մնում միևնույն տեղում. այլ վարում էր թափառական կյանք և հնարավոր չէր լինում որոշել նրա իրական քանակը։ Այնուհետև, տարբեր երկրներում գաղթականության հաշվառումը միանգամայն տարբեր սկզբունքներով էր կատարվում և անհնարին էր ստույգ տվյալներ ձեռք բերել։ Օրինակ, ԱՄՆ մեկնածուների ազգային հատկանիշը որոշվում էր ներգաղթի վարչության գրանցումներով, իսկ երկրի ներսում հետագայում կատարված աճը չէր ավելացվում կոնկրետ ազգության քանակին, որովհետև այնտեղ ծնվածներն ամերիկյան վիճակագրության համաձայն պարզապես համարվում էին ամերիկյան քաղաքացիներ և ոչ այս կամ այն ազգի նրկայացուցիչներ։ Նույնն էր դրությունը նաև Ֆրանսիայում և մի շարք ուրիշ երկրներում։ Ահա թե ինչու այդ տարիներին գաղութահայության քանակը զանազան աղբյուրներում տա-

⁵ Տե՛ս նույն տեղում։

⁴ Տե՛ս նույն տեղում։

տանվում էր 600 հազարից մինչև 870 հազարի կամ նույնիսկ մեկ միլիոն երկու հարյուր հազարի սահմաններում⁶։

Չնայած գաղութահայությունն իրենից ներկայացնում էր այդքան ստվարաթիվ մի զանգված, բայց նրա գլխին դամոկլյան սրի պես կախված էր օտարացման ահեղ վտանգը, արոճհետև նա կտրված էր հարազատ երկրից, ցրված տարբեր վայրերում և ենթակա ամեն տեսակ ազդեցությունների։ Ապագայնացման ու ձուլման պրոցեսը մեծապես պայմանավորված էր այնպիսի կարևոր գործոններով, ինչպես հյուրընկալող երկրի տնտեսական ու մշակութային զարգացման մակարդակը, տիրող քաղաքական մթնոլորտը, գաղութի ներսում սեփական մտավորական ուժերի պակասությունը, կրթական ու մշակութային օջախների բացակայությունը և այլն։ Միյուրեքահայության ազգապահպանման հիմնական գործոններից մեկը անշուշտ գաղութների ու մայր երկրի փոխադարձ շփման ու կապի ամրության մեջ էր։ Այդ տեսակետից, օրինակ, առանձնահատուկ վիճակի մեջ էր գտնվում պարսկահայ գաղութը։ Այն անմիջականորեն սահմանակից լինելով հայրենիքին, ունենալով Սովետական Հայաստանի դիվանագիտական ու հյուպատոսական ներկայացուցչությունների առկայությունը, փոխադարձ շփման և այլ ազդակների շնորհիվ ավելի շատ կապված էր Հայաստանի ու Կովկասի հայության, քան մյուս գաղութների հետ։ Օտարացման վտանգը այդ տարիներին համեմատաբար թույլ էր նաև Մերձավոր Արևելքի հայկական գաղթավայրերում՝ Սիրիայում, Եգիպտոսում և այլուր։

Ապագայնացման ու օտարացման ամենից ավելի ենթակա էր հայությունը Ամերիկայում, Ֆրանսիայում, Բալկաններում։ Այդ երկրներում մի շարք պատճառներով նոր սերունդը հեշտությամբ մոռանում էր իր մայրենի լեզուն, իր ժողովրդի

պատմությունը, մշակույթը, արագորեն խորթանում էր հայությունից և կորցնում իր ազգային դիմագիծը։

Ապագայնացման վտանգի դեմ գաղութահայության դիմագրավման համար հսկայական նշանակություն ունեցավ 1920 թ. նոյեմբերի 29-ին Հայաստանում հաղթանակած սովետական իշխանությունը։ Սովետական Հայաստանի գոյության փաստը օտարության մեջ դեգերող տարագիր հայությունը տվեց պայքարի ուժ, փրկության հույս և աներեւ հավատ՝ պայծառ ապագայի նկատմամբ։

Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտկոմը և սովետական կառավարությունը հենց սկզբից իրենց ջերմ վերաբերմունքը դրսևորեցին գաղթաշխարհի նկատմամբ։ Գաղութահայության նկատմամբ Սովետական Հայաստանի կառավարության վարած միանգամայն ճիշտ քաղաքականության մշակման ու իրականացման գործում խոշոր ծառայություն ունեն Ալ. Մյասնիկյանը, Ս. Սրապիոնյանը (Լուկաշին), Աշ. Հովհաննիսյանը, Ս. Համբարձումյանը, Ասք. Մոավյանը, Ար. Երզնկյանը, Ալ. Բեկզադյանը, Դ. Շահվերդյանը, Պ. Մակինցյանը, Ս. Փիրումյանը, Ն. Տեր-Ղազարյանը, Գր. Վարդանյանը, Ադ. Խանջյանը, Ս. Տեր-Գաբրիելյանը և պետական ու մտավորական մի խումբ այլ գործիչներ, որոնք իրենց ելույթներով, հողվածներով ու ամենօրյա գործունեությամբ նպաստում էին սփյուռքահայ զանգվածների շրջանում տարվող աշխատանքներին, ներգաղթի կազմակերպմանը և այլ խնդիրների լուծմանը։ Այդ տեսակետից հատկապես մեծ ծառայություններ ունի կուսակցական ու պետական ականավոր գործիչ Ալ. Մյասնիկյանը։ Այդ տարիների նրա գրեթե բոլոր ելույթներում, հողվածներում ու աշխատություններում շոշափված են գաղութահայության և Սովետական Հայաստանի հարաբերությունների հետ կապված խնդիրները։ Նրա կողմից գաղութահայ ժողովրդական զանգվածներին գործիմաց ու համբերատար ձևով պարզաբանված են նրանց հուզող հարցերն ու պայքարի ուղիները։ Ալ. Մյասնիկյանն առաջիններից մեկն էր այն մարդկանց շարքում, ովքեր գտնում էին, որ գաղութահայ աշխատավորության և Սովետական Հայաստանի միջև

⁶ Տե՛ս Հայկ. ՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 43, ց. 1, գ. 41, թ. 13, ֆ. 68/200, գ. 514, թ. 270 և 274, հմմտ. նաև՝ Հայկ. ՍՍՀ ՀԿՊԱ, ֆ. 4/114, գ. 3, թ. 38--41 և 115, «Հայաստանի կոչնակ», 1923, № 3, էջ 85--86 և № 25, էջ 794, «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1925, № 2, էջ 90--102, Թեղիկ, Ամենուն տարեցույցը, Վենետիկ, 1926, էջ 577--590, Ա. Անդրեասյան, Միյուրեք և Հայրենիքը, Պեյրուս, 1962, էջ 7։

պետք է ձգված լինի ամուր կամուրջ, որովհետև «Խորհրդային Հայաստանը այն կայանն է, որը ապահովում է հայի ֆիզիկական գոյությունը, հայ աշխատավորի ազատությունը և բարեկեցությունը», որովհետև նա գաղութահայ աշխատավորության և առհասարակ գաղթականական հայության ազատության և երջանկության առհավատչյան է⁷:

Մինչև Հայաստանում սովետական իշխանության հաստատումը, օտար երկրներում հայրենազուրկ թափառող արևմուտահայ տարագիրները որոշ հույսեր էին կապում մեծ տերությունների հետ, քանի որ նրանք ժամանակին «ազատության ու անկախության» վերաբերյալ բազմաթիվ խոստումներ էին տվել: Սակայն, ինչպես և պետք էր սպասել, իզուր ու անհիմն էին այդ ակնկալությունները իմպերիալիստական տերություններից, որոնց հետաքրքրում էր միայն իրենց շահը և ոչ թե ժողովուրդների ազատագրության գործը: Ուստի հայ գաղթականության վիճակը տարիներ շարունակ ոչ միայն մնում էր անորոշության մեջ, այլև մի շարք երկրներից, ուր նրանք ժամանակավոր ասպնջականություն էին գտել, ուղղակի դուրս էին մղվում ու ավելի ծանր կացության մեջ դրվում: Նման պայմաններում բոլոր «բարերարների» կողմից խաբված սփյուռքահայերի փրկության միակ հույսն ու ապավինը դարձավ Սովետական Հայաստանը:

Այսպիսով, Սովետական Հայաստանի գոյությունը արմատական բեկում մտցրեց հայ ժողովրդի բազմադարյան պատմության մեջ: Այն ոչ միայն ազատաբար նշանակություն ունեցավ ֆիզիկական բնաջնջման անմիջական սպառնալիքից փրկված արևելահայության կյանքում: Սովետական Հայաստանը միաժամանակ լուսատու փառոս դարձավ դաժան ևսկատագրի բերումով աշխարհով մեկ սփռված գաղութանայ աշխատավորության համար: Հայրենաբաղձ սփյուռքահայության հիմնական զանգվածը հենց սկզբից որոշակի ջրջադարձ կատարեց դեպի Սովետական Հայաստան, կանգնեց նրա

⁷ Տե՛ս Ալ. Մարտինի, Գաղութահայ աշխատավորությանը, Նյու-Յորք, 1923, էջ 13—14:

պաշտպանության դիրքերում և անհողողոց ցանկություն հայտնեց վերադառնալու իր նոր, ազատագրված սոցիալիստական հայրենիք: Սովետական իշխանության հաստատման առաջին իսկ օրվանից Հայաստանը դարձավ համայն հայ աշխատավորների մայր հայրենիքը, նրանց ազգահավաքման կենտրոնն ու վերջնական հանգրվանը:

Դրանում համոզվելու համար բավական է ծանոթանալ սփյուռքահայ մամուլի որոշ մասի հետ: Օրինակ, Կ. Պոլսում հրատարակվող «Երկիր» թերթի ստորև բերվող տողերում առավել խտացված ձևով արտահայտված են Հայաստանում գտնվող գաղթականությանը հող հատկացնելու վերաբերյալ սովետական կառավարության որոշման առթիվ եղած գաղութահայ բազմաթիվ արձագանքները: «Նախորդ կառավարությունը,— գրում է «Երկիր»-ն իր խմբագրականում,— իր տիրապետության երեք տարիներու ընթացքին արևմտահայ փախըստականության վրա խորթ աչքով նայեցավ և բնավ չի մտածեց արևմտահայ գյուղացիության հող տրամադրելու մասին», մինչդեռ Սովետական Հայաստանի «ղեկավարները սկիզբեն ի վեր իրենց գլխավոր մտահոգություններն մեկնալ դարձուցին արևմտահայ գյուղացիությունը հողի հետ կապելու խնդիրը»⁸:

Այնուհետև թերթն իր ուրախությունն էր հայտնում այն առթիվ, որ «Մյասնիկյանի կառավարության որոշումով Խորհրդային Հայաստանի սահմաններուն մեջ գտնվող արևմտահայ գյուղացիներուն պիտի բաշխվի հող այն չափով, ինչ չափով որ կտրվի բնիկ գյուղացի աշխատավորներուն: Ահա հիմնական և բարվոք կարգադրություն մը, որուն շնորհիվ արևմուտահայությունը կազատվի գաղթականի թափառական կյանքեն, կլծվի շինարար, ստեղծագործող աշխատանքի և այդ վերպով ոչ միայն հնարավորություն կունենա իր ապրուստը իր ճակատի քրտինքովը հայթայթելու, այլ նաև նպաստելու հայրենիքի տնտեսական վերաշինության կենսական գործին»⁹:

⁸ «Երկիր», Կ. Պոլիս, 16 սեպտեմբերի, 1921 թ., № 585:

⁹ Նույն տեղում:

Երկրում եղած գաղթականության նկատմամբ սովետական կառավարության հոգատար վերաբերմունքը հույսի ճառագայթներ նետեց օտար երկնակամարների տակ դեգերող բուրի հայ աշխատավորների սրտերը և նրանց կողմնորոշեց դեպի վերածնվող հայրենիքը: Արտահայտելով այդ տրամադրությունները, Նյու-Յորքում հրատարակվող «Հայաստանի կոչնակ»-ը գրում էր. «Գաղութներու մեջ հետզհետե ավելի կշեռվի համակրանքը դեպի Հայաստանի ներկա կառավարությունը», դեպի «Խորհրդային Հայաստանը, որուն դարձած են հիմա բնագոյաբար բոլոր հայոց աչքերը»: Վերլուծելով գաղութահայության բնդհանուր գոյավիճակը, շաբաթաթերթը միանգամայն ճիշտ կերպով հանգում էր այն եզրակացություններ, որ «քաղաքական արդի դժբախտ պայմաններու մեջ իրապես ալ հայերը չէին կրնար ուրիշ հենակետի մը վրա հույս դնել, եթե ոչ Խորհրդային Հայաստանի Հանրապետության վրա, քանի որ հոն միայն կարելի էր ազգին համար ստեղծել կեդրոն մը, որ միևնույն ատեն շաղկապ մը ըլլար բոլոր ցրված հայերու միջև»¹⁰:

Պետք է շեշտել, որ սփյուռքահայ առաջադիմական ուժերը, գնահատելով սովետական կառավարության հոգատարությունը գաղթականության նկատմամբ, միաժամանակ զգում էին իրենց պարտքը հայրենիքի հանդեպ: Այդ տեսակետից բնորոշ են Կ. Պոլսի «Երկիր» թերթի խմբագրական հոդվածներից մեկի այն տողերը, ուր ասված է. «Հայաստանի կառավարությունը իր պարտքը կատարած է. նախապես իրավագուրկ մեր եղբայրները՝ հիմա իրավատերեր կըլլան, իրենց խրճիթը, իրենց օճախը կունենան, իրենց քրտինքին արդյունքը կվայելեն»:

Կարգը գաղութինն է. մինչև գարուն գաղութն ալ իր բուրի անվեր օգնությունը պետք է փութացնեն, որպեսզի մեր գյուղացի եղբայրները ճիշտ ժամանակին ունենան իրենց բահը և բրիչը, խոփն ու արորը»¹¹:

¹⁰ «Հայաստանի կոչնակ», 28 հուլիսի, 1923, № 30, էջ 937—938:

¹¹ «Երկիր», 23 նոյեմբերի, 1921 թ., № 620:

Թեպետ գաղութների օգնությունը չեղավ բուրի անվեր ու նշանակալից, բայց դրանով իսկ սկիզբ առավ գաղութահայության աստիճանական ու արմատական բեկումը դեպի Սովետական Հայաստան: Օրավուր աճեց ու պայծառացավ Սովետական Հայաստանի հմայքը հայկական գաղթավայրերում և արդեն այդ հմայքը չէին կարող մթագնել հակասովետական ոչ մի զրպարտություն ու պրովոկացիա:

Արտասահմանի հայկական շրջաններում լայն արձագանք գտավ և աշխատավորական զանգվածներին դեպի հայրենիք կողմնորոշելու գործում հսկայական նշանակություն ունեցավ Հայաստանի բանվորների, գյուղացիների և կարմիրբանակայինների պատգամավորների խորհուրդների առաջին համագումարի (30-ը հունվարի—4-ը փետրվարի 1922 թ.) դիմումը՝ ուղղված սփյուռքահայությանը: Ազատագրված հայ ժողովրդի պետական իշխանության բարձրագույն օրգանը այդ դիմումի մեջ սրտագին ողջուններ էր հղում արտասահմանում ցրված հայ տարագիրներին: Այնտեղ միաժամանակ հույս էր հայտնվում, որ երկրի վերաշինության և նրա լավագույն անպագայի ստեղծման գործում իրենց արժանի ավանդը կներդնեն նաև գաղութահայ աշխատավորները, որովհետև միայն այդ ուղիով, միայն Սովետական Հայաստանի հզորացմամբ ու բարգավաճմամբ կգա նաև նրանց փրկությունը¹²: Այդ տարիներին գաղութահայ միջավայրում անցյալի վերաքննության, նոր դիրքորոշման, ապագա գործունեության շուրջը համառ պայքար էր զնում տարբեր հոսանքների միջև: Նման պայմաններում սփյուռքահայ աշխատավորությանը ճիշտ կողմնորոշելու համար կարևոր նշանակություն ուներ Սովետական Հայաստանից նրան ուղղված ամեն մի ճշմարիտ խոսք, առավել ևս հայ ժողովրդի պետական իշխանության բարձրագույն օրգանի դիմումը:

Գաղթաշխարհի տարբեր անկյուններում պրոսովետական մտայնության առաջացման ու զորացման համար մեծ նշա-

¹² Տե՛ս «ՀՍԽՀ բանվորների, գյուղացիների և կարմիր բանակայինների խորհուրդների Ա. համագումարը», Երևան, 1922, էջ 150—151:

նակություն ունեւր Սովետական Հայաստանի մասին ճիշտ ու բազմակողմանի ինֆորմացիա տարածելու հանգամանքը: Այդ տեսակետից կարևոր դեր էին կատարում գաղութահայ առաջադիմական մամուլը և մի շարք երկրների՝ ԱՄՆ-ի, Բուլղարիայի, Ֆրանսիայի կոմունիստական կուսակցութիւններին մեջ ստեղծված հայկական մասնաճյուղերը, ինչպէս նաև Եվրոպայում առաջ եկած հայ ուսանողների կազմակերպութիւնները:

Մայր հայրենիքի՝ Սովետական Հայաստանի և գաղութահայութեան միջև որպէս կապի կարևոր օղակներ էին ծառայում Սովետական Ռուսաստանի և Հայկական ՍՍՀ դիվանագիտական, տնտեսական ու արևտրական ներկայացուցչութիւնները, առանձին պատվիրակութիւնները, սովետահայ մամուլը և այլն:

Սովետական Հայաստանի և սփյուռքահայութեան միջև կարևոր կամուրջ եղավ նաև Հայաստանի օգնութեան կոմիտեն, որի մասնաճյուղերը տարածված էին հայկական գրեթէ բոլոր գաղթավայրերում և կարևոր դեր էին կատարում սփյուռքահայ աշխատավորներին հայրենիքի հետ կապելու, բուրժուա-ազգայնական կուսակցութիւնների ու հոսանքների վնասակար ազդեցութիւնից հանելու գործում:

Գաղթաշխարհի ազգայնական-բուրժուական կազմակերպութիւնները՝ հատկապէս դաշնակցութիւնը, շատ գոհ էին, որ սկզբնական շրջանում թույլ էր կապը Սովետական Հայաստանի և սփյուռքի միջև: Հայրենիքի հետ կապերի թուլութիւնը նրան հնարավորութիւն էր տալիս զրպարտել սովետական կառավարութեանը, թե իբր «բոլշևիկները չեն ուզում կապ պահպանել գաղութների հետ»: Դաշնակներն աղմուկ էին բարձրացնում և հոխորտում, թե միայն իրենք են հոգում ազգի շահերի մասին և այլն: Իսկ երբ կապը ստեղծվեց և գնալով ավելի էին սերտանում փոխհարաբերութիւնները սփյուռքի ու հայրենիքի միջև, նրանք սկսեցին խիստ անհանգստանալ: Դաշնակցութիւնն այս անգամ արդեն փոխեց իր «երգի» եղանակը: Այժմ էլ դիմելով ամեն տեսակ խարդախումների, դաշնակները ճգնում էին մոլորութեան մեջ գցել գաղութահայու-

թեանը, պնդելով, թե՛ «բոլշևիկները քեզ ուզում են շահագործել, դու նրանց փորագրաւն ես, իսկ քո դարդը նրանց չի գրադեցնում—մի լսիր նրանց, այլ մեզ՝ չէ՞ որ մենք ենք քո հարազատները» և նման կարգի այլ բարբառախոսքներ: Իրականում դաշնակցութիւնն այդպիսի մեքենայութիւնների ու կեղծիքների էր դիմում այն պատճառով, որ եթե Սովետական Հայաստանի ազդեցութեան ուժեղացման հետևանքով գաղութահայութիւնը լիովին երես դարձներ իրենից, ապա նրա գոյութիւնը միանգամայն անհնարին կլինէր:

Բացի դաշնակցութիւնից, այդ տարիներին գաղութահայութեան կյանքում որոշակի դեր էին խաղում նաև ռամկավարներն ու հնչակյանները, որոնք դեռ այն ժամանակվանից հիմնականում կողմնակից էին գաղութահայութեան պրոսովետական կողմնորոշմանը:

Հայաստանում սովետական իշխանութեան հաստատումից հետո, սփյուռքի հայ հասարակական-քաղաքական հոսանքների և ուժերի միջև մղվող պայքարի հիմնական առանցքը, կարևոր հանգույցը դարձավ վերաբերմունքը դեպի մայր հայրենիքը: Այդ պահից սկսած «ո՞վ ում» հարցը գաղթաշխարհում լուծվում էր Սովետական Հայաստանի նկատմամբ ունեցած դիրքորոշմամբ: Ժողովրդական զանգվածները այս կամ այն հոսանքի ու գործիչի դերը, նրա նկատմամբ իրենց վերաբերմունքը որոշում էին այն բանով, թե տվյալ հոսանքն ու գործիչը թե՛ր, թե՛՞ դեմ են Սովետական Հայաստանին:

Դեպի Սովետական Հայաստան, որպէս հայութեան միակ հայրենիքի սփյուռքահայութեան դիրքորոշման գործում հրակայական զգաստացնող նշանակութիւն ունեցավ նաև Լոզանի կոնֆերանսը, որը վերջնականապէս ցրեց արևմտյան տեղութիւններից ունեցած սպասելիքները:

Մինչև Լոզանի 1922—1923 թթ. կոնֆերանսը գաղութահայութեան գրեթէ բոլոր խավերում տակավին ապրում էր այն հույսը, թե միգրացի մեծ տերութիւնները հնարավորութիւն ստեղծեն վերադառնալու իրենց հայրենի օջախները: Բայց երբ Լոզանի կոնֆերանսում արևմտյան տեղութիւններն ու քեմալական Թուրքիան իշեցրին հայկական հարցի

«վերջին» քստմանելի արարի արյունաշաղախ վարագույրը, վերջնականապես սթափվեցին ու լիովին զգաստացան սփյուռ-թահայ աշխատավորները:

Լոզանի կոնֆերանսում Սևրի 1920 թ. օգոստոսի 10-ի պայմանագիրը գերեզմանելու հետ մեկտեղ «մոռացութեան» տրվեց նաև հայկական հարցը, որն արդեն փաստորեն հան-դեցվել էր աշխարհով մեկ ցրված հայ գաղթականության վի-ճակը շատ թե քիչ բարելավելու խնդրին: Հայտնի է, որ Սևրի պայմանագրով նախատեսվում էր ստեղծել «Մեծ Հայաստան» և, շնայած, ԱՄՆ-ի պրեզիդենտ Վիլսոնը 1920 թ. նոյեմբերի 22-ին ձեռնարկեց զոնա էր նրա սահմանները, բայց այն այդպես էլ մնաց թղթի վրա: Սևրի պայմանագիրը չվավե-րացվեց անգամ այն ստորագրող որևէ տերութեան կողմից: Հետագա երկու տարիների ընթացքում զգալի փոփոխություն-ներ տեղի ունեցան Մերձավոր Արևելքի քաղաքական կյան-քում և Սևրի պայմանագիրն արդեն չէր համապատասխանում նոր իրադրությունը: Ուստի Սևրում իրենց «լուծումն» ստա-ցած բոլոր հարցերը, այդ թվում և հայկական հարցը, վերա-քննության ենթարկվեցին 1922 թվականի նոյեմբերին Լոզա-նում հրավիրված կոնֆերանսում: Հայկական հարցն էլ, այս-պիսով, մեքենայորեն մտավ կոնֆերանսի օրակարգի մեջ: Բայց ինչպես միշտ, այս անգամ էլ այն առուժախի առարկա դարձավ իմպերիալիստական դիվանագիտության ու թուրքա-կան կառավարության միջև: Ավելին, հայկական հարցն այս-տեղ փոխարինվեց լոկ հայկական օջախի ու գաղթականնե-րին իրենց նախկին բնակավայրերը վերադառնալու թույլտը-վություն տալու հարցով:

Չնայած Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի մինիստր Լորդ Քերզոնի, Իտալիայի ներկայացուցիչ մարկիզ Գարրոնիի ու նրանց կոլեգաների հանդիսավոր, բայց ըստ էության կեղծ հայտարարություններին, որ հայերն արժանի են հատուկ ուշադրության ոչ միայն իրենց կրած դաժան տառապանք-ների, այլև ապագայի վերաբերյալ նրանց տրված խոստում-ների պատճառով, և, շնայած այն բանին, որ Լոզանի կոնֆե-րանսի մասնակիցները հրապարակորեն հանձնառու եղան

չցրվել մինչև որ մի հարմար ապաստան չապահովեն ան-պաշտպան մնացած հարյուր հազարավոր հայ գաղթական-ների համար, բայց և այնպես, 1923 թ. հուլիսի 24-ին ստո-րագրվեց մի պայմանագիր, ուր խոսք անգամ չկար հայերի մասին¹³:

Ազգային փոքրամասնությունների խնդիրը, այդ թվում նաև տարագիր հայության հարցը, որպես կարևոր քաղաքա-կան պրոբլեմ, սկզբում ուսումնասիրվում էր կոնֆերանսի ռազմա-տերիտորիալ հանձնաժողովում: Արևմտյան դիվանա-գետներն այն դարձյալ օգտագործում էին իրենց շահագրգռող մյուս հարցերի ցանկալի լուծումն ապահովելու նպատակով թուրքական ներկայացուցիչների վրա ճնշում գործադրելու համար: Այդ պատճառով էլ կոնֆերանսի աշխատանքների սկզբում Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի մինիստր Քեր-զոնը հայկական հարցը բնորոշեց որպես «աշխարհի ամենա-մեծ խայտառակություններից մեկը» և մյուս դաշնակիցների համաձայնությամբ ու հավանությամբ առաջ քաշեց Թուրքիա-յում ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտ-պանության և, մասնավորապես, արևելյան վիլայեթների տե-րիտորիայում կամ Կիլիկիայում արևմտահայության մնա-ցորդների համար հայկական օջախ ստեղծելու հարցը: Բայց թուրքական պատվիրակությունը վճռականապես մերժեց այդ պահանջը: Եվ մեծ տերություններն աստիճանաբար այնքան մեղմացրին իրենց պահանջները, որ կարծեք թե հայկական հարցն ընդհանրապես նշանակել էր հայերի համար Թուրքիա-յում մի ազգային օջախ ստեղծել:

Երբ եվրոպական տերությունները թուրքական կառավա-րությունից բավարարություն ստացան անմիջականորեն իրենց հետաքրքրող էական խնդիրներում (նեղուցների, կապիտու-լիացիաների, օսմանյան պարտքի հատուցման, Մոսուլի և այլն), այլ կերպ ասած, երբ հայկական հարցն արդեն կա-տարեց Թուրքիայի վրա ճնշում գործադրելու իր սովորական

¹³ Տե՛ս «Армянский вопрос на Лозанской конференции», Тиф-лис, 1926:

դիրը, հայկական օջախի ստեղծման և հայ գաղթականներին ապաստան տալու հարցը առանձնացվեց քաղաքական մյուս պրոբլեմներից և փոխադրվեց մարդասիրական հանձնաժողովի քննության ոլորտը: Այնտեղ առատորեն «հուզումնալից» ճառեր արտասանվեցին «մարդասիրական բարձր զգացմունքների» մասին, թուրքիայում ազգային փոքրամասնությունների գոյության ու իրավունքների պաշտպանության համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելու մասին և այլն: Առաջ քաշվեց նաև 1920—1922 թթ. քեմալականների շարժարարական քաղաքականության հետևանքով տեղի ունեցած հայկական կոտորածներից փրկված և Կ. Պոլսից, Զմյուռնիայից ու Կիլիկիայից զանգվածաբար արտաքսված փախստականներին թուրքիա վերադառնալու հնարավորությունն ընձեռելու հարցը: Ինչպես հայտնի է ֆրանսիացիների կողմից Կիլիկիայի էվակուացումից հետո, այդ երկրամասի մոտ 80 հազար հայ բնակչությունը ցրվեց սիրիական սահմանի երկայնքով ձեռքավոր բնակավայրերում, անցավ Հալեպ, Բեյրութ և ուրիշ քաղաքներ, բայց չկարողացավ հաստատվել այդ վայրերում, ուստի ձգտում էր վերադառնալ հայրենիք¹⁴: Ահա նաև դրանց մասին էր գնում խոսքը Լոզանում:

Սակայն թուրքական պատվիրակության ղեկավար Իսմեթ փաշան, որը լավ էր ըմբռնել իմպերիալիստական դիվանագիտության իսկական նպատակը, համառորեն բացասական պատասխան էր տալիս այդ «պահանջներին»: Նա անպատկառորեն խորհուրդ էր տալիս հայերի համար «ազգային օջախ» ստեղծել Աֆրիկայում կամ մի այլ տեղ: Թուրքական պատվիրակությունը կտրականապես հրաժարվեց համաձայնվել անգամ ընդհանուր ներումը հայ տարագիրների վրա տարածելու և նրանց թուրքիա վերադարձն արտոնելու առաջարկությունն ընդունելուց: Ահա թե Լոզանի կոնֆերանսում ինչպիսի վախճանի հասցվեց տասնամյակներ շարունակ ծեծվող հայկական հարցը:

Լոզանում իմպերիալիստական դիվանագիտությունը փաս-

տորեն խարդախորեն լքեց, մոռացության տվեց հայկական հարցը, այն փոխարինելով հայ տարագիրներին թուրքիայում մի փոքրիկ «ազգային օջախ» տրամադրելու համեստ պահանջով: Այդ էլ, ինչպես ցույց տվեցին հետագա իրադարձությունները, փաստորեն նույնպես խաբեություն էր: Արևմտյան տերությունները իրականում ոչ մի վճռական ու լուրջ քայլ չարեցին զանազան երկրներում անասելի թշվառության մեջ գտնվող բազմահազար հայ տարագիրների համար մի ապահով բնակավայր ստեղծելու ուղղությամբ: Իրենց հայ ժողովրդի «բարեկամներ» ձեռացնող արևմտյան տերությունները, կարգավորելով իրենց հետաքրքրող խնդիրները, հայ գաղթականության հարցը ձեռքառնեցին կտակեցին Ազգերի լիգայի տնօրինությանը: Ահա այս էր իսկական արդյունքը ազատության ու անկախության այն խոստումների, որ արևմտյան տերությունները շուայել էին հայ ժողովրդին, երբ հարկավոր էր եղել քաջալերել նրան՝ Անտանտի օգտին պատերազմում օգտագործելու համար:

Այս բոլորն, իհարկե, չէին կարող լիովին չբացել սփյուռքահայ աշխատավորների աչքերը՝ տեսնելու համար տարիներ շարունակ իրենց «բարեկամներ» հայտարարող մարդկանց ու կառավարությունների իսկական դեմքը, նրանց ստոր խաբեությունը: Ահա թե ինչու Լոզանում տեղի ունեցած այս իրադարձությունները թելադրեցին տարագիր հայությանը վերջնականապես ու վճռականորեն շրջադարձ կատարել կեղծ բարեկամներից և իր հայացքն ուղղել դեպի համայն հայ աշխատավորների իսկական հայրենիքը՝ Սովետական Հայաստան: Ուստի Լոզանի կոնֆերանսից հետո, առավել հրամայական դարձավ սփյուռքահայերի հայրենադարձության խընդիրը:

Ինչպես տեսանք, սովետական կառավարությունը և կոմունիստական կուսակցությունը, շնայած երկրի քայքայված ու դժվարին վիճակին, սովետական իշխանության առաջին իսկ օրերից անում էին ամեն բան, որպեսզի կարճ ժամանակամիջոցում բուժեին այն խորը վերքերը, որ տարիներ շարունակ առանց սպիանալու կրում էր իր վրա հայ ժողովուր-

¹⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 5—19:

դը: Սովետական կառավարությունը ձգտում էր նաև սերտ հարաբերություններ հաստատել գաղութահայ աշխատավորների հետ և նրանց կապել հայրենիքին:

Ուստի պատահական չէր, որ լքված ու անդեկ զանգվածների հայացքները աներկբայելիորեն ու աննահանջ կերպով լիովին դարձան դեպի Սովետական Հայաստան, որտեղից առկայծում էին լույսի և հույսի իսկական ճառագայթները: Եվ սովետական իրականության մասին որքան ավելի շատ ճշմարտացի ու փաստալից տեղեկություններ էին երևան գալիս արտասահմանյան մամուլում ու հայկական շրջաններում, այնքան ավելի էր աճում սփյուռքահայերի ձգտումը դեպի Սովետական Հայաստան:

Գաղթաշխարհում օրըստօրե ավելի էր զորանում սովետական օրինատացիան, ամենուրեք հմայքի լուսապսակով էր զարգարվում Սովետական Հայաստանը: Ահա թե ինչու սկիզբ է առնում գաղութահայերի անկեղծ ձգտումը «դեպի տուն, դեպի հայրենիք, դեպի Հայաստան»՝ նրանց պատկերավոր խոսքերով ասած՝ դեպի «ավետյաց երկիր»:

ԳԼՈՒԽ ԶՈՐՐՈՐԴ

ՍՓՅՈՒՌՔԱԶԱՅՅՐԻ ՀԱՅՐԵՆԱԳԱՐՁՈՒԹՅՈՒՆԸ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Անկասկած է, որ Հայաստանում սովետական իշխանության գոյությունն ինքնին ձգողական հզոր ուժով դեպի իրեն էր գրավում թուրքական սպանդից փրկված և օտար երկրներում հեծող գաղութահայ աշխատավորներին: Նրանք սևեռուն հայացքներով անընդհատ հետևում էին հարազատ երկրի վերաշինությանը և օրեցօր գոտեպնդիչ լուրեր ստանալով այնտեղ կատարվող արմատական վերափոխությունների մասին, ամեն կերպ ձգտում էին ներգաղթել հայրենիք և վերջնականապես փրկվել օտարության մեջ իրենց բաժին ընկած տառապանքներից:

Երկրում գտնվող արևմտահայ գաղթականների նկատմամբ սովետական կառավարության ցուցաբերած ջերմ ու հոգատար վերաբերմունքը, և անմիջականորեն դրա հետևանքով կարճ ժամանակամիջոցում նրանց համար ստեղծված համեմատաբար բարվոք պայմանները, հրապուրում էին օտար ու անհյուրընկալ հորիզոններում դեզերող հայ աշխատավորներին: Հայրենիքը դեպի իրեն էր գրավում մեծ թվով տարագիրների ոչ միայն Մերձավոր ու Միջին Արևելքի երկրներից, ուր խիստ անբարենպաստ էին տնտեսական պայմանները, այլև նույնիսկ առավել բարվոք համարվող, համեմատաբար բարձր կենսամակարդակ ունեցող գաղթօջախներից՝ Ամերիկայից, Եվրոպայից և այլ վայրերից: Սովետական կառավարությունը հայրենիք ներգաղթելու ցանկությանը մեծ թվով կոլեկտիվ և անհատական խնդրագրեր, նամակներ ու դիմումներ էր ստանում սփյուռքահայ բազմաթիվ տարագիրներից:

Սովետական կառավարության ուղղված այդ ցանկու-
թյուններն արտահայտող դիմումների ու նամակների մեջ իր
վառ արտահայտությունն էր գտնում ցիր ու ցան սփյուռքա-
հայ զանգվածների իսկական կյանքն ու մտայնությունը:
Սկզբնական շրջանում սփյուռքահայ աշխատավորները հա-
ճախ էին դիմում «պոլշեիկյան դեսպանին», Պալացցո կա-
րաքոյ, — այդպես էր կոչվում Կ. Պոլսում գտնվող այն շենքը,
ուր տեղավորված էին սովետական առևտրական հիմնարկ-
ները, — խնդրելով միջնորդել սովետական կառավարության
առջև, իրենց Հայաստան ներգաղթելու հնարավորություն ըն-
ձեռնելու համար: Եվ չնայած գոյություն ունեցող ամեն տե-
սակ դժվարություններին, կոմունիստական կուսակցությունն
ու սովետական կառավարությունը երբեք անտաշբեր չմնա-
ցին սփյուռքահայ աշխատավորների ցանկությունների նկատ-
մամբ, անպատասխան չթողեցին նրանց խնդրանքները: Հան-
րապետության ժողովրդական տնտեսության վերականգնման
վիթխարի ջանքեր ու հսկայական զոհողությունների պահանջող
աշխատանքների հետ միաժամանակ, երկրում կուտակված
գաղթականությունը բնակեցնելու, հողով և այլ միջոցներով
բավարարելուն զուգընթաց, իր գոյության առաջին իսկ օրե-
րից սովետական կառավարությունը զգալի գործունեություն
ծավալեց նաև սփյուռքահայ աշխատավորներին հայրենիք
տեղափոխելու ուղղությամբ:

Ընդառաջելով տարագիր հայության հայրենաբաղձ ցան-
կություններին, արդեն 1921 թ. վերջերից սովետական կա-
ռավարությունը ձեռնամուխ եղավ սփյուռքահայ աշխատա-
վորների հայրենադարձության կազմակերպման դժվարին
գործին:

Սկզբնական շրջանում Հայաստանի կոմունիստական կու-
սակցության Կենտկոմում և ժողկոմխորհում հատկապես շատ
դիմումներ էին ստացվում Միջագետքում (Իրաք) գտնվող հայ
տաքազիրներից: Նրանք անասելի դժնդակ պայմանների մեջ
էին և իրենց փրկության միակ հույսը կապում էին Սովետա-
կան Հայաստանի հետ: Նրանք հիմնականում վասպուրական-
ցիներ էին, որոնք թուրքերի ուխտադրուժ հարձակման հետե-

վանքով 1918 թ. վաղ գարնանը զանգվածաբար փախչում
էին դեպի Անդրկովկաս, սակայն Վան-Իզդիր ճանապարհը
թուրքական բանակի կողմից փակվելուց հետո, ստիպված
եղան բազմաթիվ զրկանքներ ու զոհեր կրելով, երկար ուղի
անցնել դեպի Պարսկաստան, հույս ունենալով այնտեղից
տեղափոխվել Անդրկովկաս: Սակայն նրանց այդ մտադրու-
թյունը ևս չհաջողվեց իրականացնել, քանի որ թուրքական
զորքերը ավելի վաղ մտան Պարսկաստան և կտրեցին Անդր-
կովկասի նաև այդ ճանապարհը: Վասպուրականցիները և
նրանց միացած խոյի, Սալմաստի, Ուրմիայի հայերն ու նես-
տորական ասորիները ստիպված շարժվում են դեպի Հարա-
վային Պարսկաստան: 1918 թ. հունիսի վերջերին Պարսկաս-
տանում գտնվող անգլիական զորքերի հրամանատարությու-
նը, գաղթականությանն իրեն ծառայեցնելու նպատակով,
նրանց վերցնում է իր «հովանավորության» տակ: Տարերայ-
նորեն նահանջող գաղթականները օգոստոսի սկզբներին
հասնում են Համադան, բայց անգլիական իշխանությունները
նրանց արգելում են մտնել քաղաք¹: Անգլիացիները համոզում
են գաղթականներին, թե ստեղծված պայմաններում ամենա-
հարմար էլքն այն է, որ նրանք տեղավորվեն Միջագետքում,
միաժամանակ մնան այնտեղ, խոստանալով հետագայում
նրանց տեղափոխել Հայաստան²:

Միջագետքի սահմաններից ներս անցնելուց հետո անգլիա-
ցիք անմիջապես ղինաթափում են գաղթականությանը պաշտ-
պանող հայ-ասորական մոտ 7 հազարանոց զինված շոկա-
տը, բացի նրանցից, ովքեր համաձայնվում են ընդգրկվել
անգլիական զորքերի կազմում: Այդ ձևով ստեղծվում են մի
քանի հայ-ասորական գումարտակներ և ուղարկվում Ջեն-
ջան՝ օգնելու թուրքերի դեմ կովող անգլիական զորքերին³:
Գաղթականությունը կարճ ժամանակամիջոցում համոզվում
է, որ անգլիական գաղութարարները ծրագրել են ստեղծել

¹ Տե՛ս Հայկ. ՍՍՀ 2249 Ա, ֆ. 114, գ. 267, ք. 119—121.

² Տե՛ս «Նորհրդային Հայաստան», 25 սեպտեմբերի, 1924 թ., № 219.

³ Տե՛ս Հայկ. ՍՍՀ 499 Ա, ֆ. 68/200, գ. 125, ք. 9 և 16:

հայերից և ասորիներից բաղկացած զինված ուժեր և նրանց միջոցով իրենց դիրքերն ամրապնդել արաբական աշխարհում, միաժամանակ անձեռնմխելի պահել Հարավային Պարսկաստանի և Միջագետքի նավթահանքերը: Շուտով հայ գաղթականությունը ծառանում է այդ ստոր խաբուսթյան դեմ և պահանջում իրագործել Հայաստան փոխադրելու մասին իրեն տրված խոստումները: Անգլիական իշխանությունները, զգալով գաղթականության բուռն ըմբոստացումը, սկսում են ձեռքակալել ու պատիժների ենթարկել առավել աչքի ընկնող տարրերին, իսկ հիմնական զանգվածին զինված պահակախմբերի հսկողության տակ փոխադրում են Բաղդադի շրջանը, որտեղ նրանց տեղավորում են վրանների տակ, հատուկ ճամբարներում (քեմբերում):

Տարագիրների մեծ մասը (մոտ 15 հազար մարդ) տեղավորված էր Բաղդադից ոչ հեռու գտնվող Բաքուբա ավանում⁴: Ճամբարում ապրողներին անգլիացիները բաց էին թողնում աննշան քանակությամբ անորակ մթերքներ, որով մի կերպ իրենց գոյությունն էին քարշ տալիս գաղթականները: Գաղթականների բնակատեղիները շրջապատված էին փշալարերով և գտնվում էին հնդիկ զինվորների խիստ հսկողության տակ: Հայերին արգելվում էր դուրս գալ ճամբարից և աշխատանք որոնել Բաղդադում կամ մի այլ վայրում: Գաղտնի Բաղդադ կամ Բասրա աշխատանքի մեկնողներին անգլիացիները հետապնդում էին, գտնում և ենթարկում բանտարկության կամ ուղարկում տաժանակիր աշխատանքի: Իսկ եթե չէր հաջողվում նրանց բռնել, այդ դեպքում փախածի ընտանիքին էին վտարում ճամբարից դեպի անապատ: Տարածված սովն ու համաճարակ հիվանդությունները օրական տասնյակ զոհեր էին խլում անապատի կիզիչ արևի տակ տառապող վրանաբնակներին:

Գաղթականներին տրվող շնչին նպաստի դիմաց տղամարդկանց ձրի աշխատացնում էին երկաթուղու շինարարության վրա, ուր նրանք ենթակա էին անգլիական սպաների

սանձարձակ կամայականություններին: Անգլիական իշխանությունները գաղթականության մի մասին 1920 թ. աշնանը փոխադրեցին Բասրայի նահանգի Նահրէլումար գետափնյա ավանը՝ տեղի նավթահանքերում և ստրատեգիական նշանակություն ունեցող շինարարական օբյեկտներում օգտագործելու նպատակով, ուր ավելի վատթարացավ առանց այն էլ թշվառության մեջ գտնվող հայ տարագիրների վիճակը: Անգլիական գաղութարարներն արաբական աշխարհում իրենց դիրքերն ամրապնդելու և կայուն հենարան ստեղծելու համար ձգտում էին քրիստոնյա հայերին և ասորիներին կապել հողի հետ, հակադրություն ստեղծել վերջիններիս և արաբների միջև, մյուս կողմից գեներ ընդունակներին օգտագործել իրենց զինված ուժերի կազմում: Այս առիթով ու քեմալական Թուրքիայի հրահրումների հետևանքով, տեղական արաբները մի քանի անգամ զինված հարձակումներ գործեցին հայ գաղթականների ճամբարների վրա և բավականին մեծ վնասներ պատճառեցին նրանց:

Այսպիսի դժվարին իրադրությունից ելք գտնելու համար, Միջագետքի հայությունը փորձում էր հարաբերությունների մեջ մտնել Բաղդադի, Պոլսի և Երևանի բարեգործական ու ազգային հիմնարկությունների հետ: 1919 թ. ամռանը նրանց հաջողվում է կապվել էջմիածնի հետ և տեղեկացնել իրենց աննախանձելի կացության մասին: 1919 թ. Տուլիսի 9-ին Ամենայն Հայոց կաթողիկոսի դիվանը հայտնում է դաշնակցական կառավարությանը, որ Բաղդադի հայոց առաջնորդական փոխանորդի ապրիլի 27-ի գրության համաձայն «Միջագետքում այժմ գտնվում են 25 հազար հայ փախստականներ, որոնք ապրում են շատ դառն պայմանների մեջ և եթե նոցա դեպի իրենց հայրենիք գաղթը շուտով չկատարվի, հայակեր Միջագետքը կուլ պիտի տա այդ մնացյալ փոքր հայությանը ևս»⁵: Ներկայացնելով գաղթականության թշվառ վիճակը, կաթողիկոսի դիվանն առաջարկում էր դաշնակցական կառավարությանը՝ արագացնել նրանց ներգաղթի կազ-

⁴ Տե՛ս Հայկ. ՍՍՀ 224ՊԱ, ֆ. 114, գ. 267, թ. 119—121:

⁵ Հայկ. ՍՍՀ 4ՊՊԱ, ֆ. 68/200, գ. 284, թ. 107:

մակերպումը: 1919 թ. հուլիսի 17-ին դաշնակցական կառավարութիւնը պատասխանում է, որ «Ներգաղթին աւայժմ հնարավոր չէ, վասն որոյ կառավարութիւնն ուղարկում է Բաղդադ իր ներկայացուցիչը՝ նրանց դրութիւնը պարզելու»⁶: Տեղի տալով պատլամենտի արեւմտահայ անդամների պահանջներին, դաշնակցական կառավարութիւնը որոշում է արեւմտահայ հասարակական գործիչ Արսեն Կիտուրին ուղարկել «Միջագետք՝ հոն գտնվող տառապակոծ գաղթականութեանը Հայաստան փոխադրելու նպատակով»⁷: Սակայն հենց իրեն՝ Արսեն Կիտուրի հայտարարութեամբ, դաշնակցական կառավարութիւնը գաղթականութեանը խաբելու համար միայն պատվամենտում անվանապես 3 միլիոն ռուբլի ներգաղթին հատկացնելու որոշում կայացրեց: Իրականում ոչ մի կոպեկ էլ չտրամադրվեց այդ գործին, և, ինչպես ճիշտ կերպով հետագայում գրում է Արսեն Կիտուրը, դա կատարվեց «տաճկահայ պատգամավորներու, հետեւաբար մեր ետեւը կանգնած 400.000 գաղթականութեանը քնացնելու» և ոչ թե իսկապես միջագետքահայ տարագիրներին օգնելու համար⁸:

Օգնության վերաբերյալ գաղթականութեան օրհասական կանչերին անտարբերութեամբ վերաբերվեցին նաև Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանը և ազգային-բարեգործական կազմակերպութիւնները: Իսկ Բաղդադում ստեղծված գաղթականական կոմիտեն անամթաբար յուրացնում էր փախստականների ու որբերի անունով Հնդկաստանում, Ճավայում և այլուր հանգանակված գումարները:

Եվ այսպես, անխուսափելի կորստյան ճիրաններում գալարվում էր միջագետքահայ գաղթականութիւնը, երբ նրան հասավ Հայաստանում սովետական կարգերի հաստատման լուրը: Այդ լուրը ցնծութեամբ ընդունեցին Միջագետքի հայ տարագիրները և վերականգնացավ հայրենիք վերադառնալու նրանց հույսը: Շուտով նրանք կապվեցին Պարսկաստա-

⁶ Նույն տեղում, թ. 108:

⁷ «Երևան», հոբոյա թերթ, Փարիզ, 28 ապրիլի, 1929 թ., № 498:

⁸ Տե՛ս նույն տեղում:

նում ՌՍՖՍՀ լիազոր ներկայացուցչութեան, ապա նաև Սովետական Հայաստանի հետ: Հայաստանի կոմունիստական կուսակցութեան Կենտկոմը և սովետական կառավարութիւնը, ծանոթանալով Միջագետքի հայութեան ծանր կացութեան հետ, անմիջապես միջոցներ ձեռնարկեցին նրանց վիճակը բարելավելու, ապա նաև հայրենիք վերադարձնելու ուղղութեամբ:

1921 թ. հուլիսի 2-ին Հայաստանի կոմունիստական կուսակցութեան Կենտկոմը կոչով դիմեց Համադանի, Քիրմանշահի, Մոսուլի և Նահրէլիումարի հայ գաղթականական զանգվածներին: Կոչում նշվում էր, որ «ՀԿԿ-ը, ամենամեծ համակրանքով և նույնքան խորունկ վշտով, հետևում էր ձեր գերմարդկային փողոթնային, անասելի տառապանքներին, որ կտանիք ամբողջ երեք երկար տարիներ ի վեր»:

Հայաստանի կոմունիստական կուսակցութիւնը, մինչև այսօր ամբողջապես կտրված ըլլալով ձեզմե՝ չըսավ և չէր կարող ըսել իր պատմական խոսքը՝ մինչև այն ատեն, երբ տակավին Հայաստանի և հայ աշխատավորութեան բախտը իրենց ձեռք բռնած ունեին ազգային-բուրժուական կուսակցութիւնները:

...Ձեռք առնելով Հայաստանի իշխանութիւնը—հայ գյուղացիութեան և աշխատավոր ժողովրդի կամքով, այժմ մեր առաջին աշխատանքների հետ միասին ձեռնարկում ենք նաև ձեր տառապանքներուն այլևս միանգամայն ընդմիշտ վերջ տալու՝ անխուսափելի և անհրաժեշտ պահանջին»⁹:

Հայաստանի կոմկուսի Կենտկոմը, գնահատելով ոչ հեռավոր անցյալի դեպքերը և հայ ժողովրդին հասած աղետները, ոչ միայն Միջագետքի տարագիրներին, այլև համայն աշխարհով մեկ ցրված հայութեանը կոչ էր անում վերադառնալ հայրենիք և նվիրվել շինարար աշխատանքի:

«Կոչ անելով վերադառնալ դեպի հայրենի երկիրը, ի խընդիր անոր շինարարութեան, ի խնդիր ձեր աստանդական կյան-

⁹ Հայկ. ՍՍՀ ՀՀԿՊԱ, ֆ. 4/114, գ. 89, թ. 38—39: Գաղթականական զանգվածներին ավելի հսկանալի լինելու նպատակով կոչը գրված է արեւմտահայերենով:

քին, Հայաստանի կոմունիստական կուսակցությունը և խորհրդարային իշխանությունը պիտի ի գործ դնեն իրենց բոլոր հնարավոր միջոցները, ապաստան տալու, վերաբնակեցնելու համար ձեզի, գյուղերու թե քաղաքներու մեջ, պիտի տան իրենց բոլոր կարելի և անկարելի միջոցները, անելով իրենց լավագույն ճիգը՝ ընդառաջելու համար ձեր կարիքներին, մինչև որ դուք ևս ձեր հերթին կարողանաք նվիրվել մեզ երկրի վերաշինության սրբազան գործին:

Հայաստանի կոմունիստական կուսակցությունը, ղրկելով իր ներկա կոչ-դիմումը, կգիտակցե իր անելիք աշխատանքի մեծության վրա, բայց ան կգիտակցե նաև իր պարտքի, պարտականության վրա, որ անհրաժեշտորեն կենդակայանա իրեն և կդառնա հերթական հարց»¹⁰:

Միջազգետքի հայ գաղթականության վիճակը օրրատօրե ավելի էր մտահոգիչ դառնում: Դեռևս 1921 թ. մարտին անգլիական իշխանությունները հայտարարել էին, որ ապրիլից գաղթականներին այլևս նյութական օգնություն ցույց չի տրվելու, այլ նրանք պետք է կապվեն հողի հետ, զբաղվեն հողագործությամբ, միջոցներ վաստակեն, որով իբր թե հնարավորություն կունենային վերադառնալու հայրենիք: Հողին կապվելով, գաղթականները պարտավոր էին 4—5 տարի դարձյալ մնալ այնտեղ: Բայց իրականում ոչ միայն 4—5, այլև 14—15 տարում էլ հնարավոր չէր այնքան գումար կուտակել, որ նրանք կարողանային սեփական միջոցներով հայրենիք վերադառնալ: Հայ գաղթականները ճիշտ են կուսումնական գաղութարարների իսկական նպատակները, ուստի կտրականապես հրաժարվում են ցրվել Միջազգետքի անապատներում և կապվել հողին:

Այն ժամանակ Միջազգետքում անգլիական բարձրագույն կոմիսար Ռ. Զ. Քոքսի՝ գաղութների մինիստր Ուինստոն Չերչիլին ներկայացրած մի զեկուցագրից երևում է, որ 1921 թ. ամռանը որոշված է եղել Միջազգետքում ցրել հայ գաղթականությանը՝ ամեն մի ընտանիքին տալով 65 ուրլի, իսկ ամեն

մի անձին՝ 13 ուրլի 14 օրվա օրապահիկ: Սակայն այդ ծրագիրը, Քոքսի ասելով, չհաջողվեց ամբողջությամբ գործադրել, որովհետև գաղթականները մերժեցին, թե օրապահիկն ստանալ և թե ճամբարների վրանները քանդել: Իսկ երբ անգլիական իշխանությունները հրավիրում են արաբ ոստիկաններ և փորձում նրանց օգնությամբ քանդել վրանները, նահելյոմարի քեմբերի ժողովուրդը միահամուռ կերպով դուրս է գալիս ու քարկոծում նրանց:

Այնուհետև զգալով, որ հայ տարագիրները բոլորովին էլ մտադրություն չունեն թողնելու ճամբարը, անգլիացիները որոշում են նրանց ժամանակավորապես օգտագործել Աբադանի նավթահանքերում, բայց այդ պահանջը ևս հայերի կողմից մերժվում է: Այն ժամանակ անգլիացիները դիմում են մի այլ հրեշավոր միջոցի. վրանները վաճառում են տեղական արաբ վաշխառուներին և հայտարարում, որ այլևս 14 օրվա օրապահիկը նույնպես չի տրվելու: Կոմիսար Քոքսը, այս բոլորը նկարագրելով գաղութների մինիստրին, զգուշացնում է, որ անգամ հիվանդների պատճառով չի կարելի հետաձգել վրանների քանդումը¹¹:

1921 թ. ամռանը Միջազգետքի գաղթականության ներկայացուցիչները բանակցությունների մեջ են մտնում սովետական Հայաստանի կառավարության Թավրիզում գտնվող գաղթականական գործերի լիազոր Գր. Վարդանյանի, ինչպես նաև Երևան մեկնած իրենց պատվիրակների միջոցով ՀՍԽՀ ժողկոմխորհի նախագահ Ալ. Մյանսիկյանի հետ և խնդրում շուտափույթ կերպով գաղթականությանը փոխադրել Հայաստան¹²: 1921 թ. սեպտեմբերի 4-ին Միջազգետքի հայ գաղթականության ներկայացուցիչ Ազատ Սիմոնյանը սովետական կառավարությանը ներկայացնելով նրանց ծանր վիճակը, Թեհրանից գրում էր. «Գաղթականությանը իր անտանելի դրությունից դուրս բերելու համար, պարտք եմ համարում ձեր ուշադրությանը հանձնել տեղի ունեցած հետևյալ պարագա-

¹¹ Տե՛ս նույն տեղում, թ. 43—48:
¹² Տե՛ս նույն տեղում, գ. 267, թ. 122:

ներք. հուլիսի 20-ից անգլիացիների կողմից դադարեցված են մեր գաղթականութանը տրվող մթերքները, ժողովուրդը մատնելով աներևակայելի անտեսական ճգնաժամի: Սրանով ալ չբավականանալով, նրանք, գաղթականության հավաքականությունը միանգամայն անկարելի դարձնելու համար, վերցրել են քեմքերի ջրամբարները և ջրի խողովակները: Փորձել են վերցնել նաև վրանները, բայց կին ու երեխաների դառնագին խնդրանքի վրա, մի քանի օրով հետաձգվել է այդ:

Մեր գաղթականությունը ցրվելու և միևնույն անգամ նրանց Միջագետքից հեռացումը անկարելի դարձնելու նպատակով անգլիացիները հայ գաղթականության տված են անձագլուխ 13 ռուբլի միայն, մինչդեռ ասորի գաղթականներին՝ յուրաքանչյուրին 122-ական ռուբլի:

Ահա անգլիական կառավարության մտայնությունը և նրանց ճիգերը. մեր 12 հազարանոց գաղթականությունը, որ 7—8 տարիների բազմատեսակ տառապանքներին և տանջանքներին դիմադրված է, ներկայիս հետին մտքերով ձգտում են կապել իրենց համար անհարազատ և օտար հողին՝ խեղդելով նրանց մեջ հայրենիք վերադառնալու իղեալը:

Բնաջնջումի նախօրյակին այս բազմաշարշար գաղթականությունը կսիրե հուսալ իր փրկությունը միայն իր հարազատ հայրենիքից: Այժմ լիահույս ենք, որ Խորհրդային Հայաստանի կառավարությունը ոչ մի զոհողության և դժվարության առաջ կանգ չի առնի փրկելու համար գաղթականության այդ բեկորները, տեղափոխելով Բասրայից դեպի հարազատ հայրենիք, որտեղ միայն հնարավորություն պիտի ունենան լծվելու խաղաղ և շինարար աշխատանքի»¹³:

Սովետական կառավարությունը, ստանալով այս տեղեկությունները, 1921 թ. հոկտեմբերի 7-ին հատուկ նոտայով դիմում է Անգլիայի արտաքին գործերի մինիստրությանը և առաջարկում միջոցներ ձեռք առնել գաղթականությանը Հայաստան փոխադրելու համար: ՉՍԽՀ արտգործօրդկոմ Ասք. Մուսվյանի ստորագրությամբ հղված այդ նոտայում ասված

էր. «Ստույգ տեղեկություններ առնելով Բաղդադի հայերից՝ Միջագետքի անգլիական իշխանություններից կախում ունեցող 14 հազար տարագիր գաղթականության վատթար վիճակի մասին, որը հետևանք է գաղթականությանը տրվող պետական նպաստի դադարեցմանը և նրա բուն տեղահանմանը սկսած օգոստոսի 1-ից, սորանով պատիվ ունեմ դիմելու ձեզ Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության կառավարության անունից հետևյալով:

Օգնության գործի դադարեցումը Միջագետքի անգլիական իշխանությունների կողմից փաստորեն համազոր է գաղթականությանը մահվան դատապարտելուն: Այն տարիքային ու աղետաբեր գաղթը, որին ճարահատյալ դիմել են այսօր հայ գաղթականները Բասրայի անբարեհամբույր շրջավայրերից, որտեղ նրանց ներփակել են անգլիական տեղական իշխանությունները, մղում են նրանց սովի, համաճարակ հիվանդությունների և մահվան գիրկը: Եվ հագիվ թե այդ 14 հազար տառապող ժողովրդից ազատվեն մի քանի խղճուկ բեկորներ»¹⁴:

Ներկայացնելով հայ տարագիրների նկատմամբ անգլիական գաղութարարների վարած քաղաքականության հետևանքով առաջացած ողբերգական ծանր վիճակը, Սովետական Հայաստանի արտաքին գործերի ժողովրդական կոմիսարն առաջարկում էր Անգլիայի արտաքին գործերի մինիստրին՝ համապատասխան կարգադրություն անել Միջագետքի անգլիական իշխանություններին, որպեսզի դադարեցվեն գաղթականությունը միջագետքում ցրելու և նրանց համար օտար ու անհարազատ հողին կապելու ուղղությամբ կատարվող ձեռնարկումները, ինչպես նաև շարունակվի նրանց օգնության կազմակերպումը:

«Այդ գործը, — այնուհետև ասված էր նոտայում, — կարող է կատարել և պարտական է անել Բրիտանիայի ներկա կառավարությունը, որը մինչև այսօր կապված է եղել վերոհիշ-

¹³ Նույն տեղում, գ. 5, թ. 61:

¹⁴ Հայկ. ՍՍՀ 2249Ա, ֆ. 114, գ. 97, թ. 7: Տե՛ս նաև «Խորհրդային Հայաստան», 16 հոկտեմբերի, 1921 թ., № 197:

յալ հայ գաղթականական զանգվածի հետ: Իսկ եթե Բրիտանիայի ներկա կառավարությունը հրաժարվի ստանձնել իր վրա այդ դժբախտ գաղթականների հոգացողությունը, կիսնդրեի դեթ կատարել նրանց վերջին իղձը և միջոցներ ձեռք առնել նրանց տեղափոխելու Պոլսի վրայով դեպի Բաթում, որպեսզի Հայաստանի կառավարությունը հնարավորություն ունենա տեղավորել նրանց իր սահմաններում»¹⁵:

Սովետական կառավարության ձեռք առած վճարական միջոցների և հասարակական կարծիքի ճնշման շնորհիվ անգլիական իշխանություններն ստիպված եղան համաձայնվել գաղթականներին իրենց նավերով հասցնել Բաթում: Նրանց ընդունելու և տեղավորելու համար սովետական կառավարությունը ձեռք առավ արտակարգ միջոցներ: 1921 թ. դեկտեմբերի 13-ին ՀՍԽՀ ժողկոմխորհի նախագահությունը քննարկում է Միջագետքից Հայաստան ժամանող 3000 գաղթականներին ընդունելու հարցը և որոշում հողագործության ժողովրդական կոմիսար Արամայիս Երզնկյանին հանձնարարել նրանց բնակեցնել հարմար շրջաններում, ապահովել հողով և ցուլց տալ նյութական լայն աջակցություն¹⁶: 1921 թ. դեկտեմբերի 20-ին Վրաստանում ՀՍԽՀ դիվանագիտական ներկայացուցիչ Հ. Սուրխաթյանը Թիֆլիսից հեռագրում է ժողկոմխորհին, որ արդեն Միջագետքից Բաթում է հասել շոգենավը՝ մոտ 3000 գաղթականներով, Մեծ Բրիտանիայի ներկայացուցիչի ուղեկցությամբ¹⁷: Այդ խմբում ներգաղթածների մեծ մասը տեղավորվում է Ալեքսանդրապոլի, Բասարզեչարի, Ղամարլուի շրջաններում¹⁸:

Նկատի առնելով Հայաստանի այն ժամանակվա տնտեսական ծանր պայմանները, բնակարանների ու կենսամթերքների պակասը, պետք է ասել, որ սովետական կառավարության այդ քայլը գաղութահայ աշխատավորության նկատմամբ

¹⁵ Նույն տեղում:

¹⁶ Հայկ. ՍՍՀ ՀՀԿՊԱ, ֆ. 40/113, ց. 3, գ. 25, ք. 56:

¹⁷ Տե՛ս նույն տեղում, ֆ. 4/114, գ. 96, ք. 654:

¹⁸ Տե՛ս նույն տեղում, ք. 641:

ցուցաբերած վառ հոգատարության մի ակտ էր, որը կատարվում էր Միջագետքի անապատներում անխուսափելի ոչընչացման դատապարտված ժողովրդի կյանքը փրկելու համար:

Հակառակ նախօրոք մշակված համաձայնությանը, որպեսզի սովետական կառավարության նկատմամբ դժգոհություն առաջացնեն ներգաղթողների մեջ, անգլիական իշխանությունները որոշում են Միջագետքում մնացած գաղթականներին նույնպես Հայաստան փոխադրել հենց ձմեռվա ամիսների ընթացքում, երբ էլ ավելի դժվար կլինեի հոգալ նրանց բազմատեսակ կարիքները:

1921 թ. դեկտեմբերի 27-ին ՀՍԽՀ ժողկոմխորհը կրկին քննարկում է միջագետքահայերի նոր խմբերի ընդունելության հարցը և որոշում է ձմեռվա ամիսներին միանգամայն անհնարին համարել գաղթականներին Հայաստան ընդունելը, հավանություն տալ արտգործժողկոմատի ձեռնարկումներին՝ առնվազն մինչև 1922 թ. գարունը ներգաղթ չկատարելու ուղղությամբ¹⁹:

Ժողկոմխորհը միաժամանակ խնդրում է Սովետական Ռուսաստանի կառավարությանը, որպեսզի նա Թեհրանի իր դիվանագիտական ներկայացուցչության միջոցով գաղթականներին ցուլց տա նյութական օգնություն, մինչև որ գարնանը նրանք փոխադրվեն Հայաստան²⁰: Նույն օրը արտգործժողկոմ Ասք. Մուսվյանը նոտայով դիմում է Անգլիայի արտաքին գործերի մինիստր Քերզոնին: Այդ նոտայում նշվում էր, որ ՀՍԽՀ կառավարությունն իր նախորդ դիմումով, «հանուն 14 հազար միջագետքահայ գաղթականության կյանքի փրկության, որոնք անելանելի դրության մեջ էին ընկել Բրիտանական իշխանությունների կողմից նրանց տրվող նպաստի հանկարծակի դադարեցման (հետևանքով), խնդրել էր Բրիտանական կառավարությանը այդ գաղթականությանը նավերով փոխադրել Բաթում, այնտեղից նրանց Հայաստան տեղափոխելու համար: Իր երկրորդ գրության մեջ ՀՍԽՀ կառա-

¹⁹ Տե՛ս նույն տեղում, ֆ. 40/113, ց. 3, գ. 25, ք. 60:

²⁰ Տե՛ս նույն տեղում:

վարությունը համաձայնվելով նրանց առաջին խՊԲԻ՝ 3000 հոգու ընդունմանը, որովհետև նրանք արդեն գտնվում էին ճանապարհին, իր ժամանակին, սակայն, նախազգուշացրեց Բրիտանական կառավարությանն այն մասին, որ տրանսպորտի բացակայությունը և ձմեռային եղանակները, բնակարանների սղությունը՝ մեծ թվով գաղթականության համար, հարկադրում են խնդրել դադարեցնելու գաղթականության փոխադրությունը մինչև 1922 թ. ապրիլը և այնուհետև տեղափոխել ավելի փոքր խմբերով, հազար հոգուց ոչ ավելի ամեն խմբում, ամսական մեկ անգամ: Բայց շՍԽՀ կառավարությանը հայտնի է դարձել, որ արդեն սպասվում է 7000 հոգու մուտքը Բաթում, մի բան, որն անհնարին է ընդունել ներկայումս²¹: Արտգործոցնախարարը հայտնեց յայ մասին, կրկին առաջարկում է Բրիտանական կառավարությանը դադարեցնել գաղթականների տեղափոխությունը և շարունակել նրանց նյութական օգնություն ցույց տալը մինչև 1922 թ. ապրիլ ամիսը:

Հաշվի շառնելով այդ դժվարությունները, անգլիական իշխանությունները հապճեպորեն իրագործում են իրենց որոշումը²², 1922 թ. հունվարի 2-ին շՍԽՀ արտգործոցնախարար Կ. Պոլսում բրիտանական գերագույն կոմիսարին հղում է մի հուշագիր, ուր նշվում էր, որ մինչև 1922 թ. ապրիլը Սովետական Հայաստանի կառավարությունն ի վիճակի չէ միջազգետքյան հայերին երկիր ընդունել բնակարանների և այլ անհրաժեշտ միջոցների պակասության պատճառով: Չնայած մի շարք նախազգուշացումներին և նյութական հնարավորությունների գրեթե լիակատար բացակայությանը, այնուամենայնիվ, նա կընդունի ժամանող գաղթականությանը, բայց դրանից առաջացող բոլոր բարդությունների ամբողջ պատասխանատվությունն ընկնում է անգլիական կառավարության վրա²³:

²¹ Նույն տեղում, ֆ. 4/114, գ. 51, թ. 113:

²² «Նորհրդային Հայաստան», 25 սեպտեմբերի, 1924 թ., № 191:

²³ Տե՛ս Հայկ. ՍՍՀ 224ՊԱ, ֆ. 4/114, գ. 96, թ. 748:

1922 թ. հունվարի 10-ին Բաթում է ժամանում մոտ 3000 մարդուց բաղկացած երկրորդ քարավանը, որին ընդունելու և տեղավորելու համար, սովետական կառավարությունը ձեռք առավ արտակարգ միջոցներ: Այդ խմբում ներգաղթածները ժամանակավորապես տեղավորվում են Ղամարլուի շրջանում գտնվող զորանոցներում, որպեսզի գարնանը տեղափոխվեն վեղու շրջանը²⁴:

Չնայած բազմատեսակ կարիքներին, բոլոր ներգաղթածներն էլ գոհ և ուրախ էին, որ երկարատև դեգերումներից ու անլուր զրկանքներից հետո, բախտ ունեցան իրենց օջախները վերստեղծելու հայրենի հողի վրա: Արևելքի երկրներում Միջազգետքի և Պարսկաստանի հայ գաղթականության ցրումը կանխելու և նրան հայրենիք վերադարձնելու դործում լուրջ օգնություն ցույց տվեց Սովետական Ռուսաստանի կառավարությունը Թեհրանի իր դիվանագիտական ներկայացուցչության միջոցով²⁵:

Միջազգետքի հայ գաղթականները առաջիններից մեկն էին սփյուռքահայ բազմահազար այն աշխատավորներից, որոնք կարողացան վերադառնալ հայության նոր, շահագործումից ազատագրված հայրենիքը, ուր տիրում էր սոցիալական ու քաղաքական իսկական իրավահավասարություն և տարբեր ազգերի եղբայրական համերաշխություն: Վեղիում տեղավորված միջազգետքահայ գաղթականներին 1922 թ. ամռանն այցելած մի ականատես գրում էր, թե «գուցե տարօրինակ երևույթ նկատվի այն համերաշխ կենցաղը, որ ներկայիս գոյություն ունի անհաշտելի նկատված այդ երկու տարրերի՝ տեղական թուրքերի (այսինքն՝ ադրբեջանցիների—Ղ. Մ.) և վերաբնակ հայ գաղթականների միջև, բայց և այնպես ներկա մոմենտում դա փաստ է, մի կարկառուն փաստ, որ գալիս է միանգամ ևս գնահատելի դարձնելու՝ որ միայն խորհրդային իշխանությունը ընդունակ է հաշտեցնելու տարբեր լեզուների ու կրոնների աշխատավորներին»²⁶:

²⁴ Տե՛ս նույն տեղում, գ. 5, թ. 78:

²⁵ Տե՛ս նույն տեղում, գ. 16, թ. 89:

²⁶ «Նորհրդային Հայաստան», 5 սեպտեմբերի, 1922 թ., № 200:

Ներգաղթողներին, ինչպես ճանապարհին, այնպես էլ երկրում տեղավորելուց հետո, սովետական կառավարության և տեղական իշխանությունների ու աշխատավորների կողմից, ցույց էր տրվում լայն օգնություն: Նրանք օգտվում էին առանց մաքսերի ու տուրքերի, մեծ շափերի հասնող բեռների ձրի փոխադրության իրավունքից, ստանում էին ձրի բժշկական օգնություն և այլն²⁷: Այնտեղ, ուր նրանք մշտական բնակություն էին հաստատում, տրվում էր անհրաժեշտ շափով հող, լծկաններ, գյուղատնտեսական գործիքներ, սերմացու, բնակարաններ, վարկեր, շինանյութեր և այլ միջոցներ:

Միջագետքում մնացած հայ գաղթականության մեծ մասը Սովետական Հայաստան վերադարձավ հաջորդ տարիներին և նույնպես հնարավորություն ստացավ կարճ ժամանակամիջոցում թոթափելու իր անցած տառապալից ճանապարհների փոշին ու կապվելու երկրի վերաշինության գործին²⁸:

Այսպիսով, առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Վասպուրականից, Սալմաստից, Ուրմիայից, Խոյից և այլ վայրերից Միջագետքում կուտակված հայ գաղթականության մեծ մասը՝ ավելի քան 9000 մարդ, Բաթումով և Ջուզֆայով Սովետական Հայաստան ներգաղթեց 1921 թ. վերջերին և 1922 թ. սկզբներին: Հայրենադարձները տեղավորվեցին հիմնականում Վեդու, Բասարգեշարի, Ալեքսանդրապոլի, Ղամարլուի շրջաններում և հնարավորություն ստացան նոր կյանք կերտելու հայրենի հողի վրա²⁹:

* * *

Երբ Միջագետքի տարագիրների առաջին քարավանների հայրենադարձության լուրը հասավ հայկական գաղթօջախները, էլ ավելի բուռն դարձավ Սովետական Հայաստան ներգաղթելու սփյուռքահայ աշխատավորների ձգտումը:

Սկսվեց դիմումների ու խնդրագրերի մի նոր հոսանք,

²⁷ Տե՛ս Հայկ. ՍՍՀ 224ՊԱ, ֆ. 40/113, ց. 3, գ. 374, թ. 18:

²⁸ Տե՛ս նույն տեղում, գ. գ. 297, 377 և այլն:

²⁹ Տե՛ս «Խորհրդային Հայաստան—1920—1925», ժողովածու, էջ 69:

որով արտահայտվում էր տարագիր հայերի ներգաղթելու բուռն ցանկությունը: Ահա դրանցից մեկը. 1923 թ. մարտի 20-ին Ալեքսանդրիայից մի խումբ տարագիրներ գրում էին. «Եգիպտահայ գաղութի մեջ ապրող հայրենակիցներեն շատեր կփափագին փոխադրվի Խորհրդային Հայաստան իրենց ամբողջ ունեցվածքով, ճանձրացած ըլլալով օտարներու ծառայելի, անոնց գյուղերը և քաղաքները շենացնելի, մանավանդ վերջերս հայ թերթերու մեջ երևցած կարգ մը գրությունները Խորհրդային Հայաստանի մասին ավելի մեծ զարկ մի տվին այս մտածման»³⁰:

Այս տրամադրություններն ու ցանկությունները օրըստօրե ուժեղանում և լայն արձագանք էին գտնում մոտիկ և հեռու հայկական բոլոր գաղթօջախներում՝ Սիրիայում, Եգիպտոսում, Հունաստանում, Բուլղարիայում, Ռումինիայում, Ֆրանսիայում, ԱՄՆ-ում, Արգենտինայում և այլուր: Հայաստան ներգաղթելու ցանկությամբ սովետական կառավարության հասցեով ստացվող նամակների ու դիմումների հեղինակները մեծ մասամբ աշխատավոր մարդիկ էին, որոնք նկարագրելով իրենց ծանր վիճակը, խնդրում էին շուտափույթ կերպով փրկել իրենց և հնարավորություն տալ ներգաղթելու Հայաստան: Դիմում էին ամեն տեսակ արհեստի ու զբաղմունքի տեր մարդիկ, կոշտացած ձեռքերով երկրագործն ու բանվորը, ուսումնաստենչ պատանին ու բազմավաստակ ինժեները և յուրաքանչյուրն իր համառոտ կենսագրականը շարադրելուց հետո հավաստիացնում էր, որ երբեք «բեռ մը չպիտի ըլլա խորհրդային կառավարության վրա», այլ իր ուժերով հաղողահից կլինի երկրում ծավալված շինարար աշխատանքին և օգտակար գործակից իր նվիրական հայրենիքին:

Չնայած այս բովանդակությամբ ստացվող բազմաթիվ խնդրանքներին, սովետական կառավարությունը 1923 թ. հագիվ կարողացավ իրականացնել մոտ 1000 հոգու ներգաղթը Վանից, Պարսկաստանից և մոտակա այլ վայրերից³¹: Պետք

³⁰ «Խորհրդային Հայաստան», 16 մարտի, 1924 թ., № 63:

³¹ Տե՛ս Հայկ. ՍՍՀ 224ՊԱ, ֆ. 30/116, ց. 1, գ. 2352, թ. 23:

է հաշվի առնել այն հանգամանքը, որ այդ ժամանակ մի կողմից երկիրը դեռևս գտնվում էր տնտեսական դժվարին վիճակում, մյուս կողմից, 1922 թ. Հայաստան ներգաղթած մոտ մեկ տասնյակ հազար հայրենադարձները, որոնք բոլորն էլ, գրեթե առանց բացառության, չբավորներ էին, կարիք ունեին տեղավորման և նյութական մեծ օգնության: Նույն դրուժյան մեջ էին նաև հանրապետությունում եղած արևմտահայ գաղթականները: Այս բոլոր հանգամանքները միասին վերցրած շրջորեն կաշկանդում էին սովետական կառավարության հետագա քայլերը՝ սփյուռքահայ տարագիրներին ավելի լայն մասշտաբներով ընդառաջելու և նրանց հայրենադարձությունը կազմակերպելու ուղղությամբ:

Բայց դեպի հայրենիք մի անգամ արդեն ծայր առած հայրենասիրական շարժումը ոչինչ չէր կարող կասեցնել և սովետական կառավարությանն ուղղված նոր դիմումներով գաղութահայ աշխատավորությունը խնդրում էր թույլ տալ մեկնելու Սովետական Հայաստան, հոգ չէ թեկուզ այնտեղ կիսաքաղց ապրելու պայմանով:

1924 թ. հունվարի 9-ին Աթենքից մի հայ աշխատավոր ՀՍԽՀ Ժողկոմխորհին գրում էր. «Սրտի անսահման ուրախությունս աշխարհում հայտնելու այն փափագը, զոր ծնունդ է առած հայրենաբաղձ կուրծքի տակ: Այդ փափագը մեր դարավոր երազներու իրականացման արդյունքն է: Բառ մը միայն,—Հայաստան երթալ, ուրիշ ոչինչ»³²:

«Մենք պատրաստ ենք ձեր առաջին կոչին ու հրամանին, որպես գաղափարի ընկերներ ու հպատակներ, ահա կերկրորդ ենք մեր աղերսն ու առաջարկը, որ ժամ առաջ փրկած ըլլաք մեզ ստույգ ու իրական մահեն, որ է սով ու զուլում ներկա պարագաներու տակ: Մենք ամեն կերպ զոհողություններու, ի հարկին ամեն կերպ աշխատանքներու պատրաստ ենք»³³, այսպես էին գրում հայրենիք գալու մասին կալամաթիայի 600 տարագիր հայեր:

³² «Խորհրդային Հայաստան», 16 մարտի, 1924 թ., № 63:

³³ Նույն տեղում:

1924 թ. ապրիլի 15-ին Բեյրութից մի խումբ հայ արհեստավորներ ՀՍԽՀ Ժողկոմխորհի նախագահ Լուկաշինին (Ս. Սրապիոնյան) գրում էին հետևյալը. «Փափագելով հայրենիքի հողին վերա վերաշինել մեր ավերված բույները, մենք 4—6 ընտանիքներ, բաղկացյալ 4—5 հոգիի յուրաքանչյուր ընտանիք, և արհեստավոր՝ որպես դերձակ, կոշկակար, մշակ-եղամաճի, կառավարության վրա որևէ բեռ չենք (չինի), արդյոք պիտի արտոնեի՞ք մեր հոն գալը և ինչ ձևակերպություններ պետք է արտոնագիրը ստանալու (համար)»³⁴:

Հայ տարագիրները, որպես օտարագրիներ, բազմաթիվ հայածանրների էին ենթարկվում զանազան կապիտալիստական երկրներում: Այսպես, օրինակ, բուլղարական կառավարությունը որոշել էր տեղահանել Ֆիլիպիի և Թաթար-Բազար-ճիկի շրջաններում հողագործությամբ զբաղվող հայ գաղթականներին, որովհետև այդ վայրերում գտնվող ծխախոտագործ մակեդոնացի վերաբնակիչների հետ մրցության մեջ հայերը նեղում էին նրանց: Մակեդոնացի վերաբնակիչների դիմումների հետևանքով բուլղարական իշխանությունները որոշել էին այնտեղից հեռացնել հայ գաղթականներին, ուստի նրանք ձգտում էին ներգաղթել Սովետական Հայաստան³⁵:

Այդ տարիներին առանձնապես ծանր կացության մեջ էին գտնվում Հունաստան ապաստանած հայ տարագիրները: 1923 թ. հունվարին հունական կառավարության սահմանած օրենքի համաձայն բոլոր օտարահպատակները ազատվում էին պետական ծառայությունից, գործարաններից և այլ աշխատավայրերից հույն գաղթականներին աշխատանքով ապահովելու նպատակով: Հույն գաղթականներին բարեբեր վայրերում տեղավորելու համար հայերին Թրակիայից տեղափոխում էին Մակեդոնիայի և Պելոպոնեսի անմշակ շրջանները: Տնտեսական ու քաղաքական անտանելի վիճակի մեջ էին դրվում քիչ թե շատ հարմար տնտեսություններ ստեղծած հայ գաղթականները: Հայ որբերը նույնպես հեռացվում էին

³⁴ Հայկ. ՍՍՀ 224ՊԱ, ֆ. 40/113, ց. 3, գ. 258, թ. 43:

³⁵ Տճ՝ «Խորհրդային Հայաստան», 29 ապրիլի, 1924 թ., № 98:

հունական քաղաքներից ու ցրվում Ֆրանսիայում, Եգիպտոսում և այլ երկրներում: Եվ ահա Հունաստանի որբանոցների փոքրիկ մանչուկները ևս, դիմելով սովետական կառավարությանը, իրենց անվարժ գրիչներով ու մանկական թոթովանքներով փորձում էին նկարագրել այն արյունոտ ուղին, որը նրանց հասցրել էր որբանոց և այն տառապանքները, որ նրանք կրում էին այդ հաստատությունների մեջ: «Տարե՞ք մեզ Հայաստան. տարե՞ք տուն»³⁶, այսպես էին եզրափակում իրենց աղերսանքը հունահայ որբուկները:

1924 թ. սեպտեմբերի 27-ին Հունաստանից ՀՍԽՀ Ժողկոմխորհի նախագահ Լուկաշինին հասցեագրված դիմումի մեջ Աթենքի հայոց առաջնորդարանի կենտրոնական վարչությունը գրում էր, որ հունական կառավարությունը ձեռնարկել է «Քրակիրոյ կողմերը բարեբեր հողերու վրա հաստատված և իրենց աշխատասիրության շնորհիվ ինքնաբավ հողած հայությանը տեղահան ընել ու նետել զանոնք Բելոբոնեսի շրջանին ապերախտ ապառաժներուն վրա, զրկելով զանոնք նույնիսկ հունձքեն և արդյունքեն այն աշխատություններուն, զորս սպասված էին հասցնելու համար հացահատիկ, ծխախոտ և այլ երկրագործական բերքեր:

Կհուսանք թե մեր սույն հակիրճ տողերը բավական կըլլան հասկցնելու թե տեղս զտնվող հայության գյուղացի, բանվոր և արհեստավոր մասը մատնված է վերջին ծայր թշվառության»: Դիմումի հեղինակներն այնուհետև շեշտում էին, թե «այս թշվառ գաղթականները իրենց սպառնացող ստույգ մահեն փրկելու միակ միջոցը նկատած ենք անոնց Հայաստան փոխադրվելը: Այս եզրակացության կհասնինք մանավանդ տեսնելով գաղթականներու դեպի հայրենի երկիր ձրգտումը ու սերը և օր առաջ հոն նետվելու ջերմ փափագը»³⁷:

1924 թ. մարտի 18-ին Հունաստանի Սալոնիկ քաղաքից մեքենավար Համբարձում Տեր-Նիկողոսյանը նույնպես դիմում է սովետական կառավարությանը: Նկարագրելով հայ

առարազիրների թշվառ վիճակը օտար երկնակամաշների տակ, նա հայտնում է, որ հունական կառավարության 1923 թ. հունվարին հրապարակած օրենքի համաձայն «արգելք դրին բոլոր օտարահպատակ պաշտոններից պետական ծառայության մեջ գտնվել ու ես՝ ի շարս բազմաթիվ օտարներու, արձակվեցա պաշտոնն մը, ուր 38 տարի անընդհատ ծառայած էի ամենայն եռանդով և հավատարմությամբ:

Գյուղացիի զավակ, բանվոր մեծացած, աշխատավոր ապրած, բանվորական դատին ջերմ համակիր ըլլալով, այսուհետև կուխտենք շմնալ այս բուրժուական կարգ ու սարքերով կառավարված երկիրներու մեջ և անդիմադրելի ցանկություն կզգանք վերադառնալ ամենուս մայր հայրենիքն եղող Երևան, և հոն ապրիլ խաղաղության մեր բանվոր ընկերներու և աշխատավոր եղբայրներու հետ»³⁸:

1924 թ. մայիսի 27-ին Սալոնիկից մի խումբ արհեստավոր բանվորներ նամակով դիմում են Լուկաշինին՝ Հայաստան փոխադրվելու թույլատրություն ստանալու համար: Հունիսի 28-ին, հենց դիմումն ստանալու օրը, Լուկաշինը նրանց դիմումի վրա մակագրում է. «Ուղարկել պատճեն ընկ. Շահվերդյանին, իբրև բանվորների և գործավորների առաջին հերթին վիզա տալ»³⁹:

Դիմումի հեղինակները, վերլուծելով իրենց անցած ուղին, գրում էին. «Դարեր ամբողջ ազատություն և անկախություն երազեցինք: Տարիներ անընդհատ մարդու և քաղաքացիի իրավունքներ ձեռք բերելու համար պայքարեցանք, որուն համար ենթարկվեցանք ահավոր զրկանքներու և հարստահարությանց:

Եվրոպական անբարոյիկ քաղաքականությունը, հայ իրականության մեջ գոյություն ունեցող կուսակցական սխալ և հակամարտ պայքարները, կապիտալիստական պետություններն նոր օրիենտալիստներ և նորանոր «օջախներ» որոնե-

³⁸ Նույն տեղում, գ. 258, թ. 8—9:

³⁹ Նույն տեղում, գ. 259, թ. 15—17: Դանուշ Շահվերդյանը Կ. Պոլսում Անդրկովկասյան առևտրական ներկայացուցիչն էր և ՀՍԽՀ Ժողկոմխորհի ներգաղթի լիազորը:

³⁶ «Խորհրդային Հայաստան», 16 մարտի, 1924 թ., № 63.

³⁷ Հայկ. ՄՍՀ 224ՊԱ, ֆ. 40/113, ց. 3, գ. 259, թ. 15—17:

լը, Մեծ Հայաստան մը երազելու մեր սին ու պարապ հույսերը, այսօր մի անգամ ընդմիջտ գերեզմանված կնկատենք, ընդունելով մեր սխալները կկանգնինք հպարտորեն մեր միակ խարիսխը եղող Խորհրդային Հայաստանի կողքին որպես հարազատ քաղաքացիներ:

...Մենք ճանչցած ենք մեր այսօրվա գոյավիճակին բոլոր պատասխանատուները, մենք լավապես հասկցած ենք մեզ քառորդ դարե ալելի ղեկավարող տեառ ու սնափառ ղեկավարներուն: Բանվոր և գյուղացի դասակարգս բացարձակապես զոհ եղանք իրենք զիրենք «գիվանագետ» կոչած մարդկանց. անոնք մինչև այսօր կհամարեն խաղալ արտասահմանի իրավազրկված ու հարստահարված գաղթականներու ճակատագրին հետ: Մենք այլևս չենք կարող հանդուրժել այս կամ այն տերութանց ոտնձգությունները և թույլ չենք կրնար տալ, որ այլևս կուսակցական նորանոր շահատակությունները շարունակվեն այս շրջաններու մեջ:

Մենք երկարածիզ ու արյունոտ դարեր վերջ ողջունեցինք Խորհրդային Հայաստանը և Անդրկովկասյան Միության կարմիր ու փրկարար դրոշը՝ բանվորագյուղացիության անխորտակելի ուժով:

Մենք մեր բովանդակ հույսը լուսո և ապագա մեր երջանկության փառահեղ աստղը Կովկասյան կարմիր հորիզոնին վրա կտեսնենք, մեր և մեր նոր սերունդի ապագան հող, միայն հող է, որ պիտի կարենանք տեսնել: Այդտեղի գիտության նոր դարբնոցներուն մեջ է, որ Ձեր շնորհիվ ու հանուն կարմիր իրավակարգին կառուցած նոր քաղաքացիներ պիտի պատրաստվին»⁴⁰: Այնուհետև խնդրելով օր առաջ փրկել իրենց պանդխտության դասն վիճակից, դիմումի հեղինակները շարունակում են. «Ամեն բան չենք կարող պարզել իր մանրամասնությունները. մենք ենթարկված ենք ծայրահեղ շահագործումի տիրողներու կողմանե. դատապարտված ենք ունեցածներս ալ կորսնցնելու. ոչ մի փորձ անհնար է դեպի առաջա-

դիմություն. միայն ու միայն դարմանը մեզ ասկե ազատելուն մեջ կկայանա»⁴¹:

Սալոնիկում ժամանակավորապես ասպնջականություն գտած 25 հայ արհեստավորներ 1924 թ. հունիսին ՀՍԽՀ Ժողկոմխորհի նախագահ Ս. Լուկաշինին գրած դիմումի մեջ նկարագրելով, որ շրջապատող քաղաքական ու տնտեսական պայմանները շափազանց անտանելի են դարձնում իրենց կյանքը, խնդրում էին հնարավորություն տալ իրականացնելու իրենց անհուն բաղձանքը՝ ներգաղթելու Սովետական Հայաստան:

Դիմումում նրանք գրում էին. «Հիացած ձեր շորս տարվա կատարած հսկայական գործերուն, համակված այս մեծ ու փրկարար ճշմարիտ իրավակարգին, խանդավառված բանվորի, գյուղացու ու արհեստավորի գտած հանգստության ու վայելած ասպնջականությանը մեր պաշտելի հայրենիքի մեջ, կգանք մեր երկար ու տանջալից ուղևորությունն վերջ մեր գաղթականի բեռներն ուսին, հոգնած ու ուժասպառ, բայց վերապրելու հույսերով ու մեր սիրելի երկիրը տեսնելու հավատքով լեցուն, սրտագին օրերե գոտեպնդված կհամբուրենք այն դրոշակը, որու վրա մակագրված է աշխատանքի ու վայելքի, մարդու ու քաղաքացու նշանաբանն իր բոլոր ստորոգելիներով»⁴²:

Ապա ներկայացնելով իրենց տեղահանելու վերաբերյալ հունական կառավարության որոշման հետևանքով ստեղծված անելանելի վիճակը, դիմումի հեղինակները վերջում դարձյալ խնդրում էին, որ իրենք՝ լինելով բնիկ սեքսստացի երկրագործներ ու արհեստավորներ, պատրաստ են ամեն կարգի զոհողությունների, միայն թե վայրկյան առաջ փրկվեն տանջալից մղձավանջից:

Այդ դիմումն ստացվելուց անմիջապես հետո, 1924 թ. հունիսի 24-ին, Ժողկոմխորհի նախագահի կարգադրությամբ գործերի կառավարչությունը պատասխանում է խնդրատու-

⁴⁰ Հայկ. ՍՍՀ 2249Ա, ֆ. 40/113, ց. 3, գ. 258, թ. 83—84.

⁴¹ Նույն տեղում:

⁴² Նույն տեղում, ֆ. 113, ց. 3, գ. 54, թ. 34:

ներին, որ «ձեզ՝ ինչպես բանվորների և բանվորա-գյուղացիա-կան երկրին հարազատ տարրերի, կառավարութունը կարող է ընդունել իր սահմանները, չնայած որ մեր երկիրը, հողի սղության պատճառով, թույլ չի տալիս բավարարել նման բազմաթիվ դիմումներ: Պետք է իմանաք, որ մեր երկրում ուժեղ թափով ընթանում է սոցիալիստական շինարար աշխատանքը և միայն նոքա կարող են հարազատ քաղաքացիներ լինել ՀՍԽՀ անրապետության մեջ, որոնք կմասնակցեն այդ աշխատանքներին:

Ձեր տեղափոխության մասին հայտնված է Պոլիս ընկ-Շահվերդյանին և հրահանգված է նրան՝ ցույց տալ ձեզ լայն աջակցություն»⁴³:

Սովետական կառավարության ամեն մի այսպիսի պատասխանը արագորեն տարածվում էր քաղաքից-քաղաք և երկրից-երկիր, առաջ բերելով դիմումների նոր հոսանքներ: Եվ ահա սոցյուլոգրաֆիայի մի այլ խումբ ՀՍԽՀ Ժողկոմխորհին ուղարկած նամակում գրում էր. «...գաղթականի ցուպը ձեռին, օտար երկիրներու տակ հուսաբեկ ու գլխիկոր, գրեթե կյանք մտերացող հայության բեկորները իրենց աշքերը հառած են պատմական Արարատի ստորոտը հարու-թյուն առնող, վերածնվող մայր հայրենիքին, անշուշտ այն խոր հավատքով, որ նրա փմաստուն վարիչները, միշտ նկատի կունենան արտասահմանի իրենց տառապող եղբայրակիցներու ցավն ու թշվառությունը:

...Ահապարհ է տնտեսական տագնապը, որ համաշխարհային բնույթ է ստացեր, որուն հետևանքը, իբրև օտարահպատակ, նանսենյան հայ բանվորներու (խոսքը նանսենյան անձնագրեր ունեցող տարագիրների մասին է—Չ. Մ.) գործազրկությունն է: Ցավալի է լսել, որ բացարձակապես իրավունք չտրվեր մեզ աշխատելու ոչ մեկ ամառին մեջ: Թշվառությունը յուր ավերիչ ճիրաններուն զոհն է դարձուցեր մեզ բոլորիս: Կան բանվորներ, հակառակ իրենց երկաթե բազուկներուն, անօթի ու անսնունդ, չոր հացի մը կա-

րտաը կըբաշեն...: Ո՛վ պիտի օգնե մեզ, այս օտար երկրի տակ, ո՛վ պիտի սրբե այս թշվառ բաղդակորույսներու դառն արցունքը...»⁴⁴:

Միայն ներգաղթի մեջ տեսնելով իրենց իսկական փրկությունը, նրանք գրում էին. «Ներգաղթ, ներգաղթ կպուռան հայ խլյակներ: Բյուրավորներ անպատասպար կթափանեն ու գործ կմուրան: Միակ և գլխավորագույն սպեղանին ներգաղթն է, որ հնարավորություն պիտի տա, բազմաթիվ շինարար բանվոր բազուկներու գործ հայթայթելու, ի փոխարեն նույնիսկ չոր հացի մը, հող չէ թե դաշտերու մեջ ժամանակավորապես վրաններու տակ պատասպարվելով, միայն թե մեր երկրին տակ գտնվելու մխիթարությունը ունենանք:

Մեր միակ հույսը վրանա ներգաղթը, որուն փութով իրականացման համար պաղատագին կխնդրենք ձեր ընկերական հեղինակությունը, ձեր միջամտությունը: Ամեն օր դժբախտություն ունինք լսելու անպատմելի թշվառություններ, շվարուն և անել կացության մը մատնված ենք, հույսի միակ սկզբ և լույսի միակ փարոսը ներգաղթն է:

Ակրնդետ կապասենք Ձեր ընկերական արդյունավոր պատասխանին և ներգաղթը ավետող պատվական գրության»⁴⁵:

1924 թ. միանգամայն տագնապալի վիճակ էր ստեղծվել նաև Թուրքիայում բնակվող հայերի համար: Դա 1922 թ. հետո երկրորդ լուրջ տագնապն էր, որ ապրում էր Թուրքիայում մնացած հայությունը: 1924 թ. հուլիսի 21-ին ՀՍԽՀ Ժողկոմխորհին ուղարկած զեկուցագրում Գ. Շահվերդյանը խնդրում էր արագացնել նախատեսված ներգաղթի իրականացումը, որովհետև «ըստ երևույթին գաղտնի կարգադրության համաձայն, այնպիսի անտանելի դրություն է ստեղծվել Անատոլիայում, որ հայերը մնալ իրենց տեղերը չեն կարողանում» և ստիպված հեռանում են երկրից, թողնելով ամեն ինչ, միայն թե ազատվեն այն ծանր պայմաններից:

⁴³ Նույն տեղում, թ. 36:

⁴⁴ Նույն տեղում, ք. 178, գ. 975, թ. 19:

⁴⁵ Նույն տեղում:

որոնց ներքո ապրում են: Շահվերդյանը նշում է, որ «հե-
ռանադիս տաճիկ իշխանությունը անցագրերի վրա գրում
է՝ երկրի (Տաճկաստանի) սահմանից հեռանալու պայմա-
նով»: Երբ նրանք հասնում են Պոլիս, գաղթականներին
նպաստավորող ազգային-քարեգործական խնամատարական
հաստատությունները մի կերպ հաջողացնում են մի առժա-
մանակ նրանց պահել Պոլսում: «Այդ ժամանակամիջոցին,—
գրում է Շահվերդյանը,— սկզբում դիմում են ինձ, որպես-
զի նրանց ուղարկեմ Հայաստան կամ մի որևէ անդրոն խոր-
հրդային Միություն, բայց, որովհետև այդպիսի հնարավոր-
ություն չկա, նրանք ընկնում են զանազան ագենտների
ձեռքը, որոնք ուղարկում են նրանց Ֆրանսիա և Աֆրիկայի
գաղութները կամ Հարավային Ամերիկա, զղխավորապես
Արգենտինա»: Նկարագրելով գաղութահայության այս ան-
մխիթարական վիճակը, Դ. Շահվերդյանը խնդրում էր ժող-
կոմիտեին, ըստ հնարավորին արագացնել նոր հայրենա-
դարձության իրականացումը⁴⁶:

Այս բոլոր փաստերը ակնհայտորեն խոսում են այն մա-
սին, որ 1923—1924 թթ. ևս գաղութահայությունը գտնվում
էր իր նախկին խիստ հարափոխիկ վիճակի մեջ: Չնայած
արդեն ղկար 1922 թ. խուճապային փախուստն ու զանգվա-
ծային տարագրությունը, բայց դարձյալ շարունակվում էին
անհույս դեգերումները, թունի կամ կամավոր մակրնթացու-
թյուններն ու տեղատվությունները: Շատ դեպքերում հայ
գաղթականները հազիվ էին կարողացել արմատներ ձգել
իրենց ասպնջական երկրների մեջ, հազիվ էին ծիլեր արձա-
կել, փոքր ինչ ապահովություն տեսնել և ահա նորից ար-
մատահան էին արվում: Նրանց գրխին կրկին կախվել էին
նոր տեղահանությունների արհամարհները՝ իրենց բոլոր
սարսափներով: Ու դարձյալ սկսվում էր սփյուռքահայ տա-
րագիրների կողմից հալածականի անժանոթ ուղիներով եր-
թը դեպի նոր ու անհայտ հանգրվաններ:

Այսպիսի պայմաններում, չնայած գոյություն ունեցող

լուրջ դժվարություններին, սովետական կառավարությունը
նպատակահարմար գտավ 1924 թվականից վերադառնալ սփյուռ-
քահայ աշխատավորների հայրենադարձությունը:

ՀՍԽՀ Ժողկոմիտեի միջնորդությամբ 1924 թ. մարտի
3-ին Անդրկենտրոնի նախագահությունը որոշում է կա-
յացնում 1924—1925 թթ. ընթացքում արտասահմանից
հիմնականում՝ Հունաստանից, Միջագետքից և Թուրքիայից,
Սովետական Հայաստան ընդունել 10.000 գաղթականներ և
նրանց տեղավորել Սարդարապատի արևելյան մասում,
նախօրոք այն դարձնելով ոռոգելի:

ՀՍԽՀ հողժողկոմատը և ներքգործողկոմատը կազմում
են 10.000 գաղթականների փոխադրության և տեղավորման
հետ կապված ծախսերի նախահաշիվը՝ մոտ 1,7 միլիոն
ռուբլի: Այդ որոշմանը համապատասխան 1924 թ. մայիսից
սկսվում է ներգաղթողների մոտքը Հայաստան Բաթումի և
Ջուրջայի վրայով⁴⁷:

1924 թ. հոկտեմբերի 15-ին ՀՍԽՀ Ժողկոմիտեից քննար-
կում է Հայաստան ներգաղթող 10.000 գաղթականների ըն-
դունելության, տեղավորման, հողի հետ կապելու և այլ մի-
ջոցառումների մասին ներքգործողկոմատի ղեկուցումը:
Որոշվում է այդ նպատակով լրացուցիչ գումար խնդրել
Անդրֆեդերացիայի Ժողկոմիտեից և միութենական կառա-
վարությունից: Միաժամանակ առաջարկվում է գրուղատն-
տեսական և կոմունալ բանկերին՝ ներգաղթողների համար
բացել երկարատև վարկեր՝ գյուղատնտեսական գործիքներ,
սերմացու և շինանյութեր ձեռք բերելու նպատակով: Որոշ-
վում է նաև հողժողկոմատի ֆունդիից ներգաղթողներին
տրամադրել շինափայտ՝ երկաթուղային կայարաններին մո-
տիկ վայրերում⁴⁸:

Այդ որոշումներին համապատասխան, 1924 թ. ընթաց-
քում Հունաստանից, Սիրիայից, Կ. Պոլսից և Ֆրանսիայից
երկիր ընդունվեցին 4167 հայ գաղթականներ ու որբեր: Հենց

⁴⁶ Տե՛ս նույն տեղում, ֆ. 40/113, ց. 3, գ. 305, ք. 39.

⁴⁷ Տե՛ս նույն տեղում, գ. 419, ք. 153.

⁴⁸ Տե՛ս նույն տեղում, ք. 147.

միայն Բաթումի վրայով, 1924 թ. մարտի 29-ից մինչև 1925 թ. հունվարի 19-ը ընկած ժամանակամիջոցում, Հայաստան են ժամանել 3051 տիյուրքահայեր⁴⁹, նրանց 50 տոկոսը արհեստավորներ էին, 12 տոկոսը՝ ծխախոտագործներ, 16 տոկոսը՝ շերամապահներ, 2 տոկոսը՝ մտավորականներ, իսկ մյուսները՝ այլ զբաղմունքի տեր աշխատավորներ⁵⁰:

1924 թ. ներգաղթած տնտեսություններին տեղավորելուց հետո, 1925 թ. մարտին, ներքգործողկոմատը և հողօժողկոմատը մանրամասն ուսումնասիրում են նրանց կարիքները և այդ մասին զեկուցագիր ներկայացնում ժողովուրդահին առընթեր աշխատավորական ներգաղթի հանձնաժողովին: Այդ զեկուցագրում նշված էր, որ 1924 թ. Կ. Պոլսից, Միջագետքից և այլ վայրերից Հայաստան եկած գաղթականները գտնվում են ծայրահեղ վարիքի մեջ: Այսպես, Կ. Պոլսից ժամանած և Լենինականի գավառի գյուղերում տեղավորված 77 տնտեսություններից (291 շունչ) և Ստեփանավանի շրջանից այնտեղ տեղափոխված 172 տնտեսություններից (703 շունչ) 80 տոկոսը չբավորներ էին: Լենինական քաղաքում բնակություն հաստատած 205 ընտանիքներից (862 շունչ), որոնց աշխատունակ անդամները մեծ մասամբ Կ. Պոլսից ներգաղթած արհեստավորներ և առևտրականներ էին, կարիքավորներ էին 70 տոկոսը: Մայրահեղ չբավոր վիճակում էին գտնվում նաև Երևանի գավառում տեղավորված 100 ընտանիք (438 շունչ) Պոլսից և Միջագետքից գաղթած տարագիրները⁵¹:

Թե՛ գյուղերում և թե՛ քաղաքներում տեղավորված հայրենադարձները կարիք ունեին քնակարանների, շինանյութերի, երկարածամկետ վարկերի, որպեսզի կարողանային վերանորոգել իրենց հատկացված լքյալ շենքերը կամ կա-

⁴⁹ Տե՛ս նույն տեղում, գ. 418, թ. 28:

⁵⁰ Տե՛ս նույն տեղում, գ. 418, թ. 20:

⁵¹ Տե՛ս նույն տեղում, ֆ. 123, ց. 1, գ. 998, թ. 40:

ռուցել նորերը, զբաղվել արհեստներով և երկրագործությամբ:

Նկատի ունենալով ներգաղթածների այս վիճակը, ՀՍԽՀ ժողովուրդահող հատուկ քննարկման է ենթարկում այդ հարցը: Հանձնարարվում է գաղթականական հանձնաժողովին՝ մշակել առաջարկներ ու կազմել նախահաշիվ՝ 1925 թ. գաղթականությանը տեղավորելու, հողի հետ կապելու և նրանց օգնություն ցույց տալու ծախսերի վերաբերյալ:

Ոստանասիրություններից պարզվում է, որ շուտափույթ և անմիջական խնամատարություն կարիք ունեցող գաղթականների ընդհանուր թիվը հասնում է 9118 մարդու: Նրանց կարիքների բավարարման համար պահանջվող օգնության շափի տեսակետից, այն կարելի է բաժանել երեք խմբի:

Առաջին խմբի մեջ մտնում էին 460 մարդ՝ Հունաստանից ներգաղթածները, որոնք թանկարժեք տեխնիկական և կուլտուրաներ մշակողներ էին: Հանձնաժողովի կարծիքով անհրաժեշտ էր նրանց տեղավորել Արարատյան դաշտում, որպեսզի կարողանային իրենց մասնագիտությամբ զբաղվել և տալ փոխադրամիջոցներ ու մեկ ամսվա անուոդ: Իրենց տնտեսությունները կազմակերպելու համար նրանք ամենալայն աշակցություն կստանային թանկարժեք բույսերի, հատկապես ծխախոտի մշակությունը վարկավորող պետական հիմնարկություններից ու ընկերություններից:

Երկրորդ խումբը կազմում էին Դիրիջանի գավառի 2143 շունչ և Լոռի-Փամբակի 2992 շունչ հողազուրկ գաղթականները: Ակրած 1921 թ. հիշյալ գավառների տեղական իշխանության օրգանները պահանջում էին այդ գաղթականներին տեղափոխել հանրապետության համեմատաբար հողառատ շրջանները, որովհետև 6—7 տարի շարունակ նրանք կիսաբազմ ու կիսամեղ վիճակում ծանրացած էին սակավահող ու աղքատ տեղական քնակույթյան ուսերին: Նրանք մի կերպ տեղավորվել էին կիսավեր ու խարխուլ շենքերում կամ ապրում էին տեղացիների հետ միասին միևնույն բնակարանում: Գաղթականական հանձնաժողովը նպատակահարմար էր գտնում գաղթականների այդ խմբի մի մասին՝

Դիլիջանի գավառում գտնվողներին, տեղափոխել Բասարգեշարի շրջանը, իսկ Լոռի-Փամբակում եղածներին՝ Լենինականի գավառը:

Նրոքող խմբի մեջ մտնում էին 1924—1925 թթ. ներգաղթած և Լենինականի գավառում տեղավորված շուրջ 1100 շունչ հայրենադարձները, ինչպես նաև 1922 թ. Ղարաբլի-սայից Բասարգեշար տեղափոխված 2423 շունչ քաղաքացիները և հողագործ գաղթականները: Վերջիններս, թեպետ բոլորն էլ քավարաված էին հողով, բայց նրանց միայն 10—15 տոկոսն էին ստեղծել սեփական տնտեսություններ: Նրանց ավելի քան 85 տոկոսը ոչինչ չունեին, երեք-չորս ընտանիք ապրում էին միևնույն բնակարանում և սովից դժբախտ դեպքերում էին պետության կողմից նրանց բաժանված սերմացուն: Շատերը դիմել էին արտագնացության, որի հետևանքով էլ նրանց տնտեսությունները գտնվում էին բարձրթողի վիճակում: Նրանց դրուժյունը ուսումնասիրած հանձնաժողովի կարծիքով, որպեսզի կարճ ժամանակամիջոցում հնարավոր լիներ ոտքի կանգնեցնել օրեցօր հյուծվող այդ տնտեսությունները, անհրաժեշտ էր կազմակերպել շուտափուլ օգնություն սննդամթերքով, հագուստեղենով, շինանյութերով, գյուղատնտեսական գործիքներով և վարկերով:

Այսպիսով, ինչպես տեղական գաղթականության որոշ մասը, այնպես էլ արտասահմանից ներգաղթածների մեծագույն մասը գտնվում էր բացարձակապես չքավոր վիճակում և կարիք ուներ ամենալուրջ ու սխտեմատիկ օգնության:

Վերոհիշյալ երեք խմբերի մեջ մտնող աշխատավոր գաղթականությանն օգնելու համար հանձնաժողովը կազմում է նախահաշիվ՝ ավելի քան 636 հազար ռուբլի գումարով, որը բաժանելով ըստ շնչերի՝ յուրաքանչյուրին ընկնում էր 75 ռուբլի, իսկ մեկ ծխին՝ միջին հաշվով 212 ռուբլի⁵²:

Առաջին խմբի՝ 460 շունչ ներգաղթածների համար նախահաշիվի մեջ մտցված էին միայն նրանց տեղափոխման և

⁵² Տե՛ս նույն տեղում, ֆ. 40/113, ց. 3, գ. 421, ք. 55—56:

մեկ ամսվա սննդով ապահովելու ծախսերը: Նախատեսվում էր մեկ ամսվա ապրուստն ապահովելու համար հատկացնել շնչին մեկ փուլի ցորեն: Նրկորող խմբի՝ Դիլիջանի և Լոռի-Փամբակի գավառներից հողառատ շրջանները տեղափոխվելիք 5595 շունչ գաղթականների համար, նախատեսված էին փոխադրական ծախսերը, յուրաքանչյուր շնչին երկու ֆունտ հաց՝ հնգօրյա ճանապարհորդության ընթացքում սնվելու համար և եռամսյա պաշար՝ շնչին ամսական մեկ փուլի ցորեն հատկացնելու հաշվով: Վերջապես, երկրորդ և երրորդ խմբերի գաղթականներին տրվելու էր շնչին 11 ռուբլի՝ շենքեր կառուցելու և մեկ ընտանիքին 160 ռուբլի՝ գյուղատնտեսական գործիքներ, անասուններ և այլ արտադրամիջոցներ ձեռք բերելու համար⁵³:

Ահա այսպիսի հոգատարություն էր ցուցաբերում սովետական կառավարությունը գաղթականության կարիքների նկատմամբ, իր սուղ բյուջեից զգալի գումարներ հատկացնելով նրա դրուժյունը բարելավելու գործին:

1924 թ. աշնանից սկսած հայրենադարձությունն ավելի զանգվածային բնույթ ստացավ: Այդ կապակցությամբ գաղթականական գործերի վարումը զգալիորեն բարդացավ: Նկատի ունենալով այդ հանգամանքը 1925 թ. հունվարի 28-ին ժողկոմխորհը որոշում կայացրեց՝ անհատական ընտրական հիմունքներով ներգաղթին իրականացնելու նպատակով ժողկոմխորհին առընթեր ստեղծել գաղթականական հատուկ հանձնաժողով: Հանձնաժողովի նախագահ նշանակվեց ժողկոմխորհի նախագահի տեղակալ Ասքանազ Մուսվաթյանը, անդամներ՝ Գագիկ Պարզյանը, Սուրեն Շադունցը, Արամ Կոստանյանը և քարտուղար՝ Գեղամ Անտոնյանը: Այդ հանձնաժողովի միջոցով լուծում էին ստանում գաղթականությանը վերաբերող սկզբունքային բնույթ կրող բոլոր հարցերը, իսկ ներքոգործողումատը դրանք կիրառում էր կյանքում: Հանձնաժողովի գործունեության շնորհիվ 1925 թ. սկսած հայրենադարձության և ընդհանրապես գաղթակա-

⁵³ Նույն տեղում, ֆ. 123, ց. 1, գ. 998, ք. 29—30:

նության տեղափոխման-տեղավորման աշխատանքներն ընթանում են ավելի կազմակերպված և պլանավորված կարգով: Ներգաղթի և բնակեցման գործն էլ ավելի կենտրոնացնելու և ուժեղ թափով առաջ տանելու համար 1925 թ. սեպտեմբերին վերակառուցվեց գաղթականական հատուկ հանձնաժողովը և հիմնադրվեց Ժողկոմխորհին առընթեր աշխատավորական ներգաղթի հանձնաժողով:

Վերջինիս տրվեցին ավելի լայն իրավունքներ ու լիազորություններ: Ժողկոմխորհի նախագահի տեղակալ Ասք. Մուսվչյանը նշանակվեց այդ օրգանի ղեկավարը, իսկ անդամներ՝ Հ. Գուրգերյանը, Հ. Բալլյանը, Ա. Երզնկյանը, Ս. Մելիք-Համսեփյանը և Գ. Գողթունին⁵⁴:

1925 թ. ապրիլի 21-ին Ժողկոմխորհին առընթեր գաղթականական հատուկ հանձնաժողովը, ի կատարումն ՀԿԿ Կենտկոմի նախագահության 1925 թ. հունվարի 19-ի և ապրիլի 6-ի, ինչպես նաև Ժողկոմխորհի հունվարի 28-ի որոշումների⁵⁵, քննարկում է Միջագետքից և Հոսանաստանից նոր հայրենադարձություն կազմակերպելու խնդիրը: Որոշվում է 1925 թ. ընթացքում վերահիշյալ երկրներից ընդունել 10 հազար տարագիրներ, այդ թվում Հունաստանից՝ 8.000 հոգի: Ներգաղթողների ընդունման, տեղավորման և նրանց բնակարաններում ու նյութական միջոցներով ապահովելու համար ներքործողկոմատին և հողծողկոմատին առաջարկվում է մեկ շաբաթվա ընթացքում ներկայացնել մանրամասն մշակված միջոցառումների ծրագիր⁵⁶: Ներգաղթողներին ընդունելու և տեղափոխելու ընթացքում բժշկական օգնություն ցույց տալու գործը հանձնարարվում է առժողկոմատին և կարմիր խաչի ընկերության վարչությանը⁵⁷:

Հունաստանում և Միջագետքում տառապող հայ գաղթականության նկատմամբ սովետական կառավարության այս

⁵⁴ Տե՛ս նույն տեղում, ֆ. 40/113, ց. 3, գ. 415, ք. 13, և գ. 518, ք. 90—91:

⁵⁵ Տե՛ս նույն տեղում, գ. 463, ք. 3—5:

⁵⁶ Տե՛ս նույն տեղում, գ. 418, ք. 142:

⁵⁷ Տե՛ս նույն տեղում, ք. 127:

նոր մարդասիրական քայլը թելադրված էր այն դժնդակ պայմաններից, որոնց մեջ շարունակում էին տառապել հայ տարագիրներն այդ երկրներում: 1924 թ. ամենածանր տարին եղավ հունահայության կյանքում: Հունաստանում ապրեցականություն գտած հայությունը ներքին տարուբերումներից հետո հազով էր սկսել ինքնուրույնաբար տեղավորվել Արևմտյան Թրակիայի ու Մակեդոնիայի շրջաններում, երբ հանկարծ, կառավարական կտրուկ հրամանով, պետք է 15 օրվա ընթացքում լքեր իր տուն ու տեղը, իր կատարած ցանքն ու մշակած այգիները և հեռանար դեպի Հին Հունաստանի անբերրի ապառաժները: Դրանով հունահայ գաղթի ինքնաբավ դարձած մասը փաստորեն վերստին մուրացիկ ու թափառական վիճակում էր դրվում:

Խիստ ծանր կացության մեջ էին գտնվում նաև Միջագետքում մնացած հայ տարագիրները, որոնք հայրենիք ուղարկած դիմումի մեջ նկարագրում էին իրենց մատթար դրությունը և վստահություն էին հայտնում, որ սովետական կառավարությունը անտարբեր չի գտնվի իրենց «ցավերուն և աղաղակներուն հանդեպ», նկատի կունենա բարոյապես ու ֆիզիկապես ոչնչացման դատապարտված միջագետքահայ տարագիրների դժբախտ ճակատագիրը և «օր առաջ նպաստավոր ու փրկարար կարգադրություն մը ընելով, մի անգամ ընդմիջող կազատե զիրենք իրենց ներկայի հուսահատ կացութենեն»⁵⁸:

Ահա թե ինչու սովետական կառավարությունը 1925 թ. հատուկ որոշում կայացրեց հունահայ և միջագետքահայ զգալի թվով տարագիրների հայրենադարձությունն իրականացնելու վերաբերյալ:

Նախօրոք մշակված պլանի համաձայն, 1925 թ. ընթացքում Բաթումով և Զուլֆայով արտասահմանից Հայաստան ներգաղթեցին 5016 մարդ, այդ թվում Հունաստանից՝ 1098 ընտանիք, 3651 մարդ, Կ. Պոլսից՝ 201 ընտանիք, 780 մարդ, Բաղդադից և ընդհանրապես Միջագետքից՝ 160 ընտանիք, 385 մարդ: Միաժամանակ կատարվեցին գաղթականների ներքին

⁵⁸ Նույն տեղում, գ. 418, ք. 169:

տեղափոխումներ ու տեղավորումներ՝ սակավահող շրջաններից դեպի համեմատաբար հողառատ վայրերը⁵⁹;

Սփյուռքահայ աշխատավորների ներգաղթը 1925 թ. տեղի ունեցավ ավելի հաջող և կազմակերպված ձևով: Դրա գլխավոր պատճառն այն էր, որ այդ ուղղութիւնով արտասահմանում հսկայական աշխատանք կատարեցին սովետական դեսպանութիւններն ու Հայաստանի օգնութիւն կոմիտեի մասնաճյուղերը: Այդ տեսակետից խիստ ուշագրավ է Պարսկաստանում և Հունաստանում ՍՍՀՄ լիազոր ներկայացուցչութիւնների ծավալած գործունեութիւնը Միջազգետքի և Հունաստանի հայ գաղթականների հայրենադարձութիւնն իրականացնելու համար:

Զնայած Միջազգետքի հայ տարագիրներին սովետական կառավարութիւնը վաղուց էր թույլատրել ներգաղթել Հայաստան, բայց նրանք երկար ժամանակ չէին կարողանում իրականացնել այդ հնարավորութիւնը անգլիական իշխանութիւնների հարուցած զանազան բանաարկութիւնների և գաղտնի արգելքների պատճառով⁶⁰: Քիչ դժվարութիւններ չէին հարուցում նաև պարսկական իշխանութիւնները: Նրանք, խախտելով 1922 թ. ամռանը Թեհրանում ՀՍԽՀ լիազոր-ներկայացուցչության հետ կնքված համաձայնագիրը՝ իրենց տերիտորիայով Միջազգետքից Սովետական Հայաստան ներգաղթողներին դուրսընկնելու մասին, հաճախ փակում էին սահմանը հայրենիք մեկնողների առջև⁶¹: Հարկ եղավ գործադրել Թեհրանում ՍՍՀՄ լիազոր-ներկայացուցիչ Բ. Շումյացկու և ներկայացուցչության հայկական գործերով քարտուղար Ս. Առաքելյանի ամենատևիկ միջամտութիւնը, որպեսզի վերջապես տեղի տար պարսկական կառավարութիւնը:

Ինչպես ցույց են տալիս հունահայերի ներգաղթի իրականացման վերաբերյալ եղած նյութերը և Աթենքում ՍՍՀՄ լիազոր-ներկայացուցիչ Ա. Մ. Ուստինովի արտգործոժողովատիւն

⁵⁹ Նույն տեղում, գ. 377, թ. 3 և գ. 486, թ. 19:

⁶⁰ Տե՛ս նույն տեղում, գ. 418, թ. 167—168:

⁶¹ Տե՛ս նույն տեղում, գ. 377, թ. 3 և գ. 496, թ. 19:

ներկայացրած զեկուցագրերը, Հունաստանում ևս կատարվել է կազմակերպական անխոնջ ու լարված աշխատանք, ավելի քան 3.000 հայերի հայրենադարձութիւնը գլուխ բերելու համար⁶²:

1925 թ. սեպտեմբերին սովետական և հունական կառավարութիւնների միջև համաձայնութիւն է կայացվում հունահայերի հայրենադարձութիւն վերաբերյալ⁶³: Կարճ ժամանակամիջոցում ավարտվում են նախապատրաստական աշխատանքները և շնորհիվ սովետական դեսպանութիւն աշխատակիցների ու ՀՊԿ-ի տեղական մասնաճյուղերի անդամների ջանքերի կազմվում են ներգաղթողների ցուցակները: Ներգաղթողները երկաթուղով և փոխադրական այլ միջոցներով իրենց բնակավայրերից հասցվում են նավահանգիստ, տեղավորվում նավի վրա, ապահովվում սննդով և այլն⁶⁴: Եվ ահա 1925 թ. նոյեմբերի 7-ին, Հունաստանից ներգաղթողների 3.016 հոգուց բաղկացած խումբը, «Խարալամբոս» նավով Դեոֆաղաչից ուղղութիւն է վերցնում դեպի Բաթում, այնտեղից էլ երկաթուղով փոխադրվում Սովետական Հայաստան⁶⁵:

Այդ ցնծալից իրադարձութիւն առթիվ, Հունաստանի ՀՊԿ կենտրոնական վարչութիւն նախագահ Բոյաջյանը, կատարելով ներգաղթողների ջերմ ցանկութիւնը, սրտագին շնորհակալութիւն է հայտնում ՍՍՀՄ դեսպանութիւնը, նրա ամբողջ անձնակազմին, այն անձնվեր ջանքերի համար, որոնց շնորհիվ զգալի շափով դուրսացվեց տարագիրներին հայրենիք ճանապարհհիւ ուղևորին գործը⁶⁶:

1925 թ. նոյեմբերի 13-ին դեսպան Ուստինովը Աթենքից պատասխան հեռագիր է հղում Սալոնիկ՝ Բոյաջյանին, որտեղ ասված էր. «Սրտանց շնորհակալութիւն եմ հայտնում ձեր հեռագրի, ինչպես և այն աջակցութիւն համար, որ կոմիտեդ ցույց է տվել տեղափոխութիւնը կազմակերպելու գործում:

⁶² Տե՛ս նույն տեղում, գ. 418, թ. 167—168:

⁶³ Տե՛ս նույն տեղում, գ. 494, թ. 83:

⁶⁴ Տե՛ս նույն տեղում, գ. 517, թ. 37—80:

⁶⁵ Տե՛ս նույն տեղում, գ. 396, թ. 81:

⁶⁶ Տե՛ս նույն տեղում, գ. 494, թ. 83:

Խորհրդային Հայաստանի, ինչպես և ԽՍՀՄ կառավարությունները արին այն բուլտրը, ինչ հնարավոր էր ընդունելու 3.000 հայ նոր հայրենիքում, որտեղ նրանց սպասում են եղբայրաբար: Հույս ունեմ, որ նորեկները կմասնակցեն հայ բանվոր-գյուղացիների հետ միասին Հայաստանի տնտեսական և կուլտուրական վերածնության մեծ գործին, որը կարելի դարձավ Հայաստանի բանվորների և գյուղացիների աշխատանքային անձնվիրություններ և զոհողություններ, ղեկավարվելով Լենինի ոգով»⁶⁷:

1925 թ. նոյեմբերի 10-ին ՀՍԽՀ Ժողկոմխորհին առընթեր աշխատավորական ներգաղթի հանձնաժողովը քննարկում է Հունաստանից և Միջագետքից ժամանած գաղթականության ընդունման, տեղավորման ու հարակից այլ խնդիրները և որոշում է նրանց տեղավորել Արագոսյանի շրջանում: Ստեղծվում է հատուկ հանձնաժողով Ժողկոմխորհի նախագահ Ս. Համբարձումյանի գլխավորությամբ և ներքգործողում Հ. Դուրգերյանի, հոգժողկոմ Ա. Երզնկյանի ու ջրային տնտեսության վարչության պետ Ս. Շադունցի անդամակցությամբ⁶⁸: Հողժողկոմատին հանձնարարվում է Մոսկվայում կայանալիք գաղթականական պլենումին ներկայացնելու համար հավաքել անհրաժեշտ նյութեր և կազմել նախահաշիվ՝ 1925—26 թթ. բյուջետային տարում գաղթականների ընդունելության և տեղավորման վերաբերյալ: Հայկոոպին առաջարկվում է Արագոսյանի շրջանին պարբերաբար մատակարարել ալյուր և այլ կենսամթերքներ: Ներգաղթածների բազմազան կարիքները հոգալու կապակցությամբ համապատասխան առաջադրանքներ են տրվում նաև աշխժողկոմատին, ջրային տնտեսությանը, առժողկոմատին և այլ հաստատությունների: Հայրենադարձների տեղավորման համար բաց է թողնվում 50.000 ուրբի⁶⁹: Նրանց շրջանում ընթացիկ աշխատանքներ տանելու համար ստեղծվում է Արագոսյանի

ներգաղթի հանձնաժողով, որը և նախքան հայրենադարձների ժամանումը նախապատրաստում է նրանց համար վրաններ, գույք, վառելիք և այլն⁷⁰:

1925 թ. ներգաղթողների մեծ մասը Հայաստան ժամանեց ուշ աշնանը՝ նոյեմբերի վերջերին, երբ վրա էին հասել ցրտերը, և նախօրոք որպես ժամանակավոր բնակարաններ պատրաստված վրաններում ապրելն արդեն հնարավոր չէր: Այդ պատճառով էլ ներգաղթածների մի մասը տեղավորվում է Երևան և Լենինական քաղաքներում, իսկ մոտ 1500 հոգի՝ Արագոսյանում:

Շուտափույթ կարգով նրանց համար կառուցվում են փայտյա ժամանակավոր տներ, բաղնիք, հիվանդանոց, դրպորոց, արհեստանոց, խանութ և այլն: Հայրենադարձների մի զգալի մասը, լինելով շքավորներ և որբեր, բնականաբար, սիստեմատիկ նյութական օգնության կարիք էր զգում: Ուստի Ժողկոմխորհին առընթեր աշխատավորական ներգաղթի հանձնաժողովի որոշմամբ ավելի քան 500 հոգի սնվում էին պետության հաշվին, իսկ մյուս մասին էժան դնելով տրվում էին հաց և այլ մթերքներ⁷¹: Ներգաղթածներին 1926 թ. գարնանը Արագոսյանի շրջանում տրամադրում են 4 գյուղ, հատկացնում հողաբաժիններ, սերմացու և վարկեր՝ իրենց սեփական տնտեսությունները ստեղծելու համար: Նրանց տրամադրված գյուղերն էին՝ Արագոսյանը, որտեղ տեղավորվում են 99 բնտանիք՝ 290 մարդ, Արմաշը՝ 114 բնտանիք՝ 334 մարդ, Սուրենավանը՝ 34 բնտանիք՝ 112 մարդ և Սմոն՝ 47 բնտանիք՝ 172 մարդ⁷²:

Հայրենադարձներին պետության կողմից ցույց է տրվում զգալի աջակցություն, որպեսզի կարճ ժամանակամիջոցում նրանք կարողանային ստեղծել իրենց սեփական տնտեսությունները: Գարնանը նրանց հողերը հերկվում են պետական միջոցներով կամ վարկային սկզբունքներով: Չրոս գյուղի-

⁶⁷ Նույն տեղում, գ. 396, թ. 84:

⁶⁸ Նույն տեղում, գ. 377, թ. 1:

⁶⁹ Նույն տեղում:

⁷⁰ Նույն տեղում, գ. 494, թ. 38:

⁷¹ Տե՛ս նույն տեղում, ֆ. 30/116, ց. 1, գ. 335, թ. 121—127:

⁷² Տե՛ս նույն տեղում, ֆ. 123, ց. 1, գ. 1576, թ. 13—15:

րում հերկվում է ավելի քան 397 դեսյատին տարածություն, որից 235 դեսյատին՝ գյուղբաժնի միջոցով, 65 դեսյատին՝ Արազդայանի աշխատավորական ներգաղթի հանձնաժողովի կողմից և 97 դեսյատին՝ Դավալուի վարկային ընկերության կողմից: Միաժամանակ նրանց տրվում են զգալի քանակությամբ անասուններ, գյուղատնտեսական գործիքներ, բամբակի, բանջարեղենի սերմեր և այլն⁷³:

Քանի որ ներգաղթածներն անժանոթ էին տեղական բնակչիմայական պայմաններին, հողժողովմատը նրանց օգնելու համար առանձնացնում է գյուղատնտեսներ և այլ մասնագետներ: Արազդայանի շրջանում տեղավորված ներգաղթածներին հատկացված հողամասերը ջրով ապահովելու համար ջրային տնտեսության կողմից վերանորոգվում է նախկին «Կախանովի» ջրանցքը և Արաքսից խմելու ջուր է մատակարարվում: Հողասակավությունը վերացնելու և մշակելի տարածություններն ընդարձակելու նպատակով Սուրենավան և Արմաշ գյուղերի շուրջը ջրհան մեքենայով ոռոգելի է դարձվում 150 դեսյատին հողամաս: Նկատի առնելով, որ ներգաղթածների մեջ կային հմուտ ծխախոտագործներ և ծխախոտի մշակությունը Հայաստանում ուներ մեծ հեռանկարներ, Արմաշ գյուղում կազմակերպվում է ծխախոտագործների կոոպերատիվ միություն, ուր ընդգրկվում է 57 տնտեսություն: Ծխախոտի մշակությամբ էին զբաղվում նաև մի քանի մասնավոր տնտեսություններ և բոլորն էլ պետությունից ստանում էին արտոնյալ վարկեր ու այլ միջոցներ՝ ծխախոտագործությունը ավելի զարգացնելու համար:

1925 թ. ընթացքում ներգաղթած բնակչության համար մինչև 1926 թ. կեսերը կատարվում են նաև շինարարական աշխատանքներ: Արազդայան գյուղում կառուցվում է 12 նոր տուն և վերանորոգվում է նախկին Շերեմետևի ընկերության գործարանի շենքերից 63 սենյակ, ուր տեղավորվում են 93 տնտեսություն՝ 271 շնչով: Արմաշում կառուցվում է 34 շենք, որտեղ բնակություն են հաստատում 104 ընտանիք՝ 311 բնա-

⁷³ Տե՛ս նույն տեղում, ֆ. 30/116, ց. 1, գ. 335, ք. 121—127:

կիչներով: Ավշար գյուղում կառուցվում է 12 շենք՝ 35 տնտեսությունների համար, որոնց անդամների թիվը հասնում էր 112 մարդու: Սմո ներգաղթածները իրենց տրամադրված շինանյութերով վերանորոգում են քանդված ու լքյալ շենքերը, ուր տեղավորվում են 172 հոգուց բաղկացած 47 ընտանիք⁷⁴:

* * *

Հայրենադարձության կազմակերպման, ներգաղթողների տեղափոխման, նրանց տեղավորման և այդ կապակցությամբ կատարվող մյուս աշխատանքների իրականացման համար պահանջվում էին նյութական հսկայական միջոցներ: Սովետական կառավարությունն իր բյուջեից միշտ էլ զգալի մասահանումներ էր կատարում այդ նպատակի համար: Բավական է ասել, որ միայն 1923 թ. ընթացքում ներգաղթած 953 հոգու համար ՀՍԽՀ ներքործողկոմատի գաղթականական բաժնի կողմից ծախսվել է 22.500 ռուբլի ռսկով, կամ 246 միլիարդ 798 միլիոն ռուբլի Անդրֆեդերացիայի դրամանիշներով⁷⁵, չհաշված հացահատիկով և այլ մթերքներով նրանց ցույց տրված օժանդակությունը: 1925 թ. ներգաղթած և գյուղական վայրերում տեղավորված հայրենադարձների կարիքները հոգալու նպատակով ծախսված գումարն ըստ նախօրոք կազմված նախահաշվի հասնում է 418.250 ռուբլու⁷⁶, Այդ գումարը հիմնականում օգտագործվել է հետևյալ նպատակների համար (տե՛ս 168 էջի աղյուսակը):

Աղյուսակի անվերադարձ սյունակում ցույց տրված գումարն ամբողջությամբ ծախսվել է Արազդայանի գյուղերում տեղավորված ներգաղթածներին սննդով ապահովելու, հիվանդանոցի, բաղնիքի շենքեր, բնակելի տներ կառուցելու,

⁷⁴ Տե՛ս նույն տեղում:

⁷⁵ Տե՛ս նույն տեղում, ֆ. 112, ց. 1, գ. 1490, ք. 21:

⁷⁶ Տե՛ս նույն տեղում, ֆ. 123, ց. 1, գ. 1576, ք. 13—15:

Կուլտուր-կրթական աշխատանքներ ու այլ միջոցառումներ իրականացնելու համար:

Փյունիկների անունները	Տեսակետի վրա	Բնակիչների քանակը	Բաց թողնված գումարները			
			գույքավորման վարկ	շինարարական վարկ	հարկավորման վարկ	անվճար գումարներ
Արագայան	99	290	36,065 ա. 20 4.	34,821 ա. 37		
Արմաշ	114	334	46,874 ա. 84 4.	62,832 ա.		
Սուրենավան	34	112	14,422 ա. 72 4	23,562 ա.		
Սմո	47	172	10,810 ա.		21,580 ա.	52,901 ա.
Նորահերո	82	375	14,000 ա.	57,270 ա. 45 4.	33 4.	
Փավաններին	198	746	40,800 ա.	4125 ա.		
Ընդամենը	574	2029	160,972 ա. 76 4.	182,610 ա. 82 4.	21,580 ա. 33 4.	52,901 ա.

Ներգաղթի և բնակեցման գծով վարկավորվողները բաժանվում էին երեք խմբի: Առաջին խումբը հիմնականում արտասահմանից ներգաղթողներն էին: Երկրորդ խումբը երկրի ներսում մի տեղից մի այլ վայր տեղափոխվող գաղթականներն էին, որոնց անհրաժեշտ էր նոր բնակավայրում կառուցել տներ ու ձեռք բերել գյուղատնտեսական գործիքներ: Երրորդ խումբը կազմում էին այն գաղթականները, որոնք շնայած բավարարված էին հողով, բայց դեռևս գտնվում էին ծայրահեղ շրջավորության մեջ և զուրկ էին բնակարաններից:

Չորս հոգուց բաղկացած մեկ ընտանիքի համար ըստ խրմբերի սահմանված էր վարկերի հետևյալ չափը⁷⁷.

⁷⁷ Տե՛ս նույն տեղում:

Ըստ խմբերի	Վարկերի գումարը					Ընդամենը
	գույքավորման	շինարարական	նոր բնակավայրում և ամիս սննդով ապահովելու համար	տեղափոխման	նրանցիկների	
1-ին խումբ	310 ա.	400 ա.	52 ա. 50 4.	18 ա.	7 ա. 50 4.	788 ա.
2-րդ խումբ	110 ա.	200 ա.	—	6 ա.	—	316 ա.
3-րդ խումբ	—	200 ա.	—	—	—	200 ա.

Ինչպես երևում է վերը բերած աղյուսակից, արտասահմանից և այլ վայրերից ներգաղթողները ստանում էին անհրաժեշտ միջոցներ բնակելի տներով, գյուղատնտեսական գործիքներով և այլ պարագաներով ապահովվելու համար: Աղյուսակում նշված սննդի, բժշկական օգնության և տեղափոխման ծախսերը երեք խմբերին էլ տրվում էին որպես անվերադարձ գումարներ: Գույքավորման և շինարարական վարկերը տրվում էին երկար ժամանակով և նպաստավոր պայմաններով: Արտասահմանից ներգաղթողները և նոր վայրերում հաստատվողները, համաձայն Կենտգործկոմի 1925 թ. հունվարի որոշման, առնվազն 3 տարի ազատվում էին ամեն տեսակ հարկերից և օգտվում էին առանց մաքսի ու վարձի բեռների փոխադրության վերաբերյալ ԽՍՀՄ աշխատանքի և պաշտպանության խորհրդի 1923 թ. օգոստոսի 16-ի որոշման ընձեռած արտոնություններից⁷⁸: Սովետական Հայաստան ներգաղթած բանվորները, արհեստավորներն ու այլ մասնագետները հնարավորություն էին ստանում վայելելու ազատ աշխատանքի պտուղները: Նրանց տրվում էին համապատասխան դյուրություններ և արտոնություններ, աշխատանքով ապահովվում էին առաջին հերթին, ստանում էին վարկեր և այլն:

Հայրենագարձների շնորհիվ հանրապետության ժողովրդական տնտեսությունը ձեռք էր բերում հմուտ ու առաջնակարգ մասնագետներ, որովհետև նրանց մի մասը որակյալ

⁷⁸ Տե՛ս նույն տեղում, նաև՝ ֆ. 113, ց. 13, գ. 4, թ. 1—2:

բանվորներ ու արհեստավորներ էին, իսկ մնացածները՝ հմուտ երկրագործներ: Դրանք Զմյուռնիայի ու Գոնիայի շերամապահներն էին, Տրապիզոնի ու Սամսոնի ծխախոտագործները և թանկարժեք այլ տեխնիկական կուլտուրաների բազմաթիվ հմուտ մասնագետներ:

Մինչև Սովետական Հայաստան ներգաղթելը սփյուռքահայ աշխատավորների շարքաշ ու աստանդական կյանքը նրանց դարձրել էր սովորու ու աշխատունակ: Այս հանգամանքը և, որ ամենակարևորն է, նրանց նկատմամբ սովետական կառավարության ամենօրյա հոգատարությունը, կարճ ժամանակամիջոցում գաղթականության տնտեսական վիճակի բարելավման իսկական երաշխիքներն էին: Քաղաքական ազատ ու լիիրավ կյանքը հայրենիքում, ինչպես նաև տնտեսական բարեկեցությունը այն միակ ուղին էր, որ նրանց մոռացնել կտար իմպերիալիստական պատերազմի ու թուրքական յաթաղանի ստեղծած արհավիրքներն ու սարսափները, մոտիկ անցյալի դաժան օրերի բոլոր տխուր մտապատկերները:

Մտտավորապես այսպիսին է բնավ ոչ լրիվ պատկերն այն աշխատանքների, որ կատարել է սովետական կառավարությունը 1921—1925 թթ. հայրենիք վերադարձած սփյուռքահայ աշխատավորների տեղավորման և սկզբնական շրջանում նրանց կարիքները հոգալու ուղղությամբ:

Այդ աշխատանքներն ավելի ցցուն են դառնում այն ժամանակ, երբ նկատի են առնվում մեր երկրի ժողովրդական տնտեսության վերականգնման տարիներին գոյություն ունեցած բոլոր դժվարությունները և այդ պայմաններում տեղի ունեցած ամբողջ ներգաղթն ու գաղթականական շարժումն ընդհանրապես:

Այդ դժվարին ժամանակաշրջանում՝ 1921—1925 թթ., իրականացված հայրենադարձությունը տարագիր հայության ճակատագրի նկատմամբ ցուցաբերած ջերմ հոգատարության դրսևորման մի վառ օրինակ է, աննախընթաց մի իրադարձություն, որ կատարեցին Հայաստանի կոմունիստական կուսակցությունն ու սովետական կառավարությունը, ՍՍՀՄ և

Անդրֆեդերացիայի կառավարությունների ամենալայն աջակցությամբ: Տասնյակ հազարավոր սփյուռքահայ աշխատավորների հայրենիք վերադառնալու նվիրական իղձերի իրականացումը 1921—1925 թթ. ակնառու կերպով ցույց տվեց, որ աշխարհով մեկ սիոված տարագիր հայության փրկության միակ խարխիսը Սովետական Հայաստանն է: Պետք է ասել, որ խիստ դժվար է այժմ վերականգնել այդ տարիներին ներգաղթածների ստույգ քանակը: Բազմաթիվ աղբյուրների համադրման միջոցով մենք փորձել ենք պարզել 1921—1925 թթ. ընթացքում արտասահմանից Սովետական Հայաստան ներգաղթածների քանակը՝ կազմելով ստորև բերված աղյուսակը⁷⁹:

Տարեթիվ	Որտեղից են ներգաղթել	Տնտեսությունների քանակը	Ներգաղթածների քանակը
1921	Տեղի ունեցած ներգաղթի մասին գրավոր ստույգ տվյալներ չեն պահպանվել		
1922	Միջագետքից, Պարսկաստանից, Կ. Պոլսից և այլ վայրերից	2001	9552
1923	Վանից և այլ վայրերից	258	953
1924	Հունաստանից, Կ. Պոլսից, Միրիայից և այլ վայրերից	783	4167
1925	Հունաստանից, Կ. Պոլսից, Միջագետքից և այլ վայրերից	1459	5016

Ընդամենը 4501 տնտ. 19.688 մարդ

Սակայն, անկասկած է, որ 1921—1925 թթ. ընթացքում Հայաստան ներգաղթածների իրական թիվը շատ ավելին է,

⁷⁹ Տե՛ս Հայկ. ՍՍՀ ՀՀԿՊԱ, ֆ. 40/113, ց. 3, գ. 377, թ. 3, գ. 494, թ. 7 և 33—35, գ. 518, թ. 10, ֆ. 123, ց. 1, գ. 1640, թ. 31—35, ֆ. 30/116, ց. 1, գ. 335, թ. 121—127 և գ. 2352, թ. 19—28; Հմմտ. նաև՝ «Խորհրդային Հայաստան—1920—1925», ժողովածու, էջ 69 և Հովհ. Հախորյան, «Խորհրդային Հայաստան» (տպավորություններ և ուսումնասիրություններ), Փարիզ, 1929, էջ 255:

քան հնարավոր է եղել պարզել ըստ պահպանված վավերագրերի:

Նախ, 1921 թ. տեղի ունեցած ներգաղթի և ընդհանրապես գաղթականության տեղաշարժերի վերաբերյալ գրավոր ստույգ տվյալներ չեն պահպանվել այդ աշխատանքները նոր կազմակերպված լինելու և հասցեայ կատարվելու պատճառով: Մինչդեռ հանրահայտ է, որ 1921 թ. ընթացքում իրականացվել է փետրվարյան ավանտյուրայի ու Զանգեզուրի ազատագրման ժամանակ դաշնակիների պրովոկացիաների հետևանքով Պարսկաստան անցած ավելի քան մեկ տասնյակ հազար հայ փախստականության, ինչպես նաև Հայաստանից հեռացած մահմեդական և այլ գաղթականության վերադարձը: 1922 թ. հոկտեմբերին ՀՍԽՀ Կենտրոնի կողմից կազմված մի տեղեկանքում նշված է, որ 1921 թ. մայիսից մինչև 1922 թ. մայիսն ընկած ժամանակամիջոցում (իսկ փաստորեն 1921 թ. ընթացքում), Հայաստան են վերադարձել ավելի քան 247.000 գաղթականներ, որից՝ 150.000 հայեր, ասորիներ ու եզդիներ, 97.000 մահմեդականներ, այսինքն՝ ադրբեջանցիներ⁸⁰:

Տվյալ աղյուսակի թվերի մեջ չեն արտահայտված նաև սովետական մյուս հանրապետություններից Հայաստան տեղափոխվածները, որոնք նույնպես զգալի թիվ էին կազմում: Թեպետ առաջ նրանք Հայաստանից դուրս ժամանակավոր ապաստան էին գտել, բայց սովետական իշխանության հաղթանակից հետո զանգվածաբար վերադառնում էին իրենց համար հարազատ հայկական միջավայրը, հաճախ ոչ մի տեղ հաշվառման չենթարկվելով:

Այնուհետև, երբեմն հաշվառման չեն ենթարկվել և, հետևապես, ներգաղթածների քանակը ցույց տվող աղյուսակի մեջ չեն մտել այդ տարիներին արտասահմանից Սովետական Հայաստան եկած շատ առանձին ընտանիքներ, փոքրիկ խումբեր ու անհատ անձնավորություններ⁸¹: Այնպես որ, առանց

տատանվելու կարելի է պնդել, որ իրականում 1921—1922 թթ. Սովետական Հայաստան են ներգաղթել ոչ թե 19.688, այլ շատ ավելի մեծ թվով տարագիրներ:

Ինչ խոսք, քանակով այնքան էլ մեծ չէ երկրի ժողովրդական տնտեսության վերականգնման տարիներին արտասահմանից Սովետական Հայաստան ներգաղթածների թիվը: Բայց երբ նկատի են առնվում այն պայմանները, որոնց մեջ սկզբնական շրջանում իրականացվում էր ներգաղթը և սկիզբ դրվում ազգահավաքման հայրենասիրական շարժմանը, այդ դեպքում արդեն հասկանալի են դառնում հայրենադարձության հետ կապված դժվարությունները, նրա հակառակ կարևորությունն ու անգնահատելի նշանակությունը, որպես սոցիալիստական կարգի շնորհիվ հայ ժողովրդի ձեռք բերած մեծագույն նվաճումներից մեկը:

Այսպիսով, սովետական կառավարությունը, ժողովրդական տնտեսության վերականգնմանը զուգընթաց, արտակարգ հոգատարություն և ուշադրություն է նվիրել ինչպես երկրում կուտակված արևմտահայ գաղթականության, այնպես էլ սփյուռքահայ տարագիրների բախտի նկատմամբ: Եվ գործադրելով գերագույն ջանքեր, երկրում եղած արևմտահայ գաղթականության հարցի լուծման հետ միաժամանակ կազմակերպել է սփյուռքահայ աշխատավորների առավել դրժվարին կացության մեջ գտնվող մասի ներգաղթը դեպի հայրենիք, ուր նրանք ապահովվել են հողով, բնակարաններով և այլ միջոցներով, ստացել են լայն արտոնություններ, որպեսզի հնարավորություն ունենան ըստ ամենայնի կարճ ժամանակամիջոցում վերստեղծել իրենց սեփական տնտեսությունները և դառնալ սովետական երկրի ակտիվ քաղաքացիներ:

Սփյուռքահայ աշխատավորները Հայաստան տեղափոխվելուց հետո, զգալով սովետական կառավարության ջերմ վերաբերմունքն իրենց նկատմամբ, երախտագիտությամբ լի, անմիջապես զբաղվում էին շինարար աշխատանքով և ջանում կարճ ժամանակամիջոցում վերականգնել իրենց ավերված օջախները շահագործումից ու բռնությունից ազատա-

⁸⁰ Տե՛ս Հայկ. ՍՍՀ ՀՀԳԱ, ֆ. 112, ց. 1, գ. 8, թ. 135:

⁸¹ Տե՛ս «Երևան», Փարիզ, 24 հուլիսի, 1929 թ., № 534:

գրրված նոր, սոցիալիստական հայրենիքում: Ներգաղթած-
ները միաժամանակ կոչ էին անում իրենց նախկին բախտա-
կիցներին նույնպես վերադառնալ Սովետական Հայաստան և
լծվել նրա վերաշինության վեհ գործին:

Ահա այդ երախտագիտության վառ վկայություններից մե-
կը, որ արտահայտել են 1924 թ. ամռանը Կ. Պոլսից հայրե-
նիք ներգաղթած մի խումբ աշխատավորներ արտասահմանի
իրենց վտարանդի եղբայրներին ուղղված նամակում. «Թոնա-
կալ կապիտալիստների երկրներում երկար թափառումնե-
րից հետո վերջապես հասանք խորհրդային Միության սահ-
մանները և Բաթումի ճամբով անցանք խորհրդային Հայաս-
տան: Այն մարդավայել վերաբերմունքը, որ մենք վայելե-
ցինք խորհրդային երկրում ընդհանրապես, և այն ջերմ, սի-
րալիք ընդունելությունն ու հոգատար վերաբերմունքը, որ իր
սուղ միջոցներով մեզ ցույց տվեց մասնավորապես խորհրդ-
դային Հայաստանը, մեզ միանգամայն հիացրեց, և մենք
զգացված՝ մեր անկեղծ երախտագիտական շնորհակալությունն
ենք հայտնում խորհրդային Հայաստանի կառավարությանը,
հայտնելով մեր պատրաստակամությունը՝ բովանդակ ուժե-
րով լծվելու նրա ձեռնարկած կուլտուր-շինարարական աշխա-
տանքներին:

Թող լսեն օտար երկրներում թափառող մեր աստանդա-
կան եղբայրները, որ միայն և միայն խորհրդային Հայաս-
տանում վերջ գտան մեր տառապանքները և մենք տեսանք
մարդկային, ընկերական վերաբերմունք, որին մինչև այժմ
այնքան ծարավի էինք: Այստեղ միայն գնահատվեց մեր աշ-
խատանքը և կարելիություն տրվեց լծվելու շինարարության
հսկա գործին, որը ղեկավարում է խորհրդային կառավարու-
թյունը Հայաստանի աշխատավորության աջակցությամբ»⁸²:

Սովետական կառավարությունը, ընդառաջելով սփյուռքա-
հայ աշխատավորների ցանկություններին և կազմակերպելով
մեծ թվով տարագիրների հայրենադարձությունը, միաժամա-
նակ շէր կարող աչքաթող անել այն հանգամանքը, որ գաղ-

թականական շատ տնտեսություններ դեռևս լիովին ապահով-
ված չէին հողով, հարմար բնակարաններով և այլն: Հաշվի
առնելով այդ հանգամանքը, ՀՍԽՆ Ժողկոմխորհը, 1926 թ.
հունվարի 21-ին քննարկում է աշխատավորական ներգաղթի
հանձնաժողովի նախագահ Ասք. Մոսվյանի ղեկուցումը գաղ-
թականության դրության մասին: Ժողկոմխորհը, նկատի ունե-
նալով երկրում գոյություն ունեցող սուր սակավահողությու-
նը և 1925 թ. ժամանած գաղթականների տեղավորման հետ
կապված դժվարությունները, նյութական խոշոր միջոցների
անհրաժեշտությունը և այլն, որոշում է ժամանակավորապես
դադարեցնել սփյուռքահայերի զանգվածային ներգաղթը⁸³:

Միաժամանակ ՀՍԽՆ Ժողկոմխորհի կողմից կազմվում է
գաղթականության տեղավորման միջոցառումների 1926/27—
1930/31 թթ. հնգամյա հեռանկարային պլան, որի իրակա-
նացումը լիովին ու վերջնականապես կբարելավեր գաղթա-
կանության տնտեսական դրությունը և խապառ կվերացներ
«գաղթական» անունը սոցիալիզմի ուղին թևակոխած Սովե-
տական Հայաստանի արդեն լիիրավ դարձած տասնյակ հա-
զարավոր քաղաքացիների վրայից:

Չնայած սփյուռքահայերի հայրենադարձությունը ժամա-
նակավորապես դադարեցնելու մասին ՀՍԽՆ Ժողկոմխորհի
վերը նշված որոշմանը, 1926 թ., ինչպես և հետագա տարի-
ներին, դարձյալ երկիր ընդունվեցին բազմաթիվ ներգաղթող-
ներ, որովհետև անհնարին էր կանգնեցնել նրանց հոսանքը
դեպի հայրենիք: Տարաբախտ պանդուխտներն իրենց միակ
փրկությունը տեսնում էին Սովետական Հայաստանում, հա-
մայն հայության մայր հայրենիքում: Արտահայտելով գաղու-
թահայ աշխատավորների հայրենակարոտ մտքերի ու իղձերի
խտացրած հանրագումարը, Մարսելում հրատարակվող «Հայ
սիրտ» թերթը գրում էր, «Մեզ համար ինչ կա ավելի դյու-
թական, ավելի հանկուցիչ՝ քան վերածնվող հայրենիքի մը
չուսատու պատկերը:

Հեռու ենք այդ պատկերեն, բայց նա կա, կմնա, նա մարմ-

⁸² «Խորհրդային Հայաստան», 7 հոկտեմբերի, 1924 թ., № 229:

⁸³ Տե՛ս Հայկ. ՍՍՀ 2249Ա, ֆ. 112, ց. 1, գ. 313:

նացած հուլան է, որ կուսուցանե մեր կյանքին իմաստը, առանց այդ հայրենիքին, առանց անոր բարգավաճ գոյության՝ ինչ միտք կրնար ունենալ մեր կյանքը. ինչ արժեքի ապրիլ առանց սեփական բույնի, առանց ինքն իր կամքին տեր ըլլալու, այսինքն՝ առանց մարդկային արժանապատվության:

Ուրեմն նոր հուլաներու այս լուսածագին մեջ մեր իղձերն ու մաղթանքները կուղղվին միայն և միայն մեր սեփական բույնին, մեր Հայաստանին»⁸⁴:

«Հայ սիրտ»-ը նշում էր, որ շնայած դեռևս «դրախտային» շեն հայրենիքի տնտեսական պայմանները և բոլորը շունեն իրենց «երդիկը», բայց, այնուամենայնիվ, նա լեցուն է լինելիության մեծ հուլաներով, հուլաներ, որոնք կոթողված են շինարար ու ազատ աշխատանքի և հեռատես ու խոհուն քաղաքականության հիմքի վրա: Ահա սրա շնորհիվ էր, որ գաղութահայ աշխատավորությունը անվերապահորեն կանգնել էր Սովետական Հայաստանի կողքին:

«Հայ սիրտ»-ը, կրկնելով տասնյակ հազարավոր պանդուխտ հայերի տենչանքը, մաղթում էր, որպեսզի որքան կարելի է արագ գոյանան ավելի մեծ ու ցանկալի կարելիություններ, «որպեսզի հայրենաբաղձ հայ հոգիները կարենան երթալ Հայաստան, այլևս այնտեղ աշխատելու, այնտեղ ապրելու և այնտեղ ալ մեռնելու համար», որովհետև դա է նրանց հայրենիքը, նրանց «փրկության միակ կայանը»⁸⁵:

Այսպիսով, իր գոյության առաջին իսկ օրերից, Սովետական Հայաստանը դարձավ համայն հայ աշխատավորների իսկական օրհանը, այն հանգրվանը, որտեղ հետագա տարիներին էլ ավելի մեծ թվով սփյուռֆահայեր վերջնականապես գերեզմանեցին գաղթականի իրենց անիծյալ ցուպը և դարձան սոցիալիստական շինարարության ակտիվ մասնակիցներ, Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետության լիիրավ քաղաքացիներ:

⁸⁴ «Հայ սիրտ», Մարտի, 1 հունվարի, 1926 թ., № 36:

⁸⁵ Նույն տեղում:

ԳԼՈՒՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ԳԱՂՈՒԹԱՀԱՅ ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ՀՈՍԱՆՔՆԵՐԻ ԴԻՐՔԸ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆԴԵՊ

Այն ժամանակ, երբ սովետական կառավարությունն իր մարդասիրական պարտքն էր կատարում գաղթականության նկատմամբ և ամեն ինչ անում էր նրա դրությունը բարելավելու ուղղությամբ, այդ նույն ժամանակ գաղութահայ բարեգործական որոշ հաստատություններ ու կազմակերպություններ միանգամայն դատապարտելի անհոգություն էին դրսևորում այդ հարցում: Գաղութահայ կազմակերպությունների նման վարքագիծը բավական հանգամանալից կերպով քննադատված է ժամանակի պարբերական մամուլում: Գաղութահայ բուրժուական ու բարեգործական շրջանները, քաջատեղյակ լինելով ժողովրդական զանգվածների պրոսովետական տրամադրություններին, իրենց լիովին չմերկացնելու համար գրավոր ու բանավոր հաճախ էին շեփոտում Սովետական Հայաստանին օգնելու մասին, սակայն գործնականում շոշափելի ոչինչ չէին անում: Նման վարքագծի մերկացման իմաստով խիստ բնորոշ են Հայոց բարեգործական ընդհանուր միության վարչության նախկին անդամ և 204-ի արտասահմանյան լիազոր ծսայի Կարիկյանի բազմաթիվ ելույթները, հոդվածները և այդ հարցին նվիրված նրա երկու գրքույկները¹:

Ե. Կարիկյանը, որ եղել էր Սովետական Հայաստանում, լավատեղյակ էր այստեղ կատարվող վերափոխություններին,

¹ Տե՛ս Ե. Կարիկյան, Հայաստանի երկրագործական պանթան, հայ հարուստները և բարեգործական հաստատությունները: Փարիզ, 1924, նաև նույնի՝ «Կեդրոնաձիգ և կեդրոնախույս», Փարիզ, 1925:

վերլուծելով հայկական գաղթաշխարհի տրամադրությունները, նշում է, որ սփյուռքահայերի «չախջախիչ մեծամասնությունը այսօր աչքը հառած դեպի Հայաստան, մեկ բնաբան միայն իրեն կրոնք ըրած է՝ վերաշինություն և ներգաղթ»։ Մինչդեռ գաղութահայ բարեգործական հաստատություններն ու կազմակերպությունները, որոնք զգալի միջոցներ ունեն և ցանկություն դեպքում ի վիճակի են օգնելու այդ գործի իրականացմանը, դատարկահանչյուն խոսքից երբեք գործի շեն անցնում։ Դրա անժխտելի վկայությունը կարող է լինել Հայոց բարեգործական ընդհանուր միության գործունեությունը, որը «երկու տարի ի վեր խոշոր ռեքլամներով ճամբա ելած է դեպի Հայաստան, կթալե ու կթալե և դեռ կեցած տեղն է, քայլ մը առաջ շառներ, մինչդեռ այս երկու տարվա մեջ դեպի արևմուտք հսկայաքայլ ճամբա կտրեց, առանց այդ մասին բառ մը ըսելու, առանց շշուկ մը անգամ հանելու»²։

Այն ժամանակ, երբ հայ գաղթականների ու որբերի անուշով զանազան բարեգործներ ուղղակի ողորմություններ էին հայցում ուրիշներից, Հայոց բարեգործական ընդհանուր միությունն իր ձեռքում էր կենտրոնացրել նրանց օգտին եղած մի շարք կտակներ, նվիրատվություններ ու այլ գումարներ և շոպյորեն ծախսում էր իր բազմաթիվ գրասենյակների ու պաշտոնյաների վրա։ Բարեգործական միությունը տարեկան 600 հազար ռուբլի զուտ շահույթ էր ստանում, բայց խնամում էր հազիվ մի քանի հարյուր որբերի։ Հաշվումները ցույց են տալիս, որ միայն 1914—22 թթ. բարեգործական ընկերությունները գաղութահայ աշխատավորությունից ստացել են մոտ 10 միլիոն դոլար, մինչդեռ հանրօգուտ նպատակներով ծախսել են դրա շնչին մասը³։

Բարեգործականի վարիչների մեծախոստում ճառերի առթիվ շատ տեղին է Ե. Կարիկյանի դիպուկ հեգնանքը, թե՛ «եթե խոսքով փիլիավ եփեր, ծովի շափ ալ յուղ ես կխոստանայի»⁴։

Այլապես ինչով բացատրել այն փաստը, որ 1921—1924 թթ. ընթացքում բարեգործական միությունը արտասահմանում ծախսել էր 192.700 անգլիական ոսկի, իսկ Հայաստանի սովյալներին և իր կողմից այնտեղ ուղարկված որբերին հատկացրել հազիվ 8475 անգլիական ոսկի⁵։

Անդրադառնալով ՀՍԽՀ գյուղատնտեսական բանկի բաց թողած փոխառությունների իրացման հանդեպ բարեգործական միության բռնած դիրքին, Ե. Կարիկյանը քննադատում է նրան, ցույց տալով, որ այդ «երկրագործական պանքան այսօր բացեր է յուր աղքատիկ արկղը, մեր գաղթականներուն փոխառություն կընե, անոնց բահ ու բրիչ կուտա, որ իրենց արտերը մշակեն, ապրին ու ապրեցնեն իրենները, ասոր վկա է մեր ամբողջ մամուլը, մինչ անդին կեդր. վարչությունդ հայ գաղթականին լուծամները կհավաքե, օտար երկրագործներու փոխ կուտա և տոկոսներով կուռցնե բարեգործականի սնտուկը և կթողու որ այդ պանդխտին հեռավոր եղբայրն ու անոր երեխաները վզերնին ծռած ուրիշին դուռը ափերնին բանան պատառ մը հաց մուրալու։

Թող Բարեգործականը հայեն հավաքե, օտարին օգնե, այդ պանդուխտ հայը, որ դռնե դուռ ընկեր է, այսօր լքված ու մուրացկան անտեր չէ բոլորովին...։ Նա ունի հայրենիքի մեջ միլիոն մը եղբայրներ ու քույրեր, որ անդադար կաշխատին վերականգնելու (երկիրը—Հ. Մ.), հեռու չէ օրը, որ անոնք ոտքի կելլան ու ձեռք կերկարեն իրենց հեռավոր եղբայրներուն ու քույրերուն ալ և կհանեն զիրենք այս դժբախտ օրերեն...»⁶։

Գաղութահայ բուրժուական խավերը շատ էին թմբկահարում Սովետական Հայաստանին իրենց ցույց տված «օգնություն» մասին։

Արտասահմանից Սովետական Հայաստանի «ստացած օգնության» մասին զաղափար կազմելու համար բավական է ծանոթանալ մի ոմն հարուստ Աբրահամ Բոյաջյանի «բարե-

² Տե՛ս Ե. Կարիկյան, Կեդրոնաձիգ և կեդրոնախույս, էջ 5։

³ Տե՛ս Հայկ. ՍՍՀ ՀՀԳՍ, ֆ. 178, գ. 66, ք. 66—68։

⁴ Ե. Կարիկյան, Կեդրոնաձիգ և կեդրոնախույս, էջ 14։

⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 6։

⁶ Նույն տեղում, էջ 15։

գործունեությանը», որը խիստ բնորոշ փաստ է այդ տեսակետից:
1924 թ. գարնանը վիեննաբնակ գորգագործ Աբրահամ Բո-
յաջյանը հանկարծ ցանկություն է հայտնում Հայաստանում
բաց անել մեղվաբուծական դպրոց: Շուտով նրա ներկայա-
ցուցիչը գալիս է Հայաստան և 204-ի կենտրոնական վարչու-
թյան հետ կնքում համաձայնագիր Ստեփանավանում այդ-
պիսի դպրոց հիմնելու մասին: Ըստ պայմանավորվածության,
Բոյաջյանը նախնական ծախսերի համար հատկացնելու էր
11.000 ու., իսկ այնուհետև՝ տարեկան 3700 ուրբլի, մինչև որ
դպրոցը ինքնաբավ կդառնար: Այդ «գորհաբերության» դիմաց
նա պահանջում էր ուսումնարանի շենքի ճակատին մեծ-մեծ
տառերով գրել՝ «Մեղվաբուծական դպրոց, Տուն Ա. Բոյաջ-
յանի» և իր մեծադիր լուսանկարը կախել դպրոցի դահլիճի
աչքի ընկնող տեղում, դպրոցում ունենալ մի դռնապան, որը
շարունակ ծածկած ունենա իր գլխին «Բոյաջյան» ազգանունը
կրող գլխարկ⁷:

Խոստացված նախնական գումարից միայն 1000 ուրբլի
նրա ներկայացուցիչը ծախսում է շենքի վերանորոգման վրա.
Վիեննայից ստացվում է նրա մեծադիր նկարը, փակցվում
դահլիճի աչքի ընկնող մասում, դպրոցի ճակատին մեծ-մեծ
տառերով գրվում է նրա անունը, բայց «բարեբարից» այլևս
ոչ մի տեղեկություն չի ստացվում: Գործին լավատեղյակ աղ-
բյուրների վկայությամբ նրա լուսնայն պատճառը դպրոցում
ժամացույց դնելն է եղել, որը «խիստ զայրացրել է» Բոյաջ-
յանին: Հետագա տեղեկությունները ցույց են տալիս, որ հայ
բարեգործի հոշակը պարզապես նրան հարկավոր է եղել մի
ինչ-որ շահադիտական գործի հաջողությունն ապահովելու
համար: Այդ գործարքը գլուխ բերելուց հետո Բոյաջյանը «մո-
ռանում է» իր պարտականության մասին:

Արտասահմանում Սովետական Հայաստանի հմայքը և
նրան աջակցող կազմակերպությունների ու անձանց ժողովրդ-
րականությունը այնքան մեծ էին, որ անգամ դադութահայ

բուրժուական խավերի որոշ ներկայացուցիչներ, «հանուն
իրենց գործերի հաջողության», մեր երկրի հետ երբեմն հա-
մաձայնության եզր էին փնտրում և փորձում «ազնիվ բա-
րեբարի» անուն վաստակել:

Գծվար չէ նկատել, որ արտասահմանյան բարեգործական
որոշ հաստատություններ ու անհատներ հայրենիքին օգնելու,
գաղթականների ու որբերի վիճակը թեթևացնելու հարցերը
փաստորեն միտումնավոր կերպով շահագործում էին որպես
հավելյալ եկամտի կարևոր աղբյուր:

Այդ իմաստով ուղղակի դատապարտելի էր դաշնակցու-
թյան գործունեությունը: Գաշնակցական վերնախավերը,
օրինական ոչ մի իրավունք չունեցող «Հ. Հ. պատվիրակու-
թյունը», Պողոս Նուբար փաշայի, իսկ այնուհետև Գաբրիել
Նորատունկյանի գլխավորած Ազգային պատվիրակությունը և
այլ հաստատություններ իրենց գոյությունը պահում էին ծայ-
րահեղ թշվառության մատնված գաղթականության ու որբերի
հաշվին: Ուստի պատահական չէր, որ այդ հաստատություն-
ների վարիչներն իրենց գոյությունը երկարաձգելու նպատա-
կով գաղութահայ աշխատավորությանը մղում էին նորանոր
արկածախնդրությունների: Այդ է վկայում թեկուզ դաշնակ-
ցության առաջ քաշած այսպես կոչված «էքստերիտորիալ
հայկական կառավարություն» կամ «գաղութահայ կենտրո-
նական վարչություն» ստեղծելու ցնորամիտ գաղափարը: Ըստ
էության այդ վարչությունը պետք է հանդիսանար գաղութա-
հայության միակ ղեկավար օրգանը, որի համար կարևոր չէր
ունենալ որոշակի տերիտորիա, այլ՝ վարչական ապարատ,
ուր տաքուկ պաշտոններ կստանային երբեմնի միևնույն
նախարարները⁸:

Նուբարյան-նորատունկյան Ազգային պատվիրակությունը,
կանխելով դաշնակներին, 1924 թ. նոյեմբերի 30-ին մի հայ-
տարարությանը դադարեցրեց իր գոյությունը, ավելի ճիշտ՝

⁷ Տե՛ս Հայկ. ՍՍՀ ՀՀԿՊԱ, ֆ. 178, գ. 35, թ. 1—22, և Ալ. Մարտունի,
Կուսակցությունները գաղութահայության մեջ, Թիֆլիս, 1924, էջ 21:

⁸ Տե՛ս Հայկ. ՍՍՀ ՀՀԿՊԱ, ֆ. 178, գ. 66, թ. 66—88:

հասարակ մի անվանափոխությունը փակեց իր քաղաքական խանութը և փոխարենը բացեց գաղթականական մի կրպակ՝ «Հայ գաղթականաց կեդրոնական հանձնախումբ» ցուցանակի տակ: Այդ հանձնախումբի կնքահայրերի հայտարարությունը հավատարիմ, կարելի էր ենթադրել, որ դա արվում էր «գաղթականներու և որբերու ընթացիկ խնդիրները անխնամ չթողնելու համար»: Բայց իրականում նրա հեղինակները հետապնդում էին գաղթականների անունը շահագործելու միջոցով իրենց գոյությունը երկարաձգելու նպատակ⁹:

Սակայն, բարեբախտաբար, գաղութահայ ժողովրդական զանգվածներն այլևս չէին հետևում նրանց խաղերին, երես էին դարձրել նրանցից և մեկընդմիջտ ապավինել Սովետական Հայաստանին, որն իր բոլոր հնարավորությունները, ուժերն ու եռանդը գործադրում էր գաղթականության հարցը արմատապես լուծելու օգտին:

Գաղութահայ աշխատավորության, սփյուռքահայ առաջադիմական բոլոր ուժերի քաղաքական-դասակարգային հասունության ցայտուն վկայությունը եղավ 1924 թ. սեպտեմբերի 1-ին ժնկում բացված հայասիրական միջազգային կոնֆերանսին հայտարարված բոյկոտը: Ինչպես հայտնի է, 1924 թ. հուլիսի 10-ին Հայասերների միջազգային ընկերությունն իր նախագահ էրվարդ Նավիլի ու քարտուղար Քրաֆթ Բոնարի ստորագրությամբ մի կոչ էր հղել բոլոր հայկական գաղութներին, հայանպաստ կազմակերպություններին ու մասնավոր անձանց, հրավիրելով մասնակցել սեպտեմբերի 1-ին ժնկում բացվող հայասիրական միջազգային կոնֆերանսին: Կոնֆերանսի գլխավոր զբաղմունքն էր լինելու հայ գաղթականների ու որբերի հարցը, ի միջի այլոց, նաև 50 հազար տարագիր Սովետական Հայաստան տեղափոխելու խնդիրը: Բայց այդ գործը կազմակերպողները «մոռացել» էին հրավեր ուղարկել նաև սովետական կառավարությանը: Գաղտնիք չէր, որ կոնֆերանսի հրավիրման իսկական նախաձեռնողները դաշնակներն էին: Նրանք ձգտում էին այդ ճանա-

պարհով իրականացնել համագաղութային համագումար հրավիրելու բազմիցս ձախողված իրենց փորձերը, իսկ «հայասեր» նավիլներն ու բոնարները սոսկ կույր գործիք էին ծառայել նրանց համար: Ժամանակին կոահելով գաղութահայության ղեկավարությունն իրենց ձեռքը գցելու դաշնակցական վնասակար խաղերի իմաստը, սփյուռքահայ առաջադիմական բոլոր կազմակերպություններն ու հոսանքները վրձնական բողոք հայտնեցին նման կոնֆերանսի հրավիրման դեմ և հրաժարվեցին մասնակցել նրա աշխատանքներին: Ամեն կողմից մեկուսացված դաշնակներն ու նրանց «պատվարժան հայասերները», մի քանի օրվա վշտաբեկ զրույցներից հետո, առանց որևէ արդյունքի հասնելու, ստիպված եղան դադարեցնել կոնֆերանսի աշխատանքները¹⁰:

Սփյուռքահայ առաջադիմական ուժերն իրենց այդ վերաբերմունքով վերջնականապես ցույց տվեցին, որ գաղթականության անունից խոսելու իրավունքը պատկանում է միայն ու միայն իրենց՝ անլուր տառապանքների մեջ գտնվող հայ տարագիրներին և սովետական կառավարությանը, որը ոչ թե դատարկահնչյուն խոսքերով, այլ ռեալ գործերով է ապացուցում նրանց ղեկավարման իրենց իրավունքներին վերջ տալու իր անկեղծ պատրաստակամությունը:

Եվ քնամ վատահավան չէր, որ ինչքան ավելի էր ուժեղանում հայրենագարձների հոսանքը դեպի Սովետական Հայաստան, այնքան ավելի կատաղի ու շարանեղ գրպարտությունների էին դիմում դաշնակ գրչակներն ու արտասահմանի հայկական բուրժուազիայի մյուս ձայնափողերը: Նրանք ձգտում էին ամեն կերպ խանգարել ներգաղթի իրականացմանը, վարկաբեկել Սովետական Հայաստանը, ժխտել երկրում ծավալված սոցիալիստական շինարարությունը, մոլորության մեջ գցել գաղութահայ զանգվածներին և այլն:

1924 թ. մայիսին Պոլսից ՀՍԽՀ Ժողկոմխորհին ուղարկած իր ղեկուցագրում Գ. Շահվերդյանը հայտնում էր, որ «գաղ-

⁹ Տե՛ս «Մարմար», Կ. Պոլիս, 23 դեկտեմբերի, 1924 թ., № 50:

¹⁰ Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 25 սեպտեմբերի, 1924 թ., № 219, 2 հոկտեմբերի, № 225 և 7 հոկտեմբերի, № 229:

թականների փոխադրությունը (Հայաստան—Ղ. Մ.) ժողովըրդական մասսաների մեջ մեծ հետաքրքրություն է առաջացրել ինչպես այստեղ, այնպես էլ մյուս գաղութներում: Բայց վարիչ մարմինները (ակնարկում է գաղութահայ գաղթականական ու բարեգործական ազգային հաստատությունների ղեկավարներին—Ղ. Մ.) այնքան էլ գոհ չեն այդ փոխադրությունից: Բանն այն է, որ արտասահմանի բոլոր մարմինները ապրում են գաղթականներով և որքերով, սրանցով են արդարացնում իրենց գոյություն իմաստը, սրանց շնորհիվ են ստանում պաշտոններ ու ապրուստի միջոցներ և այլն: Այսպիսի պայմանների շնորհիվ է, որ ղեկավարները փոխել են իրենց դիրքերը:

Եթե առաջ աշխատում էին ամեն կերպ գաղթականներին ուղարկել Հայաստան, ներկայիս չեն ուզում մատը մատին խփել այդ գործին նյութական օժանդակություն հասցնելու համար: Ճիշտ է հորվածներ են գրում, ժողովներ են գումարում, ծրագրեր են կազմում և այլն: Բայց այդ բոլորն առերես, ներքուստ ամեն կերպ աշխատում են խանգարել գործին»¹¹:

Խոսելով Սովետական Հայաստանի հակառակորդների կողմից ներգաղթի շուրջը ծավալված զրպարուշական կամպանիայի մասին, Գ. Շահվերդյանը նշում է, որ ոմանք այնքան են ատելությունը ցված դեպի սովետական իշխանությունը, որ առաջարկում են երկրի վերաշինության ու ներգաղթի համար գաղութներում հանգանակված գումարները շուղարկել Հայաստան, այլ օգտագործել միայն արտասահմանում: Իրենց շինծու պատճառաբանություններով հաճախ թե որքան ծիծաղելի վիճակի մեջ էին ընկնում այդ արկածախնդիրները, առանց մեկնաբանությունների խոսում է այն փաստը, որ Պոլսում գոյություն ունեցող ազգային իշխանություններն իրենց գաղտնի ժողովներից մեկում 1924 թ. որոշում էին կայացրել գաղթականներին չփոխադրել Հայաստան»:

¹¹ Հայկ. ՍՍՀ 224ՊԱ, ֆ. 113, ց. 3, գ. 54, թ. 10—11:

այլ տեղավորել Աֆրիկայում կամ Ամերիկայում, «որովհետև այնտեղ կրոնը ազատ է»¹²:

Դաշնակցական մամուլի հետ միասին իր հակասովետական քարոզներով և ներգաղթի դեմ ծավալած կամպանիայով այդ տարիներին աչքի էր ընկնում նաև Կ. Պոլսի անկուսակցական կամ չեզոք կոչված «Վերջին լուր» օրաթերթը: Խեղաթյուրելով իրականությունը, արևմտահայ վերնախավերի և մասնավորապես պոլսահայ առևտրական բուրժուազիայի դատի ջատագով Հովհաննես Ասպետը «Վերջին լուր»-ի էջերից շեփոքում էր, թե Սովետական Հայաստանում «ազատություն չկա», իսկ «երբ ազատությունն անհետացած է, կմնա երկիր մը, բայց այլևս հայրենիք մը գոյություն չունի»¹³:

«...Պարտինք շմոռնալ, որ Երևան ո՛չ քաղաքականապես, ո՛չ տնտեսապես, ո՛չ ալ բարոյապես հայություն ամբողջության համար, կամ անոր սովորագույն մասի համար, վերջնական հայրենիք մը հանդիսանալու պետք եղած ապահովության պայմանները չի ներկայացնել տակավին: Ուստի, արտասահմանի հայերուն պարտքն է հոգ տանիլ, որ ուրիշ բնակավայրեր, ուրիշ բույներ ալ գտնվին, իբրև առ այժմ պահեստ մեր ժողովրդին վայրավատին հատվածներուն համար:

Վերջապես, Երևան, ոչ միայն քաղաքական ու տնտեսական, այլև իմացական, հոգեկան, բարոյական ավելի նուրբ տեսակետներով ալ ի վիճակի չէ գոհացնելու հայկական հայրենիքի մը խոտալը»¹⁴, Ղ. Ասպետին համահնչյուն ձայնակցում էր Բյուզանդ Քեչյանը: Բարեբախտաբար, վերջինս չի զլանում բացատրելու, թե ինչո՞ւ Երևանը, այսինքն՝ Սովետական Հայաստանը, չի կարող դառնալ պոլսահայ բուրժուազիայի «հայրենիքի մը խոտալը»: Բանից պարզվում է՝ որովհետև «այսօրվան Հայաստանին մեջ, ուր շուտով կդառնա, կըլլա պոլշեփոթյան միջազգային ատրուշան մը», ուր իբր թե «կրակի կտրվին, կոչնչացվին հայության բոլոր սրբազան

¹² Տե՛ս նույն տեղում, ֆ. 40/113, ց. 3, գ. 305, թ. 39—40:

¹³ «Վերջին լուր», Կ. Պոլիս, 16 հունիսի, 1924 թ., № 3138:

¹⁴ Նույն տեղում, 21 հունիսի, № 3143:

նշխարները» և «պատվական ժողովուրդը, նամանավանդ արևմտահայ գաղութը, պետականորեն կօտարացվի հայութենե, աշխարհաքաղաքացիի լուծ տարրի մը վերածվելով»¹⁵։ Ահա արևմտահայ պահպանողականության տիպիկ ներկայացուցիչ Բյուզանդ էֆենդի Քեչյանի տեսակետներն ու բարբառանքները հայ աշխատավորության սոցիալիստական հայրենիքի՝ Սովետական Հայաստանի մասին։

«Ջգուշանանք նաև հայության բովանդակ նյութական ու բարոյական հաստատություններն ու դրամագլուխները և բոլոր որբերն ու նոր սերունդը Երևան փոխադրել, խորհելով, որ անոնք այլուր ոչ նվազ օգտակար կրնան ըլլալ բոլոր ցեղին և ավելի ապահով»¹⁶, գրում է Բյուզանդ Քեչյանը՝ հակադրվելով գաղութահայ ավելի լրջմիտ այն շրջաններին, որոնք կողմնակից էին որոշ հարստություններ Հայաստան տեղափոխելուն։

«Իր մոլեռանդորեն կիրարկած պոլշեիք սկզբունքները ուրացումն են հայության բնատոհմիկ նկարագրին, անոր իսկապես ազգային հատկանիշներուն», շարունակում է Քեչյանը և հրահանգում, որ հայ գաղթականներն ու որբերը չտեղափոխվեն Հայաստան։ «Ջանանք հայերը տեղավորել, ապրեցնել և կազմակերպել ուր որ կան, կամ ուր որ կրնան բնակիլ, սիրաշահելով տեղային իշխանությունը»¹⁷, հրամայաբար խորհուրդ էր տալիս նա։

«...Մեր մատաղատի ու խոստովանալից որբերը «դեպի կոմսոմոլ» մի ուղարկեք, ուր մնանին սնամէջ վարդապետություններով ու տեսակ մը «բարոյագիտությունով», և վաղվան համար պատրաստվին հալածելու իրենց հայրերուն սուրբ կրոնքը և ազավաղելու ազգային սրբազան լեզուն»¹⁸, քարոզում էր Հովհաննես Ասպետը։

Հայ գաղթականը, հայ որբը թող գնան Արգենտինա, Բրազիլիա, Ուրուգվայ, Աֆրիկայի խորքերը, բայց ոչ երբեք Սո-

¹⁵ Նույն տեղում։

¹⁶ «Վերջին լուր», 21 հունիսի, 1924 թ., № 3143։

¹⁷ Նույն տեղում։

¹⁸ Նույն տեղում, 16 հունիսի, 1924 թ., № 3138։

վետական Հայաստան։ Սովետական Հայաստանը հայության հայրենիքը չէ, հարկավոր է որոնել ու ստեղծել նոր հայրենիքներ— ահա այդ թշվառականների դեղատոմսը, որ առաջարկում էին աստանդական հայ գաղթականին ու որբին։

Այդպես էին վարվում նրանք շարունակ, երբ տեսնում էին, որ սովետական կառավարությունը կազմակերպում է սփյուռքահայ աշխատավորների մասսայական հայրենադարձությունը, տեղավորում, հողով ու այլ անհրաժեշտ միջոցներով ապահովում, հոգ տանում նրանց կարիքների մասին։ Իսկ երբ տնտեսական նեկատառումներով, երբեմն ժամանակավորապես դադարեցվում էր ներգաղթը, դաշնակ ջոջերն ու նրանց սպասավորներն ամբողջ ձայնով գոռում էին, թե «փակել են դռները», թե Սովետական Հայաստանի կառավարությունը թույլ չի տալիս գաղթականությանը երկիր վերադառնալու, որովհետև չի մտածում լուծել նրա հարցը և այլ հերյուրանքներ։

Մինչդեռ ռեալ փաստերը վկայում են, որ այն ժամանակ, երբ Հոննաստանը, Բուլղարիան և այլ երկրներ զանգվածաբար տեղահան էին անում իրենց մոտ ապաստան գտած հայ տարագիրներին, երբ «մարդասեր ու դեմոկրատական» Ամերիկայում հայերից ազատվելու համար հորինում էին ինչ-որ կարտոզյանի գործ և փորձում որոշել այն հարցը, թե հայերը սպիտակամորթ են, թե ոչ, և եթե սպիտակամորթ չեն, ապա չեն կարող ամերիկյան քաղաքացիներ համարվել ու Ամերիկայում ապրելու իրավունք ունենալ, այդ նույն ժամանակ Սովետական Հայաստանն ընդունում էր հազարավոր հայ տարագիրներին։ Այնպես որ, իզուր էր դաշնակ Ս. Մասուրյանը, նա ինքը՝ Ս. Վրացյանը, Կ. Պոլսի ճղճղան «Ճակատամարտ»-ի էջերից խոպոտած կոկորդով սովետական կառավարության հասցեին աղաղակում, թե «բացեք դռները»։ Այդ կարգախոսը դաշնակները մեջտեղ էին հանել հենց այն ժամանակ, երբ սովետական կառավարությունը, ընդառաջելով սփյուռքահայ աշխատավորների ցանկություններին, հայտնել էր իր համաձայնությունը զանգվածային նոր ներգաղթ կազմակերպելու մասին, սակայն այն պայմանով, որ նախօրոք հոգաց-

վեին հայրենադարձների ճանապարհի և որոշ ժամանակ նաև երկրում ապրելու ծախսերը:

Ս. Մասուրյանն անդրադառնալով այդ հարցին, դեմագոգիկ կերպով գրում էր. «Գործնականի մեջ ասիկա կնշանակե, թե Երևանի կառավարությունը գաղթականներու առջև ամուր կփակե Հայաստանի դուռները, որովհետև շատ պարզ է, որ հայ գաղթականներու ճնշիչ մեծամասնությունը չի կրնար ապահովել իր «մեկ տարվան ապրուստը»¹⁹: Այդ կապակցությամբ «մեղադրելով» սովետական կառավարությանը և շանթ ու որոտ թափելով նրա վրա, դաշնակ գրչակն անմեղ ու միամիտ տեսք էր ընդունում: Նա ձևացնում էր, թե բնավ զլխի չի ընկնում, որ ներգաղթողների «մեկ տարվան ապրուստը» հոգալու խնդիրն առաջ էր քաշված արտասահմանում եղած տասնյակ միլիոնների հասնող հայկական հարստությունները, գաղթականների ու որբերի հարցի շահագործումից հղփացած բարեգործական հաստատությունների կուտակած միջոցները և հայ ժողովրդի անունով կտակված գումարները հայրենադարձությանը հատկացնելու համար, այսինքն՝ իրենց կոնկրետ նպատակներին ծառայեցնելու համար: Եվ մի՞թե վրացյաններին պարզ չէր, որ սովետական կառավարությունը չէր կարող առանց ներգաղթողների նյութական միջոցների ապահովման մասին հոգալու, հախուռն կերպով հայրենադարձություն կազմակերպել և նոր աղետների մատնել հազարավոր տարագիրների:

Դաշնակցության պոլսահայ օրգանը խիստ դժգոհում էր նաև այն բանից, որ Սովետական Հայաստանը բոլորի առաջ չէր բացում իր դռները, այլ հատուկ հարցաթերթիկների միջոցով ներգաղթողների վերաբերյալ տեղեկություններ ստանալուց հետո միայն որոշում էր տվյալ անձնավորությանը հայրենադարձության իրավունք ընձեռելու հարցը: Երկար ու ձիգ ճապող դատողություններ անելով այդ հարցաթերթիկի շուրջը և «որոշելով» այն հարցը, թե դրանք թարգմանված են ռուսերենից, թե՞ բնագիրը կազմված է հայերեն, ճշակա-

¹⁹ «Ճակատամարտ», Կ. Պոլիս, 16 ապրիլի, 1924 թ., № 1656 (3486):

տամարտ»-ն իր խմբագրականում եզրակացնում էր, որ «մեր երկիրը փակված է երկաթյա փեղկերով»²⁰: Այո, պարոնայք դաշնակցականների համար և բոլոր նրանց համար, ովքեր անկեղծ չէին մեր հայրենիքի նկատմամբ, այլ շարամտորեն զրպարտում էին նրան, ուղղակի պայքարում նրա դեմ, նրանց առջև երկաթյա փեղկերով փակված էին բոլոր դռները:

Հունաստանում ՍՍՀՄ դեսպան Ա. Մ. Ուստինովի 1925 թ. նոյեմբերի 11-ին արտգործոցնախարարին հղած զեկուցագրում հայտնվում է, որ ներգաղթի աշխատանքներին զգալի չափով խոչընդոտում են տեղի դաշնակցական կազմակերպությունները, այդ գործում ստանալով Սալոնիկում Ազգերի լիգայի ներկայացուցիչ Ցվերների օգնությունը: Սալոնիկում լույս տեսնող «Ալիք» թերթի էջերում, ինչպես նաև բանավոր կերպով, դաշնակները մեծ աղմուկ էին բարձրացրել հայրենադարձության դեմ: Մասսաներին մոլորեցնելու համար նրանք հորինել էին, թե իբր հունահայերը բռնություններ են ուղարկվում Հայաստան և ոչ թե իրենց կամքով, թե հայրենադարձության համար հանգանակված գումարները ծախսվում են ոչ թե ներգաղթողների ուղևորությունը կազմակերպելու, այլ արտասահմանում պրոստիտուտական անլիգալ կազմակերպություններ ստեղծելու ու պահպանելու վրա և այլն²¹:

Ներգաղթը խափանելու նպատակով նրանք դիմում էին ամեն տեսակի ստոր միջոցների, նույնիսկ ՀՕԿ-ի ակտիվ անդամներին կեղծ մատնություններով բանտարկիլ տալու և ուրիշ զազրելի մեթոդներ գործադրելու փորձերի²²:

Օգտագործելով ստի ու կեղծիքի իրենց հարուստ զինանոցը, դաշնակները արտասահմանյան մամուլում լուրեր էին տարածել այն մասին, թե իբր 1925 թ. սկզբներին Հունաստանից Հայաստան ներգաղթածներից շատերը սովետական կառավարության կողմից ենթարկվել են ռեպրեսիաների, իսկ նրանցից մի քանիսը կախաղան են բարձրացվել: Նրանք նույ-

²⁰ Նույն տեղում, 15 ապրիլի, 1924 թ., № 1655 (3485):

²¹ Տե՛ս Հայկ. ՍՍՀ ՀՀԿՊՍ, ֆ. 40/113, ց. 3, գ. 204, թ. 15, գ. 517, թ. 62—63:

²² Տե՛ս նույն տեղում, գ. 517, թ. 62—63:

նիսկ նշել էին կոնկրետ անուններ, շնայած այդ հայրենազարծները հանգիստ ու խաղաղ ապրում էին Լենինական քաղաքում: Տեղեկանալով այդ խեղկատակությանը, բարեբախտաբար միայն դաշնակցական մամուլի էջերում «կախազան հանված» հայրենազարծները «Խորհրդային Հայաստան» թերթում հրապարակում են մի զայրալից բողոք, ուր կոչ են անում արտասահմանի իրենց եղբայրներին, որ շնավատան «գաղութահայության սիրտը պղտորող ու նրա քրտինքը ծծող այդ ինքնակոչ խնամակալներին ու տղրուկներին», որովհետև նրանք իրենց «մշտնջենական արհեստ են ընտրել կեղծիքը, սուտն ու պրովոկացիան»²³:

Բարեբախտաբար գաղութահայ աշխատավորությունն արդեն լավ էր ճանաչում իր իսկական բարեկամներին ու թըշնամիներին և իր ճանապարհից վճռականորեն դեն նետելով բոլոր խոշընդոտները, ձգտում էր ներգաղթել Սովետական Հայաստան:

Ավելորդ համարելով դաշնակների զրպարտությունների մանրամասն թվարկումն ու մերկացումը, դրանց պատասխանելու նպատակով բավականանանք Վառնայում հրատարակվող «Լուսարձակ» թերթից հետևյալ քաղվածքը մեջբերելով, որն ըստ էության բացահայտում է ներգաղթի իսկական կողմնակիցներին ու հակառակորդներին: «Լուսարձակ»-ն իր 1924 թ. հուլիսի 23-ի համարում այդ առթիվ գրում է. «Կ. Պոլսին 10 հազար հայ գաղթականներու Հայաստան փոխադրության մասին կիսովեր, սակայն որքան ատեն որ հայ կառավարությունը ճամբա չէր տար, մամուլը և Կ. Պոլսո ազգային իշխանությունները կպնդեին զանոնք Հայաստան փոխադրելու: Հիմա, որ Հայաստանի կառավարությունը դռները բացած է, կտեղեկանանք թե ոչ ոք չի մտածեր ատոր վրա և անկե ի վեր 7 ամիս է, որ այդ թշվառներուն (Կ. Պոլսում կուտակված գաղթականներին—Ղ. Մ.) նպաստ կտրվի, մինչդեռ այս ծախսված դրամին կեսը կբավեր զանոնք Հայաստան փոխադրելու:

²³ «Խորհրդային Հայաստան», 6 օգոստոսի, 1925 թ., № 177:

Կիմանանք, որ Կ. Պոլսո շոքերը, երբ մեկ կողմն առերես պ. Շահվերտյանի հետ կբանակցին, մյուս կողմն գաղտնի ժողովի մը մեջ խնդիր ըրեր են, որ գաղթականները Մարոք փոխադրեն, քանզի հոն կրոնքը ազատ է եղեր:

Գարակյոզյանն ալ իր Կ. Պոլսո որբանոցը Ֆրանսա կփոխադրե եղեր և Փարիզի շրջակայքը հին պալատ մը գնելու վրա է եղեր:

Ահա թե ինչպես հայ գաղթականները և որբերը կմղվին դեպի օտարացում, դեպի ապազգայնացում բոլոր անոնց կողմն, որոնք կերգնուն հանուն ազգության»²⁴:

Հետևապես հայրենազարծությունը իրականում դեմ էին դաշնակցությունն ու գաղութահայ բուրժուազիան: Նրանք լավ էին հասկանում, որ երկիր տեղափոխվող ամեն մի գաղթական ու ամեն մի որբ լուրջ սպառնալիք են ստեղծում իրենց հետագա գոյության համար, որովհետև ներգաղթի հետևանքով նրանք զրկվում էին այն միջավայրից, ուր դեռևս հնարավորություն ունեին գործելու և ապրելու: Ինչպես նշում է Ալ. Մյասնիկյանը, դաշնակցականներին ձեռնտու էր, «որպեսզի գաղթականությունը Հայաստան չգնա, որովհետև մեկ այդ գաղթականության անունով դաշնակցությունը հանգանակություն կանի հօգուտ իր դրամարկղի, երկուս՝ աջ ու ձախ հայհոյանքներ կթափի մեր գլխին ու կփառաբանի իրեն,—չէ՞ որ բոլշևիկները գաղթականներին «չեն ընդունում», իսկ բարի դաշնակցականները նրանց մասին այնքա՛ն են «մտածում»²⁵:

Բայց հակառակ բոլոր բարբաջանքներին ու ստոր զրպարտություններին, գաղութահայ աշխատավորությունը, մերկացնելով իր թշնամիների նենգ դավերը, բուռն կերպով ձգտում էր դեպի հայրենիք: Գրեթե ամեն օր սովետական կառավարությունը բազմաթիվ դիմումներ էր ստանում բոլոր գաղութների տարագիր երկրագործներից, բանվորներից ու արհես-

²⁴ Քաղվածքը բերված է ըստ Ալ. Մարտունու «Կուսակցությունները գաղութահայության մեջ» գրքի, էջ 44—45:

²⁵ Նույն տեղում, էջ 44:

տավորներից, որոնք պատրաստակամութիւն էին հայտնում իրենց ծախսով մեկնել երկիր ու այնտեղ կառուցել գյուղեր ու ավաններ, վերաշինել հայրենիքը: Շատ դիմումներ էին ստացվում նաև զանազան մասնագիտութիւնների տեր մտավորականներից և հատկապես երիտասարդներից՝ համալսարանում կամ որևէ այլ ուսումնական հաստատութիւնում սովորելու ցանկութեամբ:

Պատասխանելով դաշնակցական պրովոկացիաներին, Հունաստանից Սովետական Հայաստան ներգաղթող մի խումբ աշխատավորներ 1925 թ. հունվարին գրում էին. «Մեր վերջնական օթեանի՝ Սեձ Միութեան ցավագար և անակոա թըշնամիները ալ սուտ ու զրպարտութիւն շմնաց, որ չգրեին ու չխոսեին ներգաղթին շուրջը:

Մենք, ներկա ստորագրյալքս, մոտ օրեն շին Հունաստանի այլևայլ վայրերեն ի. Հայաստան պիտի մեկնինք, մեր սրբազան պարտականութիւնը կհամարինք սույն կոչով զգուշացնել դեպի մեր պաշտած հայրենիքը մեկնողները, որ շըրջան ընող շարանենգ զրույցներուն և ըսի ըսավներուն բնավ կարևորութիւն չտան...»²⁶:

Այնուհետև կոնկրետ փաստերով մերկացնելով դաշնակներիին, կոչի հեղինակները շարունակում էին. «...հոն, մեր տենչալի հայրենիքի մեջ մեզի պիտի տրամադրվին հող, լըծկան, գործիք և ատաղձ, որմե բոլորս ալ զուրկ ենք, քանի դեռ կմնանք օտար հորիզոններու տակ:

Հայրենակիցներ, զգուշ և միշտ զգուշ մեր տունն ավերող և մեզ մոխիրներու վրա նստեցնող օտար, կեղծ մարդասերներ և տարաբախտաբար հայ կոչվող խառնակիչներե, որոնք խիղճերնին սպանած և ամոթի ու պատասխանատվութեան զգացումնին կորսնցուցած ըլլալով իսպառ, իրենց աղտոտ ձեռքերով կուզեն խառնել ձեր խիղճին անգործութիւնը:

Ձոհ մի ըլլաք բանսարկու լեզուներու և վաճառված գրիչներու խաբկանքներուն, որոնք կմիտին ձեր մեջ թշնամանքի որոմ սերմանել: Վստահ ըլլալով, որ մոտ է այլևս ձեր փըր-

²⁶ Հայկ. ՍՍՀ 2249Ա, ֆ. 40/113, ց. 3, գ. 496, ք. 46:

կութեան ժամը, կազմ ու պատրաստ եզեք դեպի Ավետյաց աշխարհը մեկնելու»²⁷:

Սովետական Հայաստանի մի խումբ համակիրներ հունահայ գաղութի աշխատավորներին ուղղված 1925 թ. հոկտեմբերի 28-ին հրապարակված մի այլ դիմումի մեջ, արտահայտելով իրենց անսահման ուրախութիւնը ներգաղթի առթիվ, գրել էին. «Յնժա հայ ժողովուրդ:

Մեծ անձկութեամբ սպասած ժամդ հասավ:

Ամեն ինչ պատրաստ է: Շաբաթ օրը (հոկտ. 31-ին) պիտի սուղվին Ավետյաց երկիրը: Իրականացան քո բոլոր հույսերը:

Իրականացան քո երազները:

Իրականացավ ներգաղթը:

Հասավ ժամը, որ դու անգամ մըն ալ խորհուրդ. Հայաստանի և հայ ժողովուրդի սրտի, մտքի ու կյանքի հետ խաղացող դավաճան դաշնակցականները ճանչնաս»²⁸: Դիմումի մեջ այնուհետև կոչ էր արվում մեկընդմիշտ երես դարձնել այդ բախտախնդիրներից և վստահորեն ընթանալ դեպի հայ աշխատավորութեան միակ հայրենիքը հանդիսացող Սովետական Հայաստան:

«Անոնք խաղացին քո զգացումներուն հետ: Թունոտ սլաքներով խոցոտեցին սիրտդ, պղտորեցին միտքդ:

Այսօր դու ճակատ առ ճակատ կանգնած ես քեզ խաբող, քո զգացումները անարգող և քո կյանքի հետ խաղացող դավաճաններուն հետ:

Այսօր խոսելու կարգը քուդ է:

Դավաճանը պետք է դիմակազերծ ըլլա:

Դավաճանը պետք է հաշիվ տա իր ըսածներուն ու գրածներուն:

Դու՛ հայ ժողովուրդ, բնական հատկութիւններդ արժեցուր:

Դու ցույց տուր, որ քո սեփական դատողութիւնը ունիս:

Յույց տուր, որ իրականութիւնը կտեսնես: Յույց տուր,

²⁷ Նույն տեղում:

²⁸ Հայկ. ՍՍՀ 2249Ա, ֆ. 40/113, ց. 3, գ. 496, ք. 47:

որ պատրաստ ես ամեն ճակատի վրա հարվածելու քո հայրենիքի դավաճանները:

Ներգաղթի իրականացումը անգամ մըն ալ երևան հանեց «մարտական կուսակցության» բարոյական սնանկությունը:

Անկցի՛ն ուրեմն օտար զրպարտիչները:

Անկցի՛ն դավաճան դաշնակցականները:

Կեցցե՛՛ Խորհուրդ. Հայաստանը և հայ ժողովուրդի միակ պաշտպան հայ կառավարությունը»²⁹:

Ահա այսպես էր մտածում ու գործում գաղութահայ աշխատավորության ճնշող մեծամասնությունը: Եվ սովետական կառավարությունը, շնայելով ոչ մի խոչընդոտի, զրպարտության ու պրովոկացիայի, ժողովրդական տնտեսության մեջ ձեռք բերված հաջողություններին զուգընթաց իրականացնում էր սփյուռքահայ աշխատավորների հայրենադարձությունը:

²⁹ Նույն տեղում:

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԱԶԳԵՐԻ ԼԻԳԱՅՈՒՄ ԵՎ ՆԱՆՍԵՆՅԱՆ ՄՐԱԳԻՐԸ

Սփյուռքահայերի հայրենադարձության իրականացման ուղղությամբ դեռևս 20-ական թվականների սկզբում սովետական կառավարության կատարած աշխատանքն էլ ավելի ակնառու է դառնում, երբ այն դիտվում է այդ տարիներին հայ գաղթականության նկատմամբ արևմտյան տերությունների և Ազգերի լիգայի վարած քաղաքականության հետ զուգընթաց:

Ինչպես իր տեղում տեսանք, իմպերիալիստական տերությունները, որոնք թուրքական կառավարության հետ միասին առավել կամ պակաս պատասխանատվություն էին կրում արևմտահայության աշխարհով մեկ սփռվելու և նրա ծանր վիճակի համար, Լոզանի կոնֆերանսում վերջնականապես լքեցին հայկական հարցը և հայ գաղթականությանը մի ապահով օջախ հատկացնելու խնդիրը: Համաշխարհային հասարակայնության առաջ իրենց լիովին շմերկացնելու նպատակով, արևմտյան տերությունները այդ հարցերը հանձնեցին Ազգերի լիգայի տնօրինությանը: Օտար երկրներում անտուն ու անտեր տարիներ շարունակ դեգերող հայ տարագիրները ապարդյուն հույս էին տածում, թե պատերազմը վերջանալուց և խաղաղությունը վերականգնվելուց հետո իրենք հնարավորություն կստանան վերադառնալու իրենց հայրենի օջախները: Մի կողմից այդ հույսերի իրականացման հրապուրիչ հեռանկարների, իսկ մյուս կողմից, և առանձնապես, նոր բնակավայրերում գոյություն ունեցող քաղաքական ու տրնտեսական անբարենպաստ պայմանների հետևանքով հայ տա-

րագիրները չէին կարողանում հիմնավորվել օտար ասիերում: Դեռ ավելին. շատ երկրներից նրանք արտաքսվում էին զանգվածաբար:

Շուտով ավարտվեց նաև պատերազմը. տեղի ունեցավ իմպերիալիստական դիվանագետների համաժողովը, կնքվեցին (թեև հակասություններով ու անարդարություններով լի) հաշտության պայմանագրերը, և թվում էր, թե ամեն ինչ կմտնի իր բնականոն ընթացքի մեջ, բայց դրանից հետո էլ հայ պանդուխտների վիճակը երկար ժամանակ մնում էր անորոշ:

Հայ, հույն և այլազգի գաղթականների թշվառ կացությունն իբրև թե բարելավելու նպատակով, երկար ժամանակ և ապարդյուն կերպով, զբաղվում էր վերստյան սիստեմի ծնունդ և հիմնականում իմպերիալիստական մեքենայությունների քողարկիչ Ազգերի լիգան: Դեռևս իր առաջին նստաշրջանում, 1920 թ. գարնանը, Ազգերի լիգան, անդրադառնալով հայ գաղթականության հարցին, հայտարարել է, թե անհրաժեշտ է, որ տերությունները միջոցներ ձեռնարկեն «ըստ կարելիության շուտ վերջ տալու հայկական սարսափելի ողբերգությունը» և ապահովեն այդ ժողովրդի ապագան¹:

Այնուհետև համանման որոշումներ էին կայացվել Ազգերի լիգայի հաջորդ նստաշրջաններում, միաժամանակ խնդիր էր դրվել, որ Սևրի պայմանագրի վերանայման նպատակով Թուրքիայի հետ բանակցելիս առաջ քաշվի արևմտահայության մնացորդների համար ազգային օջախ ստեղծելու պահանջը²:

Այսպես, Ազգերի լիգայի երկրորդ նստաշրջանում, 1921 թ. սեպտեմբերին, միաձայն ընդունվել էր անգլիական ներկայացուցիչ Ռոբերտ Սեսիլի առաջարկած բանաձևը, որը զբլխավոր խորհրդին դարձյալ կոչ էր անում ապահովել Հայաստանի ապագան և ամենից առաջ հայերին հատկացնել օսմանյան գերիշխանությունից բոլորովին անկախ մի ազգային

¹ Տե՛ս Fridtjof Nansen, Betrogenes Volk. Leipzig, 1928, էջ 330.

² Նույն տեղում:

օջախ³: Ազգերի լիգայի երրորդ նստաշրջանը, 1922 թ. սեպտեմբերին, նորից միաձայն որոշում էր կայացրել այն մասին, որ Թուրքիայի հետ խաղաղության բանակցությունների ժամանակ չպետք է աչքաթող անել հայերի համար ազգային օջախ ստեղծելու անհրաժեշտությունը: Ազգերի լիգայի ժողովն առաջարկել էր խորհրդին՝ այդ նպատակն իրագործելու համար ձեռք առնել բոլոր անհրաժեշտ միջոցները⁴:

Շատ շանցած, լողանում տեղի ունեցած կոնֆերանսում իմպերիալիստական դիվանագետությունը նորից դրսևորեց իր անսթող վերաբերմունքը հայկական հարցում և այն ձևակա- նորեն կտակեց Ազգերի լիգային:

Ազգերի լիգայի նիստերում, շորս-հինգ տարի շարունակ, դարձյալ այդպես ապարդյուն կերպով հոլովվում էր հայ գաղթականներին ապաստան տալու հարցը: Խոսքն այն մասին էր, որ սփյուռքահայ այն տարագիրների համար, որոնք գտնվում են առավել դժվարին ու անկայուն դրության մեջ և դուրս են մղվում արդեն հաստատված երկրներից (Հունաստան, Բուլղարիա, Սիրիա, ինչպես նաև Թուրքիայում մնացած հայերը), անհրաժեշտ է գտնել մի հաստատուն բնակավայր: 1923 թ. աշնանը կրկին անդրադառնալով այդ խնդրին, Ազգերի լիգան որոշում է կայացնում՝ ուսումնասիրել մոտ 50 հազար հայ գաղթականների Սովետական Հայաստանում տեղավորելու հնարավորությունը: Բայց այդ բոլոր որոշումներն էլ մնում էին թղթի վրա, թեև այդ առթիվ սովետական կառավարու- թյունը բազմիցս հայտնել էր իր պատրաստակամությունը⁵:

Սովետական կառավարությունը, ընայած եղած դժվարու- թյուններին, պատրաստակամություն էր հայտնում լրացուցիչ ընդունել մի քանի տասնյակ հազար գաղութահայ աշխատավորների, եթե նրանց տեղափոխման և հատկացվելիք հողա- մասերի ոռոգման համար պահանջվող գումարները հայթայ- թեին գաղթականության անունից հաճախ խոսող արտասահ- մանյան բարեգործական կազմակերպությունները կամ տրա-

³ Տե՛ս Տր. Նանսեն, նշված աշխատությունը, էջ 330:

⁴ Տե՛ս նույն տեղում:

⁵ Տե՛ս «Վերջին լուր», 1 հոկտեմբերի, 1923 թ., № 2917:

մադրվեին այլ աղբյուրներից, թեկուզ Ազգերի լիգայի անդամ պետությունների ու եվրոպական բանկերի կողմից՝ երկար-ժամկետ փոխառությունների ու վարկերի ձևով:

Երկրից վտարված դաշնակցությունը և արևմտյան դիվանագիտությունը, որոնք հաճախ փորձում էին մեղադրել սովետական իշխանությանը գաղութահայերի նկատմամբ անհոգատարության մեջ, այլևս ոչինչ չէին կարող ասել: Սովետական կառավարության այս պարզ ու գործնական հայտարարությունը լիովին փակում էր բոլոր այն զրպարտիչների բերանը, ովքեր սփյուռքահայ աշխատավորների շրջանում լուրեր էին տարածում, թե իբր նա չի հոգում հայ տարագիրների մասին, թե դեմ է ներգաղթին, փակել է երկրի դուռները և այլն:

Եվ ահա Ազգերի լիգան, որպեսզի հասարակայնության առջև լիովին շվարկաբեկեր իրեն, ստիպված էր որոշ քայլերի դիմել: Այնտեղ՝ Ազգերի լիգայում եղած խոսակցություններից դատելով, կարելի էր հանգել այն մտքին, թե 50 հազար հայ գաղթականներին Սովետական Հայաստան տեղափոխելու, նրանց սովետական կառավարության կողմից առաջարկված Սարդարապատի դաշտում տեղավորելու (նախօրոք այն դարձնելով ոռոգելի), բնակարաններով, գյուղատնտեսական գործիքներով, անասուններով ապահովելու և այլ միջոցառումներ իրականացնելու համար անհրաժեշտ է 4,7 միլիոն դոլար կամ 1 միլիոն ֆունտ ստերլինգ գումար: Այդ գումարը ձեռք բերելու համար տարբեր առաջարկներ էին արվում: Ոմանք առաջարկում էին վերոհիշյալ գումարը ձեռք բերել կամ կառավարություններից խնդրելով, կամ մշակվելիք հողամասերից ստացվող եկամուտներով երաշխավորված երկարաժամկետ փոխառության միջոցով: Փոխանակ ռեալ և կտրուկ միջոցներ մտածելու այդ խնդրի լուծման ուղղությամբ, 1923 թ. սեպտեմբերին Ազգերի լիգայի խորհուրդը դարձյալ որոշում է սկզբունքով ընդունել հայ գաղթականներին Սովետական Հայաստան տեղափոխելու ծրագիրը և հանձնարարել լիգայի ընդհանուր քարտուղարությանը՝ այդ

մասին մի մանրամասն տեղեկագիր նախապատրաստել և ներկայացնել հաջորդ նստաշրջանին⁶:

Իրականում, ոչ ոքի ոչինչ չպարտավորեցնող բազմաթիվ անատամ որոշումներ ընդունելով, լիգան փաստորեն տարեցտարի ձգձգում էր հայ գաղթականությանը Հայաստան տեղափոխելու համար անհրաժեշտ միջոցների հայթայթման գոնե հնարավորությունը պարզելու հարցը: Վերջապես, 1924 թ. սեպտեմբերի 25-ին, Ազգերի լիգայի հինգերորդ ընդհանուր «ժողովը» հաշվի առնելով այն որոշումները, որ առաջին, երկրորդ, երրորդ ընդհանուր ժողովները, ինչպես և խորհուրդն ընդունել են ի նպաստ հայերի, ցանկանալով արտահայտել իր համակրությունը այս դժբախտ ազգության հանդեպ, ուսումնասիրելով այն ձևակերպված առաջարկները, որ վերաբերում են հայ գաղթականներին Կովկասում և ուրիշ շրջաններում տեղավորելուն, աննպատակահարմար համարելով այս առաջարկների մասին որևէ կարծիք արտահայտել, մինչև որ նրանք մի խորը և անկողմնակալ ուսումնասիրության առարկա չդառնան» որոշում է հանձնարարել աշխատանքի միջազգային բյուրոյին՝ Ֆրիտյոֆ Նանսենի աշխատակցությամբ Սովետական Հայաստանում ձեռնարկել մի ուսումնասիրություն, որը նպատակ պիտի ունենար քննելու մեծ թվով հայ գաղթականների այնտեղ տեղավորելու հնարավորությունը⁷:

Այս որոշման համաձայն աշխատանքի միջազգային բյուրոն կազմում է էքսպերտների մի փոքրիկ հանձնաժողով, որը պետք է մեկներ Սովետական Հայաստան և բազմակողմանի ուսումնասիրությունների հիման վրա Ազգերի լիգային ներկայացնել մեծ թվով գաղթականների Հայաստանում տեղավորելու մասին հիմնավորված առաջարկներով զեկուցագիր: Ազգերի լիգային առընթեր աշխատանքի միջազգային բյուրոյի հատուկ հանձնարարականով հանձնաժողովի Սովետական Հայաստան գալուն, հանուն աշխատավոր հայ գաղթականության տառապանքների շուտափույթ լիկվիդացման,

⁶ Տե՛ս «Վերջին լուր», 8 հոկտեմբերի, 1923 թ., № 2923:

⁷ Տե՛ս Հայկ. ՍՍՀ ՀՀԿՊԱ, ֆ. 40/113, ց. 3, գ. 372, թ. 7:

դրականապես են վերաբերվում ՀամԿ(բ)Կ Կենտկոմը և ԽՍՀՄ կառավարութունը, թեև մեծ հույսեր ու սպասելիքներ չունենին իմպերիալիստական դիվանագիտութայան կամակատար Ազգերի լիգայից:

1925 թ. մարտի 26-ին այդ հարցը քննարկվում է ՀամԿ(բ)Կ Կենտկոմում և որոշվում է «չառարկել հայ գաղթականների վերաբնակեցման համար Հայաստանում առաջարկված վայրերի նախնական ուսումնասիրման նպատակով օտարերկրյա հատուկ հանձնաժողով գալու դեմ, պայմանով, որ այդ հանձնաժողովը համատեղ աշխատի նույն նպատակով ՀՍԽՀ կառավարության կողմից ստեղծվելիք հանձնաժողովի հետ, և որ ՀՍԽՀ կառավարությանը ներկայացվի հաշվետվություն՝ օտարերկրյա հանձնաժողովի աշխատանքների արդյունքների մասին»⁸:

Եվ ահա 1925 թ. հունիսի 14-ին Բաթում է ժամանում հայ գաղթականներին Սովետական Հայաստանում տեղավորելու հետ կապված հարցերի ուսումնասիրման համար Ազգերի լիգայի հանձնաժողովը՝ Ֆրիտյոֆ Նանսենի գլխավորությամբ⁹: Բացի Նանսենից և նրա քարտուղար Վ. Քվիսլինգից, հանձնաժողովի կազմում էին ֆրանսիացի ինժեներ-գյուղատնտես Ժ. Կարլը՝ հանձնարարված Ֆրանսիայի հողագործության միևնրստրության կողմից, ռոտզման գծով ինժեներ, Եգիպտոսի հանրային աշխատանքների մինիստրության նախկին խորհրդատու, անգլիացի Չարլզ Դյուպյուին և գաղթականության հարցերին լավատեղյակ ու ռոտզման գծով ինժեներ Խուալացի Պիո Լո Սավիոն¹⁰: Մի երկու օր Վրաստանում անցկացնելուց հետո, հունիսի 17-ին նրանք մեկնում են Հայաստան: Հանձնաժողովի անդամներին Վենինականում ընդունում են ՀՍԽՀ հողագործության ժողկոմ Ար. Երզնկյանը, ներքաթոժողկոմ Հ. Դուրգերյանը և ուրիշներ: ՀՍԽՀ կառավարության անունից ողջունելով հանձնաժողովի Հայաստան ժա-

⁸ Նույն տեղում, գ. 454, թ. 200:

⁹ Տե՛ս «Շորհրդային Հայաստան», 16 հունիսի, 1925 թ., № 135:

¹⁰ Տե՛ս Յ. Կանսեն, նշված աշխատությունը, էջ 6:

մանումը, Ար. Երզնկյանն ասում է, որ Ֆրիտյոֆ Նանսենն արդեն վաղուց հայտնի է ԽՍՀՄ ժողովուրդներին որպես հին բարեկամի և մեծապես գնահատվում է սովի դեմ ռուս ժողովրդի մաքառման ծանր տարիներին նրա ցույց տված օգնությունը:

Ֆր. Նանսենն իր պատասխան խոսքում ուրախություն է հայտնում, որ հայ ժողովրդին, որի անցյալի տառապանքներին ինքը լիովին ծանոթ է, հանդիպում է Արարատի ստորոտում, նրա հայրենիքում, որտեղ արագորեն վերականգնվում է երկրի ավերված տնտեսությունը և վերածնվում կուլտուրան: Այնուհետև նա նշում է, որ իրենց նպատակն է պարզել արտասահմանի հայ գաղթականների մի սովար զանգվածի Սովետական Հայաստան տեղափոխելու հետ կապված մի շարք հարցեր¹¹:

Նույն օրը Նանսենի հանձնաժողովը ժամանում է Երևան: Երևանի կայարանում նրան դիմավորում են ժողովուրդի նախագահի տեղակալ Ասք. Մուսվաթյանը և մայրաքաղաքի հասարակայնության բազմաթիվ ներկայացուցիչներ: Այնուհետև Նանսենը և հանձնաժողովի մյուս անդամները այցելում են ՀՍԽՀ ժողկոմխորհի նախագահ Ս. Սրապիոնյանին (Լուկաշին) և Կենտգործկոմի նախագահ Ս. Համբարձումյանին: Նրանք հավաստիացնում են Նանսենի հանձնաժողովին, որ սովետական կառավարության կողմից լայն հնարավորություններ կտրվեն նրան հետաքրքրող բոլոր հարցերը մանրամասնորեն ուսումնասիրելու համար, ինչպես նաև տեղում ծանոթանալու այն բոլոր հողամասերին, որոնց վրա նախատեսվում է բնակեցնել երկիր ներգաղթող սփյուռքահայ աշխատավորներին: Միաժամանակ հայտնվում է, որ այդ հողամասերի ռոտզման վերաբերյալ եղած պատրաստի նախագծերը նույնպես կտրամադրվեն հանձնաժողովին: Ապա Ասք. Մուսվաթյանի նախագահությամբ տեղի է ունենում ՀՍԽՀ կառավարական հատուկ հանձնաժողովի (ժողկոմխորհին առընթեր աշխատավորական ներգաղթի հանձնաժողով) և նան-

¹¹ Տե՛ս Հալիական ՍՍՀ 2249Ա, ֆ. 40/113, ց. 3, գ. 518, թ. 7:

սենյան հանձնաժողովի համատեղ նիստը՝ մի խումբ հայ մասնագետների մասնակցությամբ: Նանսենը հաղորդում է, որ վերջին շրջանում Հունաստանում, Թուրքիայում (Կ. Պոլսում), Սիրիայում և այլ երկրներում հայ գաղթականության վիճակը խիստ վատթարացել է և այդ կապակցությամբ իրենց նպատակն է ուսումնասիրել մոտավորապես 50.000 տարագիրների Հայաստան տեղափոխելու հնարավորությունը: Օրինակ, Հունաստանում, ուր հունական կառավարությունը սկզբում լավ ընդունելություն էր ցույց տվել հայ տարագիրներին, այժմ 1,5 միլիոն հույն գաղթականներին տեղավորելու համար հայերին հանում է նրանց հաստատված վայրերից և նույնիսկ արտաքսում երկրից: Նանսենը նշում է, որ գաղութահայ աշխատավորները ձգտում են տեղափոխվել Սովետական Հայաստան և ոչ ուրիշ տեղեր: Հետևապես պետք է լրջորեն հաշվի առնել նրանց այդ օրինական ցանկությունը: Ծլնելով դրանից, նիստում նախնական քննարկման են ենթարկում գաղթականությանը Հայաստանում տեղավորելու հետ կապված ծրագրերը, մասնավորապես մանրամասն ուսումնասիրության առարկա է դառնում Սարդարապատի ոռոգման նախագիծը¹²:

Հունիսի 18-ին Նանսենի հանձնաժողովը, ՀՍԽՀ աշխատավորական ներգաղթի հանձնաժողովի ներկայացուցիչ, ներքգործողկոմ Հ. Դուրգերյանի, ակադեմիկոս Ալ. Թամանյանի և մի խումբ այլ մասնագետների ուղեկցությամբ մեկնում է Սարդարապատ, տեղում ծանոթանում ոռոգման ենթակա հողամասերի և Սարդարապատի մեծ ու փոքր ջրանցքների կառուցման նախագծերի հետ: Հանձնաժողովի մասնագետ անդամները մանրազնին ուսումնասիրում են տեղի բնակլիմայական պայմանները, հողի կազմությունը, ցանքսերի վիճակը և այլն¹³:

Հունիսի 19-ին Նանսենի հանձնաժողովի անդամները Հ. Դուրգերյանի և մի խումբ մասնագետների ուղեկցությամբ

մեկնում են Ալագյազ կայարանը, այնտեղից էլ հաջորդ առավոտյան ուղևորվում Արփաշայի հովիտը և տեղում ծանոթանում ինժեներ Զավալիշիևի կողմից դեռևս 1913—1914 թթ. պատրաստված Սարդարապատի մեծ ջրանցքի նախագծի հետ, ըստ որի ոռոգվելու էր մոտ 48.000 դեսյատին խոպան ու անջրդի տարածություն: Հայ մասնագետները եվրոպացի ինժեներներին բացատրում են նախագծի տեխնիկական բոլոր մանրամասնությունները, հողի շերտերի կազմությունը, գետի հունի վրա կառուցվելիք պատնեշի տեղը և այլն¹⁴:

Ալագյազից Նանսենը և հանձնաժողովի մյուս անդամները ուղևորվում են Լենինական, ուր հունիսի 21-ին ներկա են գտնվում Շիրակի ջրանցքի բացման հանդիսավոր արարողություններին: Դրանք հետագայում պատկերավոր նկարագրության են արժանացել Նանսենի գրքում¹⁵:

Այնուհետև Նանսենը և նրան ուղեկցողները շրջագայում են Ղարաբաղիսայի (այժմ՝ Կիրովական), Ստեփանավանի և Դիլիջանի շրջանները ու Սևանի ճանապարհով վերադառնում Երևան: ՀՍԽՀ կառավարական հանձնաժողովի հետ դարձյալ մի քանի նիստեր ունենալուց հետո, ընդհանուր համաձայնության գալով, Նանսենի խումբը հուլիսի 2-ին մեկնում է Թբիլիսի, որտեղից հանձնաժողովի երեք անդամները Բաթումով մեկնում են Եվրոպա, իսկ Ֆր. Նանսենն իր քարտուղարի հետ միասին՝ Մոսկվա: Այնտեղ Նանսենը հանդիպումներ ուզույցներ է ունենում ՍՍՀՄ արտգործոց Հ. Վ. Զիչերիևի և հողագործության ժողկոմի տեղակալ Սվիրդեբրսկու հետ, նրանց հաղորդում Հայաստանում իր ստացած տպավորություններն ու հետագա ծրագրերը և 1925 թ. հուլիսի 21-ին ճանապարհվում Օսլո:

Երևանից մեկնելուց առաջ, բանակցությունների ընթացքում ձեռք բերված համաձայնության հիման վրա, Ֆր. Նանսենը ՀՍԽՀ կառավարությանն է ներկայացնում մոտ 50.000 գաղթականներին Հայաստանում տեղավորելու մասին իր

¹² Տե՛ս նույն տեղում, գ. 373, թ. 1—5:

¹³ Տե՛ս «Նորհրդային Հայաստան», 21 հունիսի, 1925 թ., № 140:

¹⁴ Տե՛ս նույն տեղում, 24 հունիսի, 1925 թ., № 142:

¹⁵ Տե՛ս Ֆր. Նանսեն, նշված աշխատությունը, էջ 164—174:

նկատառումներն ամփոփող հուշագիրը: Այդ հուշագրում Նանսենը հայտնում է, որ Արարատյան դաշտում ոռոգման և ճահիճների շորացման միջոցով նոր հողերի յուրացման վերաբերյալ Հայաստանի կառավարության առաջադրած բոլոր նախագծերն էլ իրենք գտնում են իրագործելի և ընդհանուր առմամբ հարմար: Նա միաժամանակ նշում է, որ հայ գաղթականության խնդրի արմատական լուծման լավագույն եղանակը սովետական կառավարության առաջադրած բոլոր նախագծերի իրագործումն ու Հայաստանի արդյունաբերական ներառվորությունների հետագա զարգացումն է: Սակայն, քանի որ իրենք դժվարանում են բավարար միջոցներ գտնել բոլոր նախագծերի միաժամանակյա ֆինանսավորման համար, ուստի նպատակահարմար են գտնում առայժմ մի կողմ թողնել Սարդարապատի դաշտի ոռոգման պլանը և սկզբում սահմանափակվել ավելի քիչ ծախս պահանջող մյուս ծրագրերի իրագործման համար դրամի ձեռք բերումով: Նանսենի կարծիքով դրանք էին՝ Երևանի արևելյան և արևմտյան մասերում եղած 19.000 դեսյատին տարածությունները դոբրի ոռոգման ջրանցքի կառուցումը, որը պահանջում էր 2 միլիոն ռուբլի և Սև ջրի (Ղարասու) հովտի ու Զանգիբասարի ջրջանի 14.000 դեսյատին ընդհանուր տարածությունները ճահիճների շորացումն ու ոռոգումը, որի համար անհրաժեշտ էր 2,1 միլիոն ռուբլի ներդրում¹⁶:

Այսպիսով, Սարդարապատի դաշտի ոռոգման նախագիծը, որպես համեմատաբար թանկ նստող և իրականացման համար երկար ժամանակ պահանջող նախագիծ, Նանսենի հանձնաժողովը մի կողմ էր թողնում, որպեսզի արտասահմանում պրոպագանդեր ու միջոցներ որոնեն ոռոգման ու ճահիճների շորացման ավելի էժան արժեցող մյուս պլանների համար:

Ըստ դրա 33.000 դեսյատին տարածությունները նոր հողերի յուրացման համար, նախնական հաշվումներով, պահանջվում էր 4,1 միլիոն ռուբլի: Նանսենը այդ գումարին ավելացնում էր նաև 900 հազար ռուբլի ծախս՝ շնախատեսված աշխա-

տանքների համար: Բացի դրանից, ներգաղթող տնտեսություններին այդ հողերի վրա տեղավորելու, բնակարաններ, գյուղատնտեսական գործիքներ, սերմացու, անասուններ և այլ միջոցներ տրամադրելու համար անհրաժեշտ կլինեն ունենալ ևս 3 միլիոն ռուբլի: Հետևաբար, ընդհանուր գումարը հավասար կլինի 8 միլիոն ռուբլու, առանց գաղթականներին մինչև սովետական երկիր տեղափոխելու ծախսերի, որոնք ըստ Նանսենի, կարելի էր ստանալ այլ աղբյուրներից՝ շահագրգռված կառավարությունների օգնությամբ:

Հիմնական ծախսերի 8 միլիոն ռուբլի գումարը ձեռք բերելու և նախատեսված ծրագրերն իրականացնելու համար Նանսենի կարծիքով գոյություն ունեւ երեք ուղի: Առաջին՝ բարեգործական ընկերությունների միջոցով հանգանակություն անցկացնելու ուղիով, երկրորդ՝ եվրոպական պետություններից վարկի ձևով կամ որպես նպաստ ստանալու միջոցով և երրորդ՝ եվրոպական բանկերից փոխառություն վերցնելով:

Սակայն հենց ինքը Նանսենն իրավացիորեն նշում էր, որ առաջին երկու ուղիներն էլ դժվար իրագործելի են, որովհետև այդքան մեծ գումարն անհնար է բարեգործական հիմնարկների կազմակերպած հանգանակության միջոցով կամ եվրոպական կառավարություններից վարկերի ու նպաստի ձևով ստանալը: Հոնաստանում գաղթականությանը տեղավորելու իր փորձից ելնելով, Նանսենը գտնում էր, որ միակ նպատակահարմար ելքը անհրաժեշտ գումարը փոխառությունների միջոցով ձեռք բերելու ուղին է: Հայտնելով իր մասնավոր կարծիքը, Նանսենը խորհուրդ է տալիս օգտվել նաև կոնցեսիոն ձեռնարկների կազմակերպման հնարավորությունից: Այսպիսով, հիմնական ծախսերի համար անհրաժեշտ 8 միլիոն ռուբլին Նանսենը մտածում էր հայթայթել փոխառության միջոցով, հույս ունենալով, որ մի մասն էլ հավանաբար կգոյանա նվիրատվությունների ձևով, և այդ դեպքում փոխառության գումարը համապատասխանաբար կնվազի: Ընթացվում էր, որ փոխառությունը կլինի երկարատև՝ 15—20 տարի ժամանակով, 10 տոկոսից ոչ ավելի շահով և երաշխա-

¹⁶ Տե՛ս Հայկական ՍՍՀ 2249Ա, ֆ: 40/113, ց. 3, գ. 373, թ. 6—7:

վորված կլինի ԽՍՀՄ և ՀՍԽՀ կառավարությունների կողմից: Փոխառությունը բացառապես պետք է ծախսվեր ներգաղթողներին հատկացվելիք հողերի ոռոգման ու ճահիճների շտրացման, ինչպես նաև հայրենադարձներին տեղավորելու և բնակարաններով ու այլ միջոցներով ապահովելու վրա: Դրա համար Նանսենն առաջարկում էր թույլատրել Հայաստանում ունենալ փոխատուների ներկայացուցիչների մի կոմիտե՝ փոխառության գումարների ծախսմանը հսկելու համար: Նանսենը հույս էր հայտնում, որ գաղթականության տեղափոխման համար հնարավոր կլինեին օգտագործել նաև այն գումարները, որոնք հայերի կողմից դրվել են եվրոպական բանկերում, Թուրքիայից արտասահման գաղթելուց առաջ¹⁷:

Համաձայնվելով Նանսենի առաջ քաշած գրեթե բոլոր պայմանների հետ, ՀՍԽՀ Ժողկոմխորհի նորընտիր նախագահ Ս. Համբարձումյանը հայտարարում է, որ ինչպես ներգաղթող բոլոր մյուս աշխատավորները, այնպես էլ այդ 50.000 հայ տարագիրները Հայաստան տեղափոխվելիս կօգտվեն մի շարք դյուրություններից ու արտոնություններից: Նրանց ապրանքները ազատ կլինեն մաքսից և այլ տուրքերից, համաձայն ԽՍՀՄ աշխատանքի և պաշտպանության խորհրդի աշխատավորական ներգաղթի մշտական կոմիտեի 1923 թ. օգոստոսի 16-ի որոշման¹⁸: Բաթումից մինչև Հայաստանում նրանց հատկացվելիք բնակավայրերը կփոխադրվեն առանց ճանապարհավարձի, հողը կատանան ձրի, առաջին երեք տարիների ընթացքում ազատ կլինեն հարկերից, բացառությամբ փոխառության դիմաց վճարվելիք տոկոսների ու ամորտիզացիոն ծախսերը մարելու համար նշանակված տուրքերի և մեկ-երկու տարի ազատ կլինեն նաև զինվորական ծառայությունից¹⁹:

Ստանալով այս հավաստիացումները, Նանսենը հույս է հայտնում, որ նշված բոլոր միջոցառումների իրականացման

¹⁷ Տե՛ս Հայկ. ՍՍՀ 224ՊԱ, ֆ. 40/113, ց. 3, գ. 373, թ. 6—7:

¹⁸ Տե՛ս նույն տեղում, գ. 494, թ. 12 և ֆ. 113, ց. 13, գ. 4, թ. 1—2:

¹⁹ Տե՛ս նույն տեղում, գ. 320, թ. 3—5:

շնորհիվ կարելի է այդ վայրերում բնակեցնել մոտավորապես 25.000—30.000 մարդ, որով կլուծվեր արտասահմանում ամենազովարին կացության ու սուր կարիքի մեջ գտնվող հայ գաղթականների հարցը: Այդ ծրագրի կենսագործումից հետո, Նանսենի կարծիքով, իրենք կկարողանային ձեռնամուխ լինել ավելի մեծ գումար պահանջող նախագծերի՝ այդ թվում նաև Սարգարապատի դաշտի ոռոգմանը²⁰:

Հայաստան կատարած ուղևորությունից վերադառնալուց հետո Նանսենը և նրան ուղեկցող մասնագետներն իրենց ուսումնասիրությունների հիման վրա կազմում են մի ծավալուն զեկուցում և այն ներկայացնում Ազգերի լիգայի ընդհանուր ժողովի քննարկմանը: Այդ զեկուցման հիմնական եզրակացությունը հանգում էր այն մտքին, որ հնարավոր ու նպատակահարմար է Սովետական Հայաստանում ընդարձակ հողամասերի ոռոգման և ճահիճների շտրացման միջոցով սփյուռքահայ մոտ 50.000 գաղթականների համար ստեղծել նոր բնակավայրեր: Դրա համար անհրաժեշտ է Սովետական Հայաստանի կառավարությանը հատկացնել մոտ մեկ միլիոն ֆունտ ստերլինգի փոխառություն:

Տր. Նանսենի գլխավորած հանձնաժողովի զեկուցումը Ազգերի լիգայի շրջանակներում և նրա մի քանի հանձնաժողովների նիստերում ենթարկվում է մանրակրկիտ քննարկման: 1925 թ. սեպտեմբերի 10-ին այդ զեկուցումը լսվում է Ա. Թոմայի նախագահությամբ գործող աշխատանքի միջազգային բյուրոյի գաղթականների բաժնին առընթեր խորհրդրդակցական կոմիտեում, ուր ներկա են լինում նաև գաղութահայ մի շարք կազմակերպությունների և հայ տարագիրներին օգնող օտարերկրյա ընկերությունների ներկայացուցիչներ: Նանսենի զեկուցումն ու ներկայացրած նախագծերը արժանանում են գաղութահայ աշխատավորների ջերմ հավակրանքին ու միահամուռ հավանությանը: Գաղութահայ հասարակայնության ներկայացուցիչներն իրենց ելույթներում նշում են, որ լիովին պաշտպանում են Նանսենի նախագծերը

²⁰ Տե՛ս նույն տեղում, գ. 373, թ. 10—17:

և խոստանում են ցույց տալ ամեն տեսակ բարոյական ու նյութական աջակցություն: Նույն ոգով են արտահայտվում նաև հայասերների լիզայի և օտարերկրյա բարեգործական ընկերությունների ներկայացուցիչները՝ գտնելով, որ այդ նախագծերի իրականացումը պետք է կատարվի հանուն «հայերի հանդեպ տարրական արդարության» վերականգնման, հայերի, որոնց «շատ բան է խոստացվել և ոչինչ չի տրվել»²¹:

1925 թ. սեպտեմբերի 12-ին, հանդես գալով Ազգերի լիզայի պլենար նիստում, Նանսենը զեկուցում է հայ գաղթականների վիճակի մասին և ներկայացնում Սովետական Հայաստանում գաղթականության նկատմամբ ցուցաբերվող հոգատարությունը: Իր բոլոր ելույթներում Նանսենը մեծազույն գովասանքով է արտահայտվում Սովետական Հայաստանի կառավարության մասին, որպես լիակատար վստահության արժանի մի իշխանության, որի ընդունակությունները, եռանդն ու գործունեությունը և մասնավորապես գաղթականության նկատմամբ ցուցաբերած հոգատարությունը առաջացրել են իր հիացմունքը:

Անդրադառնալով իր գլխավորած հանձնաժողովի հիմնական եզրակացություններին և Հայաստանից ստացած տպավորություններին, Նանսենը հայտարարում է. «Մենք քննեցինք բոլոր հնարավորությունները (հայ գաղթականների տեղավորման—Ղ. Մ.) և եկանք այն եզրակացության, միաձայն և մեր ճշտության մասին առանց որևէ կասկածի, որ միակ վայրը, ուր այժմ Եվրոպայում թափառող մի մեծ մաս—շեշտում եմ մի մեծ մաս—կարող է տեղավորվել՝ դա Երևանի Հայ Հանրապետությունն է: Եթե ժողովը, մի բույս անդրադառնա խնդրին՝ ես կարծում եմ, որ պետք է համաձայնի, որ մենք ճիշտ ենք:

Ուրիշ ի՞նչ վայր կարելի է գտնել գաղթականների մի մեծ մասի համար: Հարցրեք մի որևէ կառավարության, թե կարո՞ղ է վերցնել գաղթականների մի մեծ և նոր մաս: Հարցրեք հունական կառավարությանը, որի առատաձեռնությունը հանդեպ

հայերի՝ վերջին տարիների պատմության ամենապայծառ կետերից մեկն է: Հարցրեք եգիպտական կառավարությանը, հարցրեք պաղեստինյան կառավարությանը, հարցրեք թուրքական կառավարությանը, հարցրեք սիրիական կառավարությանը, թե կարո՞ղ են ընդունել հազարավոր ու հազարավոր թափառական մարդիկ, կանայք և երեխաներ, որոնք նոր հայրենիք են փնտրում և ապրելու միջոցներ:

Գոյություն ունի մի ուրիշ փաստ նկատի առնելու. այն է՝ հայ գաղթականները իրենք ցանկանում են գնալ Հայաստան և ոչ մի ուրիշ տեղ: Նրանք ցանկանում են գնալ և կառուցել իրենց ազգային հայրենիքը (տունը):

Տարակույս չկա, որ եթե հինգերորդ հանձնաժողովի հանձնարարած սխեման կիրառվի, դա պետք է լինի Երևանի հանրապետության մեջ և ոչ մի ուրիշ տեղ»²²:

Ապա Նանսենը պատմում է Հայաստանում իրենց կատարած ուսումնասիրությունների մասին: Նա նշում է, որ իրենք այնտեղ են գնացել խիստ երկյուղով, կասկածելով, թե հազիվ մի բան ստացվի իրենց ուղևորությունից: Բայց այնտեղից հեռացել են այն խորը համոզմունքով, որ Սովետական Հայաստանում ծավալված է հույժ կարևոր տնտեսական մի հանդուգն ծրագիր, որը խաղաղ աշխատանքի հոյակապ հնարավորություններ պիտի ընձեռի ոչ միայն արդեն Հայաստանի հողի վրա գտնվող հազարավոր գաղթականներին, այլև դեռևս աշխարհում թափառող մեծ թվով հայ տարագիրներին:

Այնուհետև, շարունակելով իր ճառը, Նանսենն ասում է, որ իր նպատակն է «համոզել հանձնաժողովին, որ հայ ժողովուրդը, որի հետ այնքան վատորեն են վարվել և շատ է տանջվել, որ հատկապես ոչ մի ժողովուրդ արդի պատմության մեջ չի տեսել որևէ բան, որը կարելի լինի բաղդատել նրա քաշածների հետ», որ այս ժողովուրդը բարձր զարգացմամբ և օժտված ու աշխատասեր ժողովուրդ է, որը իսկապես վերջին երեք տարիների ընթացքում հրաշքեր է գործել՝ զարգացնելով դեռևս մի քանի տարի առաջ թշվառության մեջ

²¹ Նույն տեղում, գ. 453, թ. 10—12:

²² Նույն տեղում:

զտնվող երկիրն այն ժամանակ, երբ ամեն օր սաշխերը մեռած երեխաներ և շափահասներ էին հավաքում քաղաքների փողոցներից»²³:

Խոսելով երկրի տնտեսական կյանքի օրավուր աճող բարելավման մասին, Նանսենը հայտարարում է. «Եվ վերջապես՝ ես պետք է ջանամ համոզել հանձնաժողովին, որ Երեվանի Հանրապետությունը իրական Հայաստան է... Իսկապես այս փոքրիկ հանրապետության մեջ գոյություն ունի վերջապես հայկական օջախը և ես խնդրում եմ նստաշրջանի անդամներին իրենց խղճի առաջ դնել այն հարցը, թե արդյոք նրանք անկեղծորեն և լրջորեն չեն հավատում, որ որևէ ուրիշ ազգային օջախ կարելի չէ հուսալ: Ես հավատում եմ, ես գիտեմ, թե ինչ պետք է պատասխանեն նրանց խղճերը և ես դիմում եմ նստաշրջանին՝ վավերացնել այս ջանքը՝ գլուխ բերելու [համար] հայ ազգին ազգային օջախի վերաբերմամբ անցյալում տրված խոստումները:

... Տարեց-տարի մենք ազգային օջախի համար խոստումներ ենք արել, տարեց-տարի մենք ընդունել ենք լքված և վատ վերաբերմունքի արժանացած մի ժողովրդի արդարությունը ապահովելու մեր կառավարությունների խոստումները և տարեց-տարի մի երկար մարտիրոսության դանդաղ պատմության ականատեսն ենք հանդիսացել՝ մեր շրթունքների վրա ունենալով համակրանքի խոսքեր: Ահա բացվում է մեր առաջ գործելու պատեհություն: Ահա մի սխեմա (խոսքը ոռոգման և ճահիճների շորացման նախագծի մասին է—Չ. Մ.), մենք գիտենք, որ տնտեսապես առողջ է, ֆինանսապես գործնական և քաղաքականորեն՝ ցանկալի:

Եթե մենք միայն կարողանանք գլուխ բերել այս՝ ամոքած կլինենք անհամար գաղթականների տառապանքը: Մենք պիտի օգնենք կառուցելու և հզորացնելու վերջին տարիների մեջ գոյություն ունեցող միակ հաստատուն—տևական հայկական կառավարությունը...»²⁴:

Ապա Նանսենը նշում է, որ վերջերս եվրոպական երկրներից մեկում ջուրն է իջեցված մի մեծ մարտանավ, որի վրա ծախսվել է 7 միլիոն ֆունտ ստերլինգ, իսկ նրա պահպանման ծախսը տարեկան կազմում է կես միլիոն ֆունտ ստերլինգ, մինչդեռ գաղթականության համար պահանջվող փոխառությունը այդ նավի պահպանման համար պահանջվող երկու տարվա գումարին է հավասար: Առաջինը պատերազմի համար է, երկրորդը՝ մի դժբախտ ժողովրդի: Ուստի Նանսենը հայտարարում է. «Ես կոչ եմ անում նստաշրջանին՝ չկորցնել այս պատեհությունը (Հայաստանի փոխառությունն իրացնելու մասին է խոսքը—Չ. Մ.): Մեր օրերում շատ հաճախ մոռացվում է հայկական ողբերգությունը, կամ վրայից անցնում են ինչ-որ անտարբեր ոճրական ժեստով»²⁵:

Նանսենը նշում է, որ եվրոպական տեղրությունները պատասխանատվություն են կրում հայ ժողովրդի ապրած ողբերգության մեջ և այժմ անհրաժեշտ է, որ նրանք ձեռք առնեն ռեալ միջոցներ՝ անցյալի ձախողանքի փոխարեն ստեղծելու ավելի պայծառ մի ապագա՝ ոտնահարված իրավունքներով այդ ազգի համար: Կոնկրետացնելով իր խոսքը, Նանսենն ասում է. «Ես դիմում եմ Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Իտալիայի պատգամավորություններին և ասում եմ, որ Հայաստան անունը, այստեղ և ուրիշ տեղ, եղել է հաճախ ձեռք բերվածների շրթունքների վրա, որ Հայաստանի ցավերը երկար ժամանակ ապրել են ձեռք ժողովուրդների սրտերում, որ հայերի մնացորդները ահա նայում են ձեզ օգնության համար, և ես աղերսում եմ ձեզ, որ նրանք իզուր չնային»²⁶:

Իր ընդարձակ ճառի վերջում Նանսենն առաջարկում է զեկուցման մեջ առաջ քաշված հարցերը հանձնել լիգայի հինգերորդ՝ հումանիտար հանձնաժողովին՝ դրանց հետագա ընթացք տալու համար: Սփյուռքահայ գաղթականությանը Սովետական Հայաստանում տեղավորելու հետ կապված միջո-

²³ Նույն տեղում:

²⁴ Նույն տեղում, թ. 17—18:

²⁵ Նույն տեղում, թ. 19:

²⁶ Նույն տեղում, թ. 19—20:

ցառումների այս ամբողջ պլանը հայտնի է «նանսենյան ծրագիր» անունով²⁷։

Անպատեմբերի 18-ին նանսենի զեկուցումը քննարկվում է նաև լիգայի հինգերորդ հանձնաժողովում, ուր հայ գաղթականությունը Սովետական Հայաստան տեղափոխելու ծրագրի հիմնավորմամբ ու պաշտպանությամբ հանդես են գալիս Ֆր. Նանսենը, Ալ. Թոման, Չարլզ Դյուպյուտին և ուրիշներ։ Ազգերի լիգայի աշխատանքի միջազգային բյուրոյի նախագահ Ալ. Թոման գտնում է, որ հարցի լուծումը կհեշտացվի ու կպարզեցվի, եթե փոխառությունը երաշխավորվի մեծ տերությունների կողմից և լինի լիգայի հովանավորության տակ։ Նանսենը պահանջում էր այդ ծրագրի իրականացմանը հատկացնել պատերազմի ժամանակ Թուրքիայից Բեռլինի բանկում պահ տրված և զինագաղարից հետո Անգլիայի կողմից բռնազրաված հինգ միլիոն ֆունտ ստերլինգը։ Մրագրի մասնաճանաչումն ուսումնասիրության նպատակով նանսենի առաջարկները հանձնվում են 9 հոգուց բաղկացած մի ենթակոմիտեի, ուր ծավալվում են գլխավոր ելույթները։ Դրանք էլ հենց բացահայտում են նախագծի նկատմամբ մեծ տերությունների իսկական վերաբերմունքը։ Մեծ Բրիտանիայի պատվիրակ լեդի Ատտոլն իր կառավարության անունից հայտարարում է, որ նա չի կարող ոչ իրացնել և ոչ էլ երաշխավորել որևէ սովետական հանրապետության բաց բաղած փոխառությունը²⁸։

Արտահայտելով ֆրանսիական կառավարության տեսակետը, նրա պատվիրակ Պամսը ասում է, թե իր երկիրը պատրաստ է երաշխավորել փոխառությունը, բայց այն անառկելի պայմանով, որ Անգլիան ևս համաձայնվի համառեղ երաշխիքներ տալուն։ Իտալական պատվիրակը հայկական ներկայացուցիչներին և Ֆր. Նանսենին մասնավոր կերպով հայտնում է, որ նա այդ հարցում բաժանում է ֆրանսիական

տեսակետը։ Ենթակոմիտեի մնացած անդամները նանսենի նախագծին և փոխառության հարցին վերադարձվում են կարեկցաբար ու համակրանքով, սակայն գործնական ոչ մի քայլ չեն անում։ Անգլիական կառավարության այդպիսի անբարյացակամ դիրքը՝ հայ գաղթականների համար անհրաժեշտ փոխառության նկատմամբ, ինչպես արտահայտվում է նանսենը, իր համար անսպասելի էր։ Փոխառության նախագծի կողմնակիցներն ու պաշտպանները ստիպված հետաձգում են ենթակոմիտեի աշխատանքները՝ մինչև որ գտնվի փոխառության իրացման մի հարմար եղանակ, որով կարելի կլիներ համաձայնեցնել անգլիական պատվիրակությանը²⁹։

Հայ գաղթականներին Սովետական Հայաստան տեղափոխելու հետ կապված միջոցառումների իրականացման նպատակով պահանջվող փոխառության ձեռք բերումն ապահովելու համար Ֆր. Նանսենը, Ալ. Թոման, բելգիական ներկայացուցիչ Դեբրուկերը և Ազգերի լիգայի ֆրանսիական քարտուղարության շեֆ Արթուր Սոլտերնը մասնավոր տեսակցություն

²⁹ Եթե անգլիական կառավարության դիրքը անսպասելի էր Ֆր. Նանսենի համար, ապա այն բուրդովին էլ անսպասելի ու անհասկանալի չէր սովետական մարզկանց և անգլիական բանվորների համար։ Այդ տեսակետից խիստ ուշագրավ է 1925 թ. աշնանը Սովետական Հայաստան այցելած անգլիական պառլամենտի բանվորական ֆրակցիայի պատվիրակության ղեկավար Ռ. Կ. Ուոլհեդի հայտարարությունը, որտեղ նա ասում է. «Մենք հետաքրքրվում ենք նաև գաղթականների հարցով և ցանկանում ենք իմանալ այն հնարավորությունները, որ Հայաստանի կառավարությունը մտածում է և կարող է տալ Գաղթականների Հայաստան փոխադրելու վերաբերյալ զոկ. Նանսենի հանձնաժողովի կողմից Ազգերի լիգային ներկայացված առաջարկը մերժվեց անգլիական ներկայացուցիչների կողմից։ Իհարկե, այժմյան անգլիական կառավարության ներկայացուցիչներից որանից ավելին չէր կարելի սպասել, իսկ եթե Հայաստանը մենակ լինել ինչպես անցյալում, անշուշտ անգլիական ներկայացուցիչը օգնելու խոստում էր տալու և ոչինչ չէր տրվելու։ Անգլիական իմպերիալիստներն առարկում են, որ հայ աշխատավորությունը ԽՍՀՄ-ի մեջ է մտել, բայց իրենք ինչ են արել. 8 տարուց ի վեր շարունակ իրենց իմպերիալիստական շահերի համար օգտագործել են հայ ժողովրդի տառապանքները» (Տե՛ս «Ենթահարկային Հայաստան», 3 հոկտեմբերի, 1925 թ., № 224)։ Ինչպես ասում են, մեկնաբանություններն ավելորդ են։

²⁷ Տե՛ս նույն տեղում, գ. 820, թ. 3—5։

²⁸ Տե՛ս նույն տեղում, գ. 454, թ. 206—207 և «Ենթահարկային Հայաստան», 27 սեպտեմբերի, 1925 թ., № 219։

են ունենում Փարիզում ՍՍՀՄ լիազոր-ներկայացուցչության քարտուղար Սիմոն Փիրումյանի հետ: Զրույցի ընթացքում նրանք փորձում են պարզել այն հարցը, թե Հայաստանի կառավարությունը փոխառության ապահովման ի՞նչ նոր առաջարկներ կարող է ներկայացնել, որոնք բավարար լինեին առանց անգլիական երաշխիքների այն իրացնելու համար: Նրանց խոսակցություններից հասկանալի է դառնում, որ դա է հիմնական դժվարության պատճառը, քանի որ մեծ տերությունների երաշխիքների միջոցով փոխառության իրացման առաջարկված ամենապարզ եղանակը վճռականորեն մերժվել էր անգլիական պատվիրակության կողմից: Ինչպես հաղորդում է Ս. Փիրումյանը ՀՍԽՆ Ժողկոմխորհին 1925 թ. սեպտեմբերի 22-ին գրած զեկուցագրում, իր հետ բանակցողները, բացահայտ առաջարկ չանելով, փորձել էին պարզել, թե արդյո՞ք Հայաստանի կառավարությունը չէր համաձայնի նախատեսվող փոխառությունը երաշխավորել գրեթե մշտական բնույթ կրող նյութական պարտավորություններով (ոռոգվելիք հողերից ստացվող եկամուտները գրավ դնել և այլն):

Ս. Փիրումյանը վճռական կերպով հայտարարում է, որ սովետական կառավարությունը երբեք չի կարող ընթանալ այդպիսի երաշխիքներ տալու նախապահով: ԽՍՀՄ կառավարությունը համաձայնություն էր հայտնել ՀՍԽՆ անունից կնքել փոխառություն Մոսկվայի կենտրոնական բանկի երաշխավորությամբ, իսկ այլ կարգի պարտավորություններ, որոնք կարող էին խախտել սովետական Հայաստանի սովետներետները, սովետական կառավարության համար միանգամայն անընդունելի են:

Այլ. Թոման և Նանսենը այնուհետև Ազգերի լիգայի անունից առաջարկում են գտնել փոխառության իրացման մի այնպիսի եղանակ, որն ընդունելի լիներ Անգլիայի համար: Նրանք առաջարկում են ստեղծել մի ինքնավար կազմակերպություն, որը մի կողմից որոշակի պայմանագրային հիմունքներով Հայաստանի կառավարությանից կստանար Նանսենի ծրագրով նախատեսված հողամասերի ոռոգման, ճահիճների շորացման ու այդ վայրերում գաղթականների տեղավորման գործը, իսկ

մյուս կողմից՝ փոխառությունն իրացնելու համար հարաբերությունների մեջ կմտներ եվրոպական ֆինանսական շրջանների հետ³⁰: Ըստ երևույթին նրանք ենթադրում էին, որ այդ ինքնավար կազմակերպությունը կարող է ստանալ այն երաշխիքը, որը Անգլիան չհամաձայնվեց տալ անմիջականորեն սովետական Հայաստանի կառավարության բաց թողնելիք փոխառությանը: Նանսենի կարծիքով դա կլիներ մարդասիրական բնույթի յուրահատուկ մի կոնցեսիա, որը կընդարկեր Հայաստանի կառավարության փոխառությունը³¹: Նանսենը և Այլ. Թոման հայտարարում են, որ եթե այդ կապակցությամբ շուտափույթ կերպով մի կոմպրոմիսային որոշում չգտնվի, ապա անգլիական դիմադրությունը կարող է գործը բոլորովին տապալել:

1925 թ. սեպտեմբերի 23-ին տեղի է ունենում ենթակոմիտեի վերջին նիստը, ուր ընդունված բանաձևով ստեղծվում է հինգ հոգուց բաղկացած մի օրգան: Նրա խնդիրն էր վերը նախնապես պարզել Նանսենի առաջարկած ծրագրի տեսնելիական իրագործելիությունը, բանակցություններ վարել Հայաստանի և մյուս շահագրգռված կառավարությունների, կազմակերպությունների ու մասնավոր անձանց հետ և լիգայի խորհրդին ներկայացնել մանրամասն առաջարկներ՝ ինքնավար կազմակերպության ֆունկցիաների մասին: Լիգայի խորհրդի կողմից հաստատված ստատուտով այդ ինքնավար օրգանը իրավունք կունենար հարկ եղած դեպքում Հայաստանի կառավարության հետ կնքել պայմանագրեր, ոռոգվելիք հողամասերի վերաբերյալ կոնցեսիոն համաձայնագրեր և ընդհանրապես զբաղվել փոխառության իրացման հարցերով³²:

Սեպտեմբերի 25-ին հայկական փոխառության հարցը ենթակոմիտեից նորից հանձնվում է Ազգերի լիգայի հինգերորդ հանձնաժողովին, ուր զեկուցումով հանդես է գալիս Բել-

³⁰ Տե՛ս Հայկ. ՍՍՀ 224ՊԱ, ֆ. 40/113, ց. 3, գ. 454, թ. 206—207:

³¹ Տե՛ս նույն տեղում:

³² Տե՛ս նույն տեղում, գ. 820, թ. 3—5:

գիայի ներկայացուցիչ Դեբրուկերը: Ենթակոմիտեի ընդունած բանաձևի պաշտպանությունը արտասանած իր ճառում, որը մեծ տպավորություն է թողնում ներկաների վրա, նա նշում է, որ պետք է մի կողմ դնել քաղաքական մոտիվները և օգնել տարագիր հայության մի սովոր զանգվածի, որը դեռ օթևան չի գտել օտարության մեջ, վերադառնալու իր հայրենիքը, հայրենիք, որն արդեն շատ բան է արել գաղթականության մի զգալի մասին իր միջոցներով երկիր տեղափոխելու, իսկ երկրում գտնվող տանյակ հազարավորներին հողով, բնակարաններով և այլ միջոցներով ապահովելու ուղղությամբ:

Արտասահմանի էմիգրանտական շրջաններում Դեբրուկերի ճառը խիստ տհաճություն է ընդունվում: Ռուս վտարանդի կազետ Աստրովը այդ կապակցությամբ խորին վրդովմունք և ցավակցություն հայտնելով իրեն բախտակից հայ վտարանդիներին, ասում է, թե այդ բանաձևը ըստ էության ներկայացնում է «սովետների փոխառության միջազգային հանձնարարական»³³:

ՀԱՆՁ Ժողովոմխորհին ուղարկած իր զեկուցագրում Ս. Փիրումյանը նշում է, որ փոխառության հարցի հետ կապված Ազգերի լիգայի շրջանակներում տեղի ունեցած այդ բոլոր խորհրդակցությունները, զեկուցումներն ու ելույթները, ինչպես և պետք էր սպասել, թեպետ գործնական ոչ մի բան չտրվին հայ գաղթականության ներգաղթի կազմակերպման օգտին, բայց օբյեկտիվորեն մեծ դեր խաղացին սովետական հանրապետությունների հեղինակության, նրանց կաշտնության, կազմակերպվածության, կյանքի բոլոր բնագավառներում ձեռք բերված հսկայական նվաճումների, ինչպես նաև ազգային հարցի լուծման դրական փորձի պրոպագանդան տեսակետից:

«Սովետական իշխանության այնպիսի հակառակորդների հայտարարությունները, — գրում է Սիմոն Փիրումյանը, — ինչպիսիք են Ալ. Թոման ու Դեբրուկերը, որ Հայաստանի սովետական կառավարությունը հիրավի ժողովրդական է, որ նա

իրագործել է կազմակերպական հսկայական խնդիրներ և արժանի է վստահության—Ազգերի լիգայի կուլուարներում ունեցել են հսկայական ազդեցություն: Լիգայում երևացած ուսական և վրացական էմիգրանտական հակահեղափոխական գործիչները շճմել էին Սովետական Հայաստանի ու նրա կառավարության օգտին ծավալված պրոպագանդայից և դեպի սովետական իշխանությունը բոլոր հայկական ընկերությունների դրական վերաբերմունքից և նույնիսկ փորձեր էին անում նվազեցնել մեր այդ բարոյական հաղթանակի էֆեկտը՝ դր նանսենի ու սովետական հանրապետության դեմ հարձակումներով»³⁴:

Վերջապես, 1925 թ. սեպտեմբերի 26-ին, Ազգերի լիգայի խորհրդի 35-րդ նստաշրջանի 16-րդ նիստում, հայ գաղթականների տեղավորման հանձնախմբի զեկուցման հիման վրա, որոշվում է՝ նկատի առնելով հայ տարագիրներին Կովկասում կամ այլուր տեղավորելու վերաբերյալ ընդհանուր ժողովի 1924 թ. սեպտեմբերի 25-ի հանձնարարականը, հաստատել հայ գաղթականների տեղավորման հինգ հանձնակատարներ, որոնք պետք է վերջնականորեն պարզեն ու ճշտեն նանսենի ծրագրի իրագործելիության տեխնիկական կարելիությունը, կարծիքների փոխանակություն կատարեն Հայաստանի և ուրիշ կառավարությունների ու ընկերությունների հետ՝ փոխառության իրացման և վերահսկելի օրգանի ստեղծման հարցի շուրջը: Հայ գաղթականների տեղավորման հանձնախմբի կազմի մեջ են մտնում Ֆրիտյոֆ Նանսենը, Կ. Բերգմանը, Մարդուխ Մակդոնալդը, Ժյուլ Պամսը և իտալացի Պոման, որին սկզբում փոխարինում է ոմն Պետրելլի, ապա՝ Կոնտտի Ռոսսինի³⁵:

Հանձնախումբն իր առաջին նստաշրջանում՝ 1925 թ. հոկտեմբերի 30-ից մինչև նոյեմբերի 1-ը, որը տեղի էր ունենում Ժյուլ Պամսի նախագահությամբ, լսում է Հայաստանի կառավարության ներկայացուցիչ Ս. Փիրումյանի ու Հայոց

³⁴ Նույն տեղում:

³⁵ Տե՛ս նույն տեղում, Թ. 161:

³³ Տե՛ս նույն տեղում, գ. 454, Թ. 206—207:

բարեգործական ընդհանուր միության կենտրոնական վարչության պատվիրակության (Աեոն Բաշալյան, Գրիգոր Սինապյան և Միքայել Պապաջանյան) հաղորդումները՝ հայ գաղթականությանը Սովետական Հայաստանում տեղավորելու առթիվ նրանց տեսակետները պարզելու նպատակով: Նստաշրջանի վերջում հանձնախումբը որոշում է «առաջարկել պր-ն Ուիլյամ Մակինտոշին՝ ինչքան կարելի է շուտ մեկնել Երևան՝ վերահսկելու համար ոռոգման պլանի վերջնական նախապատրաստության վրա՝ ղռերի արևելյան և արևմտյան կողմում, Կարասուի և Զանգիբասարի շրջանում, որ նկարագրված է դոկտ. Նանսենի զեկուցման մեջ, ինչպես և հանձնախմբին տեղեկագրելու պլանի տեխնիկական կողմի մասին»³⁶: Այդ որոշման համաձայն 1925 թ. դեկտեմբերի 15-ին Երևան է ժամանում ինժեներ Մակինտոշը, որը մինչև 1926 թ. փետրվարի 1-ը պետք է գաղթականական հանձնաժողովին ներկայացնեի իր զեկուցումը³⁷:

Սովետական կառավարությունն ընդառաջում ու նպաստում է նաև այս որոշման կատարմանը, ամեն կերպ օգնելով, որպեսզի Ազգերի լիգայի հայ գաղթականների տեղավորման հանձնաժողովի առաջիկա նիստին հասցվի Մակինտոշի զեկուցագիրը: Նա, սերտորեն համագործակցած հայ մասնագետների հետ, Երևանում աշխատում է շուրջ 6 ամիս և 1926 թ. մայիսին Մարդու Մակդոնալդի միջոցով հանձնաժողովին ներկայացնում իր զեկուցագիրը՝ Նանսենի նախագծերի տեխնիկական հիմնավորմամբ:

Մակինտոշի զեկուցագրի գլխավոր եզրակացությունն այն էր, որ Նանսենի ծրագիրը տեխնիկապես միանգամայն իրագործելի է, տնտեսական տեսակետից՝ շահավետ և ընդունելի, եթե կարելի լինի բավականաչափ երաշխիքներ տրամադրել այդ նպատակով անհրաժեշտ փոխառությունը բաց թողնելու համար: Միաժամանակ Մակինտոշը հայտնում է, որ նախագծերի իրագործման դրամական միջոցների վերաբերյալ

³⁶ Նույն տեղում:

³⁷ Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 17 դեկտեմբերի, 1925 թ., № 287:

ինքն ի վիճակի չէ դրական առաջարկ անելու, որովհետև սոսկ սովետական պետական կենտրոնական բանկի երաշխավորությունը իրեն բավարար չի թվում փոխառության իրացման համար: Նրա կարծիքով նպատակահարմար կլինեի, եթե այն երաշխավորված լինեի ոռոգվելիք հողամասերից ստացվող բերքով, որը բավարար կլինեի նաև պարտքի տոկոսի հատուցման համար: Մակինտոշի հետ վարած բանակցությունների ժամանակ սովետական կառավարությունը հայտնում է, որ Մոսկվայի պետական բանկը պատրաստ է երաշխավորել հայ գաղթականության համար նախատեսվող փոխառությունը: Բայց Սովետական Հայաստանի սովերենիտետը խախտող ներքին բնույթի ոչ մի այլ պարտավորություն չէր կարող վերցվել, ինչպես նաև թույլատրել երկրի ներսում Ազգերի լիգայի կամ որևէ պետության միջամտությունն ու վերահսկողությունը³⁸:

1926 թ. մարտի 19-ին Փարիզում տեղի է ունենում հայ գաղթականների տեղավորման հանձնաժողովի նիստը Ֆրանսիական սենատոր Ժյուլ Պամսի նախագահությամբ, ուր ներկա էին նաև Մարդու Մակդոնալդը (Անգլիա), Ֆր. Նանսենը, ղոկտ. Մայերը (Գերմանիա), իտալական ներկայացուցիչ Կոնտտի Ռոսսինին, լիգայի մի խումբ տեխնիկական էքսպերտներ և Սովետական Հայաստանի ներկայացուցիչը՝ Ֆրանսիայում ՍՍՀՄ դեսպանության քարտուղար Ս. Փիրումյանը:

Նախագահող Ժ. Պամսն իր ելույթում հաղորդում է, որ հանձնաժողովն ստացել է Հայաստան ուղարկված էքսպերտների զեկուցագրերը, որոնք լիովին հաստատում են Նանսենի ծրագրի իրագործելիությունը: Ըստ նրանց վկայությունների հնարավոր է կարճ ժամանակամիջոցում ոռոգելի դարձնել 37,450 դեսյատին լավագույն հողամասեր, այնտեղ փոխադրել մեծ թվով հայ գաղթականների, սկզբնական շրջանում նյութապես ապահովել նրանց և օգնել կառուցելու բնակարաններ, ձեռք բերելու գյուղատնտեսական գործիքներ, սերմացու

³⁸ Տե՛ս «Նոր ուղի», 1929 թ., № 1, էջ 342:

և այլն: Այդ բոլոր միջոցառումների իրականացման համար պահանջվում է ընդամենը 15 միլիոն ռուբլի, այսինքն՝ նախնական ենթադրվածից մոտ 5 միլիոն ռուբլով ավելի³⁹: Այնուհետև Պամսը հիշեցնում է, որ հանձնաժողովն սկզբում մտածում էր այդ գումարն ստանալ լիգայի անդամ պետությունների կողմից երաշխավորված փոխառության ձևով: Սակայն անգլիական կառավարության հրաժարականից հետո (որին շքանշանքով հետևեցին նաև ֆրանսիական ու իտալական պատվիրակությունները) անհրաժեշտ համարվեց այդ փոխառության համար առաջադրել Ազգերի լիգայի երաշխավորությունը: Դժբախտաբար այդ էլ անհաջողությամբ վերջացավ և անհրաժեշտ միջոցներ ձեռք բերելու խնդիրն այնուհետև կրկին քննարկվեց Ազգերի լիգայի հինգերորդ հանձնաժողովում: Այդ հանձնաժողովի առաջարկությամբ լիգայի խորհուրդը որոշում կայացրեց ստեղծել մի կոմիտե՝ պահանջվող գումարը հավաքելու խնդիրն ուսումնասիրելու համար: Միաժամանակ որոշվեց նանսենին կամ նրա ներկայացուցչին վարկ տրամադրել՝ Եվրոպայում և Ամերիկայում հայ գաղթականների օգտին հանգանակություն անցկացնելու հնարավորությունը պարզելու նպատակով⁴⁰:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, Ազգերի լիգան, առևմտյան տերությունների խաղախություններն ընդօրինակելով, հայկական հարցը փոխարինում է գաղթականական հարցով, իսկ գաղթականության հայրենադարձությանը նպաստելու խնդիրն էլ՝ նրա օգտին հանգանակություն անցկացնելու, իրականում ողորմություն մուրալու, կեղծ ու խղճով ձեռնարկով:

Հայ գաղթականության հարցի վերաբերյալ իրադարձությունների այս ամբողջ շղթան կամ ավելի ճիշտ կլինի ասել՝ երկարածի՞գ այս քաշքշուկը, մանրամասնորեն արտացոլվել է Ազգերի լիգայի կողմից 1927 թ. ժնևում ֆրանսերեն և անգլերեն հրատարակված «Հայ գաղթականության տեղավորման

պլան» հավակնոտ վերնագրով փաստաթղթերի ու նյութերի ժողովածուի մեջ⁴¹:

Այդ գրքի հիմնական եզրակացությունները հանգում են նրան, որ «1. Շատ խորը ուսումնասիրությունից հետո՝ կազմված է մի ծրագիր, արտասահմանում ընտրված փորձագետների օգնությամբ: Այդ ծրագիրը վկայված է կատարելապես իրագործելի տեխնիկական տեսակետից: Մոտավորապես մեկ և կես միլիոն ստերլինգ գործադրելով հնարավոր կլինի բոլոր անհրաժեշտ հողերը ոռոգել և անգամ ավելի խոշոր տարածություն: Այս հողերը այնչափ բերրի կդառնան, որ առնվազն 25.000 գաղթական կարող կլինեն բնակություն հաստատել Հայաստանում:

Մանրակրկիտ հետախուզության հետևանքով հասել են այն եզրակացության, որ եթե հնարավոր լինի համազոր զարանտիաներով կնքել մի փոխառություն ոռոգման աշխատանքի և գաղթականների բնակեցման ծախսերը ծածկելու համար, հողերից քաղած արդյունքը պետք է բավե պարտքի տոկոսին ու պարտքը հատուցանելու համար:

2. Հայոց և Մոսկվայի Կենտրոնական կառավարությունը՝ երկուսն էլ ցանկալի են համարում հայերի բնակեցումը Հայոց Հանրապետության մեջ, Երևանում և այս քաղաքի շրջակայքերում:

Հայոց կառավարությունը տրամադիր է ընծայել գաղթականներին որոշ զարանտիաներ և դյուրություններ, օրինակ՝ մաքսային տուրքերից ազատ կացուցանել, փոխադրել երկաթուղիներով ձրիաբար, հողը հատկացնել ձրիաբար և որոշ ժամանակով ազատել հարկ ու տուրքերից:

Կենտրոնական կառավարությունը հայտարարել է, որ կենտրոնական բանկը կտա իր զարանտիան փոխառության

³⁹ Տե՛ս Հայկ. ՍՍՀ 2249Ա, ֆ. 40/113, ց. 3, գ. 502, Բ. 44—47:

⁴⁰ Տե՛ս «Նոր ուղի», 1929 թ., № 1, էջ 342:

⁴¹ Այդ գրքը՝ „Plan d'établissement des réfugiés Arméniens“ կամ „Scheme for the settlement of Armenian Refugees. General Survey and pri. doc“. Geneva, 1927, զժբախտաբար չգտնվեց Երևանի կամ Մոսկվայի գրադարաններում, ուստի մենք չկարողացանք մանրամասնորեն անդրադառնալ գրան:

համար, որ կնքված կլինի անհրաժեշտ միջոցներ ընծայելու ծրագրի կիրարկման համար:

3. Հետևաբար, եթե հնարավոր լինի անհրաժեշտ միջոցներ ձեռք բերել առաջին հերթին բնակեցման աշխատանքների համար, կա ամեն հիմք ենթադրելու, որ մի անգամ կիրարկման մեջ դրված ծրագրերը իր ծախսերը կհանի և կարևոր առաջադիմություն կցուցադրի դեպի հայոց հարցի լուծումը»⁴²:

Սովետական կառավարությունը, անկեղծորեն մտահոգված լինելով բազմաշարժար հայ գաղթականության ճակատագրով, ամեն կերպ ընդառաջում էր նրա հարցի լուծմանը, թեկուզ Ազգերի լիգայի միջոցով: Սակայն միանգամայն պարզ ու որոշակի էր, որ սկզբունքային հարցերում նա երբեք չէր կարող զիջումներ անել իմպերիալիստական շահերի արտահայտիչ Ազգերի լիգայի խաթկանքներին: Ինչպես հասարակայնությունը հուզող մյուս հարցերը, այնպես էլ հայ գաղթականների խնդիրը Ազգերի լիգան իրականում առաջ էր քաշում, սովորական հարայ-հրոց բարձրացնում, որպեսզի պահպանի իր վաստակած «մարդասերի» տիտղոսը և ճնշված ու փոքր ազգերի աչքին թող փշի: Ամեն անգամ հայ գաղթականների հարցը Ազգերի լիգայի խորհրդում ու նրա զանազան հանձնաժողովներում ու ենթահանձնաժողովներում քննարկելիս եվրոպական դիվանագետները պիղատոսյան արցունքներ էին թափում այդ «ղժբախտ ու շարշարված» ժողովրդի կրած տառապանքների և, անշուշտ, նրան օգնելու անհրաժեշտության մասին: Իսկ երբ իրոք հարկ էր լինում գործով ապացուցել գեթ իրենց պարտքի զգացումն այդ ուղղությամբ, ընդհակառակը, ինչ-որ մուժ ու կեղտոտ հաշիվներ էին ներկայացնում հայ ժողովրդին: Այդ իմաստով խիստ բնորոշ է անգլիական իմպերիալիզմի սպասարկուների անպատկառ դերը: 1924 թ. սեպտեմբերին, երբ Անգլիայում ընտրական պայքարի եռուն օրերն էին և անհրաժեշտ էր շահել ընտրողների համակրանքն ու քվեները, պահպանողական կուսակցության պարագլուխ Ստենլի Բոլդուինը և լիբերալ կուսակցության ղե-

⁴² «Նոր ուղի», 1929 թ., № 1, էջ 343:

կավար Հերբերտ Ասքվիտը պրեմիեր-մինիստր Ռամզեյ Մակդոնալդին հղում են մի «սրտաշարժ» դիմում այն մասին, թե Մեծ Բրիտանիայի կառավարությունը պարտավոր է անհապաղ մի նշանակալից գումար տրամադրել ի նպաստ հայ գաղթականների: Իրենց այդ պահանջը նրանք հիմնավորում էին այն պատճառաբանությամբ, որ հայերը, ոգևորված թուրքական լծից ազատագրվելու վերաբերյալ դաշնակիցների խոստումներով, համաշխարհային պատերազմի ընթացքում պաշտպանել են Անտանտին ու դրա հետևանքով շարաշար տուժել, որ պատերազմի ժամանակ և զինադադարից հետո դաշնակիցների և նրանց կողմնակիցների պետական գործիչները բազմիցս պարտավորվել են ապահովել հայ ազգի ազատությունն ու անկախությունը, որ Մեծ Բրիտանիան պատասխանատու է Ձմյունիայի մեծ աղետից հետո Թուրքիայից արևմտահայերի վերջնական վտարման ու ցրման գործում, որ Բեռլինի բանկում 1916 թ. թուրքական կառավարության մուծած և զինադադարից հետո դաշնակիցների կողմից գրավված 5 միլիոն ֆունտ ստերլինգը մեծ մասամբ, թերևս բացառապես, հայերին պատկանող փող է եղել և, վերջապես, գաղթականների արդի կացությունը անտանելի լինելով՝ ծանրանում է արևմտյան տերությունների վրա՝ որպես նախատինք»⁴³:

Այնուհետև նրանք հայտարարում էին, թե «խորին վշտով մենք խոստովանում ենք, որ այժմ մեզ համար անհնար է հայերի նկատմամբ մեր պարտականությունների կատարումը...: Սակայն մի ուրիշ միջոց կա, որպեսզի մեր զգացմունքներն ու պարտականությունները արտահայտենք և թեթևացնենք այն հուսահատ դրությունը, որի մեջ գտնվում են թուրքահայերի ցիր ու ցան մնացորդները: Նրանց տեղավորելու ամենահարմար հողամասը անկասկած ուսական Հայաստանն է: Նրա կառավարությունը նրանց դյուրություններ է առաջարկում...»⁴⁴:

⁴³ Տե՛ս Տր. Նաեսեն, նշված աշխատությունը, էջ 332:

⁴⁴ Նույն տեղում, էջ 333:

Ապա դիմումի հեղինակները մատնանշում էին գաղթականությանը Սովետական Հայաստան տեղափոխելու պլանը և եզրակացնում, թե «արտահայտելով մեր կարծիքը, մենք ցանկանում ենք, որպեսզի բրիտանական կառավարությունը, որպես փոխհատուցում ի դեմս հայերին ուղղված աներկբայելի խոստումների և շկատարված պարտավորությունների, առանց զլանալու մի նշանակալից փումար տրամադրի»⁴⁵ այդ նպատակի իրականացման համար:

Կարելի էր կարծել, թե անգլիական ղեկավար պետական գործիչների այդ հայտարարության կողքով ոչ ոք այլևս անտարբեր անցնել չէր կարող: Սակայն նրանք այդպես էին արտահայտվում, երբ դեռ պետության ղեկն իրենց ձեռքում չէր: Շուտով նրանք անցան իշխանության գլուխ և հենց այդ նույն Ստեփան Բուրուխի կառավարության ներկայացուցիչը 1925 թ. սեպտեմբերին Ազգերի լիգայում հրաժարվեց տալ իր համաձայնությունը հայ գաղթականության օգտին փոխառություն բաց թողնելու առաջարկին, պատճառաբանելով, թե նա չի կարող երաշխավորել ՍՍՀՄ-ի կազմի մեջ մտնող որևէ հանրապետության փոխառությունը:

Երբ խորամուխ ենք լինում փաստերին, ապա պարզվում է, որ իմպերիալիստական տերությունների իսկական նպատակը հայ գաղթականությանն իր նոր, սոցիալիստական հայրենիքը վերադառնալու գործում օգնելը չէր, այլ այդ անվան տակ, եթե հնարավոր էր, Սովետական Հայաստանն ամբիջակաճորեն իրենց տնտեսական, ապա նաև քաղաքական շահագործման ոլորտի մեջ առնելը: Դրա համար էլ նրանք չէին ցանկանում գործ ունենալ ուղղակի Սովետական Միության կառավարության հետ, այլ մեկուսացված Հայաստանի հետ, որին, նրանց կարծիքով, հեշտ կլիներ ենթադրել իրենց ազդեցությանը: Հենց այդտեղ էր, որ նրանք շարաշար սխալվում էին:

Հայ ժողովրդի ճակատագրի, նրա ողբերգական անցյալի և պանդխտության մեջ տառապող գաղթականության դառն

⁴⁵ նույն տեղում:

վիճակի հանդեպ ստոր ու դաժան այդ խաղերը բոլորովին էլ նորություն չէին: Հայ աշխատավորությունը դեռ տասնամյակներ առաջ իր մաշկի վրա զգացել էր գրադատոնների ու դիզրանիլների, այժմ էլ տեսնում էր լլոյդ ջորջերի ու լորդ ֆերգոնների իրեն «ազատագրելու», «օգնելու» մասին դատարկ խոսքերի ու վեղծ ճառերի արյունոտ հետևանքները: Ըստ էության այդ փարիսեցիական խոսքերից ու ճառերից Ըստ էության այդ փարիսեցիական խոսքերից ու ճառերից կալած օգնությունը և Ազգերի լիգայի «բարեարարությունը»: Փաստորեն մի քանի տարի շարունակ հայ գաղթականության հարցը և նանսենի ծրագիրը «քննարկելուց» հետո Ազգերի լիգան այն մոռացության տվեց:

Բայց ամենախեղկատակային դերը խաղալու պատիվը վիճակված էր Ունիստոն Զերչիլին: 1927 թ. հոկտեմբերի 30-ին Ազգերի լիգայի քարտուղարությունը մի կողմ դիմեց լիգայի անդամ երկրներին, առաջարկելով կատարել եվրոպական և քաղկանյան երկրներում գտնվող հայ գաղթականների վերաբերյալ նանսենյան ծրագրերի իրադրոժման առթիվ նույն տարվա սեպտեմբերյան նստաշրջանում ընդունված որոշումները: Այդ կոչին առաջին արձագանքողը եղավ Ռուսիիան, որը պատրաստակամություն հայտնեց տրամադրել 1000 ֆունտ ստերլինգ՝ գաղթականության Հայաստան ներգաղթելու համար: Հունական կառավարությունը խոստացավ գաղթականությանը Հունաստանից Հայաստան տեղափոխելու ժախսերի 25 տոկոսը վերցնել իր վրա: Իսկ Անգլիայի ֆինանսների մինիստր Զերչիլն իր ճառերից մեկում այդ առթիվ հայտարարեց, թե հայ փախստականների տեղավորման համար անգլիական կառավարությունը չի կարող դրամական օժանդակություն ցույց տալ այն պատճառով, որ Հայաստանը չի վճարել անցած պատերազմի ժամանակ և նրանից անմիջապես հետո գոյացած իր պարտքը դաշնակիցներին: Բուրժուական ֆինանսիստների հաշվումներով Հայաստանը, ավելի ճիշտ՝ դաշնակցական կառավարությունը, Անտանտին

պարտք էր մնացել 18.750 հազար դոլար⁴⁶: Այդ գումարը գոյացել էր այն փշրանքների դիմաց, որ տվել էին ԱՄՆ-ն ու Անգլիան՝ «գինեկոլ» դաշնակցական զորամասերը և «ապահովելով» Հայաստանը կանադական փշացած ալյուրով: Հետաքրքրությունից զուրկ չէ և այն հանգամանքը, որ, երբ այսպես ու հնացած զենքերի տրանսպորտը Անգլիայից դեպի Հայաստան էր ուղարկվում, այդ նույն ժամանակ կովկասում անգլիական հրամանատարությունը շտապ կարգով իր «դաշնակից» Հայաստանից դուրս էր տանում ռուսական զորքերից մնացած ամենալավ զենքերն ու թնդանոթները՝ դենիկինյան բանակը զինելու համար:

Այսպիսով, Անգլիան, որը մի ժամանակ Հայաստանում հրամայում էր ինչպես իր ռազմական շրջաններից մեկում, այժմ հաշիվ էր ներկայացնում ու պահանջում վճարել պարտքերը...

Գրեթե բոլոր ողբերգություններում էլ լինում են կոմիկական պահեր: Հայ տառապյալ գաղթականության ապրած ողբերգական վիճակի պայմաններում Չերչիլի ներկայացրած ավելի քան 18 միլիոն դոլարի պահանջը հիրավի մի այդպիսի կոմիկական պահ է ողբերգության մեջ: Եվ այսպես էր լինում ամեն անգամ: Հենց զր Ազգերի լիգայում քննարկվում էր հայ գաղթականությանն օգնելու հարցը և որևէ դրական որոշում կայացնելու փորձ արվում, իմպերիալիստական շրջաններն ու նրանց սպասարկուները անմիջապես հնարում ու առաջ էին քաշում մի նոր խոչընդոտ:

Եվ բոլորովին էլ պատահական չէր, որ սովետական կառավարությունը, Նանսենի միսիայի Հայաստան գալուց առաջ ու առավել ևս դրանից հետո, մեծ սպասելիքներ չունեի Ազգերի լիգայից և երբեք էլ ինչ-որ հույսեր չէր կապում նրա հետ: Ահա թե ինչ էր ասել այդ կապակցությամբ «Խորհրդային Հայաստան» թերթի աշխատակցի հետ ունեցած զրույցում

⁴⁶ Տե՛ս «Տեղեկատու», օրգան 204 կենտրոնական վարչության, Երևան, 1928 թ., № 1, էջ 23, նաև՝ «Խորհրդային Հայաստան—1920—1925», ժողովածու, էջ 3:

ՀՍԽՀ հողագործության ժողկոմ Ար. Երզնկյանը, որը լավատեղյակ էր գաղթականության հարցին. «Մենք Նանսենին, որպես մեր և առհասարակ Խորհրդային Միության բարեկամի, անկասկած, հարգանքով ենք վերաբերվում և երբեք չենք կասկածում նրա բարի տրամադրությունների և ցանկությունների մասին, սակայն նրա միսիայից մեծ բան չենք սպասում: Չէ՞ որ նա չէ որոշողն այդ խնդիրը, այլ Ազգերի լիգան: Եթե մենք ընդունել ենք Նանսենի միսիան, ունեցել ենք երկու հիմնական նպատակ, որը չենք թաքցնում:

Դեռ արտասահմանում գաղութահայության մեջ կան կազմակերպություններ, որոնք գիտակցաբար և թե անգիտակցաբար մթազնում են գաղութահայ աշխատավորության գիտակցությունը, օրորելով նրան սին հույսերով, թե մեծ պետություններից և Ազգերի լիգայից մեծ սպասելիքներ ունենք:

Մենք բոլոր հնարավորությունները տվեցինք Նանսենին, առաջարկեցինք բոլոր թե մեծ և թե դյուրին ծրագրերը, որպեսզի գաղութահայության աշխատավոր մասսաները տեսնեն, թե մեծ պետություններից և լիգայից սպասելիքներ չկան...

Տարվ Նանսենին բոլոր հնարավորությունները, մենք փակեցինք արտասահմանում գտնված մեր բոլոր հակառակորդների պրովոկացիաների բոլոր դռները: Մենք պարզ և որոշակի ասացինք Նանսենին—մենք մուրալու ցանկություն չունենք, եթե դուք և ձեզ ուղարկողներն ուզում եք, որ ներգաղթի հարցը լուծվի, տվեք մեզ փոխառություն, մենք պատրաստ ենք ձեր փոխառությունն ապահովելու նույնիսկ արտասահմանյան բոլոր բանկերի միջոցով, մենք այդ հնարավորությունը կստեղծենք: Մենք պատրաստ ենք լավ տոկոս վճարել, որովհետև ուզում ենք, որ գաղթականության հարցը լուծվի»⁴⁷:

* * *

Դատապարտելով Ազգերի լիգայի երկերեսանի ու անճարակ վերաբերմունքը հայ գաղթականության հարցում, սովե-

⁴⁷ «Խորհրդային Հայաստան», 11 սեպտեմբերի, 1925 թ., № 210:

տական կառավարությունը և ողջ հայ աշխատավորությունը միաժամանակ արժանին են հատուցել հայ ժողովրդի լավագույն բարեկամ, մեծ մարդասեր Ֆր. Նանսենին, որի անկեղծությունը երբեք չի կարելի կասկածել:

Անկախ Ազգերի լիգայի խաղացած դերից, հայ գաղթականության թշվառ կացության բարելավման ուղղությամբ խոշոր ծառայություններ ունի Ֆր. Նանսենը, մի մարդ, որի գիտական անխոնջ գործունեությունը անխզելիորեն կապված է եղել հասարակական համարձակ պայքարի հետ: Չնայած այն բանին, որ նա իր քաղաքական հայացքներով մանր-բուրժուական դեմոկրատ էր, համակրանքով վերաբերվեց Ռուսաստանում հաղթանակած Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությանը և դարձավ սովետական ժողովրդի անկեղծ բարեկամը: Նանսենը մեծ մարդասեր էր, որի համար էլ Ռոմեն Ռոլանը դիպուկ կերպով նրան անվանել է «մեր ժամանակի միակ եվրոպական հերոսը»: Նանսենի պայծառ մարդասիրությունը դրսևորվել էր շատ վաղուց, դեռևս նրա բեկոլային ճանապարհորդությունների դժվարին օրերին, ուստի պատահական չէր, որ նա խորապես ցնցված էր 1914—1918 թթ. իմպերիալիստական սպանդից և հետագայում իր ուժերն ամբողջովին նվիրաբերեց պատերազմի զոհերին օգնելու վեհ գործին:

Սկսած 1920 թ. գարնանից, Ֆր. Նանսենը Ազգերի լիգայում ներկայացնում էր Նորվեգիան: Նա նշանակվել էր որպես ռազմագերիների գործերով լիգայի գերագույն կոմիսար և մեծ ջանքեր գործադրեց օտարության մեջ տառապող հարյուր հազարավոր ռազմագերիներին իրենց ընտանիքները վերադարձնելու ուղղությամբ: Ֆր. Նանսենի ծավալած գործունեության շնորհիվ կարճ ժամանակամիջոցում հաջողությամբ իրականացվեց ռազմագերիների փոխանակությունն ու հայրենադարձությունը:

Այնուհետև Նանսենն աչքի ընկավ դաժան երաշտի պատճառով 1921 թ. Սովետական Ռուսաստանում առաջ եկած սովի դեմ մարդասիրական պայքարի կազմակերպման գործում:

Նանսենի անխոնջ ջանքերը նպաստեցին սովամահությունից փրկելու բազմաթիվ մարդկանց կյանքը: Սովետական ժողովուրդը շատ բարձր գնահատեց թշնամիներով շրջապատված երիտասարդ սովետական հանրապետության ծանր փորձությունների դաժան օրերին Նանսենի մատուցած օգնությունը: Մոսկվայի քաղաքային սովետը 1921 թ. նրան ընտրեց Մոսսովետի պատվավոր անդամ, իսկ սովետների համառուսաստանյան 9-րդ համագումարը 1921 թ. դեկտեմբերի 25-ին պարգևատրեց հատուկ պատվոգրով, որտեղ ասված էր. «Սովետների համառուսաստանյան 9-րդ համագումարը, ծանոթանալով Պոլովոժիեում սովի դատապարտված գյուղացիներին փրկելու ձեր ազնիվ ջանքերին, իր ամենախորին երախտագիտությունն է հայտնում ձեզ ՌՍՖՍՀ-ի միլիոնավոր աշխատավոր բնակչության անունից:

Ռուս ժողովուրդը չի մոռանա մեծ գիտնական, հետազոտող ու քաղաքացի Ֆր. Նանսենի անունը, որը մեռյալ Հյուսիսի հավերժական սառույցների միջով հերոսաբար ուղի հարթեց, բայց անգոր եղավ հաղթահարելու կապիտալիստական երկրների կառավարող դասակարգերի անսահման դաժանությունը, եսամոլությունը և անողոքությունը»⁴⁸:

Նանսենը հազիվ էր վերջացրել Պոլովոժիեի սովյալներին օգնելու իր դժվարին աշխատանքը, երբ ստիպված եղավ ձեռնամուխ լինել մարդասիրական մի այլ գործի: 1922 թ. սեպտեմբերին, ժնկում ներկա գտնվելով Ազգերի լիգայի նիստերին, Կոստանդնուպոլսի իր ներկայացուցչից Նանսենն ստանում է հետևյալ բովանդակությամբ մի հեռագիր. «Անատոլիայի գաղթականների դրությունը շատ լուրջ է: Սպառնում է սովը: Առաջարկում եմ օգնություն կազմակերպել: Հեռագրեցեք ձեր համաձայնությունը»⁴⁹:

⁴⁸ ЦГАОРСС, ф. 1235, оп. 8, л. 8. л.л. 62—63, նաև՝ «Известия ВЦИК», 27 декабря, 1921, № 292 (1435). Քաղվածքը բերված է ըստ Ֆրիտյոֆ Նանսենի «Յրամ»-ը Բեռնային ծովում» գրքի, Երևան, 1958, էջ 7:

⁴⁹ Ֆրիտյոֆ Նանսեն, «Յրամ»-ը Բեռնային ծովում, էջ 41—42:

Այդ կապակցությամբ Ազգերի լիգան Նանսենին հանձնարարում է զբաղվել հույն գաղթականությանն օգնություն կազմակերպելու խնդրով: Նանսենն ընդունում է այդ առաջարկությունը, անմիջապես մեկնում Բալկաններ և այնտեղ լայն օգնություն կազմակերպում հույն և այլազգի գաղթականներին:

Այնուհետև Նանսենի մարդասիրական հետազոտությունը կապվում է հայ ժողովրդի՝ մասնավորապես սփյուռքահայ գաղթականության հետ: Մինչև 1925 թ. ամառը, երբ Նանսենն անձամբ եղավ Հայաստանում, նա բազմիցս առիթներ ունեցավ ծանոթանալու ինչպես հայկական հարցին, այնպես էլ աշխարհով մեկ ցրված հայ գաղթականության վիճակին:

Դեռևս 1922 թ. մարտի 1-ին սովյալներին օգնող Նանսենյան միջազգային կոմիտեի Մոսկվայի ներկայացուցիչ Ջոն Գորվինի և Մոսկվայում ՀՍԽՀ լիազոր-ներկայացուցիչ Սահակ Տեր-Գաբրիելյանի միջև ստորագրվել էր մի համաձայնագիր, ըստ որի Սովետական Ռուսաստանի արտգործոցը Գ. Վ. Զիչերինի և Ֆր. Նանսենի միջև 1921 թ. օգոստոսի 27-ին կրնալված պայմանագիրը պետք է տարածվեր նաև Սովետական Հայաստանի վրա⁵⁰:

Նանսենը շատ լավ տեղյակ էր Եվրոպայի, Մերձավոր Արևելքի և այլ երկրների բազմահազար հայ գաղթականների ծանր վիճակին, որը մի քանի տարի շարունակ քննարկման առարկա էր Ազգերի լիգայի նիստերում ու նրա զանազան հանձնաժողովներում:

Սակայն, մինչև Ազգերի լիգայի և իմպերիալիստական դիվանագիտության այլ ամբիոններից շարունակում էին խաբել հայ գաղթականությանը և սոսկ «սփոփանքի» խոսքեր շոյելի նրա հասցեին, զնալով այդ տարագիրների վիճակն ավելի էր վատանում: Հայ գաղթականներից շատերը հապճեպ կերպով երկրից փախած ու Թուրքական սպանդից հազիվ փրկված լինելով, զուրկ էին անգամ իրենց քաղաքացիությունը հաս-

տատող փաստաթղթերից, և նրանց իրավունքները չէին ճանաչվում օրենքի առջև: Միջազգային իրավունքի տեսակետից նրանք համարվում էին պարզապես հայրենազուրկներ և ոչ որևէ պետության քաղաքացի կամ հպատակ⁵¹:

Գաղթականության այդ վիճակը դարձանելու նպատակով հայկական Ազգային պատվիրակության նորընտիր նախագահ Գաբրիել Նորատունկյանը դիմում է Ազգերի լիգային՝ հայ տարագիրներին Նանսենյան անձնագրերով ապահովելու խնդրանքով: 1923 թ. սեպտեմբերի 25-ին քննարկելով հայ տարագիրների քաղաքացիության հարցը, լիգան սկզբունքորեն ընդունում է նրանց օգնելու անհրաժեշտությունը: Ազգերի լիգայի խորհուրդը գտնում է, որ «Լոզանի քոնֆերանսենի վեր հայոց խնդիրը իր բնույթը բոլորովին փոխած է: Այլևս կապ չունի ան Թուրքիա բնակող հայերուն հետ, այլ հայոց խնդիր բանելով պետք է հասկանալ հարցն այն գաղթականներուն, որոնք Թուրքիայեն դուրս կգտնվին և որոնց վիճակը կարելի չէ, որ անտարբեր թողու ունէ զգայուն սիրտ:

Ասոր վրա պետք է ավելացնել, որ դաշնակից պետությունները, որոնք հանձնառություններ ունեին հայ ժողովրդի հանդեպ, բարոյապես պարտավոր են այսօր զբաղելու հայ գաղթականներուն վիճակով, գոնե այդ կերպով գոհացում տալու համար իրենց և միջազգային խղճին»⁵²:

Լիգայի խորհուրդը, քննարկելով հայ գաղթականների վիճակը բարելավելու և նրանց իրավական դրությունը պարզելու հարցը, որոշում է, որ Թուրքիայից հետացած այն հայ տարագիրների համար, որոնց նորից այնտեղ վերադառնալու արտոնություն չի արվում Թուրքական կառավարության կողմից, և որոնցով չեն ուզում զբաղվել Թուրքական հյուպատոսները՝ նրանց այլևս Թուրքահպատակներ չճանաչելով, պետք է ստեղծել Ազգերի լիգայի հովանավորությունը վայելող մասնավոր անձնագրեր:

⁵¹ Տե՛ս «Միսթյան», ՀԲԾՄ երկամսյա պաշտոնաթերթ, Փորթո, 1922 թ., № 125, էջ 73—74:

⁵² «Վերջին լուր», 6 հոկտեմբեր, 1923 թ., № 2923:

⁵⁰ Տե՛ս Հայկ. ՍՍՀ ՀՀԿՊԱ, ֆ. 40/113, ց. 3, դ. 18, թ. 29—31:

Հայտնի է, որ դեռևս 1922 թ. լիզան այլ ազգությունների գաղթականների համար նույնպես սահմանել էր միջազգային անձնագրեր՝ Ազգերի լիզայի գաղթականական գործերի կոմիտեի Ծր. Նանսենի նախագահությամբ գործող կոմիտեի միջոցով, որից էլ այդ անձնագրերը ստացել են իրենց «նանսենյան» անունը: Այդ անձնագրերով գաղթականները կարող էին անարգել կերպով ճամփորդել մի երկրից մյուսը և զբաղվել իրենց գործերով: Ազգերի լիզայի մեջ մտնող երեսուներից ավելի պետություններ ճանաչել էին դրանց ուժն ու օրինականությունը: Եվ ահա լիզայի խորհուրդը որոշում է հայ գաղթականների ինքնության թղթերի՝ անձնագրերի նախապատրաստման գործը ևս հանձնարարել Ծր. Նանսենի կոմիտեին:

Նանսենի կոմիտեի ուսումնասիրությունների ընթացքում պարզվում է, որ ինքնության թղթերի կամ անձնագրերի կարիք ունեցող հայ տարագիրների մեծ մասը համաշխարհային պատերազմի օրերին, արևմտահայության զանգվածային բռնազաղթի ժամանակ, առանց որևէ փաստաթղթերի արտասահման ապաստանած քաղաքացիներն էին:

Պարզ է, որ արտասահմանյան երկրներում դեզերող հայ գաղթականներն այդ պատճառով ամեն քայլափոխում բազմաթիվ դժվարությունների էին հանդիպում: Ուստի հայ տարագիրների իրավական դրությունը կարգավորելու նպատակով Ազգերի լիզայի որոշումը՝ նրանց ևս «նանսենյան ինքնության թղթեր» տալու մասին, կարելի էր նկատել որպես միակ հարմար ելքը, որովհետև դրանով «անոնց իրավական դիրքը պիտի ճշտվեր և անոնք դյուրություններ պիտի վայելեին ճամբորդելու և իրենց անձնական ու առևտրական գործերով զբաղվելու» ժամանակ⁵³: Սակայն Ազգերի լիզայի կողմից երաշխավորվող այս ինքնության թղթերը երբեք հպատակության փոփոխություն չէին նշանակելու, «այլ առժամյա կարգադրություն մը, ի դյուրություն անտեղ գաղթականներու»⁵⁴:

Ինչպես արդեն վերևում ասվեց, 1923 թ. սեպտեմբերին Ազգերի լիզան հայ գաղթականներին ինքնության թղթեր տալու հարցին անդրադարձել էր Ազգային պատվիրակության նախագահ Գ. Նորատունկյանի խնդրագրի համաձայն: Երբ Ազգերի լիզան որոշում կայացրեց հայ գաղթականներին ինքնության թղթեր տալու հարցը հանձնել Նանսենի կոմիտեի ուսումնասիրությանը, իրականում ոչ ոքի չներկայացնող այսպես կոչված «Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը» Ալեքսանդր Խատիսյանի ստորագրությամբ մի բողոք-սպառնազրի է հղում ազգային պատվիրակությանը, որ Գ. Նորատունկյանը մեղադրվում էր հայ գաղթականների իրավական դրության հարցով Ազգերի լիզային դիմելու համար: Դաշնակցության «վաստակավոր դիվանագետը» ուշ էր գլխի բնկել, որ այդ հարցի դրական լուծման դեպքում արտասահման ապաստանած հայ տարագիրների համար կսահմանվեին նանսենյան ինքնության թղթեր և ինքը կգրկվեր կարևոր զբաղմունքից⁵⁵:

Լիզային ներկայացնելով իր խնդրանքը, Ազգային պատվիրակությունը հույս ուներ ժամանակավորապես դյուրություններ ստեղծել հայ գաղթականների համար և պաշտպանել նրանց քաղաքացիական իրավունքները, առայժմ չընդափնելով նանսենյան անձնագիր ստացողների հպատակությունը և այլ հարցեր: Ազգերի լիզայի նանսենյան կոմիտեի սահմանած ժամանակավոր անձնագրերը համապատասխան կառավարությունների կողմից տրվելու էին նրանց, ովքեր թուրքական իշխանությունների ու հյուպատոսությունների կողմից զրկված էին հովանավորությունից ու պաշտպանությունից, սակայն, Ազգային պատվիրակության կարծիքով, վաղը կամ մյուս օրը հավանաբար դրությունը կփոխվեր և նրանք կկարողանային վերադառնալ իրենց նախկին բնակավայրերը, ուստի և կվերանային այդ անձնագրերը: «Շ. Շ. պատվիրակությունը», հանձինս Ալ. Խատիսյանի, սկզբում չէր առարկել Ազգերի լիզայի անունից հայերին տրվելիք ինքնության

⁵³ «Վերջին լուր», 21 հունվարի, 1924 թ., № 3012:

⁵⁴ Նույն տեղում:

⁵⁵ Տե՛ս «Վերջին լուր», 31 դեկտեմբերի, 1923 թ., № 2995:

թղթերի գաղափարին: Բայց հետագայում, ավելի մոտիկից շոշափելով այդ խնդիրը, հանգել էր այն եզրակացություն, որ դրա տակ թաքնված է ուղղակի իր գոյություն դեմ ուղղղված մի հարված, որովհետև դրանից հետո ինքն այլևս չէր կարող հայ գաղթականներին տալ ոչ ոքի կողմից չճանաչվող այսպես կոչված «հայկական անձնագր», որից ստացվող եկամուտները հավանաբար փոքր տոկոս չէին կազմում նրա բյուջեում: Խրտվիլականման «Հ. Հ. պատվիրակության» ցուցանակի տակ ապրողների գոյության պահպանման համար պակաս կարևոր նշանակություն չունեն նաև այդ հարցի բարոյական կողմը: Այնուամենայնիվ, Ալ. Խատիայանի ուշացած բողոքը ոչ մի նշանակություն չի ունենում, և Ազգերի լիգայի խորհուրդը, ելնելով 1923 թ. սեպտեմբերի իր համապատասխան որոշումից, 1924 թ. հունիսի 12-ի հրապարակային նիստում, լսում է հայ գաղթականների իրավական դրության մասին գաղթականական գործերի գլխավոր կոմիսար Ֆր. Նանսենի ներկայացրած տեղեկագիրը և ընդունում հետևյալ որոշումը. «Ազգաժողովի (այսինքն՝ Ազգերի լիգայի—Հ. Մ.) խորհուրդը քննելով գաղթականաց բարձր գոմիսերության տեղեկագիրը, ուր կպատկերացվին հայ գաղթականներու տրվելիք «ինքնության թուղթ»-երու մասին եղած դիմումները, կուտա իր կատարյալ հավանությունը ձեռք առնված միջոցներուն ու պատրաստված ծրագրի մասին, և նկատի ունենալով խնդրուն ստիպողականությունը, կհրավիրե Ազգաժողովի անդամներն ու շահագրգռվող ուրիշ կառավարությունները՝ շնորհել իրենց անմիջական ու բարյացակամ հավանությունը՝ ընդհանուր քարտուղարության կողմն այս մասին իրենց ուղղված հաղորդագրության»⁵⁶:

Շուտով Ազգերի լիգայի մեջ մտնող բոլոր պետությունները, ինչպես նաև ոչ-անդամ այլ կառավարություններ, ընդունում են լիգայի անունից հայ տարագիրներին տրվող ինքնության թղթերի՝ այսպես կոչված նանսենյան միջազգային անձնագրերի օրինականությունը: Դրա շնորհիվ մի շարք երկր-

ներում երկար տարիներ հազարավոր հայ գաղթականների քաղաքացիությունն ու իրավունքները օրինական էին ճանաչվում: Նանսենյան անձնագրերը կարևոր նշանակություն ունեցան հատկապես Բուլղարիայի, Ռումինիայի, Հունաստանի և ուրիշ երկրների հայ գաղթականների քաղաքացիական կացության կարգավորման համար:

Հետագայում մի շարք այլ դյուրություններ ստեղծվեցին հայ գաղթականներին նանսենյան անձնագրեր տալու գործում: Ազգերի լիգայի 1925 թ. նոր հրահանգի համաձայն, «երկար ատեն ի վեր Թուրքիային հեռացած և Թուրքիո հետ իրենց բոլոր կապերը խզած հայերեն անոնք, որ փափաք հայտնեն, իրավունք պիտի ունենան իրենց նանսենյան անձնագրերու վրան արձանագրել տալու իրենց միայն ծննդավայրը և հայ ազգությունը»⁵⁷, այնուհետև անձնագրերի դիմաց հայ գաղթականներից զանձվող գումարը հասցվում է նվազագույնի և այլն⁵⁸:

Անկախ այն հանգամանքից, թե ով էր բարձրացրել և ով էր ընթացք ու լուծում տվել այդ հարցին, նանսենյան անձնագրերը դրական նշանակություն ունեցան հայ տարագիրների արտասահմանյան թափառական կյանքը որոշ չափով թեթևացնելու իմաստով: Այս առումով էլ դրվատանքի են արժանի այն մեծ ջանքերը և ջերմ հոգատարությունը, որ ցուցաբերեց Ֆր. Նանսենը հայ գաղթականներին իր անվամբ միջազգային լայն ճանաչում ունեցող անձնագրերով ապահովելու ուղղությամբ:

Ընդհանրապես, թե որքան ջերմ հոգատարություն էր տալու նանսենը հայ ժողովրդի հանդեպ, ի հակադրություն Ազգերի լիգայի, պարզ կերպով երևում է 1927 թ. հուլիսի 5-ին ՀՍԽՀ ժողկոմխորհի նախագահին նրա գրած նամակի հետևյալ տողերից. «Ծն կարծում եմ, որ հազիվ թե կարիք կա հայտնելու Ձեզ, որ իմ սրտանց ցանկությունն է անել այն

⁵⁷ «Հայաստանի կոչնակ», 3 հոկտեմբերի, 1925 թ., № 40, էջ 1170:

⁵⁸ Տե՛ս նույն տեղում, 27 փետրվարի, 1926 թ., № 9, էջ 410; նաև՝ 27 նոյեմբերի, 1926 թ., № 48, էջ 1658:

⁵⁶ «Վերջին լուր», 23 հունիսի, 1924 թ., № 3144:

բոլորը, ինչ ես կարող եմ հայ գաղթականների և Ձեր հիանալի ժողովրդի համար, որին ես ճանաչեցի Հայաստանում իմ կատարած անմոռանալի ճանապարհորդության ընթացքում:

Մի գրքում, որ ես արդեն ավարտում եմ, ես հույս ունեմ ծանոթացնելու Ձեզ և համայն աշխարհը այն մասին, թե ինչ եմ մտածում ես Ձեր ժողովրդի և նրա ապագա հնարավորությունների մասին»⁵⁹:

Հայաստանում եղած կարճ ժամանակամիջոցում Ֆր. Նանսենը ծանոթացավ մեր երկրի բազմաբեղուն կյանքի գրեթե բոլոր բնագավառներին, այցելեց գյուղատնտեսական շրջաններն ու արդյունաբերական ձեռնարկությունները, բնության տեսարժան վայրերն ու պատմական հնագույն հուշարձանները, ազգային թանգարաններն ու նորաբողոք ուսումնական հաստատությունները, տեսավ հայ աշխատավորի շինարարական տաղանդի կերտած կոթողներն ու լսեց ժողովրդական ստեղծագործության զուլալ մեղեդիները: Երբ 1925 թ. հուլիսի 19-ին Նանսենը և նրա ուղեկիցները տեսան Զվարթնոցի հույկապ տաճարի մնացորդները, հիացած մարդկային հանճարի հնագույն այդ ստեղծագործությամբ, Նանսենը հայտարարեց. «այս հիանալի ավերակները ցույց են տալիս, որ ձեր ժողովուրդը զարմանալի ընդունակություն ունի դեպի քաղաքակրթությունը»⁶⁰:

Այցելելով մեր երկիրը և տեղում ծանոթանալով նրա աշխատասեր ժողովրդին ու դարավոր մշակույթին, նորվեգացի մեծ մարդասերն իր ստացած անմիջական տպավորությունների ու եվրոպական լեզուներով մինչ այդ լույս տեսած աշխատությունների հիման վրա հետագայում գրեց «Յարված ժողովուրդ» գիրքը, որը, չնայած իր մեջ պարունակող որոշ ակնհայտ, բայց և անխուսափելի սխալներին, հանդիսանում է հայ ժողովրդի պատմության, նրա ողբերգական, բայց և հերոսական անցյալի, ինչպես նաև լուսավոր ու պայծառ ապա-

գայի մասին եվրոպացի ուսումնասիրողների տված լավագույն գրքերից մեկը⁶¹: Հեռանալով Հայաստանից, Նանսենը չմոռացավ հայ ժողովրդին, այլ իր գրած գրքով ցույց տվեց, որ նրա ցավերն ու հոգսերը շատ մոտ ու հասկանալի են իրեն: Նրա գիրքը տալիս է հայոց պատմության վերաբերյալ մի համառոտ ու հետաքրքիր ակնարկ: Այդ փաստն ինքնին խոսում է այն մասին, որ Նանսենը եվրոպական լեզուներով կարդացել ու յուրացրել էր ահագին գրականություն Հայաստանի պատմության վերաբերյալ:

Սակայն առավել ուշագրավ են Նանսենի գրքի այն մասերը, որոնք նվիրված են Սովետական Հայաստանի առօրյային ու հայ գաղթականության հարցին: Նա դրվատանքով նկարագրում է սովետական իշխանության շինարար գործունեությունը Հայաստանում և մեղադրում Անտանտին ու Ազգերի լիգային, որոնք դրժելով իրենց բոլոր խոստումները, չկատարեցին իրենց պարտքը հայ ժողովրդի հանդեպ:

Չնայած Ազգերի լիգայում հօգուտ հայ գաղթականության ծավալած իր բազմամյա եռանդուն գործունեությանը, Նանսենին չհաջողվեց նրա հարցի լուծման ուղղությամբ շատ թե քիչ շոշափելի արդյունքների հասնել: Եվ իմպերիալիստական մեքենայությունների հետևանքով Ազգերի լիգայում հայ գաղթականության խնդրի վերջնական տպավորումից խայթված՝ Նանսենը նորվեգերեն, գերմաներեն, անգլերեն և ֆրանսերեն լույս ընծայեց իր գիրքը, որն ինչպես դիպուկ կերպով

61 1929 թ. այդ գրքի մասին Պ. Մակինցյանը գրել է մի գրախոսական՝ «Նանսենի գործն ու գիրքը» վերնագրով (տե՛ս «Նոր ուղի», 1929, № 1, էջ 341—350), որտեղ անդրադառնալով հայ գաղթականության հարցի վերաբերյալ Ազգերի լիգայում Նանսենի ծավալած գործունեությանը, միաժամանակ թարգմանաբար մեջ է բերել նրա գրքից առանձին կտորներ: Այնուհետև, Նանսենի մահվան առթիվ, 1930 թ. «Նոր ուղի»-ում (№ 4—5, էջ 46—60) «Յարված ժողովուրդ»-ից հայերեն հրատարակվել է երկու հատված «Շիրկանալի բացումը» և «Հայկական հարցն ու Անտանտան», որոնք սակայն խիստ պակասավոր են թարգմանված: Թեև այդ գրքի գրվելուց հետո անցել են տասնամյակներ, այնուամենայնիվ, այն չի կորցրել իր արժեքը:

⁵⁹ Հայկ. ՍՍՀ 224ՊԱ, ֆ. 40/113, ց. 3, գ. 820, ք. 15:

⁶⁰ «Նորհրդային Հայաստան», 21 հունիսի, 1925 թ., № 140:

որակել է գերմանական հրատարակիչը՝ «մեղադրական է Անտանտայի և Ազգերի լիգայի դեմ»⁶²:

Նանսենը փաստորեն խաբվեց իր բարի մտադրությունների մեջ, Ազգերի լիգայից ակնկալած իր սպասելիքների մեջ: Բայց խաբվելով հանդերձ, այդ համառ եվրոպացին իր հրատարակած գրքով վրեժխնդիր եղավ իրեն խաբողներից: Ինչպես բնութագրել է անգլիական «Թայմս» թերթը, «եսաբված ժողովուրդ» գիրքը «կարիճի պես իր պոչի մեջ խայթոց ունի, որ վիրավորում է հաճոյակատարությունը բոլոր նրանց, ովքեր խոստացան ավելին, քան ի վիճակի էին կատարելու»⁶³:

Եվ դա բնավ պատահական բնութագրում չէր, այլ նկատի ունեեր այն սուր քննադատությունը, որ Ֆր. Նանսենը ծավալել էր իր աշխատության վերջում անգլիական կառավարության ու պետական գործիչների, ինչպես նաև Ազգերի լիգայի հասցեին: Մասնավորապես լիգայի մասին Նանսենը գրել է. «Ինչո՞ւ է Ազգերի լիգան հանձնաժողովներ նշանակում հարցն ուսումնասիրելու համար, թե ի՞նչ նվազագույն բան կարելի է անել հայրենագուրկ հայ գաղթականների օգտին: Արդյո՞ք ոմանց անմաքուր խիղճը հանգստացնելու՞, իբր թե որևէ բան է արվում:

Բայց ի՞նչ նպատակով, քանի որ եղելությանը լավատեղյակ և գործը հասկացողների բարեխիղճ ուսումնասիրությունների հետևանքով արված ու շատերի կողմից ջերմորեն ընդունված առաջարկությունները շարժանացան մեծ տերությունների պաշտպանությանը, որոնք սառնասրտորեն մերժեցին ամենափոքր զոհողությունը՝ օգնելու համար ողորմելի գաղթականներին, որոնց նկատմամբ նրանք հանձն էին առել այնքան ծանր պարտականություններ: Այս հարցին պատասխանում են, թե չի կարելի զոհողություններ կատարել ուրիշի համար, երբ մարդիկ հագիվ-հագ իրենց ցավն են հոգում: Բայց արդյո՞ք ավելի լավ չէ՞ր լինի այդ մասին խորհել այն ժամանակ, երբ հաստատ խոստումների և պատվի անունով

կոչ էր արվում այդ դժբախտներին՝ Անտանտի գործի համար զոհաբերել ոչ միայն իրենց դրամը և ունեցվածքը, այլև իրենց կյանքը»⁶⁴:

Այնուհետև, վերլուծելով հայ գաղթականության հարցի շուրջը տեղի ունեցած անց ու դարձը, եղած, բայց չիրականացված բազմաթիվ խոստումները, Նանսենը շվարած գրում է. «Մարդ տարակուսած հարցնում է, թե ի՞նչն էր իրոք այդ բոլորի նպատակը: Արդյո՞ք այդ ամենը իսկապես դատարկ խոսքեր էին: Դատարկ խոսքեր, առանց լուրջ հիմքերի:

Իսկ Ազգերի լիգան: Մի՞թե նա նույնպես չէր զգում ոչ մի պատասխանատվություն»⁶⁵:

Իմպերիալիստական տերությունները Ազգերի լիգայում զնելով հայ գաղթականության հարցը, ցանկանում էին խաբել հասարակայնությանը, թե իբր իրենք մտածում են հայ տարագիրների մասին: Իրականում նրանք ցանկանում էին Սովետական Հայաստանում երկարատև ժամանակով իրենց ձեռքը գցել տնտեսական կարևոր ձեռնարկներ ու դիրքեր և այնուհետև կախման մեջ գցելով սովետական իշխանությանը, իրենց քաղաքական կամքը թելադրել նրան: Սովետական կառավարությունը, հանուն օտարության մեջ տառապող աշխատավոր հայ գաղթականության հարցի լուծման, ընդառաջելով Ազգերի լիգային, միաժամանակ ճշտորեն կռահեց իմպերիալիստական տերությունների իսկական նպատակները, ժամանակին հակահարված տվեց նրանց ստոր մեքենայություններին և կանխեց նրանց սպեկուլյատիվ հաշիվների իրականացումը: Ահա թե ինչու Ազգերի լիգան և այնտեղ բազմած դիվանագետները հրաժարվեցին որևէ բան անել հանուն հայ գաղթականության: Ահա թե ինչն էր իրոք այդ բոլորի նպատակը: Հենց այս էր, որ ժամանակին չէր կարողացել ըմբռնել Ֆր. Նանսենը: Հետո միայն նա հասկացավ, որ հայ գաղթականության հարցում Ազգերի լիգայի բռնած դիրքը ոչնչով չի տարբերվում մեծ տերությունների վերաբերմունքից

⁶² «Նոր-ուրի», 1929 թ., № 1, էջ 350:

⁶³ Նույն տեղում, 1930 թ., № 4—5, էջ 48:

⁶⁴ Fridjof Nansen, Betrogenes Volk, էջ 331:

⁶⁵ Նույն տեղում, էջ 333:

և խիզախորեն բողոքեց Անտանտի ու լիգայի դեմ, կրքոտ կերպով մերկացրեց նրանց ստոր գործունեությունը:

Վերջում Նանսենը գրում է. «Ծվրոպայի ժողովուրդները և պետական գործիչները հոգնել են հավերժական հայկական հարցից:

Ինքնին հասկանալի է:

Այս հարցում նրանք միայն ձախողում կրեցին: Հայերի անունն անգամ նրանց նիրհող խղճերում արթնացնում է հիշողություն խորտակված կամ անկատար հանդիսավոր խոստումների ծանր շղթաների մասին, խոստումներ, որոնց կատարման համար նրանք մատը-մատին չէին խփել:

Այժմ խոսքը վերաբերում է այն փոքր, արյունոտ, սակայն նվիրված ժողովրդին, առանց նավթի ու ոսկու հանքերի:

Վա՛յ հայ ժողովրդին, որ նրան ներքաշեցին եվրոպական քաղաքականության մեջ: Նրա համար ավելի լավ կլիներ, որ նրա անունը երբեք ոչ մի եվրոպական դիվանագետի շուրթերին չլիներ:

Սակայն հայ ժողովուրդը երբեք չհուսահատվեց: Մշտական, համառ աշխատանքում նա սպասում էր, սպասում երկար: Նա սպասում է մինչև օրս էլ»⁶⁶, այսպես է ավարտում իր գիրքը մեծ մարդասերը:

Այո՛, հայ ժողովուրդն սպասում էր, սպասում էր, բայց արդեն ոչ երբեք եվրոպական իմպերիալիստներից, այլ ուսական հորիզոնում վեր բարձրացած կարմիր ու հրաբորբ դրոշից և Արարատի ստորոտում ծնունդ առած Հայաստանի անկախ ու սոցիալիստական պետությունից էր ակնկալում իր բաղձանքների իրականացումը:

Հայաստանում կատարած իր ուսումնասիրությունների ընթացքում Նանսենը եկավ այն հաստատ համոզման, որ «միակ վայրը, ուր ներկայումս կարելի է տեղավորել ընչազուրկ հայ գաղթականներին՝ դա Սովետական Հայաստանն է: Այստեղ, ուր մի քանի տարի առաջ թագավորում էին ավերածությունը, թշվառությունը, սովը, այժմ սովետական կառավարության

հոգատարության շնորհիվ, հաստատված է խաղաղություն և կարգ ու կանոն, բնակչությունը որոշ չափով նույնիսկ ունեւոր է դարձել»⁶⁷:

1927 թ. կեսերին Նանսենը տեղեկություն է ստանում, որ Սովետական Հայաստանի կառավարությունը, այլևս չսպասելով Ազգերի լիգայի կեղծ որոշումներին, մտադիր է իր ներքին հնարավորությունների մոբիլիզացումով միջոցներ կուտակել ղուերի, Սև ջրի և Զանգիբասարի ու մյուս հողամասերի ճահիճների շորացման ու ոռոգման համար: Ստանալով այդ ուրախալի լուրը, Նանսենն անմիջապես դիմում է ՀՍԽՀ ժողկոմխորհին, հայտնելով, որ, եթե այդ ճիշտ է, ապա, շնայած ինքը դեռևս չի կարողացել ոռոգման ծրագրի իրագործման և գաղթականների տեղավորման նպատակով գումար ձեռք բերել, պիտի փորձի վարկեր ստանալ՝ գոնե գաղթականությանը Սովետական Հայաստան տեղափոխելու համար⁶⁸:

Նանսենը մեծ գովասանքով է խոսում դեպի հայ գաղթականությունը սովետական կառավարության ցուցաբերած ուշադիր և հոգատար վերաբերմունքի մասին՝ նշելով, թե «մենք տեսնում ենք, որ դուք գաղթական եղբայրների համար անում եք ավելին, քան կարող եք: Ցանկանում ենք, որպեսզի ձեր գաղթական եղբայրները շուտով միանան ձեզ հետ»⁶⁹: Նա միաժամանակ Ազգերի լիգայի խորհրդում հայտարարում է, որ եվրոպական տերությունների քաղաքականությունը ոչնչով չի նպաստում հայ գաղթականներին Սովետական Հայաստան տեղափոխելու հարցի լուծմանը, հետևապես պետք է վերջ տալ այդ խաբեությունը⁷⁰:

Հայ ժողովրդի դժբախտ հատվածի՝ կապիտալիստական զանազան երկրներում դեգերող գաղթականության նկատմամբ հոգսը Նանսենը մոռացության չտվեց մինչև իր կյանքի վերջը: 1928 թ. նա շրջագայություն կատարեց Ամերիկայում, որի

67 Յր. Նանսեն, «Ցրամ»-ը Քեեռային ծովում, էջ 42:

68 Տե՛ս Հայկ. ՍՍՀ ՀՀԿՊԱ, ֆ. 40/113, ց. 3, գ. 820, թ. 4:

69 Տե՛ս նույն տեղում, գ. 373, թ. 17:

70 Տե՛ս «Правда», 28 сентября, 1927, № 221:

⁶⁶ Fridjof Nansen, Betrogenes Volk, էջ 333—334:

ընթացքում դասախոսություններ ու զեկուցումներ կարգաց հայերի օգտին հանգանակություն ծավալելու նպատակով⁷¹։ Այդ ժամանակ էլ հենց վերջնականապես համադրվելով, որ կապիտալիստական աշխարհը քար անտարբերություններ է վերաբերվում հայ գաղթականության տառապանքներին, և չհանդուրժելով, որ Ազգերի լիգան շարունակի խաբել հայ տարագիրներին, Նանսենը 1929 թ. աշնանը առաջարկ մտցրեց լիգայի ընդհանուր ժողով՝ այլևս անօգուտ կերպով չզբաղվել Սովետական Հայաստանում հայ գաղթականների տեղավորման ծրագրով։ Ազգերի լիգայի 1929 թ. սեպտեմբերի 21-ի նիստում ընդունվում է Նանսենի առաջարկը։ Եվ 1920 թվականից ի վեր լիգայի օրակարգում ապարդյուն կերպով արծարծված այդ հարցը հանվում է։ Ինչպես այդ մասին հաղորդել է Հայոց բարեգործական ընդհանուր միության ժնկի պատվիրակ Լևոն Բաշալյանը «տոքթ». Նանսեն ստիպված է սույն առաջարկը բերել այն պատճառով, որ Հայաստանի կառավարությունը մերժած է այդ ծրագիրը, հավանորեն որովհետև հետև ծրագրին իրականացման համար Ազգերու ընկերության (Ազգերի լիգայի—Հ. Մ.) հավաքած գումարը աննշան է բաղադատմամբ կատարվելիք գործին և հետևաբար չէր արժեր, որ կառավարությունը բազմաթիվ տարիների համար հանձնառություններ ստանձներ և հակակշիռ մը հաստատման հավաններ»⁷²։

Միաժամանակ որոշվում է Գերմանիային, Նորվեգիային, Ռումինիային և Հունաստանին «զերծ կացուցանել նախապես իրենց ստանձնած հանձնառություններին» և Լյուքսեմբուրգի կառավարությանն ու երկու անհատ անձնավորությունների հետ վերադարձնել հայ գաղթականների տեղափոխության Ֆոնդին հատկացրած շնչին գումարները⁷³։

Ըստ լուրերի, մոտ մի հնգամյակի ընթացքում (1925—1929 թթ.) Նանսենին հաջողվել էր հայ գաղթականների տե-

ղափոխման և նախատեսված հողամասերի ոռոգման համար հավաքել հազիվ 1,6 միլիոն ուրբի⁷⁴, աննշան մի գումար նման գործի իրականացման համար։ Այնպես որ, բնավ շարդարացան այդ ճանապարհով հայ գաղթականության հարցի լուծման Նանսենի հույսերը։ Ինչպես ժամանակին շատ ճիշտ կերպով նշվել է սովետահայ մամուլում, մեծ մարդասերի բուրբ ձեռնարկումները՝ օգնության հասնելու հայ գաղթականներին, «շարժելով Եվրոպայի և Ամերիկայի գութը», ջուրն ընկան։ Դա մի ավելորդ անգամ ապացուցեց, որ միանգամայն արդարացի է եղել սովետական կառավարությունը՝ իմպերիալիստական պետություններին և նրանց դիվանագետներին համարելով հայ ժողովրդի քողարկված ու ոխերիմ թշնամիներ՝ ոչ մի հույս չկապելով նրանց հետ և ուրիշներին թողնելով նրանցից «բարիքներ» ակնկալելու հույսը։

Ինչպես տեսանք, օտարության մեջ դեզերող սփյուռքահայ աշխատավորների մի զգալի մասի հայրենադարձությունը իրականացվեց ո՛չ թե Ազգերի լիգայի միջոցով, որին սովետական կառավարությունը ամեն կերպ ընդառաջում էր հանուն հայ գաղթականության հարցի շուտափուլ լուծման, բայց որը իրականում ոչինչ չկարողացավ կամ շքանկացավ գլուխ բերել, ո՛չ թե իմպերիալիստական կառավարությունների օգնությամբ, որոնք ուղղակի պատասխանատվություն էին կրում հայ գաղթականության աննախանձելի վիճակի հանդեպ, այլ սովետական կառավարության գործադրած գերազույն ջանքերի և Սովետական Հայաստանի աշխատավորների՝ դեպի իրենց սփյուռքահայ եղբայրներն ունեցած ջերմ հոգատարության ու հանուն նրանց կատարած զոհողությունների շնորհիվ։

⁷⁴ Տե՛ս «Ենթերդային Հայաստան», 11 ապրիլի, 1929 թ., № 83։

⁷¹ Տե՛ս «Հայաստանի կոչնակ», 12 մայիսի, 1928 թ., № 19, էջ 599։

⁷² «Միություն», 1929 թ., № 135, էջ 237։

⁷³ Տե՛ս նույն տեղում։

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵՆ, ՆՐԱ ԴԵՐԸ ՀԱՅՐԵՆԻՔԻ
ՀՅՏ ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՊԵՐԻ ԱՄՐԱՊԵՏՄԱՆ ԵՎ
ՀԱՅՐԵՆԱԳԱՐՁՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ**

Երկրի վերաշինության, արևմտահայ գաղթականությանը օգնելու և հայրենիքի հետ սփյուռքահայ աշխատավորների կապերի ամրապնդման ու նրանց հայրենադարձության իրականացման գործում մեծ դեր է խաղացել Հայաստանի օգնության կոմիտեն (204-ը):

Հայաստանի օգնության կոմիտեն կազմակերպվել է 1921 թ. սեպտեմբերին Երևանում, մի խումբ հասարակական գործիչների ու մտավորականների նախաձեռնությամբ: 204-ի հիմնադիր անդամների թվում էին՝ Ս. Կասյանը, Ս. Տեր-Գաբրիելյանը, Ս. Համբարձումյանը, Ա. Բեկզադյանը, Ար. Երզնկյանը, Գ. Շահվերդյանը, Ա. Մելիքյանը, Ա. Կախոյանը, Ս. Մարտիկյանը, Հովհ. Թումանյանը, Նար-Դոսը, Գ. Դեմիրճյանը, Ե. Թադևոսյանը, Ռ. Մելիքյանը, Հ. Մանանդյանը, Լեոն, Ստ. Մալխասյանը, Վ. Արծրունին, Մ. Աբնդյանը, Գր. Զուբարյանը, Մ. Սարյանը և ուրիշներ:

Այն ժամանակվա դժվարին պայմաններում նման մի անկուսակցական, հասարակական կազմակերպության միջոցով գաղութահայության կենսունակ ուժերն օգտագործելու և նրան սոցիալիստական հայրենիքի շուրջը համախմբելու խնդիրն ուներ խիստ կարևոր նշանակություն:

204-ի ստեղծումը արդյունք էր այն շրջահայաց ու խոհեմ քաղաքականության, որ իրականացվում էր սփյուռքահայության նկատմամբ Հայաստանի կոմունիստական կուսակցության կողմից: Այն ժամանակ ՀՍԽՀ Ժողկոմխորհի նախագահ Ալ. Մյասնիկյանը, կուսակցական ու պետական մեծ գործչին

հատուկ հեռատեսությամբ և նրբանկատությամբ, 204-ին մեծ կարևորություն էր տալիս ոչ այնքան նրա բերելիք նյութական օժանդակության, որքան արտասահմանի հայ զանգվածների շրջանում Սովետական Հայաստանի մասին ճշմարտացի տեղեկություններ տարածելու և հայրենիքի հետ նրանց կապն անխզելի պահելու իմաստով:

204-ի հիմնադիր համագումարից անմիջապես հետո ստեղծվում են նրա տեղական մասնաճյուղերը Սովետական Միության հայաշատ գրեթե բոլոր քաղաքներում: Սակայն մինչև 1924 թ. սկիզբը 204-ը արտասահմանում գրեթե մասնաճյուղեր չունի և իր գործունեությունը հայկական գաղթօջախներում իրականացնում էր ՀՄ-ի, Հայոց բարեգործական ընդհանուր միության և այլ կազմակերպությունների միջոցով: Այդ տեսակետից բացառություն էր կազմում միայն Պարսկաստանը, ուր Սովետական Հայաստանի լիազոր-ներկայացուցչության ու հյուպատոսությունների և տեղի առաջադիմական ուժերի ջանքերի շնորհիվ մասնաճյուղեր էին ստեղծվել դեռևս 1922 թ. փետրվարին: Նման դրությունը, հասկանալի է, 204-ին չէր կարող բավարարել և նրա կենտրոնական վարչությունը վճռական քայլեր էր կատարում արտասահմանյան մասնաճյուղեր կազմակերպելու ուղղությամբ:

Սակայն հենց սկզբից, ինչպես և պետք էր սպասել, գաղութահայ ունևոր խավերն ու ռեակցիոն ուժերը մասամբ անտարբեր, մասամբ էլ բացահայտ թշնամական դիրք բռնեցին «պոլշեիկյան» Հայաստանին օգնող կազմակերպության մասնաճյուղերի ստեղծման գործում: Հակառակ դրան, սփյուռքահայ աշխատավորական լայն զանգվածները բուռն հետաքրքրություն և մեծ ակտիվություն ցուցաբերեցին հայրենիքին օգնող հաստատություն կազմակերպելու ուղղությամբ:

Այսպես, օրինակ, հունահայ աշխատավորները արտասահմանում առաջիններից մեկը կազմակերպեցին 204-ի տեղական մասնաճյուղեր (ապրիլ, 1924 թ.) և, շնայած իրենց քաղաքական ու տնտեսական անբարենպաստ կացությանը, զգալի միջոցներ տրամադրեցին 204-ի կենտրոնական վարչությանը: Արդեն 1925 թ. սկզբներին 204-ի մասնաճյուղեր

էին կազմակերպվել Ֆրանսիայի, Բալկանների, Մերձավոր Արևելքի, ԱՄՆ-ի, Հարավային Ամերիկայի և այլ հայկական գաղթօջախներում:

Գաղթականությանը դեպի Սովետական Հայաստան տրամադրելու տեսակետից մեծ նշանակություն ունեցավ 1921 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին 204-ի առաջին նախագահ Հովհաննես Թումանյանի և քարտուղար Երվանդ Թադիանոսյանի առաքելությունը դեպի Կ. Պոլիս: Այդ պատվիրակությանը հաջողվեց Կ. Պոլսում միավորել մոտ հինգ տասնյակի հասնող մշակութային ու բարեգործական ազգային կազմակերպությունների մինչ այդ անջատ-անջատ ծավալված գործունեությունը: 2. Թումանյանի գլխավորած պատվիրակությունը հատկապես սերտ կապերի մեջ մտավ այսպես կոչված «Հայրենիքի օգնության մարմնի» հետ, որն ստեղծվել էր 1920 թ. հոկտեմբերին և բացի Կ. Պոլսից մասնաճյուղեր ուներ նաև Թումինիայում, Բուլղարիայում և մի քանի այլ վայրերում: 20Մ-ի նպատակն էր նյութական ու բարոյական աջակցություն կազմակերպել Հայաստանին: Սակայն, երբ 204-ի պատվիրակությունը Կ. Պոլիս հասավ, 20Մ-ին փաստորեն անգործության մատնված գտավ դաշնակիների հակասովետական պրոպագանդայի և որոշ շափով նաև ռամկավարների անտարբեր վերաբերմունքի հետևանքով: 204-ի պատվիրակությանը հաջողվեց զգալի շափով աշխուժացնել 20Մ-ի գործունեությունը և ամրապնդել նրա դիրքերը: 1921 թ. դեկտեմբերի 1-ին 204-ի և 20Մ-ի ներկայացուցիչների ստորագրություններով մի շրջաբերական է ուղարկվում գաղութահայ բոլոր կարևոր կենտրոնները: Շրջաբերականում կոչ էր արվում տեղերում ստեղծել Հայաստանի օգնության կոմիտեի մասնաճյուղեր, կապվել 204-ի կենտրոնական վարչության հետ և ամեն կերպ նպաստել երկրի վերաշինության ու գաղթականության նյութական վիճակի բարելավման գործին¹:

Վերոհիշյալ կոչը լայն արձագանք գտավ սփյուռքահայու-

թյան մեջ և հատկապես Կ. Պոլսում: Ամենուրեք սկսեցին կազմակերպվել հանգանակություններ ու նվիրատվություններ հայրենիքի օգտին: Չանցավ մի երկու ամիս և Հայաստան հասավ այլուր, հագուստեղեն, դեղորայք, դրամ և այլն²:

Շուտով Կ. Պոլսի հայկական կարմիր խաչի ընկերությունը Երևան ուղարկեց հինգ հոգուց բաղկացած բժշկական մի ջոկատ՝ երեք վագոն դեղորայքով և հիվանդանոցի ու դեղատան սարքավորումներով: Հայրենիքի օգնության մարմինը Կ. Պոլսից Հայաստան գործուղեց հատուկ պատվիրակություն՝ երկրի գրությունը ծանոթանալու և ավելի նպատակասույց օգնություն կազմակերպելու միջոցառումներ մշակելու նպատակով³: Եվ այսպես զնալով աշխուժանում էր 204-ի գործունեությունը, այն դառնում էր կապող օղակ հայրենիքի և սփյուռքի միջև:

* * *

Հայաստանի օգնության կոմիտեն իր 16-ամյա գոյության ընթացքում անցել է գործունեության երեք հիմնական էտապ: Առաջին էտապն ընդգրկում է 1921—1923 թթ., երբ 204-ի գլխավոր ուղարկությունը կենտրոնացված էր բնակչության՝ հատկապես գաղթականության համար պարեն, հագուստեղեն, դեղորայք և առաջին անհրաժեշտության այլ ապրանքների ձեռք բերելու ու բաշխելու վրա:

204-ի գործունեության աշխուժացման իմաստով կարևոր նշանակություն ունեցավ նրա երկրորդ համագումարը, որը կայացավ 1922 թ. հուլիսին Երևանում: Համագումարի աշխատանքներին մասնակցում էին նաև 20Մ-ի և գաղութահայ այլ կազմակերպությունների ներկայացուցիչներ: Համագումարը, ամփոփելով կատարված աշխատանքները, կենտրոնական վարչությանը հանձնարարեց՝ այսուհետև ևս շարունակելով կարիքավոր բնակչությանը օգնություն ցույց տալու գործը, առաջիկայում առավել գործոն մասնակցություն ունենալ երկրում ծավալված շինարարական ձեռնարկներին:

¹ Տե՛ս Հայկական ՍՍՀ 224ՊԱ, ֆ. 178, ց. 1, գ. 393, ք. 15:

² Տե՛ս նույն տեղում, ֆ. 4/114, գ. 3, ք. 101—102:

³ Տե՛ս նույն տեղում:

204-ի գործունեության այդ կողմը ավելի շնչափեց նրա երրորդ համագումարի կողմից (հոկտեմբեր, 1923 թ., Երևան), որի աշխատանքներին մասնակցում էին արտասահմանյան մի շարք երկրների գաղութահայության ներկայացուցիչները ևս: Համագումարը ամփոփեց կենտրոնական վարչության ու տեղական մասնաճյուղերի կատարած աշխատանքները և նկատի առնելով բնակչության նյութական դրության որոշ բարելավումը, խնդիր դրեց վերջ տալ միջոցների օգտագործման սպառողական բնույթին ու որդեգրել գործունեության այնպիսի ուղիներ, որոնք մնայուն ազդակ հանդիսանային երկրի տնտեսական ու մշակութային կյանքում:

204-ի գործունեության երկրորդ էտապում՝ 1923—1931 թթ., ուշադրության կենտրոնում էր գաղութահայ աշխատավորներին կազմակերպչորեն համախմբելու գործը: Երկրի ներսում 204-ը այդ շրջանում իրականացնում է շինարարական ու մշակութային կարևոր ձեռնարկներ: Կազմակերպական եռանդուն գործունեության ծավալման շնորհիվ արդեն 30-ական թվականների սկզբներին Հայաստանի օգնության կոմիտեն արտասահմանում ուներ 200-ից ավելի մասնաճյուղեր՝ ավելի քան 10.000 անդամներով⁴: Այս էտապում 204-ի կենտրոնական վարչության կողմից արտասահման են մեկնում մի շարք պատվիրակություններ ու անհատ գործիչներ, պրոպագանդայի համար օգտագործվում են գրականությունը, կինոնկարները, Հայաստանի տնտեսական ու մշակութային նվաճումների շրջիկ ցուցահանդեսները, հրատարակվում են գեղարվեստական զանազան լաբումներ ու բացիկներ, պարբերականներ և այլն, որոնց շնորհիվ երկրի մասին սփյուռքում միակ ճիշտ և հանգամանորեն տեղեկություն տվող կազմակերպությունը դառնում է 204-ը:

204-ի գործունեության երրորդ էտապը սկսվում է 1931 թվականից, երբ մեծ թափ ու լայն ծավալ են ստանում նրա

կենտրոնական վարչության ղեկավարությամբ հայրենակցական ու վերաշինաց միությունների կողմից նախորդ տարիներին սկսված նոր ավանների կառուցումը Հայաստանում: Երկրի տնտեսական կյանքի բարելավմանը զուգընթաց՝ լայն հնարավորություններ են ստեղծվում նաև ավելի մեծ մասշտաբով ներգաղթի կազմակերպման համար: Հայրենադարձության իրականացման գործում 204-ի կենտրոնական վարչությունն ու նրա արտասահմանյան մասնաճյուղերը ունեցել են գործոն մասնակցություն:

* * *

1926 թվականի սկզբներին, երբ արդեն 204-ը լայնորեն իր կազմակերպություններն էր տարածել արտասահմանյան հայ գաղութներում, երբ արդեն երկրի բնակչությունը բնավ կարիք չուներ ՍՍՀՄ-ում գոյություն ունեցող մասնաճյուղերից ստացվող աննշան օժանդակությունների, կենտրոնական վարչությունը որոշեց դադարեցնել նրանց գործունեությունը: Այդ շրջանում փոխվել էր նաև 204-ի արտասահմանյան մասնաճյուղերի դերը: Դրանք հիմնականում դարձել էին գաղութահայությանը մայր հայրենիքի հետ կապող առաջադիմական մասսայական կազմակերպություններ: Սփյուռքահայությանը Սովետական Հայաստանի հետ կապելու և նրա մասին ճշմարտացի տեղեկություններ տարու խմաստով այդ տարիներին մեծ դեր են կատարել 204-ի կենտրոնական վարչության կողմից արտասահման մեկնած պատվիրակությունները:

Այսպես, 1924 թ. վերջերին արտասահման է պործուղվում 204-ի կենտրոնական վարչության նախագահ, շՍԽՀ հողօժող կոմ Ար. Երզնկյանը: Նա լինում է Գերմանիայում, Ֆրանսիայում, Բելգիայում և Անգլիայում, ուր բազմաթիվ հանդիպումներ է ունենում գաղութահայ աշխատավորության հետ, հանդես գալիս Սովետական Հայաստանի մասին հանգամանալից զեկուցումներով ու ելույթներով, օգնում հիմնելու 204-ի մասնաճյուղեր և բարեգործական միության ներկայացուցիչ-

⁴ Տե՛ս «204», ամսագիր, օրգան արտասահմանյան 20-երի, Փարիզ-1935, № 2, էջ 583—584:

ների հետ կնքում մի շարք համաձայնագրեր՝ Հայաստանին կտակված որոշ գումարների օգտագործման վերաբերյալ⁵։

Հայաստան վերադառնալուց հետո, 1925 թ. փետրվարին, 204-ի կենտրոնական վարչության ընդլայնված պլենումում Ա. Երզնկյանը հանդես է գալիս հատուկ զեկուցումով, որի մեջ մանրամասնորեն անդրադառնում է իր ուղևորության արդյունքներին։ Ար. Երզնկյանը ներկայացնում է դադութահայության թշվառ կյանքի տխուր պատկերը, նրա աշխատավորական մասի անվերապահ համակրանքը Սովետական Հայաստանի նկատմամբ։ Ար. Երզնկյանը նշում է, որ սփյուռքահայության ամենահիմնական հոգսը դեռևս շհիմնավորված տարագիրների և որբերի խնդիրն է։ Հատկապես հուսահատական վիճակում էին գտնվում հայ որբերը, որոնց խնամքով զբաղվելու կոչված դադութահայ բարեգործական հաստատությունները փաստորեն վաճառում էին որբերին զանազան ֆիրմաների ու անհատների, նրանց ցրում էին Ֆրանսիայից մինչև Կանադա։ Հասկանալի է, թե ինչ տխուր հետևանքների կարող էր հասցնել հայ որբուկների ճակատագրի հանդեպ նման անհոգի վերաբերմունքը։

Սովետական Հայաստանի և սփյուռքահայության կապերի ամրապնդման, ինչպես նաև արտասահմանում 204-ի գործունեության հետագա աշխուժացման տեսակետից կարևոր դեր խաղաց 204-ի կենտրոնական վարչության կողմից 1925 թ. վերջերին հայկական գաղութները մեկնած նոր պատվիրակությունը։ Այդ պատվիրակությունը, որի կազմի մեջ մտնում էին կենտրոնական վարչության քարտուղար Գրիգոր Վարդանյանը, վարչության անդամ Կարեն Միքայելյանը և Հայաստանի կարմիր խաչի նախագահ բժիշկ Սպանդարատ Կամսարականը, արտասահման մեկնեց 1925 թ. նոյեմբերի 5-ին և հայրենիք վերադարձավ 1926 թ. դեկտեմբերի 1-ին, գրեթե 13 ամիս շրջելով հայկական գաղթօջախներում։ Պատվիրակությունը եղավ Գերմանիայի, Բելգիայի, Շվեյցարիայի, Ֆրանսիայի, Անգլիայի ու Ամերիկայի գրեթե բոլոր հայաշատ քաղաքներում և ծանոթացավ սփյուռքահայության կյանքին։

Պատվիրակության անդամներն ուսումնասիրեցին 204-ի արտասահմանյան գործունեությունը, հիմնադրեցին նոր մասնաճյուղեր և այլն։ Նրանք ամենուրեք հանդես էին գալիս Սովետական Հայաստանի նվաճումների և 204-ի հետագա անելիքների մասին դասախոսություններով ու զեկուցումներով, որոնք ուղեկցվում էին Հայկինոյի նկարահանած ֆիլմերով կամ ուրիշ ցուցադրական նյութերով։ Պատվիրակությունն իր հետ արտասահման էր տարել մի փոքրիկ շրջիկ ցուցահանդես, զեղարվեստական բազմաթիվ պատկերազարդ ալբոմներ ու դիագրամներ, որոնք որոշակի գաղափար էին տալիս Հայաստանի տնտեսական ու մշակութային վերելքի մասին։

Հարկ է նշել, որ 204-ի պատվիրակությունը ջիբում ընդունելության արժանացավ սփյուռքահայության կողմից։ Պատվիրակության անդամներն իրենց շրջագայությունների ընթացքում եղան տարբեր երկրների մոտ 60 քաղաքներում, ավելի քան 120 անգամ ունեցան հրապարակային բանախոսություններ ու զեկուցումներ, որոնց ներկա գտնվեցին տասնյակ հազարավոր հայեր։ 204-ի կենտրոնական վարչության միջոցներով ու պատվերով Հայկինոյի նկարահանած «Խորհրդային Հայաստան» վավերագրական կինոնկարը, որն ընդգրկում էր երկրի բազմաբովանդակ կյանքի բոլոր բնագավառները, նույնպես մեծ հաջողություն ունեցավ։ Ինչպես հաղորդում են պատվիրակության անդամներն իրենց տպավորություններում, ամեն անգամ, երբ դահլիճում մարում էր լույսը և խավարի միջից երևում էին Սովետական Հայաստանի գերբն ու պետական դրոշը, հայրենակարոտ հուզված սրբուտերը հրճվանքի գերագույն պահ էին ապրում և խանդավառ օվացիա սարքում ի պատիվ հայրենիքի։ Գաղութահայության վրա այդ կինոնկարի գործած ազդեցությունն այնքան ուժեղ էր, որ մի շարք երկրներում դաշնակները դիմեցին տեղական իշխանություններին, խնդրելով արգելել նրա ցուցադրումը։

Պատվիրակության ծավալած հոանդուն գործունեության շնորհիվ ամրապնդվում են 204-ի մասնաճյուղերը, կազմակերպվում նորերը։ Այդ շրջանում արդեն նրանց թիվը Ֆրանս-

⁵ Տե՛ս Հայկական ՍՍՀ ՀՀԿՊԱ, ֆ. 178, ց. 1, գ. 66, թ. 66—68.

սիայում հասնում էր 32-ի, ԱՄՆ-ում՝ 45-ի, բազմաթիվ մասնաճյուղեր էին ստեղծվել նաև հայկական այլ գաղթավայրերում: 204-ի շուրջն էին համախմբվում հատկապես աշխատավորական տարրերը, որի շնորհիվ այն դառնում էր սովետական օրինատացիայով սփյուռքահայ զանգվածների անկուսակցական ամենամասսայական կազմակերպությունը:

Գաղութահայության բարոյական աջակցությունից բացի, պատվիրակությունը ձեռք բերեց նաև նյութական որոշակի արդյունքներ: 204-ի Ֆրանսիայի, Անգլիայի և Ամերիկայի մասնաճյուղերը զգալի գումար տրամադրեցին ներգաղթողների համար Հայաստանում բնակարաններ կառուցելու ֆոնդին: Այդ միջոցներով հետագայում Երևանում կառուցվեցին մի քանի շենքեր, որտեղ օթևան գտան տարագրությունից հայրենիք վերադարձած հարյուրավոր բնտանիքներ: Այսպես, օրինակ, ԱՄՆ-ում կազմակերպված Մալաթիայի հայրենակցական միությունը Հայաստան ներգաղթող մալաթիացիներին համար պատվիրակությանը հանձնեց 30.000 դոլար: Էջմիածնի շրջանի Էվջիլարի նորակառույց ջրանցքով ոռոգվող հողերի վրա հիմնադրված նոր Եվդոկիա ավանի համար Բելգիայի հայ գաղութից ձեռք բերվեց 27.000 բելգիական ֆրանկ: Այլ գաղութներից ու հաստատություններից ստացվեց 20.000 դոլար Հայաստանում մի քանի գյուղական դպրոցներ կառուցելու համար, 24.000 ուրլի՝ մեղվաբուծական դպրոց հիմնելու համար, 70.000 ֆրանկ՝ Երևանում ակնաբուժական կլինիկա կազմակերպելու համար: Պատվիրակությունը Հայաստան բերեց նաև մեծ քանակությամբ լաբորատոր սարքավորումներ՝ Երևանի համալսարանի համար⁶:

Պատվիրակության անդամները արտասահմանում ծանոթացան նաև մի քանի տասնյակի հասնող հայկական կտակների, նվիրատվությունների և ազգային այլ գումարների խնդրի հետ: Պատվիրակության հավաքած նյութերի և ՀՄԽՀ

ժողովուրդին առնթիվ «Կտակների ուսումնասիրության հանձնաժողովի» ձեռք բերած փաստաթղթերի հիման վրա 1928 թ. 204-ը Մոսկվայում հրատարակեց պատվիրակության անդամ Կարեն Միքայելյանի «Հայ ժողովրդական հարստությունները արտասահմանում» գրքույկը: Վերջինս մեծ իրարանցում ու շփոթ առաջացրեց գաղութահայ «բարեգործական» շրջաններում: Այդ գրքույկը հնարավորություն տվեց սփյուռքահայությանը ճանաչելու իր «բարեբարներին», որոնք տարիներ շարունակ հայ ժողովրդից թաքցրած էին պահում իրականում նրան պատկանող ազգային հսկայական գումարները: Դրա շնորհիվ սփյուռքահայ առաջադիմական խավերը հնարավորություն ստացան իրենց արդար բողոքի ձայնը բարձրացնելու հանրային միջոցները շոսյուղների դեմ և ըստ կարելիության այն օգտագործելու ազգային-մշակութային նպատակներով:

1928 թ. ամռանը 204-ի կենտրոնական վարչությունը մի նոր պատվիրակություն (Գրիգոր Վարդանյան, Արամայիս Մուսայելյան) գործուղեց արտասահման: Այդ պատվիրակությունը դարձյալ շուրջ մեկ տարի շրջագայեց Եվրոպայի և Ամերիկայի հայկական գաղութներում, ծանոթացավ սփյուռքահայ աշխատավորության վիճակին և 204-ի արտասահմանյան մասնաճյուղերի գործունեությանը: Պատվիրակությունը զեկուցումներով, ելույթներով, լուսանկարների և ցուցադրական այլ նյութերի միջոցով սփյուռքահայությանը ներկայացրեց երկրի կյանքը: Գաղութներում մեծ հետաքրքրություն առաջացրեց «Խորհրդային Հայաստանն այսօր» վավերագրական ֆիլմը: Այդ նույն շրջանում Ամերիկայում և այլ երկրներում ցուցադրվում էին Հայաստանի պետլուսկինոյի արտադրած «Նամուս» և «Չար ոգի» գեղարվեստական կինոնկարները, որոնք նույնպես մեծ հաջողություն ունեցան⁷:

Այսպիսով, 204-ի պատվիրակությունները, ինչպես նաև Սովետական Հայաստանի ղեկավար գործիչների ու մտավոր-

⁶ Մանրամասն տե՛ս ՀՍՍՀ 224ՊԱ, ֆ. 178, ց. 1, գ. 298, թ. 10—14 (204-ի կենտրոնական վարչության 1926 թ. դեկտեմբերի 31-ի նիստում պատվիրակության տված հաշվետվությունը):

⁷ Տե՛ս Հայկական ՍՍՀ 224ՊԱ, ֆ. 178, ց. 1, գ. 463, թերթ 7—10:

րականների արտասահմանյան ուղևորությունները, պրոպագանդայի բազմազան միջոցները, 20-ական թվականների վերջերին մեծապես ուժեղացրին 204-ի դիրքերը հայկական գաղութներում գոյություն ունեցող ուրիշ կազմակերպությունների համեմատությամբ:

Սովետական Հայաստանի մասին սփյուռքահայությանը ճիշտ գաղափար տալու և բուրժուական-ազգայնական կուսակցությունների դեմ պայքար կազմակերպելու տեսակետից կարևոր դեր էին կատարում նաև 204-ի պարբերականներն ու այլ հրատարակությունները: 204-ի կենտրոնական վարչության առաջին պարբերականը «Հրավիրակ» ամսագիրն էր, որը լույս էր տեսնում 1925—1926 թթ.: Ընդառաջելով արտասահմանյան մասնաճյուղերի և սփյուռքահայ աշխատավորների ցանկություններին՝ 204-ի կենտրոնական վարչությունը 1928 թ. հրատարակում է «204-ի տեղեկատու» ամսագիրը:

Տարբեր ժամանակներում մի քանի պարբերականներ էին լույս ընծայել նաև 204-ի Թիֆլիսի և Մոսկվայի մասնաճյուղերը («Օգնիր Հայաստանին», «Հայրենաշին», «Вестник Комитета Помощи Армении», «Возрождающаяся Армения», «Լրաբեր»):

Իրենց տպագիր օրգաններն ունեին նաև 204-ի Ամերիկայի կենտրոնական վարչությունը («Շինարար» հանդեսը, որը լույս էր տեսնում 1927 թ. սկսած), Եգիպտոսի մասնաճյուղը («204» ամսագիրը): 204-ի Ֆրանսիայի կենտրոնական վարչությունը 1933—1935 թթ. Փարիզում հրատարակում էր «204» ամսագիրը, որպես 204-ի արտասահմանյան մասնաճյուղերի օրգան:

Սովետական Հայաստանի վերելքը, սփյուռքահայության կյանքը և 204-ի գործունեությունը մանրամասնորեն լուսաբանում էր նաև 1925—1930 թթ. Փարիզում լույս տեսնող «Երևան» թերթը:

204-ի բոլոր օրգանները, ինչպես նաև սփյուռքահայ ամբողջ առաջադիմական մամուլը նպաստում էին հայրենիքի հետ գաղութահայ աշխատավորության կապերի ամրապնդ-

մանը, Սովետական Հայաստանի համակիրների աճին, 204-ի մասնաճյուղերի գործունեության հաջող ծավալմանը, հայրենադարձության իրականացմանը և այլն:

1925 թ. սկզբին 204-ի կենտրոնական վարչությունը հիմնում է գեղարվեստական հրատարակչության բաժին, որը մեծ թվով ուսումնասիրություններ, գեղարվեստական երկեր, նրկարներ, ալբոմներ և այլ գործեր լույս ընծայեց, դրանով իսկ խթանելով երկրի մշակութային կյանքի վերելքին:

Այդ բոլոր հրատարակությունների միջոցով 204-ը նպատակ ուներ աշխարհով մեկ ցրված հայությանը բազմակողմանի և ճիշտ գաղափար տալ Սովետական Հայաստանի մասին և նրանց մեջ միշտ վառ պահել սերը հայրենի երկրի նկատմամբ:

Հայաստանի օգնության կոմիտեի գործունեությունն առաջ էր բերում գաղութահայ հետադիմական ուժերի և հատկապես դաշնակցության կատաղի թշնամանքը: Բազմաթիվ փաստեր կան դաշնակցների կողմից 204-ի մասնաճյուղերի ու անդամների նկատմամբ կատարված մատնությունների, զրպարտությունների ու սպանությունների մասին: Դեռևս 1921 թ. վերջին, երբ նոր էր կազմակերպվել 204-ը, դաշնակցների Կ. Պոլսի օրգան «Ճակատամարտ»-ը պրովոկացիոն լուրեր էր տարածում, թե իբր նրա հիմնադիրները «չեկայի սպառնալիքների տակ են ստորագրել և անդամագրվել կոմիտեին» և ոչ թե իրենց կամքով ու ցանկությամբ⁸:

Հենց այդ պրովոկացիաների ու բանսարկությունների պատճառով էլ 204-ը սկզբում իր նյութական առաքումները Հայաստան կատարում էր ոչ թե ուղղակի 204-ի կենտրոնական վարչության հասցեով, այլ Մերձավոր Արևելքի ամերիկյան նպաստամատույց կոմիտեի Երևանի բաժանմունքի միջոցով⁹:

Դաշնակները տեսնում էին, որ գաղութահայ զանգվածների շրջանում Սովետական Հայաստանի ձեռք բերած լայն

⁸ Տե՛ս նույն տեղում, գ. 6, թ. 5—6:

⁹ Տե՛ս նույն տեղում, թ. 24:

համակրանքի և 204-ի մասնաճյուղերի մասսայականության հետևանքով արագորեն կորցնում են իրենց հենարանը: Ուստի ձգտում էին ամեն կերպ արգելակել 204-ի մասնաճյուղերի ստեղծմանն ու նրանց գործունեության ծավալմանը, ժողովրդական զանգվածներին հեռու պահել Սովետական Հայաստանին համակիր 204-ի կազմակերպություններից: Ահա արտասահմանում 204-ի մասնաճյուղերի ստեղծմանը դաշնակների խանգարելու բազմաթիվ փորձերից մեկը. 1924 թ. հոկտեմբերի 23-ին Բեռլինի «Հայ ուսանողական միությունը» ժողով է հրավիրում 204-ի մասնաճյուղ հիմնելու համար: Ժողովին ներկա են լինում մոտ 70 հոգի, և, ինչպես նշված է այդ մասին եղած փաստաթղթում, եկել էին նաև հայ զաղութի «Քափառական հերոսները» (խոսքը դաշնակների մասին է—Ղ. Մ.), որոնց նպատակն էր խանգարել 204-ի մասնաճյուղի կազմակերպումը: Ժողովը տևում է մինչև կեսգիշեր, քայց դաշնակների պարագլուխ Արշակ Զամալյանի և նրա համախոհների դիմադրության պատճառով հնարավոր չի լինում դրական արդյունքի հասնել: Նախաձեռնողները հարկադրված հրավիրում են երկրորդ ժողովը և իրականացնում 204-ի մասնաճյուղի կազմակերպումը¹⁰:

Դաշնակներն իրենց մատնություններով, սպառնալիքներով ու սպանություններով հասան այն բանին, որ տեղական իշխանությունները արգելեցին 204-ի Բեյրութի, Կահիրեի, Ասեքսանդրիայի և Ալժիրի մասնաճյուղերը: Խիստ զավեշտական է հնչում իրենց «ազգասեր» ու «հայրենասեր» հորջորջող դաշնակների՝ Ալժիրի իշխանությունների մոտ կատարած այն զրպարտչական մատնությունը, թե իբր երկրաշարժից տուժած Լենինականի բնակչության օգտին 204-ի տեղական մասնաճյուղի կողմից հանգանակվող գոմարը «կոմունիստական կուսակցության համար է»¹¹:

Պայքարի նույն խարդախ մեթոդներին էին դիմում դաշնակները նաև Հունաստանում, Հարավային Ամերիկայում և

¹⁰ Տե՛ս նույն տեղում, գ. 289, թ. 18:

¹¹ Նույն տեղում, գ. 374, թ. 13—15:

այլ երկրներում: Այսպես, օրինակ, Բուենոս-Այրեսի մասնաճյուղը 204-ի կենտրոնական վարչությանն ուղարկած իր զեկուցագրերից մեկում այդ մասին հայտնում է հետևյալը. «Հանրածանոթ են այն մատնությունները, որոնք կատարվեցան մեր «Զարենց գրադարանի» վրա, որու բերումով ձերբակալվեցան երեք տասնյակ մը ժողովականներ Պուենոս-Այրեսի մեջ, ժողովրդային վարժարանի և 204-ի գրադարանի վրա՝ Մոնթե-Վիտեոյի մեջ, ուր բանտ առաջնորդվեցան մեր կարգ մը ընկերներն ու համակիրներն: Հարձակումներն զերծ շեղան Պրագիլի ու Ֆլորենսի մեր ընկերները: Մանավանդ Ֆլորենսի մեջ մատնիչ ստոր արարածները չի վարանեցան ոստիկանատան մեջ հայտարարել իրենց ֆաշիստ ըլլալը և նույնիսկ եկեղեցական քաղաքացիներին զրպարտել իբրև հեղափոխական, հակակառավարականներ»¹²:

Ինչ խոսք, որ այլ վարքագիծ չէր էլ կարելի սպասել նրանցից, ովքեր նույնիսկ Նյու-Յորքում հրատարակվող հայ բողոքականների օրգան «Հայաստանի կոշնակ»-ի տարածումը Սիրիայում արգելել տալու նպատակով կառավարությանը հավատացնում էին, թե իբր այդ թերթը «...ծառայում է խորհրդային իշխանության պրոպագանդին»: Բանը նրանումն էր, որ «Կոշնակը» երբեմն լուրեր էր տպագրում Սովետական Հայաստանում ծավալված շինարարական աշխատանքների ու մշակութային նորությունների վերաբերյալ, քաղվածքներ էր կատարում սովետական թերթերից և այլն: Զգալով, որ Սովետական Հայաստանի մասին սփյուռքահայությանը հասնող ամեն մի ճշմարիտ խոսք կործանարար հարված է իրենց համար, դաշնակները 204-ը տեղական իշխանությունների մոտ ներկայացնում էին որպես «համայնավար» կազմակերպություն, իսկ նրա անդամներին՝ որպես «պոլշեկիներ», արգելել էին տալիս Սովետական Հայաստանի վերելքի մասին պատմող գրականության ու մամուլի տարածումը, կինոֆիլմերի ցուցադրումը և այլն, մի խոսքով, ամեն կերպ խոչընդոտում 204-ի գործունեությանը:

¹² Նույն տեղում, գ. 741, թ. 8:

Չնայած այդ բոլոր դավերին, արտասահմանում անընդ-հատ աճում էին 204-ի մասնաճյուղերը, որոնք իրենց շուրջն էին համախմբում սփյուռքահայ կենսունակ տարրերին և դառնում գաղութահայ կյանքի աշխուժացման ու ազգային գոյատևման կարևոր ազդակներից մեկը: Գաղութահայ զանգ-վածների մեջ լայն ժողովրդականություն էին վայելում 204-ի մասնաճյուղերի ստեղծած մշակութային միությունները, գրա-դարանները, ակումբները, թատերական ու երգի-պարի ինք-նագործ խմբերը և ազգային այլ օջախները: Այդպիսի ճանա-պարհով ընթանալով՝ 204-ը սկսեց էական դեր կատարել գաղութահայության ղեկավարման գործում: Դաշնակները տեսնելով, որ դրսից չկարողացան կասեցնել 204-ի գործու-նեությունը ծավալումը, փորձեցին թափանցել արտասահման-յան մասնաճյուղերի ղեկավարության մեջ և իրենց համար ցանկալի հունով տանել նրանց աշխատանքը, այսինքն՝ 204-ի կազմակերպությունները հակադրել Սովետական Հայաս-տանին:

Այդ վտանգի դեմ պայքարն ուժեղացնելու նպատակով 204-ի կենտրոնական վարչությունը 1926 թ. մարտին քըն-նարկեց արտասահմանյան մասնաճյուղերում տիրող դու-թյան հարցը: Այդ առթիվ ընդունված որոշման մեջ նշվում էր, որ 204-ի ղեկավար օրգաններում անթույլատրելի է այն մարդ-կանց մասնակցությունը, որոնք թշնամական վերաբերմունք ունենին Սովետական Հայաստանի հանդեպ: Կենտրոնական վարչությունն արտասահմանյան իր մասնաճյուղերին միա-ժամանակ հրահանգում է, որ 204-ի ղեկավար օրգաններում մասնակցության իրավունք չեն կարող ունենալ նաև այն ան-ձինք, ովքեր անորոշ կամ երկդիմի դիրք են բռնել Սովետա-կան Հայաստանին պատկանող գումարներն ու գույքերը՝ նրանց օրինական տիրոջը հանձնելու հարցում¹³: Այդ տարի-ներին արտասահմանում կային հայ ժողովրդին պատկանող, նրան կտակված խոշոր գումարներ, որոնց միակ օրինական տերը Սովետական Հայաստանը և հայ գաղթականությունն

էին: Սակայն այդ գումարները, գտնվելով զանազան բարե-գործական հիմնարկների ու կտակակատարների տրամադրու-թյան տակ, մեծ մասամբ ծախսվում էին ոչ իրենց անմիջա-կան նպատակներին: Մինչդեռ այդ գումարների ձեռք բերու-մով կարելի էր Սովետական Հայաստանում տեղավորել տասնյակ հազարավոր տարագիր հայերի: Նկատի ունենալով այդ հանգամանքը, 204-ի կենտրոնական վարչությունն իր վերոհիշյալ որոշման մեջ հանձնարարում է բոլոր մասնա-ճյուղերին՝ հաշվի առնելով գաղթականական հարցի սրու-թյունը, պայքար ծավալել, որպեսզի «արտասահմանում կու-տակված բոլոր հասարակական, ազգային գումարները և կտակները հատկացվեն գերազանցորեն գաղթականական հարցի լուծմանը և Խորհրդային Հայաստանում այն հիմնա-կան շինարարությանը, որը հնարավորություն կտա լուծելու գաղթականական հարցը և ստեղծելու նրանց համար տնտե-սություն»¹⁴:

Այդ որոշումն ստանալուց հետո 204-ի մասնաճյուղերը ամենուրեք ակտիվ գործունեություն ծավալեցին նրա իրա-կանացման ուղղությամբ:

Ազգային գումարները Սովետական Հայաստանին տրա-մադրելու մասին 204-ի մասնաճյուղերի ու նրանց շուրջը հա-մախմբված գաղութահայ աշխատավորների միահամուռ պա-հանջները վկայում էին, որ 204-երը իրոք դարձել են սփյուռ-քահայության կենսական շահերի արտահայտիչները և Սո-վետական Հայաստանին աջակցող խավերի բարոյական շե-փորները արտասահմանում:

Հարկ է նշել, որ այդ բուն բողոքների շնորհիվ հաջող-վեց անտեղի փոշիացումից փրկել Մեյքոնյան ֆոնդի որոշ մասը և այն տրամադրել Սովետական Հայաստանում շինա-րարական մի շարք կարևոր ձեռնարկների իրականացման (հանրային գրադարան), Կովկասի ու Մերձավոր Արևելքի վե-րաբերյալ եղած գրականության ձեռք բերման և հայագի-

¹³ Տե՛ս նույն տեղում, գ. 418, թ. 4—5:

¹⁴ Նույն տեղում:

տական արժեքավոր ուսումնասիրությունների հրատարակման գործին:

Միլուոքահայ զանգվածների զգոնության բարձրացման շնորհիվ դաշնակները շարունակաբար շատ թե քիչ հաջողության հասնել: Այսպես, օրինակ, դաշնակները կաշվից դուրս էին գալիս, որպեսզի խանգարեին 204-ի ժողովրդականացմանը հատկապես գաղութահայ կարևորագույն կենտրոններում: Բոստոնում հրատարակվող դաշնակցական «Հայրենիք» թերթում Ս. Մասուրյանը (Ս. Վրացյան) 1925 թ. դեկտեմբերին լույս ընծայած իր մի հոդվածում թունոտ ատելություններ փորձում էր ապացուցել, թե իբր 204-երը Ամերիկայում ժողովրդականություն չունեն: Բայց փաստերը միանգամայն հակառակն էին վկայում: Ահա դրա կոնկրետ ապացույցներից մեկը. 1925 թ. հոկտեմբերի 25-ին, իրենց 35-ամյակի օրը, դաշնակները Նյու-Յորքում հայտարարել էին «դաշնակցական օր»: Սակայն, ավելի քան 10 հազար հայություն ունեցող գաղութից հազիվ 300—350 հոգի էին հավաքվել նրանց «ձրի մուտքով» երեկույթին: Մինչդեռ նույն օրը 204-ի կազմակերպած հանդեսին, որին մասնակցելու տոմսերը, ի միջի աչոք, արժեին 1—2 դոլլար, եկել էին ավելի քան 1000 մարդ և հենց տեղում էլ 75 հոգի անդամագրվել Հայաստանի օգնության կոմիտեին¹⁵:

204-ի դեմ պայքարում դաշնակները հաճախ էին դիմում տեղաբնակից ակտիվ նրա ակտիվ անդամների նկատմամբ: 30-ական թվականներին դաշնակ թափփուկների այդ ստոր գործունեությունն այնպիսի բնույթ էր ընդունել, որ առաջադիմական ուժերը անհրաժեշտ համարեցին այդ տեղերի դեմ պայքարելու համար ստեղծել հատուկ կոմիտե: 1933 թ. Փարիզում հիմնվում է «Դաշնակ տեղորի զոհերի պաշտպանության կենտրոն», որը գաղութահայության ուշադրությունը հրավիրում է դաշնակների կազմակերպած տեղաբնակից գործունեության դեմ ավելի վճռական պայքար մղելու անհրաժեշտության վրա: «Դաշնակ տեղորի զոհերի

պաշտպանության կենտրոնի» գաղութահայության ուղղված կոչերից մեկում ասված է, որ մոտավորապես 10 տարվա ընթացքում դաշնակ տեղորիստների ձեռքով 204-ի շարքերից տասնյակ զոհեր ընկան Բեյրութում, Աթենքում, Լիոնում և այլ վայրերում¹⁶: 1933 թ. փետրվարի 26-ին Յրանսիայի Գրենոբլ քաղաքում դաշնակները սպանեցին 204-ի ակտիվիստ Մանուկ Մարուքյանին և վիրավորեցին 204-ի հինգ անդամի այն բանի համար, որ նրանք ժողովի ժամանակ, հակառակ Սովետական Հայաստանի նկատմամբ դաշնակների զրպարտչական ելույթներին, բացականչել էին՝ «Կեցցե՛ տեղաբնակից Հայաստանը»: «Դաշնակ տեղորի զոհերի պաշտպանության կենտրոնը» անդրադառնալով այդ փաստերին, իր հրապարակած կոչերից մեկում գրում է. «Գրենոբլի զոհ Մարուքյանից հետո զոհվեց Գլընդյանը Աթենքում: Ալեքսանդրիո մեջ կհարվածվի տոթթ. Թաշճյան, մինչ Ամերիկա Գույումճյան հարձակման կենթարկվի եռագույնի (դաշնակների տիրապետության ժամանակվա Հայաստանի դրոշը—Հ. Մ.) դեմ արտահայտված ըլլալու համար»¹⁷: Կոչը գաղութահայ աշխատավորներին խորհուրդ էր տալիս ամենուրեք ստեղծել դաշնակցական տեղորի զոհերի պաշտպանության հանձնախումբեր և միասնական պայքար մղել այդ ազգադավ քաղաքականության դեմ, «...որովհետև միայն ժողովրդական ցասումի հսկա ալիքին առջև է, որ վրացյանները և ջամալյանները պիտի մտնեն իրենց որջերը ու պիտի շփոթվեն՝ իրենց քաղաքական արկածախնդիր խաղերով, գաղութահայ հասարակության հանդիստն ու ապագան»¹⁸:

Միջազգային ասպարեզում ռեակցիայի ուժեղացումը, մասնավորապես ֆաշիզմի իշխանության գլուխ անցնելը, մեծ աշխուժություն առաջացրեց դաշնակցության գործունեության մեջ՝ ընդդեմ հայկական դեմոկրատական կազմակերպությունների: Ամենուրեք դաշնակցությունը աշխատում էր կեղծ ամ-

¹⁶ Տե՛ս «204», Փարիզ, 1933 թ., № 8, էջ 56—59:

¹⁷ Նույն տեղում:

¹⁸ Նույն տեղում:

¹⁵ Տե՛ս «Երևան», Փարիզ, 3 դեկտեմբերի, 1925 թ., № 18:

բաստանությունների ու մատնությունների միջոցով լիկվիդացնել առաջադիմական կազմակերպությունները, այդ թվում և Հայաստանի օգնության կոմիտեները: Դրա հետևանքով 1934 թ. վերջերին և 1935 թ. սկզբներին հայկական մի շարք գաղութներում լայն հարձակում սկսվեց 204-երի դեմ: Ահա նման բազմաթիվ փաստերից մեկը. 1934 թ. վերջերին անգլո-եգիպտական իշխանությունները դաշնակների մատնությունների հիման վրա ձերբակալեցին 204-ի Ալեքսանդրիայի մասնաճյուղի ղեկավարներին ու բազմաթիվ անդամների՝ մոտավորապես 80 հոգու: Ձերբակալվածների դեմ որպես մեղադրող հանդես էր գալիս Սովետական Հայաստանի երզնյալ թշնամիներից մեկը՝ դաշնակցական «Հուսար» թերթի արտոնատեր Օնիկ Մաճատյանը: Նախաքննության ժամանակ վերջինս եգիպտական դատախազին անպատկառորեն հայտարարում է, թե «204-իստները համայն աշխարհի մեջ, 204-ի դիմակին տակ գործող ամենավտանգավոր համայնավարներն են»¹⁹:

Գնալով ուժեղանում են հալածանքները 204-ի մասնաճյուղերի ու անդամների դեմ նաև Եվրոպայում, Ամերիկայում և մյուս վայրերում: Սակայն, չնայած դրան, 204-ի շարքերում համախմբված սփյուռքահայ աշխատավորները դժվարին պայմաններում շարունակում էին իրենց պայքարը: Եվ, թեպետ «Հայաստանի օգնության կոմիտե» անունը այլևս չէր համապատասխանում այդ կազմակերպության էությունը, այնուամենայնիվ, այն կարևոր դեր էր կատարում հայրենիքի հետ սփյուռքահայության կապերը ամուր պահելու գործում:

Ուստի, անհատի պաշտամունքի տարիներին գոյություն ունեցած կամայականություններով ու ժողովրդի թշնամի Բերիայի ստոր գործունեությամբ պետք է բացատրել 204-ի նման կարևոր դեր խաղացող առաջադիմական մի կազմակերպության լիկվիդացիան 1937 թվականին: 204-ը որակվեց որպես օտարերկրյա գործակալությունների ու լրտեսների կազմակերպություն, իսկ նրա ղեկավարները՝ «ժողովրդի թշ-

նամիներ»: Անհիմն կերպով ձերբակալվեցին 204-ի ղեկավար շատ գործիչներ: ՀՍԽՀ Ժողովմխորհի 1937 թ. դեկտեմբերի 3-ի որոշմամբ դադարեցվեց 204-ի գործունեությունը²⁰: Չնայած այդ զրպարտչական պիտակավորմանը, 204-ի շարքերում համախմբված սովետական օրինատացիա ունեցող սփյուռքահայերը երբեք չկորցրին իրենց հավատը արդարության վերականգնման և մայր հայրենիքի նկատմամբ: Նրանք շատ երկրներում ստեղծեցին առաջադիմական նոր կազմակերպություններ («Ֆրանսահայ ժողովրդական միություն», «Ամերիկահայ առաջադիմական լիգա» և այլն) ու շարունակեցին իրենց պայքարը Սովետական Հայաստանի ու սփյուռքահայ աշխատավորության ամեն գույնի ու երանգի թշնամիների դեմ:

Համաշխարհային երկրորդ պատերազմի ժամանակ սփյուռքի հայության նյութական ու բարոյական աջակցությունը մեր հայրենիքին, որոշ իմաստով արդյունք էր նախորդ տարիներին արտասահմանում 204-ի ծավալած հայրենանվեր գործունեության: 204-ի շարքերում թրծված ու կոփված սփյուռքահայ հազարավոր աշխատավորներ ակտիվորեն պայքարի ելան մարդկության մեծագույն թշնամու՝ գերամանական Ֆաշիզմի դեմ: Նրանցից շատերն իրենց կյանքը զոհեցին օտար ասիերում, մայր հայրենիքի ազատության ու անկախության հավատով լեցուն:

Այսպիսով, Հայաստանի օգնության կոմիտեն իր գործունեությամբ որոշակի դրական դեր կատարեց, նպաստելով սոցիալիստական հայրենիքի հետ սփյուռքահայ աշխատավորների կապերի ամրապնդմանը, նրանց սովետական օրինատացիայով դաստիարակմանը:

²⁰ Տե՛ս ՀՍՍՀ 2249 Ա, ֆ. 178, ց. 1, գ. 939, ք. 2:

¹⁹ Նույն տեղում, 1935 թ., № 2, էջ 68:

**ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅԱՆ
ԱՇԽՈՒԺԱՑՈՒՄԸ ԵՎ ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅՆԵՐԻ
ՀԱՅՐԵՆԱԿՐՁՈՒԹՅՈՒՆԸ 1926—1940 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ**

Սովետական կառավարության և կոմունիստական կուսակցության շրջահայաց քաղաքականությունը գաղութահայության նկատմամբ, սփյուռքում աստիճանաբար առաջ բերեց մի շատ խրախուսելի հայրենասիրական շարժում: Դա այնտեղ գոյություն ունեցող հայրենակցական, վերաշինաց, կրթասիրաց և այլ միությունների ու ընկերությունների կողմից Սովետական Հայաստանում ներգաղթողների համար նոր ավաններ, շենքեր ու զանազան ձեռնարկություններ հիմնելու ձգտումն էր:

Հայրենակցական միությունները, որոնց մի մասը ծնունդ էր առել հայկական գաղթօջախներում մինչև առաջին համաշխարհային պատերազմը, իրենց շուրջն էին համախմբել գաղութահայ հոծ զանգվածների և կուտակել զգալի գումարներ: Հայրենակցական միությունների առաջացման հիմնական շարժառիթն ու նպատակն էր նյութական և կուլտուրական աջակցություն ցույց տալ Արևմտյան Հայաստանում և ընդհանրապես թուրքիայում գտնվող իրենց հայրենակիցներին: Միանգամայն պարզ էր, որ առաջին համաշխարհային պատերազմից հետո, երբ Արևմտյան Հայաստանում գրեթե հայություն չէր մնացել, անիմաստ և անիրագործելի էր դարձել հայրենակցական միությունների նախկին նպատակը:

Հայաստանում սովետական իշխանության հաստատումից հետո, հայության համար ստեղծված նոր իրադրությունը հայրենակցական միություններին թելադրում էր որդեգրել գործունեության նոր ուղեգիծ, ամեն կերպ զորավիգ լինել

համայն հայության միակ հանգրվանին՝ Սովետական Հայաստանին և նպաստել ի սփյուռս աշխարհի իրենց տարագիր հայրենակիցների ներգաղթին:

Սակայն Սովետական Հայաստանի երգվյալ թշնամիները գործադրում էին ամեն ճիգ ու ջանք, որպեսզի խափաներին հայրենակցական միությունների այդ ճիշտ դիրքորոշումը: Նրանք խորհուրդ էին տալիս նույնիսկ Աֆրիկայում կամ Ամերիկայում փոշիացնել հայրենակցական միությունների միջոցները, քան թե Հայաստանում անցկացնել մի ջրանցք կամ կառուցել մի տուն հենց իրենց՝ սփյուռքից հայրենիք դարձող տարագիրների համար:

Դաշնակների նման բանասարկությունների հետևանքով էր, որ Ամերիկայում գտնվող հաճընցիների հայրենակցական միության ղեկավարները 20-ական թվականների կեսերին մտադրվել էին Սիրիայում կառուցել «Նոր Հաճըն» ավանը և այնտեղ հավաքել նախկին բոլոր հաճընցիներին: Սակայն հաճընցի տարագիրները ճիշտ կոահեցին այդ հայրենադավ մտադրության հետևանքները և ժամանակին հակահարված տվեցին այդ որոշման իրականացմանը¹: Նրանց միահամուռ բողոքները ցույց տվեցին, որ գաղութահայության հիմնական զանգվածն իր ապագան անվերապահորեն կապել է Սովետական Հայաստանի հետ և ոչ մի խաբեություն չի կարող սասանել նրա հավատը հայրենիքի նկատմամբ:

Ահա այդ ժամանակ էլ հենց սկիզբ առավ հայրենակցական միությունների վճռական շրջադարձը դեպի Սովետական Հայաստան, որտեղ աստիճանաբար առաջացան պատմական Հայաստանի մի շարք քաղաքների ու գյուղերի անուններով նոր ավաններ ու թաղամասեր:

Հայրենակցական միությունների այդ ճիշտ ուղիով ընթանալու հայրենասիրական առաջին օրինակը տվեց Ամերիկայում գտնվող արաբկիրցիների հայրենակցական միությունը, որը շարժեց գաղութահայության միտքը կաշկանդող շղթա-

¹ Տե՛ս «204-ի տեղեկատու», Երևան, 1927 թ., № 1, էջ 13—14:

ները և ճեղքելով Աստանայան օվկիանոսը մուտք գործեց հայ աշխատավորության սոցիալիստական հայրենիքը:

Արաբկիրցիների հայրենակցական միության դիմումը հարգվեց սովետական կառավարության կողմից և նրան թույլատրվեց Երևանի հյուսիս-արևմտյան ծայրամասում կառուցել «Նոր Արաբկիր» ավանը, ուր կկարողանային հավաքվել տարագիր բոլոր նախկին արաբկիրցիները²:

Նոր Արաբկիրը, որի նախագիծը պատրաստել էր ակադեմիկոս Ալ. Թամանյանը, մեծ հանդիսավորությամբ հիմնադրվեց Հայաստանում սովետական կարգերի հաստատման հինգերորդ տարեդարձի օրը՝ 1925 թ. նոյեմբերի 29-ին: Հիմնադրման հանդեսին ներկա էին և ջերմ ելույթներ ունեցան Հայկենտգործկոմի նախագահ Արտ. Կարինյանը, Վրաստանի Կենտրոնական կոմիտեի քարտուղար Թորգրիան, 204-ի կենտրոնական վարչության անդամ Ծասյի Կարիկյանը և ուրիշներ: Այնուհետև՝ Անդրֆեդերացիայի Ժողկոմխորհի նախագահի տեղակալ Ս. Սրապիոնյանը, ՀՍԽՀ Ժողկոմխորհի նախագահ Սաքո Համբարձումյանը, Արտ. Կարինյանը, Երևանի գավառածկոմի նախագահ Արամ Կոստանյանը և արաբկիրցիների հայրենակցական միության ներկայացուցիչներ Ղազիկյանն ու Սարյանը շարում են ավանի առաջին տան հիմնաքարերը: Ենթի հիմքում դրվում է արծաթյա մի հուշատախտակ, որի վրա փորագրված էր ՀՍԽՀ պետական գերբը, հիմնադրման թվականը և հիմնադիրների անունները³: Սովետական կառավարության ամենօրյա հոգատարության շնորհիվ արագորեն աճում էր Նոր Արաբկիրը: Այդ է վկայում թեկուզ այն փաստը, որ արդեն 1928 թ. վերջերին կառուցվել էր 51 տուն և հայրենադարձ բնակիչների թիվը հասել 762-ի: Ավանն ուներ մանածագործների, պղնձագործների, դերձակների, կոշկակարների, գուլպագործների արտելներ, դպրոց, մանկապարտեզ, ակումբ, գրադարան և այլն⁴: Ավելորդ չէ նաև նշել,

որ Նոր Արաբկիրի արդյունաբերական ձեռնարկությունները կարճ ժամանակամիջոցում այնպիսի վերելք ապրեցին, որ արդեն 1932 թ. տվեցին 2 միլիոն 200 հազար ուրբու առտադրանք⁵:

Դեռևս 1925 թ. գարնանը, էջմիածնի շրջանում, էվջիլարի ջրանցքով ոռոգվող մի ընդարձակ հողամասի վրա, 204-ի կենտրոնական վարչության ջանքերով և տարիներ առաջ եվդոկիացիներին կտակված 2500 ֆունտ ստերլինգ գումարով (մոտ 25 հազար ուրբի) հիմնադրվել էր Նոր Եվդոկիա գյուղը, որտեղ բնակություն էին հաստատել Հայաստան ներգաղթած եվդոկիացիները⁶:

Գրեթե նույն ժամանակ, Երևանի հարավ-արևելյան արվարձանում, Թոխմախան լճի մոտ, հիմնադրվում է «Նոր Բյութանիա» ավանը Հունաստանից ներգաղթած իզմիրցի, առաքազարցի, սեբաստացի, բրիեճիկցի գաղթականների և բյութանիացիների հայրենակցական միության կողմից: Սկզբում Նոր Բյութանիայում բնակություն են հաստատում մոտ 60 հայրենադարձ տնտեսություններ, որոնք զբաղվում էին շերամապահության, ծխախոտագործությամբ և այլ արժեքավոր կուլտուրաների մշակությամբ: Որպես թանկարժեք տեխնիկական կուլտուրաների մշակությամբ զբաղվողներ, նրանք արտոնյալ պայմաններով վարկեր են ստանում Երևանի գավառածկոմից, գյուղբանկից և ուրիշ հաստատություններից, որոնցով կառուցում են բնակելի տներ, ձեռք բերում գյուղատնտեսական գործիքներ և սերմեր⁷:

ՀՍԽՀ Ժողկոմխորհին առնթքեր գաղթականական հանձնաժողովը դեռևս 1925 թ. մարտին ընդառաջել էր նաև Սեբաստիայի վերաշինաց միության ցանկությանը և թույլատրել Սովետական Հայաստանում հիմնել գորգագործական արհեստանոց և այնտեղ տեղափոխել մոտ 1200 գորգագործ սեբաստացիների ու որբերի: Այնուհետև բավարարվեց սեբաս-

² Տե՛ս Հայկական ՍՍՀ 224ՊԱ, ֆ. 113, ց. 3, գ. 54, թ. 30:

³ Տե՛ս «Երրորդային Հայաստան», 1 դեկտեմբերի, 1925 թ., № 273:

⁴ Տե՛ս «Երևան», 17 դեկտեմբերի, 1929 թ., № 468:

⁵ Տե՛ս «204», 1933 թ., № 3, էջ 44:

⁶ Տե՛ս Հայկական ՍՍՀ 224ՊԱ, ֆ. 178, ց. 1, գ. 320, թ. 1—10:

⁷ Տե՛ս նույն տեղում, ֆ. 40/113, ց. 3, գ. 418, թ. 19—20 և գ. 518, թ. 7:

տացիների Սովետական Հայաստանում Նոր Սեբաստիա անու- նով ավան հիմնադրելու մասին խնդրանքը: Ինչպես նախա- տեսվում էր, հենց այդ ավանում էլ պետք է կառուցվեր գոր- զագործական արհեստանոցը և միաժամանակ հող հատկաց- վեր երկրագործությանը՝ զբաղվողներին⁸:

Սովետական Հայաստանում հետագայում այդպիսի հնա- րավորություններ ստացան նաև Մալաթիայի կրթասիրաց ըն- կերությունը⁹, քորթեցիների ուսումնասիրաց ընկերությունը¹⁰, Ամերիկայում հիմնադրված Դատեմի լուս-ուսումնասիրաց ըն- կերությունը¹¹, խարբերողիները, թոմարզացիները, կեսարա- ցիները, երզնկացիները և Արևմտյան Հայաստանից ու ընդ- հանրապետ Թուրքիայի այլևայլ անկյուններից աշխարհի տար- բեր կողմերը ցրված բազմաթիվ ուրիշ հայ տարագիրները¹²:

Ահա այդպես, սովետական կառավարության, համապա- տասխան հայրենակցական միությունների և որոշ նվիրատու- ների ու կտակների միջոցներով ձեռնարկվեցին Նոր Մալա- թիայի (1927 թ.), Նոր Սեբաստիայի (1928 թ.), Նոր Խար- բերդի (1930), Նուբարաշենի (1930), Նոր Թոմարզայի (1931), Նոր Կեսարիայի (1934), Նոր Տիգրանակերտի (1934), Նոր Տարոնի, Նոր Երզնկայի, Նոր Արմաշի, Նոր Յոզղատի, Նոր Ամասիայի և այլ ավանների կառուցման աշխատանքները¹³:

ՀՍԽՀ Ժողովուրդների հատուկ որոշմամբ հայրենակցական միությունների կողմից Հայաստանում կատարվող շինարա- րական աշխատանքների ղեկավարությունը հիմնականում դրված էր ՀՊԿ-ի կենտրոնական վարչության վրա: ՀՊԿ-ը ոչ միայն կազմակերպական տեսակետից, այլև նյութական հըս-

կայական օգնություն էր ցույց տալիս հայրենադարձների հա- մար նոր ավանների կառուցման աշխատանքներին¹⁴:

Հայրենակցական միությունների և սփյուռքահայ առաջա- դիմական այլ կազմակերպությունների ղեպի Սովետական Հայաստան ցուցաբերած այս նոր վերաբերմունքը հնարա- վորություն տվեց սովետական կառավարությանը շարունա- կելու հայրենադարձությունը: Եվ ահա 1926 թ. Հունաստանից հայրենիք ներգաղթեցին 3120 մարդ, 1927 թ.՝ դարձյալ Հու- նաստանից 1200 հոգի և Կ. Պոլսից՝ 400 հոգի, ընդամենը 1600 մարդ: 1928 թ. 700 հոգի ներգաղթեցին Հունաստանից, 90 հոգի՝ Կ. Պոլսից, 71 հոգի՝ Մարսելից, ընդամենը՝ 861 մարդ: Ֆրանսիայից (Մարսել) և Թուրքիայից (Կ. Պոլիս) 282 մարդ (106 տնտեսություն) ներգաղթեցին Սովետական Հա- յաստան 1929 թվականին:

Այսպիսով, 1926—1929 թթ. ընթացքում Հունաստանից, Թուրքիայից և Ֆրանսիայից հայրենադարձների թիվը, ան- շուշտ ոչ լրիվ տվյալներով, կազմեց 5863 մարդ¹⁵:

Սփյուռքահայ աշխատավորների հայրենադարձությունը ավելի մեծ թափ է ստանում ՀՍԽՀ Կենտրոնական և Ժողովու- խորհի 1931 թ. օգոստոսի 10-ի «ՀՍԽՀ սահմաններն արտա- սահմանի աշխատավոր հայերի մասսայական նոր ներգաղթ արտոնելու մասին» որոշումից հետո¹⁶: Այդ որոշման մեջ նշվում է, որ ընկած Սովետական Հայաստանի դեմ արտա- սահմանում բուրժուական կուսակցությունների դավերին և երկրի ներսում դասակարգային թշնամիների համառ դիմա- դրությունը, սոցիալիստական շինարարության բոլոր ճակատ- ներում ձեռք բերված նվաճումների հետևանքով վերացվել է գործազրկությունը ինչպես ամբողջ Սովետական Միության մեջ, այնպես էլ Հայաստանում: Իրա շնորհիվ հնարավոր է դառնում արտասահմանյան երկրներում տառապող հայ աշ-

⁸ Տե՛ս նույն տեղում, գ. 493, թ. 44—45:
⁹ Տե՛ս նույն տեղում, թ. 62:
¹⁰ Տե՛ս նույն տեղում, թ. 23:
¹¹ Տե՛ս նույն տեղում, թ. 15 և գ. 421, թ. 152:
¹² Տե՛ս նույն տեղում, ֆ. 178, ց. 1, գ. 578, թ. 2—11:
¹³ Տե՛ս նույն տեղում, ֆ. 178, ց. 1, գ. 678, թ. 2—11: Հետագայում այդ ավաններից մի քանիսը զանազան պատճառներով ենթարկվեցին ան- վանափոխության, բայց շատերը մինչև օրս էլ կրում են իրենց պատմական անունները:

¹⁴ Տե՛ս «ՀՊԿ», 1934, № 3, էջ 133:
¹⁵ Տե՛ս ՍՄԿԿ Կենտկոմին առընթեր ՄԼԻ հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 1, ց. 25, գ. 9, թ. 34—36 և ՀՍՍՀ 2249Ա, ֆ. 123, ց. 1, գ. 1588:
¹⁶ Տե՛ս «Մարտի 20-ի Հայաստան», 20 օգոստոսի, 1931 թ., № 194:

խատավորների նոր զանգվածային ներգաղթի կազմակերպումը: Այդ նպատակով կազմակերպվում է շտեշ ժողովմխորհին առընթեր ներգաղթի հատուկ հանձնաժողով՝ ժողկոմխորհի նախագահի տեղակալ Ա. Երզնկյանի ղեկավարությամբ:

Շտեշ Կենտրոնի և ժողկոմխորհի վերը նշված որոշման մեջ ներգաղթի հանձնաժողովին պարտավորեցվում էր սահմանել ներգաղթողների քանակը, նրանց ընդունման ժամկետները, մատակարարման և ֆինանսավորման հետ կապված բոլոր խնդիրների մշակումն ու լուծումը, հայրենադարձներին ըստ մասնագիտությունների աշխատանքով ապահովելը, հանրապետության սահմաններում բնակեցնելը և այլն:

Ի կատարումն վերոհիշյալ որոշման, ավելի կազմակերպված ձևով, 1932—1933 թթ. ընթացքում Հունաստանից, Բուլղարիայից և Ֆրանսիայից Սովետական Հայաստան ներգաղթեցին շուրջ 8007 մարդ: Ֆրանսիայից մեծ ներգաղթ կատարվեց հատկապես 1936 թվականին: Ավելի քան 1800 մարդ 1936 թ. հայրենիք դարձան Ֆրանսիայի տարբեր քաղաքներից ու գավառներից¹⁷: Բացի մեծ խմբերով կատարված հայրենադարձությունից, 1926—1936 թթ. տասնամյակի ընթացքում անհատական վիզաներով արտասահմանյան տարբեր երկրներից Սովետական Հայաստան են ներգաղթել 6926 մարդ¹⁸: Այսպիսով, 1926—1936 թթ. ներգաղթածների քանակը կազմում է 22.598 մարդ: Դրան ավելացնելով նաև 1921—1925 թթ. ներգաղթածների քանակը (19.688 շունչ), մոտավոր ճշտությամբ կարելի է ասել, որ 1921—1936 թթ. ընթացքում օտարությունից հայրենիք են վերադարձել շուրջ 42.286 տարագիրներ:

1932—33 և 1936 թթ. ներգաղթած տնտեսությունները հիմնականում տեղավորվել են հայրենադարձների համար կառուցված ավաններում, Երևանում ու նրա արվարձաններում, Լենինականում, Կիրովականում, Անի-Պեմզայում, Իջևա-

նում, Ստեփանավանում, Լամբալուի (այժմ Դեբեդաշեն) սովխոզում և այլ վայրերում:

Չնայած 204-ի, հայրենակցական միությունների և բարեգործական այլ հաստատությունների կողմից ներգաղթողներին ցույց տրվող օգնությանը, առանց սովետական կառավարության բազմակողմանի աջակցության, նրանց կարիքների նկատմամբ ամենօրյա հոգատարության անհնարին է պատկերացնել հայրենադարձների դրության բարելավումը: Սովետական կառավարությունը միլիոնավոր ռուբլիների հասնող գումար է տրամադրել հենց միայն 1932—1933 թթ. ներգաղթած տնտեսությունների համար բնակարաններ, դրպրոցներ, մանկապարտեզներ կառուցելու, նրանց անասուններ և այլ միջոցներ հատկացնելու գործին¹⁹:

Սակայն հարկ է նշել, որ հայրենադարձների ավանների շինարարությունը, նրանց կոմունալ-կենցաղային կարիքների բավարարումը որոշ տեղերում լավ չէր կազմակերպված, որը երբեմն արդարացի դժգոհությունների տեղիք էր տալիս:

Նյութական ու կենցաղային վատ պայմանների հետևանքով հայրենադարձների որոշ մասի մեջ, հատկապես 1932—33 թթ. ներգաղթածների մոտ, առաջ են գալիս արտագաղթելու տրամադրություններ: Նման տրամադրությունների առաջացման հիմնական պատճառներից մեկը բնակարանային վատ պայմաններն էին: Օրինակ, 1933 թ. հունվարին Հունաստանից ներգաղթած և Անի-Պեմզայի բանավանում տեղավորված 138 տնտեսություններ 2—3 ընտանիքով միասին բնակվում էին մի սենյակում, որոշ մասը՝ դպրոցի շենքում և այլ անհամար տեղերում²⁰: Երբեմն լուրջ թերություններ էին թույլ տրվում հայրենադարձներին աշխատանքի տեղավորելու ժամանակ նրանց ըստ ձեռնարկությունների բաշխելիս: Այդ հարցի լուծման ժամանակ ոչ միշտ էին ուշադրության առնը-

¹⁹ Տե՛ս Հայկական ՍՍՀ ՀՀԿՊԱ, ֆ. 40/113, ց. 3, գ. 1428, 1432, 1770, 1777 և այլն:

²⁰ Տե՛ս ՍՄԿԿ Կենտկոմին առընթեր ՄԼԻ հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 1, ց. 24, գ. 72, թ. 63—64:

¹⁷ Տե՛ս ՇՍՍՀ ՀՀԿՊԱ, ֆ. 123, ց. 1, գ. 1588:

¹⁸ Տե՛ս նույն տեղում:

վում հայրենադարձների մասնագիտությունները: Բարձր որակավորում ունեցող շատ մասնագետներ՝ մեխանիկներ, ավարհեստավորներ, ծխախոտագործներ և այլն, աշխատանքի էին ուղարկվում որպես սևագործ բանվորներ: Այդ պատճառով էլ նրանցից շատերը թողնում էին այլ վայրերում իրենց հանձնարարված աշխատանքը և տեղափոխվում Երևան կամ Լենինական: Դրա հետևանքով լրացուցիչ դժվարություններ են առաջանում նրանց ինչպես բնակարաններով, այնպես էլ համապատասխան աշխատանքով ապահովելու գործում: Օրինակ, 1932—33 թթ. Ղարաքիլիսայում, Անի-Պեմզայում, Իջևանում և Ղափանում տեղավորված 471 տնտեսություններից 414-ը կարճ ժամանակ անց հեռացել են իրենց տեղերից, մեկնել Երևան և Լենինական²¹:

Տեղական որոշ կազմակերպությունների ղեկավարության կողմից երբեմն ոչ հոգատար, բյուրոկրատական վերաբերմունք էր ցուցաբերվում ներգաղթածների կարիքների նկատմամբ (Քանաքեռգէսի շինարարություն, Անի-Պեմզա և այլն)²²:

Բայց, շնայած այս թերություններին, հայրենադարձների հիմնական զանգվածը ճիշտ էր ըմբռնում եղած պակասությունների ու անհարմարությունների պատճառը և համբերությամբ հաղթահարում այդ ժամանակավոր դժվարությունները: Ահա թե ինչ է ասում այդ կապակցությամբ 1936 թ. Լիոնից ներգաղթածներից մեկը, որը բնակություն էր հաստատել նոր Մալաթիայում. «Այնտեղ (Լիոնում—Ղ. Մ.) ունեի շորս սենյակ,—գրում է այդ հայրենադարձը,—ստանում էի օրական 30 ֆրանկ. այստեղ դեռ նեղվում ենք, բայց վնաս չունի, մեր հայրենիքն է, մենք պետք է կառուցենք և մեզ համար լավ կյանք ստեղծենք: Մեր գալու ժամանակ (Ֆրանսիայից Հայաստան գալու ժամանակ—Ղ. Մ.) ինձ բարձր ուճիկով առաջարկվեց մնալ, սակայն ես նրանց պատասխա-

²¹ Նույն տեղում, գ. 162, թ. 1—2:

²² Տե՛ս նույն տեղում:

նեցի, որ ես մտադիր եմ իմ հայրենիքին ծառայել և մերժեցի նրանց առաջարկը»²³: Այսպես էր մտածում և գործում հայրենադարձների ճնշող մեծամասնությունը և հայրենիքում իր համար բարեկեցիկ կյանք ապահովում իր սեփական ջանքերով: Իսկ այդ ջանքերը անկասկած հաջողությամբ էին պսակվում, որովհետև միահյուսվում էին այն մեծ աշխատանքների հետ, որ կատարում էին Հայաստանի կոմունիստական կուսակցությունը և կառավարությունը հայրենադարձների դրուսթյան բարելավման ուղղությամբ:

1933 թ. սեպտեմբերի 21-ին ՂԿԿ Կենտկոմի քարտուղարությունը քննարկում է «ներգաղթածների դրուսթյան և նրանց հետ տարվող աշխատանքների մասին» հարցը և ընդունում կոնկրետ ու ծավալուն որոշում, որը կուսակցական ու սովետական օրգանների ուշադրության կենտրոնում էր դնում այդ գործը:

Կենտկոմի քարտուղարությունը գտնում է, որ ներգաղթածների դրուսթյունը և նրանց հետ տարվող աշխատանքները միանգամայն անբավարար են մի շարք շրջաններում ու ձեռնարկություններում (Ղուրղուղուլի, Ամասիա, Լենինականի մսի կոմբինատ, Յ-րդ սովխոզ և այլն): Հատուկ նշվում է այն հանգամանքը, որ շնայած ներգաղթածների շրջանում տարվելիք աշխատանքի մասին Կենտկոմի բազմաթիվ որոշումներին, մի շարք կենտրոնական օրգաններ, շրջկոմներ և շրջգործկոմներ (լուսժողկոմատ, հողժողկոմատ, առժողկոմատ և հատկապես Երևանի, Լենինականի, Ղուրղուղուլիի, Վաղարշապատի և այլ քաղկոմներն ու շրջկոմները) չեն կենսագործել այդ որոշումները:

Գոյություն ունեցող անցանկալի դրուսթյունը շտկելու նպատակով ՂԿԿ Կենտկոմի քարտուղարությունը որոշում է ժողկոմխորհին առընթեր ստեղծել ներգաղթածների շրջանում աշխատանքի հատուկ կոմիտե, մշտական աշխատողների ապարատով: Ժողկոմխորհին հանձնարարվում է այդ կոմի-

²³ Նույն տեղում, գ. 72, թ. 63—64:

տեին հատկացնել դրամական և այլ միջոցների զգալի ֆոնդեր, արագացնել հայրենադարձների բնակարանային շինարարությունը, բարելավել նրանց բժշկական սպասարկումը, օգնել հագուստեղենով ու կոշիկեղենով, դպրոցահասակ բոլոր երեխաներին ընդգրկել դպրոցներում և այլն:

ՀԿԿ քաղկոմ-շրջկոմներին հանձնարարվում է ուժեղացնել քաղմասսայական և կուլտուրական աշխատանքները ներգաղթածների շրջանում, այդ նպատակով առանձնացնելով հատուկ աշխատակիցների և այլն²⁴:

Հայրենադարձների շրջանում տարվող աշխատանքների և նոր ներգաղթի կազմակերպման հարցը 1936 թ. հուլիսի 21-ին հատուկ քննություն է ենթարկվում նաև ՀամԿ(բ)Կ Կենտկոմում և ԽՍՀՄ Ժողկոմխորհում²⁵:

ՀամԿ(բ)Կ Կենտկոմի և ԽՍՀՄ Ժողկոմխորհի 1936 թ. հուլիսի 21-ի որոշման մեջ մեծ ուշադրություն էր հատկացվում ներգաղթողների տնտեսական կացության բարելավմանը, նրանց կուլտուրական կյանքի նպաստավոր զարգացմանը: Վերոհիշյալ որոշման մեջ հանձնարարվում էր Հայաստանի կառավարությանը՝ անմիջապես ձեռնարկել և կարճ ժամկետներում, մինչև 1937 թ. ամառ, իրականացնել շինարարական մի շարք կարևոր աշխատանքներ: Այդ թվում՝ Նուբարաշենում կառուցել մեկ սենյականոց 100 բնակարան, դրպրոցի, մանկապարտեզի, մանկամսուրի, թատրոնի և հիվանդանոցի շենքեր՝ 1,8 միլիոն ռուբլու ընդհանուր արժեքով: Այդ որոշման համաձայն մեծ շինարարություն է ծավալվում նաև Նոր Սեբաստիայում, Նոր Տիգրանակերտում, Նոր Կեսարիայում և հայրենադարձների համար հիմնադրված մյուս ավաններում:

ՀամԿ(բ)Կ Կենտկոմի և ԽՍՀՄ Ժողկոմխորհի որոշմամբ հայրենադարձների համար ստեղծված ավաններում կազմակերպված կուլտնտեսություններն ու հայրենադարձ կուլտնտեսականները, ինչպես նաև աշխատավոր մենատնտեսները

ստանում են մի շարք արտոնություններ ու առանձնաշնորհումներ:

Սկսած 1936 թվականից, բոլոր հայրենադարձների կուլտնտեսություններն ու նրանց անդամները չորս տարով ազատվում են պետական բոլոր բնատուրքերից, գյուղատնտեսական ու կուլտուրական հարկերից և այլն:

Նախապատրաստական այս աշխատանքների նպատակն էր 1937—1938 թթ. ավելի մեծ, զանգվածային հայրենադարձություն իրականացնել Մերձավոր Արևելքից, Բալկանյան երկրներից, Ֆրանսիայից և այլ գաղթօջախներից: Սակայն մի կողմից պատերազմական պահիսոզի ծավալումը միջազգային ասպարեզում, մյուս կողմից՝ անհատի պաշտամունքի վնասակար հետևանքների դրսևորումը երկրի ներսում՝ սոցիալիստական օրինականության խախտումները, արտասահմանյան երկրների, այդ թվում և սփյուռքահայություն հետ կապերի պահպանման գործում ստեղծված դժվարությունները, ՀՊԿ-ի լիկվիդացումը, կուսակցական ու պետական բազմաթիվ ազնիվ աշխատողների նկատմամբ ռեպրեսիաները և այլն, ուղղակի անհնարին դարձրին նոր հայրենադարձության իրականացումը:

Միայն համաշխարհային երկրորդ պատերազմից հետո վերսկսվեց սփյուռքահայ տարագիրների զանգվածային հայրենադարձությունը, որի շնորհիվ հայրենիք դարձան տասնյակ հազարավոր պանդուխտներ:

²⁴ Տե՛ս Հայկական ՍՍՀ ՀՀԿՊԱ, ֆ. 40/113, ց. 3, գ. 1777, թ. 5:

²⁵ Տե՛ս նույն տեղում, ֆ. 178, ց. 1, գ. 942, թ. 1—3:

ՎԵՐՋԱՐԱՆ

Հանրագումարի բերելով ամբողջ շարադրվածք, դժվար չէ նկատել, որ առաջին համաշխարհային պատերազմի տարիներին թուրքական «Միություն և առաջադիմություն» կուսակցության ու կառավարության կազմակերպած կոտորածներից փրկված, իրենց պատմական բնօրրանից դեպի արաբական անապատներն արտաքսված արևմտահայության հալածական քեկորները ցրվեցին աշխարհով մեկ և մատնվեցին անասելի զրկանքների ու թշվառությունների, որոնց զոհ գնացին տասնյակ հազարավոր տարագիրներ:

Աշխարհի զանազան անկյուններն ապաստանած և դժվարին կացության մեջ գտնվող հայ գաղթականների նկատմամբ տարիներ շարունակ հանցագործ անտարբերություն էին ցուցաբերում արևմտյան տերություններն ու դաշնակցական կառավարությունը: Դաշնակների, նրանց «հովանավոր» արևմտյան տերությունների, ինչպես նաև քեմալական կառավարության քաղաքականության շնորհիվ կորստյան դուռն էր հասել նաև արևելահայությունը:

Միայն Հայաստանում հաղթանակած սովետական իշխանությունը փրկության իրական ճանապարհ բացեց հայ ժողովրդի համար: Սովետական Հայաստանն իր գոյության առաջին իսկ օրերից դարձավ այն կայանը, փրկության այն խարիսխը, որն ապահովեց հայ աշխատավորի ֆիզիկական գոյությունն ու ազատությունը: Սովետական իշխանությունը հարթեց այն ուղին, որն իրականություն էր դարձնում հայ ժողովրդի ազգային վերամիավորման ու ազգահավաքման

նրա դարավոր երազանքը հայության նոր, սոցիալիստական հայրենիքում:

Եթե մինչև Հայաստանում սովետական կարգերի հաստատումը հայ ժողովուրդը տեսել էր միայն ջարդեր, ավերածություններ ու արտագաղթ, ապա Մեծ Հոկտեմբերի ծնունդ սովետական իշխանության հաղթանակի շնորհիվ նա ստացավ ազգային վերածննդի, ավերված երկրի վերաշինության և աշխարհով մեկ սփռված իր տարագիր զավակներին ի մի հավաքելու ամենալայն հնարավորություն:

Չնայած բազմաթիվ դժվարություններին, սովետական կառավարությունն իր գոյության առաջին իսկ օրերից ձեռնամուխ եղավ ոչ միայն երկրում գտնվող հարյուր հազարավոր արևմտահայ գաղթականների, որբերի ու անապաստան երեխաների հարցի լուծմանը, այլև փրկության ամուր ձեռք մեկնեց սփյուռքահայ աշխատավորությանը: Սովետական Հայաստանի կառավարության գործադրած եռանդուն ջանքերի շնորհիվ դեռևս 1921—1940 թվականներին հաջողվեց իրականացնել սփյուռքահայ տարագիրների առավել դժվարին կացության մեջ գտնվող մասի՝ ավելի քան չորս տասնյակ հազար մարդու հայրենադարձությունը: Սփյուռքահայության հայրենադարձությունը սովետական իշխանության շնորհիվ հայ ժողովրդի ձեռք բերած մեծագույն նվաճումներից մեկն է:

Եթե նկատի ունենանք սոցիալիզմի կառուցման տարիներին եղած դժվարությունները, ապա անվերապահորեն պետք է ընդունենք, որ այն, ինչ կատարվեց այդ տարիներին սովետական կառավարության կողմից սփյուռքահայ աշխատավորների ներգաղթի կազմակերպման ուղղությամբ, հանդիսանում է հայ ժողովրդի նկատմամբ կոմունիստական կուսակցության ջերմ հոգատարության և լենինյան ազգային քաղաքականության իրագործման վառ դրսևորումը:

Հանրապետության ժողովրդական տնտեսության վերականգնմանը և ծավալված սոցիալիստական շինարարությանը զուգընթաց, սովետական իշխանությունը ոչ միայն բացառիկ ուշադրությամբ ու հոգատարությամբ շրջապատեց երկրում կուտակված արևմտահայ գաղթականությունը և որբերին, այլև

կազմակերպեց սփյուռքահայ աշխատավորների որոշ մասի ներգաղթը հայրենիք։ Այստեղ նրանց համար ստեղծվեցին անհրաժեշտ պայմաններ, որպեսզի բազմաշարժար տարագիրները կարողանային կարճ ժամանակամիջոցում հիմնել իրենց սեփական տնտեսությունները հայրենի հողի վրա և մոռանալ օտարություն մեջ կրած բոլոր տառապանքները։

Հայրենադարձները, ոգեշնչված իրենց նկատմամբ սովետական կառավարության ամենօրյա հոգատար վերաբերմունքից, անկեղծ երախտագիտություն մեջ, ակտիվորեն ձեռնամուխ եղան շինարար աշխատանքի, դարձան երկրի սոցիալիստական վերափոխության անխոնջ մշակներ։ Նրանցից շատերը իրենց հայրենանվեր աշխատանքով աչքի ընկան մեր կյանքի բոլոր բնագավառներում։ Արդյունաբերության, գյուղատնտեսության, տրանսպորտի և ժողովրդական տնտեսության մյուս ճյուղերում աշխատանքային սխրանքներ կատարած շատ հայրենադարձների անուններ հայտնի դարձան մեր հանրապետությունում և նրա սահմաններից դուրս։

Արաբական անապատներում անխուսափելի ոչնչացման դատապարտված հազարավոր հայ տարագիրներ ու որբուկներ երազել անգամ չէին կարող ուսման, գիտության ու արվեստի մասին, եթե սովետական իշխանությունը փրկարար ձեռք չմեկներ նրանց։

Սովետական կառավարության ջանքերով տեղի ունեցած ներգաղթի շնորհիվ հայրենիք վերադարձած հայ պանդուխտներն ու նրանց զավակները լայն հնարավորություն ունեցան մայրենի լեզվով կրթություն ստանալու և մասնակցելու գիտության, կուլտուրայի ու արվեստի նվաճումներին։ Իր տարագիր զավակներին հայրենիքի ընձեռած բազում հնարավորությունների, սոցիալիստական հասարակարգի առավելությունների վառ ապացույցն է նաև այն փաստը, որ հայրենադարձներից շատերը, զարգացնելով իրենց ձիրքերը, դարձան ինժեներներ, գյուղատնտեսներ, մանկավարժներ, բժիշկներ, գրողներ, գիտնականներ, դերասաններ, նկարիչներ, երաժիշտներ։

Օտարության մեջ դեգերող հայ շինականն ու մշակը երա-

զել անգամ չէին կարող, որ իրենք և իրենց զավակները կունենան ապրելու, աշխատելու, սովորելու, հանգստանալու իրավունք, երկրի կառավարմանը մասնակցելու իրավունք։ Յուրաքանչյուր հայրենադարձ հայի կյանքի ու գործունեության հետ ծանոթացումը առանց մեկնաբանությունների համոզիչ օրինակ է այն բանի, թե ինչ է տալիս սոցիալիստական իրավակարգը ինչպես առանձին անհատներին, այնպես էլ անցյալում ճնշված ու հալածված ժողովուրդներին։ Դրանում է գաղութահայությանը դեպի Սովետական Հայաստան ձգող զորավոր պատճառներից մեկը։

Բայց, ինչպես ցույց է տալիս 1921-1940 թվականների ներգաղթի իրականացման փորձը, հայրենադարձության կազմակերպումը նյութական հսկայական միջոցներ պահանջող մի ձեռնարկում է։ Միայն հանրապետության բանվոր դասակարգի, աշխատավոր գյուղացիության և մտավորականության կատարած զոհողությունների, Սովետական Ռուսաստանի և եղբայրական մյուս հանրապետությունների օգնության շնորհիվ Սովետական Հայաստանի կառավարությունը կարողացավ իր գոյության դեռևս սկզբնական շրջանից ընդառաջել մեծ թվով սփյուռքահայ աշխատավորների հայրենաբաղձ ցանկություններին և կազմակերպել նրանց հայրենադարձությունը։ Եվ որքան հաջողությամբ էր ընթանում երկրի տնտեսական վերելքը, որքան ակնառու էին դառնում մեր նվաճումները, դրանց զուգընթաց այնքան մեծանում էին հայրենադարձության կազմակերպման հնարավորությունները։

20-ական թվականների վերջերին սկիզբ առավ և հետագա տարիներին ավելի լայն ծավալում ստացավ ամբողջ հայրենակցական միություններով Սովետական Հայաստան ներգաղթելու գաղութահայ աշխատավորների անկեղծ ձրգտումը, որին ամեն կերպ ընդառաջեց սովետական կառավարությունը։ Այդպես ստեղծվեցին մեր հանրապետությունում պատմական Հայաստանի քաղաքների ու գյուղերի անունները կրող հայրենադարձների մի շարք ավաններ, ուր

բնակութիւն հաստատեցին 30-ական թվականների ընթացքում հայրենիք ներգաղթած տնտեսութիւնները:

Բայց ամենամեծ և զանգվածային հայրենադարձութիւնը տեղի ունեցավ հիտլերյան ֆաշիզմի դեմ սովետական ժողովրդի տարած պատմական հաղթանակից հետո, 1946—1948 թվականներին, երբ կապիտալիստական բազմաթիվ երկրներից՝ ԱՄՆ-ից, Ֆրանսիայից, Հունաստանից, Իրանից, Եգիպտոսից, Սիրիայից և այլ վայրերից հայրենիք ներգաղթեցին մոտ հարյուր հազար սփյուռքահայ աշխատավորներ:

Հայաստանում իր կատարած ուղևորութիւնների ժամանակ ներկա գտնվելով Շիրակի ջրանցքի բացման արարողութիւններին և տեսնելով հայ աշխատավորութիւն խանդավառութիւնն ու ոգևորութիւնը, մեր ժողովրդի լավագույն բարեկամ Ֆր. Նանսենը գրում է, որ Հայաստանում «մեր տեսածները մեզ համոզել են, որ այս ժողովուրդը, եթե տեական խաղաղութիւն ունենա, ընդունակ է շահագործելու բոլոր հարստութիւնները, որոնցով առատ է երկիրը և շուտով ստեղծելու նոր օջախներ հազարավոր բախտավոր ընտանիքների համար: Հայ ժողովուրդը կվաստակի ամբողջ քաղաքակիրթ աշխարհի համակրանքը, եթե այսպիսով նա կարողանա ստեղծել մի օջախ ոչ միայն գաղթական հայերի համար, այլև մի ազգային օջախ, որը ամբողջ աշխարհում ցիր ու ցան հայերի կողմից համարվի իսկական հայրենիք»²⁶:

Սովետական Հայաստանի իրականութիւնը և սփյուռքահայ աշխատավորների տրամադրութիւններին շատ թե քիչ ծանոթ ամեն մի օրյակտիվ մարդ այժմ կարող է վկայել, որ սովետական իշխանութիւն գոյութիւն ավելի քան 54 տարիների ընթացքում, ՍՍՀՄ ժողովուրդների եղբայրական ընտանիքում, կոմունիստական կուսակցութիւն ղեկավարութիւնը, Հայաստանն իրոք դարձել է մի ազգային օջախ, որին ամբողջ աշխարհով մեկ դեռևս ցիր ու ցան մնացած

²⁶ Տե՛ս «Նոր ուղի», 1930 թ., № 4—5, էջ 56:

հայ աշխատավորները համարում են իրենց իսկական հայրենիքը, իրենց վերջնական հանգրվանը:

Հայաստանում սովետական իշխանութիւն գոյութիւն տարիներին ազատ ու երջանիկ կյանքի ուղին թեկնոյսեցին ոչ միայն երկրում կուտակված հարյուր հազարավոր արևմտահայ գաղթականները, այլև կոմունիստական կուսակցութիւն և սովետական կառավարութիւն ջանքերով հայրենիք վերադարձած տասնյակ հազարավոր սփյուռքահայ ընտանիքներ: Կասկածից դուրս է, որ աշխարհով մեկ ցրված բոլոր հայ պանդուխտները վաղ թե ուշ կհավաքվեն Սովետական Հայաստանում և «սփյուռքահայութիւն» տերմինը հայկական բառարաններում կմնա որպես սոսկ հիշողութիւն մեր պատմական տխուր անցյալի մասին:

Վերջերս Սովետական Հայաստան այցելած արևմտագրամական կոմունիստների օրգան «Ունզերե ցայտ» թերթի գլխավոր խմբագիր Գեորգ Պոլիկայտը այդ կապակցութիւնը շատ դիպուկ կերպով նկատել է. «Հայաստանում շատ վաղուց նկատվում է մի հետաքրքրական երևույթ, որը դիտավորյալ կերպով լուծիւն է մատնում բուրժուական մամուլը, որովհետև դա չի համապատասխանում իր հակակոմունիստական բնույթին: Խոսքը վերաբերում է ճակատագրի բերումով աշխարհով մեկ սփռված հայերի հայրենադարձութիւնը: Վերջին տասնամյակների ընթացքում 200 հազար հայեր են վերադարձել բարձր կուլտուրայի երկիրը՝ այսօրվա բարգաւաճ Հայաստանը»²⁷:

Այժմ էլ, առավել քան առաջ, Սովետական Հայաստանը մագնիսի պես իրեն է ձգում հայ ժողովրդի լավագույն դուստրերին ու որդիներին, կապիտալիստական երկրներում ապրող այն հայ աշխատավորներին, որոնց ամենաջերմ ցանկութիւն է դառնալ իրենց իսկական հայրենիքի՝ Սովետական Հայաստանի լիիրավ քաղաքացիները, նրա կոմունիստական պայծառ ապագայի շինարարութիւն ակտիվ մասնակիցները: Եվ իրոք, սովետական հայրենիքը հսկայական

²⁷ «Երեկոյան Երևան», օրաթերթ, 28 փետրվարի 1973 թ., № 51:

ձգողական ուժ է ձեռք բերել սփյուռքահայ աշխատավորների համար: Այդ է վկայում նրանցից ստացվող բազմաթիվ դիմումների հոսանքը: Ուստի սովետական կառավարությունն իր կարևոր խնդիրներից մեկն է դարձրել օգնել բախտի քմահաճույքով աշխարհի տարբեր անկյունները նետված հարյուրհազարավոր հայերին վերադառնալու հայրենիք և ապահովել բոլոր պայմանները նրանց բարեկեցիկ կյանքի և ստեղծագործական աշխատանքի համար:

1961 թ. սեպտեմբերին տեղի ունեցած Հայաստանի կոմունիստական կուսակցության 22-րդ համագումարը առանձնահատուկ ուշադրություն նվիրեց նոր հայրենադարձության կազմակերպման խնդրին: ՀԿԿ Կենտկոմի հաշվետու զեկուցման առթիվ համագումարի ընդունած բանաձևում այդ մասին ասված է. «Նշելով, որ հայ ժողովրդի բախտի նկատմամբ կոմունիստական կուսակցության և սովետական կառավարության հայրական հոգատարության շնորհիվ մոտ ժամանակներս կսկսվի արտասահմանյան հայերի նոր մասսայական վերադարձը Սովետական Հայաստան, համագումարը Հայաստանի կոմկուսի Կենտկոմին, Մինիստրների սովետին, հանրապետության բոլոր կուսակցական ու սովետական օրգաններին առաջարկում է օրինակելիորեն նախապատրաստվել նոր քաղաքացիների ընդունմանը, նրանց լրիվ տեղավորմանը, նրանց համար ստեղծել անհրաժեշտ բնակարանային-կենցաղային պայմաններ, ակտիվ աշխատանք կատարել նրանց սոցիալիստական վերադաստիարակության ուղղությամբ»²⁸:

Համագումարը միաժամանակ խնդիր դրեց վճռական միջոցներ ձեռք առնել և չկրկնել բնակարաններով և աշխատանքով ներգաղթողներին ապահովելու գործում այն թերությունները, որոնք թույլ էին տրվել 1946-1948 թվականների զանգվածային հայրենադարձության ժամանակ:

1962 թվականից վերսկսվել է արտասահմանյան երկրներից Սովետական Հայաստան գալու ցանկութուն հայտնած հայերի նոր հայրենադարձությունը: Անցած տասնամյակում Իրանից, Սիրիայից, Լիբանանից, Եգիպտոսից, Իրաքից, Քուվեյթից, Հորդանանից, Թուրքիայից, Կիպրոսից, Հունաստանից, Ֆրանսիայից, Հարավային Ամերիկայից և այլ երկրներից հայրենիք են ժամանել տասնյակ հազարավոր հայ աշխատավորներ: Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր արտասահմանից վերադարձող հայերի ընդունման և տեղավորման կոմիտեն պլանավորված ու կազմակերպված կերպով իրականացնում է այդ գործը:

²⁸ Տե՛ս Հայաստանի կոմունիստական կուսակցության 22-րդ համագումարի բանաձևը Հայաստանի կոմկուսի Կենտկոմի հաշվետու զեկուցման առթիվ, Երևան, 1961, էջ 34:

ԱՆՁՆԱՆՈՒՆԵՐԻ ՑԱՆԿ

Աբեղյան Մ. 244
 Աբդուլ Համիդ 13, 35, 42
 Ա-Դո 48
 Ազատյան Հ. 91
 Ալիխանյան Ս. Տ. 57, 63
 Ալի Ռզա փաշա 71
 Ահարոնյան Ավ. 64, 72
 Ահմեդ Իզզեթ փաշա 67
 Աղայան Մ. Պ. 9
 Անատոլ Ֆրանս 40
 Անդրեասյան Ա. 116
 Անտելեպյան Գ. 159
 Անտոնյան Ա. 27, 31, 32, 37
 Աշեր (Հէրր) 101
 Առաքելյան Ս. 162
 Աստրով 216
 Ասքվիտ Հերբերտ 223
 Ատտոլ 212
 Արզումանյան Մ. Վ. 7
 Արծրունի Վ. 244
 Արսեն Կիտուր 134.
 Բալյան Հ. 160
 Բաշալյան Լ. 218, 242
 Բեկզադյան Ալ. 117, 244
 Բեկզադյան Տ. 75
 Բեհնեդդին Շաքիր 18, 19
 Բերքման Կ. 217
 Բերիա 262
 Բոյաշյան Ար. 163, 179, 180
 Բուզուլին Ստ. 222, 224
 284

Բրյուսով Վալերի 40
 Գարակյոզյան 191
 Գարրոնի 124
 Գլըրճյան 261
 Գիրբոնս Հերբերտ Ադամս 35, 36
 Գողթունի Գ. 160
 Գորվին Ջոն 230
 Գույումճյան 261
 Դամադ Տերիդ փաշա 71
 Դերրուկեր 213, 216
 Դելբրուկ 14
 Դեմիրճյան Գ. 244
 Դյուպյուի Զարգ 200, 212
 Դուրգերյան Հովհ. 87, 160, 164, 200, 202
 Երզնկյան Ար. 117, 140, 160, 164, 200, 201, 227, 244, 249, 250, 270
 Երուխան 25
 Զավալիշին 203
 Զարգարյան Ռ. 25
 Զեքի բեյ 32
 Զոհրապ 25
 Էլլիբեկյան Հ. Մ. 9
 Էնվեր փաշա 16, 64, 67, 68
 Քաղևոսյան Ե. 244

Քալիաթ փաշա 16, 19, 20, 24, 35, 37, 39, 41, 64, 67, 68
 Քաղիանոսյան Եր. 246
 Քամանյան Ալ. 202, 266
 Քաշճյան 261
 Քեհերյան Ս. 40, 41
 Քեոդիկ 15, 44—46, 116
 Քեքեյան Ավ. 31
 Քոդրիա 266
 Քոմա Ալ. 207, 212—216
 Քումանյան Հովհ. 41, 244, 245
 Քունունց 87
 Ժյուլ Պամս 212, 217, 219, 220
 Իսմեթ փաշա 126
 Լեզրան Բ. Վ. 74
 Լենին Վ. Ի. 51, 58, 63, 81, 88, 164
 Լեո 15, 16, 244
 Լեփսիու Իոհաննես 25—28, 39, 40, 45
 Լիբկենիտ Կարլ 40
 Խալիյան Ե. Մ. 9
 Խալիլ բեյ 20
 Խանջյան Աղ. 117
 Խատիսյան Ալ. 233, 234
 Խարամեղարյան Ս. Վ. 9
 Խուզգարյան Ս. 8
 Կախոյան Ա. 244
 Կասյան Ս. 80, 81, 244
 Կարաբեքիր Քյազիմ փաշա 74, 75
 Կարապետյան Հ. Ս. 9
 Կարիկյան Ես. 177—179, 266
 Կարինյան Արտ. 266
 Կարլ Ժ. 200
 Կարտոզյան 187
 Կերենսկի 52
 Կիրակոսյան Ջ. Ս. 7

Կոմիտաս 25
 Կոստանյան Ար. 159, 266
 Հակոբյան Ա. Մ. 8, 9, 32
 Հակոբյան Հովհ. 8, 171
 Համբարձումյան Ս. 117, 164, 201, 206, 244, 266
 Հանրի Բարրի (Հանոի Պատպի) 14
 Հարբորդ Ջեմս 65, 66
 Հարզորդ Հ. Վ. (Հարկորտ) 101
 Հարուստյան Ա. 7
 Հովհաննես Ասպետ 185, 186
 Հովհաննիսյան Աշ. 117
 Ղաղիկյան 266
 Մալխասյան Ստ. 244
 Մակդոնալդ Մարդուխ 217—219
 Մակինցյան Պ. 84, 91, 117, 237
 Մաճատյան Օն. 262
 Մայեր 219
 Մանանդյան Հ. 244
 Մարսել Կաշեն 40
 Մարտիկյան Ս. 244
 Մարուքյան Մ. 261
 Մեվլան-զադե Ռեֆաթ 17, 18
 Մելիք-Հովսեփյան Ս. 160
 Մելիքյան Ա. 244
 Մելիքյան Ռ. 244
 Մելիքսեթյան Վ. Գ. 9
 Միլլեր Ա. Յ. 69, 70, 72
 Միքայելյան Կ. 250, 253
 Մյասնիկյան Ալ. (Մարտունի Ալ.) 85, 97, 117, 118, 137, 180, 199, 191, 244
 Մնացականյան Ար. 7
 Մորգենթաու Հենրի 21, 35
 Մոավյան Ասք. 85, 91, 117, 138, 141, 159, 160, 175, 201
 Մուսախյան Ար. 253
 Ցան Ռայնիս 40
 Ըուաուֆ Ռիզա բեյ 17

Նազըմ 16, 18
Նանսեն Ջր. 10, 196, 197, 199--
209, 211—215, 217—220, 223--
225, 227—230, 232, 233, 235—
243, 280
Նավիլ էդ. 182
Նար-Գոս 244
Ներկարայան Վ. Ն. 9
Նիկոլայ Նիկոլաևիչ 49
Նորատունկյան Գ. 181, 231, 233
Նուբար Պ. 45, 64, 181

Շադունց Ս. 159, 164
Շահգեղյան Ար. 87, 88
Շահվերդյան Գ. 117, 149, 152--
154, 183, 184, 191, 244
Շանթ Լ. 74
Շյուբրի 18
Շումյացի Բ. 162

Չերչիլ Ուն. 136, 225, 226
Չիչերին Գ. Վ. 203, 230
Չուբարյան Գր. 244

Պապաշանյան Միք. 218
Պարզյան Գ. 159
Պարսամյան Վ. 7
Պեշկով 49
Պետրելի 217
Պիո Լո Նավիո 200
Պոլիկայո Գևորգ 281
Պոմա 217

Ջամալյան Ար. 256
Ջավիդ բեյ 20
Ջելալ Մյունիֆ բեյ 35
Ջեմալ փաշա 20
Ջեդեթ փաշա 25

Ռոբերտ Սենիլ 196
Ռոճրբախ Պաուլ 14
Ռոմեն Ռոլան 228
286

Ռոդարինի Կոնտի 217, 219
Սազունով 49
Սալիդ Հալիմ փաշա 20
Սարգսյան Ե. 7
Սարյան 266
Սառյան Մ. 244
Սերոբյան Մ. 17
Սիամանթո 25
Սինապյան Գր. 218
Սիմոնյան Ազ. 137
Սուտերն Արթուր 218
Սվիրդերսկի 203
Ստոքս 75
Սրապիոնյան Ս. (Լուկաշին) 51,
117, 147—149, 151, 201, 266
Սուրենյան Գ. 64
Սուրխաթյան Հ. 140
Սևակ Պարույր 14
Սևակ Ռուբեն 25

Վահդեդդին սուլթան 71
Վարդանյան Գր. 84, 88, 91, 117,
137, 250, 253
Վարուժան 25
Վիլսոն Վուդրո 65, 66, 73, 124
Վիքորի 103
Վրացյան Ս. (Մասուրյան Ս.) 57
58, 187, 188, 260

Տարլե Ե. Վ. 35, 68
Տեր-Ղազարյան Ն. 87, 98, 117
Տերյան Վահան 43, 51—53
Տեր-Նիկողոսյան Հ. 148
Տեր-Սիմոնյան Գր. 88

Յվերնեյ 189

Ուոլհեդ Ռ. Կ. 213
Ուստինով Ա. Մ. 162, 163, 189
Փիլոսոֆյան Ս. 117, 214, 216, 217,
219

Քալանթար 87
Քեմալ Մուստաֆա 70—72
Քելլան Բյուզանդ 185, 186
Քերզոն 124, 125, 141
Քինգ 65
Քոքս Ռ. Չ. 136, 137

Քվիսլինգ Վ. 200
Քրաֆթ Բոնար 182
Քրեյն 65

Օրջոնիկիձե Գ. Կ. 58, 78

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

- Արաղան 137
 Աղանա 27, 101
 Աթենք 113, 146, 162, 163, 261
 Ալազյազ, կայարան, 203
 Ալազյազի շրջան 82
 Ալաշկերտի հովիտ 49
 Ալեքսանդրապոլ (Լենինական) 47, 48, 75, 76, 98, 101, 107, 145, 156, 165, 190, 200, 203, 256, 270, 272, 273
 Արևրատըրապոլի գավառ, շրջան 56, 57, 89, 94, 140, 144, 156, 158
 Ալեքսանդրիա 256, 261, 262
 Ալժիր 256
 Ախալցխա 57
 Ախալքալակ 57
 Ախալքալակի գավառ 61
 Ամերիկա 43, 45, 46, 110, 112, 113, 116, 129, 185, 187, 220, 243, 250, 252—254, 262, 265, 268
 Ամերիկայի Միացյալ Նահանգներ 41, 65, 66, 73, 226, 246, 252, 260, 261, 280
 Այաշ 25
 Այնթապ 28
 Անատոլիա 14, 69—71, 153
 Անգլիա 65—67, 69, 70, 73, 113, 124, 138—141, 211, 212, 214, 215, 219, 222, 223, 225, 226, 249, 252
 Անդրկովկաս 38, 46, 47, 55—57, 66, 75, 95, 96, 98, 100, 102, 131
 Անդրկովկասյան Տեղերացիա 98, 150, 155, 167, 171, 266
 Անի-Պևնդա 270—272
 Անկարա 25, 71, 72
 Անտիոք 27
 Աշտարակ 102
 Ասիա 3, 67, 110
 Ավստրալիա 113
 Ավստրիա 114
 Ատլանտյան օվկիանոս 266
 Արագած լեռ 56
 Արագոյան 165, 166, 168
 Արագոյանի շրջան 164, 165, 167
 Արարատ լեռ 152, 201, 240
 Արարատյան դաշտ 109, 157, 204
 Արաքս, գետ, 83, 166
 Արգենտինա 111, 145, 154, 186
 Արմաշ 155, 166, 168
 Արփաշայի հովիտ 203
 Արևելյան Անատոլիա 27, 70, 71
 Արևելյան Հայաստան 4, 56, 59, 73, 77
 Արևմտյան Անատոլիա 27, 69
 Արևմտյան Թրակիա 161
 Արևմտյան Հայաստան Թուրքահայաստան 4, 12, 27, 42, 43,

- 48, 51—55, 69, 70, 77, 264, 268
 Աֆրիկա 126, 154, 185, 186, 265
 Բաթում 56, 57, 98, 140—144, 155, 156, 161, 163, 174, 203, 206
 Բալկանյան երկրներ (Բալկաններ) 43, 46, 68, 112, 116, 225, 230, 246, 275
 Բալկանյան թերակղզի 68
 Բակուրխանի 61
 Բաղդատ 14, 32, 132—134, 139, 161
 Բաղեշի վիլայիթ 27
 Բայազետ 49
 Բաշ-Գաունի 102
 Բասարգեշարի շրջան 108, 140, 144, 159
 Բասրա 161, 132, 138, 139
 Բասրայի նահանգ 133
 Բաքու 47, 56, 66, 78, 98
 Բաքուրա 132
 Բեզլի-Անձեղ, կայարան, 75
 Բելգիա 66, 114, 215, 249, 250, 252
 Բելլութ 111, 126, 256, 261
 Բեռլին 41, 212, 223, 256
 Բեսարաբիա 112
 Բիթլիս 69, 109
 Բիթլիսի վիլայիթ 73
 Բրազիլիա (Պրագիլ) 111, 186, 257
 Բրեստ-Լիտովսկ 55
 Բուենոս-Այրես 257
 Բուլղարիա 110, 112, 122, 145, 187, 197, 235, 246, 270
 Գալաթիա 27
 Գասթեմունի 27
 Գերմանիա 14, 40, 41, 64, 114, 219, 242, 250
 Գրբնորլ 261
 Գոնիա 170
 Դամասկոս 111
 Դավալու 166
 Դարալագյազ 94, 107, 108
 Դարդանեղ 39
 Դեղհաղաչ 163
 Դիարհին 49
 Դիլիջանի գավառ 157, 159
 Դիլիջանի շրջան 203
 Դոնի մարզ 49
 Եգիպտոս 101, 110, 113, 116, 145, 148, 200, 254, 280, 283
 Եվրոպա 3, 18, 41, 52, 64, 67, 110—112, 122, 129, 203, 209, 220, 225, 230, 240, 243, 253, 262
 Երզնկա 55, 65
 Երևան 47, 48, 58, 65, 80, 86, 91, 98, 101—103, 107, 133, 137, 149, 165, 185, 186, 188, 203, 204, 218, 221, 244, 247, 248, 252, 255, 266, 267, 270, 272, 273
 Երևանի գավառ 56—58, 94, 156
 Երևանի նահանգ 77
 Եփրատ 32, 49
 Զանգեզուր 83, 85, 86, 94, 107, 108, 172
 Զանգիբասարի շրջան 204, 241
 Զենյան 131
 Զվարթնոք 236
 Էգեյան ծով 67
 Էջմիածին (Վաղարշապատ) 47, 48, 88, 90, 133, 273

Հջմիածնի գավառ, շրջան, 56, 57
88, 94, 252, 267
Էվջիլարի շրանցք 252, 267
Էրզրոս 55, 65, 69—71, 109
Էրզրոսի վիլայեթ 73

Քաթար-Բազարճիկ 147
Քալին 83
Քավրիզ 83, 84, 137
Քեհրան 141, 162
Քիֆլիս (Քրիլիսի) 47, 66, 74, 75,
89, 90, 98, 101, 140, 203, 254
Քոխմախան լիճ 267
Քրակիա 65, 147
Քուրբիա (Օսմանյան կայսրու-
թյուն) 3, 4, 7, 12, 13, 15, 17,
20, 24, 33, 34, 36—46, 49, 51,
53, 54, 56, 65—75, 77, 99,
101, 110, 112, 114, 115, 123,
125, 126, 127, 153—155, 196,
197, 202, 205, 212, 223, 231,
235, 264, 268, 269, 283
Քուրբանեշայ 4

ժենկ 182, 220, 229, 242

Իզդիր 48, 101, 131
Իզմիր (Չձյուռնիա) 113, 114,
126, 170, 223
Ինթիլի 32
Իջևան 270, 272
Իջևանի գավառ 94
Իսկենդերուն 28
Իրան (Պարսկաստան) 3, 4, 50,
55, 82—87, 96, 112, 113, 131,
134, 143, 145, 162, 171, 172,
245, 280, 283
Իրաք (Միջագետք) 14, 33, 53,
55, 59, 102, 115, 130—144,
155, 156, 160—162, 164, 171,
283
Իտալիա 65, 66, 69, 70, 73, 113,
124, 211

Լամբալուի (Ռեբետաշենի) սովխոք
271
Լատինական Ամերիկա 111, 112
Լենինական, տե՛ս Ալեքսանդրապոլ
Լիբանան 111, 112, 283
Լիոն 114, 261, 272
Լյուքսեմբուրգ 242
Լոզան 5, 123, 124, 126, 127, 195,
197, 231
Լոնդոն 101
Լոռի 94
Լոռի-Փամբակի գավառ 157—159

Խարբերո 65, 66
Խարբերտի վիլայեթ 27
Խոյ 131, 144

Մալկա 61

Կալամաթիա 146
Կասիրե 256
Կաղզվան 77
Կանադա 111, 112, 250
Կարին, տե՛ս Էրզրոս
Կարինի վիլայեթ 27
Կարս 47, 56, 57, 65, 75
Կարսի մարզ 73, 77
Կիլիկիա 26, 27, 32, 43, 46, 65,
66, 69, 101, 112, 125, 126
Կիպրոս 101, 112, 283
Կոնիա 27
Կոստանդնուպոլիս (Կ. Պոլիս) 20,
21, 23—25, 32—34, 39, 41, 43,
44, 65, 66, 69, 71, 72, 101,
114, 115, 120, 126, 130, 133,
134, 140, 142, 149, 152, 154—
156, 161, 171, 174, 183—185,
187, 190, 191, 202, 229, 246,
247, 269
Կովկաս 15, 56, 116, 199, 217,
226, 259
Կորեթոս 113

Կորֆու 113
Կուրա 111
Կուրան 49

Հարեչտան 110, 113
Հալեպ 27, 31, 37, 111, 126
Համադան 131, 135
Հայաստանի Հանրապետություն
60, 63, 64, 73, 75, 97, 181,
233, 234
Հարավային Ամերիկա 154, 246,
256, 283
Հարավային Պարսկաստան 131,
132
Հարավլավիա 114
Հին Հունաստան 161, 192
Հյուսիսային Կովկաս 48, 62
Հյուսիսային Սիրիա 65
Հնդկաստան 14, 113, 134
Հորդանան 283
Հունաստան 70, 73, 96, 112—114,
145, 147, 148, 155, 157, 160—
164, 171, 187, 189, 197, 202
205, 225, 235, 242, 256, 267,
269—271, 280, 283
Հունգարիա 114

Ղամարլու (Արտաշատ) 102
Ղամարլուի (Արտաշատի) շրջան
89, 140, 143, 144
Ղարաղազ 83
Ղարաբրիտա (Կիրովական) 56,
108, 158, 270, 272
Ղարաբրիտայի գավառ 94
Ղափան 272
Ղարգուղուլիի (Հոկտեմբերյանի)
շրջան 89
Ճավա 113, 134
Մակեդոնիա 147, 161
Մարաշ 27
Մարոք (Մարոկկո) 191

Մեծ Բրիտանիա, տե՛ս Անգլիա
Մարսիլ 114, 175, 269
Մեղրի 107, 108
Մեսքենե 32
Մերձավոր Արևելք 12, 50, 65, 66,
69, 73, 95, 103, 111, 114, 116,
124, 129, 230, 246, 255, 259,
275
Մեքսիկա 111
Միջագետք, տե՛ս Իրաք
Միջին Ասիա 57, 78
Միջին Արևելք 129
Մոնթե-Վիտեո (Մոնտե-Վիդեո)
257
Մոսկվա 47, 74, 164, 203, 214,
219, 221, 229, 230, 253, 254
Մոսուլ 125, 135
Մուղրոս 67

Նախիջևան 86
Նախիջևանի գավառ 57
Նահրեղոմար, ալվան, 133, 135, 137
Նիկոմեդիա 27
Նյու-Յորք 35, 120, 257, 260
Նորակերտ 168
Նոր Ամասիա 268
Նոր Արարկիր 266, 267
Նոր Արմաշ 268
Նոր Բայազետի գավառ 94
Նոր Բուխանիա 267
Նոր Եվրոպիա 267
Նոր Երզնկա 268
Նոր Քոմարզա 268
Նոր Խարբերտ 268
Նոր Կեսարիա 268, 274
Նոր Հանն 265
Նոր Մալաթիա 268, 272
Նոր Յողդատ 268
Նոր Նախիջևան 47
Նոր Սեբաստիա 268, 274
Նոր Տարսուս 268
Նոր Տիգրանակերտ 268, 274

Նորվեգիա 66, 228, 242
Նորբարաշեն 268, 274

Շարուրի գավառ 57
Շիրակի շրանցք 203, 280
Շվեյցարիա 250

Չանդըր 25
Չեխոսլովակիա 114

Պաղեստին 115
Պապ, ավան, 32
Պարսկաստան, տե՛ս Իրան
Պելեպոնես 147, 148
Պետրոգրադ 47
Պիրեիա 113
Պովոլժին 229
Պրուսա (Բրուսա) 27

Ջալալօղլի (Ստեփանավան) 98,
180, 271
Ջուլֆա 53, 84, 86, 144, 155, 161
Ջուղա 47

Ռաս-ու-Այն 32
Ռումելիա 71
Ռումիլիա 110, 112, 145, 225,
235, 242, 246
Ռուսաստանյան Սովետական Ֆեդե-
րատիվ Սոցիալիստական Հան-
րապետություն (Ռուսաստան) 4,
12, 38, 43, 50, 51, 53, 55—
57, 62, 68, 69, 74, 78—81, 86,
95, 122, 135, 141, 143, 228—
230

Սալմաստ 131, 144
Սալոնիկ 113, 148, 149, 151, 163,
189
Սամսոն 170
Սան-Ռեմո 66, 72
Սարդարապատ 56, 155, 198, 202,
204, 207

Սարդարապատի շրանցք 203
Սարիղամիշ 75
Սեբաստիա 66
Սեբաստիայի վիլայեթ 27
Սիրիա 27, 33, 111, 112, 116,
145, 155, 171, 197, 202, 257,
265, 280, 283
Սմո 165, 167
Սովետական Հայաստան (Հայաս-
տան) զրքի համարյա բոլոր է-
ջերում
Սովետական Սոցիալիստական
Հանրապետությունների Միու-
թյուն 65, 100, 162, 169, 170,
174, 189, 192, 193, 201, 203,
206, 213, 219, 224, 227, 245,
249, 274, 280
Սովետական Ուկրաինա (Ուկրաի-
նա) 62, 78, 80
Սվազ 65, 70, 71
Ստեփանավան, տե՛ս Ջալալօղլի
Ստեփանավանի շրջան 156, 203
Սուդան 113
Սուեիս 27
Սուրենավան 165, 166, 168
Սուրմալու 56
Սուրմալուի գավառ, շրջան 57,
Սևանա լիճ 56
Սև ջուր (Ղարասու), գետ, 204,
241
Սևր 124, 196

Վաղարշապատ, տե՛ս Էջմիածին
Վան 25, 36, 69, 101, 109, 131,
145, 171
Վանի վիլայեթ, նահանգ 24, 27,
73
Վանա 190
Վասպուրական 49, 144
Վեդու շրջան 143, 144
Վիեննա 180

Տաճկաստան, տե՛ս Թուրքիա
Տարոն-Տուրուբերան 49
Տեր-Ջոր 32
Տիգրանակերտ 65, 66
Տիգրանակերտի վիլայեթ 27
Տրանսիլվանիա 112
Տրապիզոն 69, 75, 170
Տրապիզոնի վիլայեթ 27, 73

Ուրմիա 131, 144
Ուրուգվայ 111, 186
Ուրֆա 23

Փարիզ 44, 64, 114, 191, 214,
219, 254, 260
Փոքր Ասիա 20, 33, 36, 40

Քեսապ 27
Քեֆալոնիա 113
Քիլիս 28
Քիրմանշահ 135
Քրզաստան 69
Քուվեյթ 283

Օսլո 203
Օսմանյան կայսրություն, տե՛ս
Թուրքիա

Ֆիլիպի 147
Ֆլորենս 257
Ֆրանսիա 65, 66, 69, 73, 112—
116, 122, 145, 148, 154, 155,
191, 211, 219, 246, 249—252,
254, 261, 269, 270, 272, 275,
280, 283

ԳՆՈՒՆ ՅՈՔԵՐՈՐԴ

Հայաստանի օգնության կոմիտեն, նրա դերը հայրենիքի նեւ սփյուռ-
 ֆանայության կապերի ամրապնդման ու հայրենադարձության
 իրականացման գործում 244

ԳՆՈՒՆ ՈՒՔԵՐՈՐԴ

Հայրենակցական միությունների գործունեության աշխտացումը և
 սփյուռֆանայերի հայրենադարձությունը 1926—1940 թթ. 264
 Վերջաբան 276
 Անձնանունների ցանկ : 284
 Տեղանունների ցանկ 288

ԲՈՎԱՆԴԱԿՈՒՔՈՒՆ

Պատշարան 3

ԳՆՈՒՆ ԱՌԱՋԻՆ

Արևմտահայության բռնագաղթը և հայ տարագիրների բշվառ վիճակը
 1915—1920 թվականներին 12

ԳՆՈՒՆ ԵՐԿՐՈՐԴ

Սովետական իշխանության առաջին ձեռնարկումները գաղթականու-
 րյան հարցի լուծման ուղղությամբ և բարեգործական հաստա-
 տությունների գործունեությունը 77

ԳՆՈՒՆ ԵՐՐՈՐԴ

Սփյուռֆանայ աշխատավորների կողմնորոշումը դեպի Սովետական
 Հայաստան 110

ԳՆՈՒՆ ԶՈՐՐՈՐԴ

Սփյուռֆանայերի հայրենադարձությունը ժողովրդական տնտեսության
 վերականգնման տարիներին 129

ԳՆՈՒՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Պարտաճանայ բուրժուական կազմակերպությունների ու հասանքների
 դիրքը հայրենադարձության հանդեպ 177

ԳՆՈՒՆ ՎԵՑԵՐՈՐԴ

Հայ գաղթականության հարցը ազգերի լիգայում և նանսենյան ծրագիրը 195

ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ ՀՈՎԻԿ ՈՒՆՏԱՆԵՍԻ

ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԻ ԲՈՆԱԳԱՂԹԸ ԵՎ
ՍՓՅՈՒՌԱՀԱՅԵՐԻ ՀԱՅՐԵՆԱԳԱՐՁՈՒԹՅՈՒՆԸ
ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ
(1915—1940 թթ.)

Հրատարակության է ներկայացրել հայ ժողովրդի
պատմության ամբիոնը

Խմբագիրներ՝ Հ. Ա. Պետրոսյան, Հ. Գ. Ժամկոչյան
Հրատ. խմբագիր՝ Օ. Պ. Համբարձումյան
Տեխն. խմբագիր՝ Ժ. Խ. Հայրումյան
Գեղ. խմբագիր՝ Ն. Ա. Թովմասյան
Նկարիչ՝ Հ. Կ. Մնացականյան
Վերստ. սրբագրիչ՝ Ս. Վ. Ղազարյան

ՎՖ 07803

Պատվեր 293

Տպաքանակ 5000

Հանձնված է արտադրության 10/11 1975 թ.

Ստորագրված է տպագրության 23/V 1975 թ.

Թուղթ 89×108¹/₃₂ Տպագր. 18,5 պալմ. 15,5 մամուլ

Հրատ. 12,6 մամուլ, Գինը՝ մ. 20 կոպ.

Երևանի համալսարանի հրատարակչություն: Երևան, Արուսյան փող. № 52:

Երևանի համալսարանի տպարան: Երևան, Արուսյան փող. № 52:
Типография Ереванского университета, Ереван, ул. Абовяна 52.